



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԸԱՐ
ԳԱԼՈՒՍ ԿԻՒՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ**

ՅԱԿՈՒԲ ՉՈԼԱՔԵԱՆ

ՔԵՍԱՊԻ ԲԱՐԲԱՌԸ

**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2009



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN

Չոլաքեան Յակոբ

Չ-732 Քեսապի բարբառը. -Եր.: ԵՊՀ հրատարակչություն, «Գրական հայրենիք» ՓԲԸ
(«Հայաստան» հրատարակչություն), 2009թ., 380 էջ:

Քեսապի բարբառի ուսումնասիրության նուիրումը այս գիրքը կը նկարագրէ բարբառի հնչյոթներու համակարգը, շեշտափոխական, պատմական, փոխազդեցական եւ դիրքային հնչյունափոխությունները, խօսքի մասերը՝ անուանական, դերանունանական եւ բայական համակարգերով, բառակազմութեան եղանակներն ու բառային կազմը: Ունի գրաբար-բարբառ բառերու, անձի եւ տեղի յատուկ անուններու ցանկեր, բարբառային եւ փոխառեալ բառերու բառարաններ եւ բարբառային նմոյշներու յատկացուած յաւելում:

Բարբառը ունի կիլիկեան բաղաձայնական համակարգ, սակայն, նկատի ունենալով ընթերցողներու որոշակի շրջանակ մը, հեղինակը բարբառի ձայնեղներու տառադարձութիւնը կատարած է հին խուլերով, իսկ խուլերու տառադարձութիւնը՝ հին ձայնեղներով:

Գիրքը առաջին անգամ հրատարակուած է Հալէպ, 1986-ին, մեքենագիր, իսկ տառադարձութեան նշանները՝ ձեռագիր, օֆսէթ տպագրութեամբ:

Ներկայ հրատարակութիւնը կը կատարուի որոշակի լրացումներով:

ԳՄԴ 81. 2 Հ

ISBN 978-5-540-02152-4

© Յակոբ Չոլաքեան, 2009թ.:

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

1.- ԱՆՏԻՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ ԵՒ ՄՆԱՑՈՐԴԱՑԸ

Պատմութիւնը ծանօթ է միջին դարերու Անտիոքի շրջանի Հայ Հոծ գաղթականութեան, որ կարեւոր դեր ունեցած է շրջանի եւ Անտիոքի վարչատնտեսական կեանքին մէջ: Ժ.-ԺԱ. դարերուն Անտիոքը ունեցած է Հայ մեծանուն կառավարիչներ, Հայ իշխանական տուններ շրջանին մէջ ունեցած են կալուածներ, բերդեր եւ ամրոցներ: Քաղաքի վերջին կառավարիչ Վասակ Պահլավունիի սպանութենէն ետք անոր ազատագունդը կը քաշուի միջնաբերդ ու կը հրաւիրէ Մալաթիոյ, Քեսունի, Մարաշի, Մոսիքի, Պիրի եւ Կարկառի տէր Փիլարտոս (Վահրամ Վարաժնունի) իշխանապետը, որ 1078ին զօրքով կը մտնէ Անտիոք, կը պատժէ դաւադիր յոյները եւ իր իշխանապետութեան կեդրոնը կը դարձնէ Անտիոքը: 1085ին սելճուքներու ձեռքը դաւադրաբար անցած քաղաքի եւ շրջանի Հայութեան մէջ անկախութեան ձգտումները սուր կերպով կ'արտայայտուին խաչակիրներու կողմէ Անտիոքի պաշարման ընթացքին, երբ քաղաքաբնակ եւ գիւղաբնակ Հայութիւնը, անկախ՝ կիլիկիոյ Հայ իշխանապետութեան բռնած դիրքէն, մէկ կողմէն քաղաքը կը պաշտպանէ եւ միւս կողմէ թէ՛ քաղաքը եւ թէ խաչակիր զօրքերը կը պարենաւորէ: Ի վերջոյ քաղաքի անկումին մէջ Հիմնական դերակատարութիւն կը վերցնէ Փիրուզ Հայը, քաղաքը կ'իյնայ խաչակիրներուն ձեռքը եւ Հալէպ փախչող սելճուք կառավարիչ Եադի Սիանն ալ կը բռնուի ու կը սպաննուի Հայ գիւղացիներու ձեռամբ: Որոնդէսի Հովիտին մէջ բերդերու անկումին եւ սելճուք զօրքերու Հալածանքին մէջ Հիմնական դեր կը կատարեն շրջանի գիւղաբնակ Հայերը: Հայ ազգաբնակչութեան բռնած այս դիրքին Համար արար պատմաբան Մուհամմէտ Տամէն այսպէս կը գրէ. «Անկասկած ատոր պատճառը այն ատելութիւնն էր, որ ունէին Անտիոքի կառավարիչ Եադի Սիանի Հանդէպ, անոր բռնի արարքներն ու անարդար իշխանութիւնը ուղղակի պատճառներն էին իրենց կեցուածքին: Նաեւ կը թուի, թէ ոմանք ունէին անկախութեան ձգտումներ իրենց ապրած շրջաններուն մէջ: Ատիկա զօրաւոր ազդակ մըն էր անոնց կեցուածքին»¹:

1.- Մուհամմէտ Տամէն, «Իմարաթ Հալապ Ֆի Զուլլ ալ-Հուքըմ ալ-Սալճուքի» [«Հալէպի իշխանութիւնը Սելճուքեան Տիրապետութեան Տակ», արբ.], Դամասկոս, 1990, էջ 186:

Անշուշտ, Անտիոքի շրջանի Հայերը Հիասթափ եղան պատմական յետագայ իրադարձութիւններէն, որովհետեւ խաչակիրները չեկան ազատութիւն շնորհելու, այլ՝ իրենց իշխանութիւնը հաստատելու Անտիոքի շրջանին մէջ: Այսուհանդերձ՝ Հայերը թուական կարելոր ներկայութիւն մը կը շարունակեն ներկայացնել նաեւ Անտիոքի դքսութեան շրջանին ու անկէ ետք:

Յետագային Հայ-մեմլուքեան կռիւներու ընթացքին մեծապէս կը տուժէ նաեւ Անտիոքի շրջանի Հայ ազգաբնակչութիւնը. Եգիպտոս տարուած գերիներու մէջ Կիլիկիոյ Հայերու կողքին միշտ կային նաեւ Անտիոքի շրջանի Հայերը:

1516ին սուլթան Սելիմ Ա. կը գրաւէ Անտիոքը մեմլուքներու ձեռքէն: Շրջանին մէջ երկար ժամանակաշրջան մը կը տիրէ կամայական կարգ ու սարք: Թուրքմէն ցեղեր բնակութեան նոր վայրեր կը փնտռեն՝ շրջանին մէջ կոտորածներ կազմակերպելով, բռնութեամբ տիրանալով գիւղերու եւ ագարակներու: Քրիստոնեաները, ատոնց շարքին՝ նաեւ Հայերը, յայտնապէս ծանր կացութեան կը մատնուին: Ասորի տարրը գրեթէ ամբողջապէս կ'անհետի Անտիոքի շրջանէն: Յոյները մանր կղզեխումբեր կը ձեւացնեն Որոնդէսի Հովիտին եւ Հարաւի լեռներուն վրայ: Այս ժամանակաշրջանին յոյներու պատրիարքը կը լքէ Անտիոքը եւ վերջնականապէս կը հաստատուի Դամասկոս՝ պահպանելով «Պատրիարք Անտիոքի» տիտղոսը: Հայերը նոյն ճակատագրին կ'ենթարկուին: Հետզհետէ կը պարպուին վաղեմի Հայահոծ շրջաններն ու քաղաքները: Անտիոքի, Աֆամիոյ եւ Լաթաքիոյ եպիսկոպոսութիւնները կը վերանան:

Այս իրադրութեան մէջ, վարչական յարափոփոխ բաժանումներու ենթարկուած է ամբողջ Անտիոքի շրջանը, որ անուանապէս Հալէպի վիլայէթի մաս կը կազմէր: Ռուճի մէջ Շուղըր կը ձեւացնէ գազա (գաւառ) մը, որուն կեդրոնը կ'ըլլայ Շուղըր գիւղը, արդէն աւերակ նոյնանուն բերդին կից: Գազայի գիւղերը այնքան կը նուազին, որ 1596ին կը յիշուին միայն երեք գիւղ եւ երկու ագարակ: 16րդ դարու երկրորդ կիսուն, Անտիոքի նախկին դքսութեան սահմաններէն ներս կը ձեւաւորուին իրենց անկախ կառավարութիւնները ունեցող աղայութիւններ, որոնք ժառանգական կարգով դարեր տիրեցին իրենց շրջաններուն եւ հաշուետու չեղան Հալէպի փաշային: Ճանապարհորդ Քորանչէզ (Corancez, Itineraire de l'Asie Mineure, Paris, 1816) կը վկայէ, որ 1809ին շրջանին մէջ գոյութիւն ունէին շարք մը աղայութիւններ կամ անկախ կառավարութիւններ, որոնք կապուած էին Բարձրագոյն Դրան, ինչպէս՝ Տէրքուլը, Շուղըր, Արիհան եւ Անտիոքը²: Այս ընտանիքները կեդրոն քաղաքներու մէջ իրենց կողմնակից պաշտպանները ունէին, ինչպէս որ այս վերջիններն ալ իրենց կողմնակից

պաշտպաններն ունէին պետական բարձրագոյն շրջանակներուն մէջ: Անոնք ամէն կամայականութեան կը դիմէին Հողեր, գիւղեր, եւ ընդարձակ կալուածներ ձեռք անցընելու համար: Իսլամական կալուածներու վարչութեան (աուլաֆ) պատասխանատու աղաները կամայականօրէն կը բռնագրաւէին բնիկներու կալուածները:

Յատկապէս Շուղըրէն Լաթաքիա ձգուող լեռնային շրջաններուն մէջ, Ռոսթոմ ընտանիքի աւատապետութեան ժամանակ մեծապէս կը տուժեն Հայկական բնակավայրերը՝ Լաթաքիոյ մօտ Նուսէյրի լեռան վրայ, Գուսէյրի շրջանը, Պոտամայի սարահարթը եւ Քիւրտ Տաղը, ուր մեծ թիւով Հայ գիւղեր կը շիջին 19րդ դարուն եւ 20րդ դարու սկիզբները՝ աւելի եւս մեկուսացնելով ու նեղ շրջանակի մը մէջ դնելով Հայութեան մնացորդացը այդ վայրերուն մէջ:

Հայկական բազմաթիւ բնակավայրեր Հայերու ձեռքէ կը խլուին: Աղաները Հայ գիւղացիներուն ձեռքէն կը խլեն անոնց Հողերը, աղբիւրները, գետերը, ջրաղացները եւ արօտավայրերը: Յատկապէս կը տուժեն դաշտային ու ջրառատ վայրերու Հայերը: Առանց կալուածի մնացած Հայերը կը դառնան մարապաներ, այսինքն՝ այլազգի աղաներու կալուածներուն մէջ հաստատուած ու անոնց համար քառորդով աշխատող գիւղացիներ, կը գաղթեն շրջանէն դուրս կամ կը քաշուին Հայերով բնակեցուած լեռնային ու մեկուսի շրջաններ:

Ահաւասիկ, այս ներքին տեղաշարժներու հետեւանքով, Անտիոքի ամբողջ Հայ հոծ գաղթականութենէն 19րդ դարուն կը հասնին քանի մը շրջանակներ միայն, ինչպէս՝

ա.- Աղեքսանդրէթի ծոցի Հարաւ արեւելեան կողմը՝ Պէյլանի գաւառակը:

բ.- Սեւ լեռներուն Հարաւային փէշերուն (Կարմիր լեռներ) տարածուող Սուէտիոյ գաւառակը:

գ.- Քեսապի գաւառակը:

դ.- Լաթաքիոյ Հիւսիս արեւելեան կողմը երկու մեկուսի գիւղեր՝ Արամօ եւ Ղնեմիէ:

ե.- Քեսապի եւ Որոնդէսի Հովիտին միջեւ թուրքմէն գիւղերու շրջանակին մէջ մեկուսացած քանի մը մանր գիւղակներ՝ Կոչի, Գոնտունա, Եամատի, Արֆալի, Վերին Թընզըրի, արդէն թրքախօս կամ արաբախօս դարձած:

զ.- Արեւմտեան Ռուճի (Որոնդէսի Հովիտ, Շուղըրէն Հարիմ) նախկին Հայաշատ տարածքին մէջ իրար կից երկու գիւղեր՝ Եագուպիէ եւ Գնիէ, 19րդ դարու երկրորդ կէսին արդէն արաբախօս:

Ասոնցմէ դուրս փոքրիկ գաղութներ, գլխաւորաբար շրջակայ գիւղերէն եկած ընտանիքներէ կազմուած, կային Աղեքսանդրէթի, Գըրըզխանի, Անտիոքի եւ Լաթաքիոյ մէջ: Լաթաքիոյ մէջ կը գտնուէր Երուսաղիմապատկան Հոգեւորներ, ուր կը նստէր տեսուչ վարդապետ մը, որ կը կրէր նաեւ «Անտիոքի Առաջնորդ» անվաներ տիտղոսը՝ ձեւով մը Հովուելով վերի շրջանակները, բացի Պէյլանէն:

2.- Ֆայէզ Գոսարա, Ալ-Բահհայա Փի Մուհաֆազաթ Իտլէպ [«Ճանապարհորդները Իտլիպի նահանգին մէջ», արբ.], Բ. Հատոր, Հալէպ, 1988, էջ 113:

Ահաւաստիկ այս էր Անտիոքի շրջանի Հայ Հոծ գաղթականութեան մնացորդացին պատկերը 1915ին, Մեծ եղեռնէն առաջ:

Կարծիք կայ, որ Քեսապի կամ Անտիոքի շրջանի այս Հայութեան նախնիները այս կողմերը եկած են Կիլիկիայէն՝ Հայկական թագաւորութեան անկումէն ետք կամ աւելի ուշ: Ասիկա կը Հաստատուի միայն որոշ ընտանիքներու մօտ պահպանուած աւանդութեամբ եւ կարելի չէ ընդհանրացնել: Միւս կողմէ, կան մեծ թիւով ընտանեկան աւանդութիւններ ու մանաւանդ պարպուած տեղանուններէ առաջացած մականուններ, որոնք ցոյց կու տան Հարաւէն դիպի Հիւսիս կամ արեւելքէն արեւմուտք տեղաշարժերու մեծ Հաւանականութիւնը:

Այս բնակավայրերու Հայութեան կազմաւորումը կարելի չէ դուրս դնել Անտիոքի միջին դարերու Հայ Հոծ գաղթականութեան ու անոր յետագայ դարերուն ապրած ներքին տեղաշարժներու պարունակէն³:

2.- ՈՒՐՈՒԱԳԻԾ ՔԵՍԱՊԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Սուրիական Արաբական Հանրապետութեան Հիւսիս արեւմուտքին, Լաթաքիայէն (պատմական Լաւոդիկէ) շուրջ 60 քմ. Հիւսիս, իսկ Անտիոքէն նոյնքան Հարաւ արեւմուտք կը գտնուի Քեսապի շրջանը՝ Համանուն աւանով ու շրջակայքի տասնեակ մը գիւղերով:

Շրջանը կ'ընդգրկէ բաւական ընդարձակ տարածութիւն մը ձէպէլ Ագրա կամ Կասիոս լեռան Հարաւ արեւելեան ու արեւմտեան լանջերուն վրայ: Արեւմուտքը Միջերկրականն է: Ունի բարձր եւ տիրական դիրք դէպի Անտիոք եւ Լաթաքիա ձգուող լեռնաշղթաներու նկատմամբ:

Քեսապի Հայութեան մասին վաղ յիշատակութիւններ ուղղակի չկան: Այդպիսի ակնարկութիւններ տեղւոյն Հայութեան մասին 17րդ դարէն անդին չեն անցնիր: Ուշակրաց շրջանի պատմութիւնը ընող գրաւոր յիշատակարանները կը յիշեն Անտիոքի եւ այդ կողմերու Հայերը ընդհանուր ձեւով, ու պատմական կարեւոր իրադարձութիւններու թատերաբեմ Հանդիսացած Ռուճի Հովիտի եւ Ամուզի դաշտի Հայ բնակավայրերէն ոմանք՝ Հարիմ, Արմենագ, Արթաշ, Աննապ, Գոմ եւ այլն: Մեծ զօրքերը եւ տարանցիկ ճամբաները կ'անցնէին Որոնդէսի Հովիտէն: Քեսապի շրջանը այդ թատերաբեմէն դուրս կը մնար:

Շրջանի գիւղերուն մեծ մասը արդէն կազմուած կը գտնենք 19րդ դարու կէսերուն: Ասոնց բնակիչները Քեսապ աւանը տակաւին Գիէղ (գիւղ, իրենց գիւղը) կը կոչեն, իսկ որոշ գերդաստաններ կը փորձեն ցոյց տալ իրենց նախահօր տան տեղը:

Շրջանի վարչական, հոգեւոր ու կրթական կեդրոնն է Քեսապ

3.- Անտիոքի շրջանի միջին դարերու Հայ գաղթականութեան եւ անոր մնացորդացին պատկերը տե՛ս մեր «Քեսապ», Ա. Հատոր, Հայէպ, 1995, էջ 8-42, եւ «Անտիոքի Մերձակայ Ռուճի Հովիտի Հայերը» պատմա-ազգագրական ուսումնասիրութիւնը, Անթիլիաս, 2006, էջ 27-88:

(բրբռ.՝ Քէսուօպ) աւանը: 19րդ դարու երկրորդ կիսուն Հոս կը սկսին կազմուիլ շրջանի չուկան եւ արհեստանոցները: Գիւղերու բնակիչները կը զբաղին Հողագործութեամբ եւ անասնապահութեամբ:

Շրջանի գիւղերն են՝ Գարատուրան կամ Գալատուրան (բրբռ.՝ Կէրէտըրան), Պաշուրտ (Պաշօրտ), որ 1947ին ամբողջապէս պարպուած է, Սեւ Աղբիւր կամ Գայաճրգ (Սիվ Աղբուօյր), Էսկիւրէն կամ Ներքի Գիւղ (Էսկի Էօրան կամ Նըրքը՝ Գիէղ), Չինար կամ Չինարճրգ (Չընուօր), որուն կապուած է Ուայրդ կոչուող փոքրիկ գիւղը, Չագալճրգ (Չագալճօղ), Տուզաղաճ (Տաւաղաճ), Քէօրքիւնէ (Քաւրքանն), Էքիզ Օլուզ (Քուզուլօղ), որուն կապուած է բոլորովին վերջերս Հիմնուած Աճամ գիւղակը, Վերի Պաղճաղազ (Վըրը՝ Պաղ), Վարի Պաղճաղազ կամ Գապալինար (Նըրքը՝ Պաղ), որուն կապուած է Չաթալէք գիւղակը, ուր ներկայիս միայն մէկ Հայ ընտանիք կայ: Կայ նաեւ Գարատաշ (Կարատաշ) գիւղակը, որ Հիմնուած է 1942ին, որ սակայն Գարատուրան գիւղին մաս կը կազմէ: 1939էն առաջ կէս մը Հայաբնակ էր նաեւ Տեսթիւր (Տըսթէօր) գիւղակը, այժմ՝ Թուրքիա:

Շրջանի բնակչութեան թուական Հնագոյն տուեալը, առանց աղբիւրը նշելու, կու տայ վեր. Կ. Ս. Թիլքեան, ու կը վերաբերի միայն Քեսապ աւանին. 1848ին ունեցած է 300 տուն բնակչութիւն⁴: 1861ին եւ 1865ին Անտոնեան Միաբանութեան Հայրերու կողմէ առնուած թիւերու Համաձայն՝ Քեսապ ունեցած է 500, Ներքի Գիւղ՝ 10, Չընարճրգ՝ 40, Գարատուրան՝ 60 տուն բնակչութիւն, ընդամենը՝ 610 տուն: Պաղճաղազ եւ Էքիզ Օլուզ կը յիշուին իբրեւ սակաւաթիւ բնակչութեամբ գիւղեր⁵: Վեր. Տիգրան ձ. Նրլորեան կը գրէ. «ԺԹ. դարու կէսին բոլոր շրջանի Հայութիւնը 2000 անձերէ կը բաղկանար. դարուս վերջերը կ'ըսուի, թէ մինչեւ 9000ի բարձրացած է այս թիւը, բայց արտագաղթը պատճառ եղած է, որ այս թիւը պակսի»: Վերջին թիւը Հեղինակը իրաւացի կերպով չափազանցուած կը նկատէ⁶:

1909ի Աղէտին շրջանը կու տայ 150 զո՛ւ⁷: Աղէտէն ետք բնակչութեան թիւը 5527 անձ է⁸: Լաթաքիոյ Երուսաղիմապատկան վանքի տեսուչ Մովսէս վրդ. Ոսկերիչեանի 1911ին կատարած մարդահամարին Համաձայն՝ Քեսապ ունեցած է 2797, Գարատուրան՝ 1290, Քէօրքիւնէ՝ 338, Չինարճրգ՝ 176, Տուզաղաճ՝ 113, Էսկիւրէն՝ 178, Էքիզ Օլուզ՝ 312, Սեւ Աղբիւր՝ 435, Պաշուրտ՝ 85, Վարի Պաղճաղազ՝ 260, Վերի Պաղճաղազ՝ 121 անձ բնակչութիւն. Հետեւաբար շրջանի բնակ-

4.- Վեր. Կարապետ Ս. Թիլքեան, Ինստուճիւզամեակ Քեսապի Հայ Աւետարանական Եկեղեցւոյ (1853-1948), Պէյրութ, էջ 36:

5.- «Աւետիք», Պէյրութ, 1946, թ. 7-8, էջ 148ր:

6.- Վեր. Տիգրան ձ. Նրլորեան, Ոսկեմատեան Հայ Աւետ. Միութեան, Ա. Հատոր, Պէյրութ, 1950, էջ 348:

7.- Վեր. Կ. Ս. Թիլքեան, նշուած գործը, էջ 30:

8.- Վեր. Տիգրան ձ. Նրլորեան, նշուած գործը, էջ 348:

չուժեան ընդհանուր թիւն է՝ 6106 անձ⁹: Մեծ Եղեռնին բնակչութեան շուրջ երկու երրորդը կը գոհուի: Տարագրութենէն տուն կը վերադառնան 2200 հոգի¹⁰: 1921ին ամբողջ շրջանը ունի 2500 անձ¹¹: 1925ին՝ 3000 անձ¹²: 1947ին կը հայրենադարձուին 2407 անձ¹³: 1955ին շրջանը կը հաշուէ 1632 հոգի միայն¹⁴:

Շրջանը մինչեւ 20րդ դարու 20ական թուականները ամբողջովին հայաբնակ էր: Անկէ ետք արաբ տարր մը մշտական բնակչութիւն սկսաւ հաստատել Քեսապ աւանին եւ շրջակայ կարգ մը գիւղերուն մէջ: Ան Սուրիոյ յայտնի ամարանոցներէն մէկն է ներկայիս: Ամրան եղանակը հոն անցընել կը փութան հազարաւոր սուրիացիներ եւ օտարերկրացիներ: Ասոնց մէջ մեծ թիւ կը ներկայացնեն Սուրիոյ տարբեր քաղաքներէն, յատկապէս Հալէպէն եկող հայեր: Շատերը ունին սեփական տուն ու տեղ: Սուրիահայ երիտասարդական ու բարեսիրական միութիւններէն շատեր ամառնային կեդրոններ ունին հոն:

Ներկայիս իրենց բնօրրանին մէջ ապրող քեսապցիներու թիւը շուրջ 2000 է: Ամրան եւ տօնական օրերուն Պէյրութէն, Հալէպէն, Դամասկոսէն, Լաթաքիայէն եւ այլ տեղերէ հայրենի գիւղ եկող քեսապցիները այդ թիւը շուրջ հազարով մը կրնան բարձրացնել: Կարգ մը ենթադրական հաշուումներու համաձայն աշխարհի մէջ 10-12 հազար քեսապցիներ կան, որոնք բացի վերոյիշեալ քաղաքներէն, կ'ապրին Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Գանատա, իսկ աւելի փոքրաթիւ կերպով՝ Աւստրալիա, Արաբական Մոցի երկիրներ, Լիբանան, Յորդանան, Իրաք, Կիպրոս, Ֆրանսա, Արժանթին եւ քիչ մը ամէն տեղ: 1880ական թուականներէն ի վեր արտագաղթը հարիւրաւոր ընտանիքներ խլած տարած է Քեսապէն: Մայր Հայրենիքի մէջ քեսապցի բազմաթիւ ընտանիքներ խմբուած են Երեւանի Շահումեան թաղամասին մէջ:

Քեսապի շրջանը իր հոգեւոր եւ կրթական վերելքին կը սկսի 19րդ դարու կէսերուն, երբ մանաւանդ բողոքական առաքելութիւնները մուտք կը գործեն հոն: 1890ական թուականներուն ազգային, գաղափարական եւ միութենական գործունէութիւնները ընթացք կ'առնեն: Մայր Եկեղեցին եւս որոշ կենսունակութիւն մը կը ցուցաբերէ: 1848ին միայն մէկ դպրոց ունեցող այս հայութիւնը ցարդ հաշուած է 53 դպրոցներ: Այժմ կը գործեն ազգային, աւետարանական եւ կաթողիկէ երեք նախակրթարաններ, երեքն ալ Քեսապ աւանին մէջ: 2008ին Քեսապի ազգային վարժարանը օժտուեցաւ միջնակարգ եւ երկրոր-

դական բաժիններով:

Գաղութը սերտ կապեր ունի Սփիւռքի հոգեւոր, մշակութային եւ միութենական կեդրոններուն հետ:

3.- ՔԵՍԱՊԻ ԲԱՐԲԱՌԸ ԵՒ ԱՆՈՐ ՏԱՐԱԾՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Քեսապի բարբառ կը կոչուի Քեսապի շրջանի Հայ բնակչութեան Հայերէն խօսուածքը: Շրջանի Հայերը զայն կը կոչեն քիստինուօք (քրիստոնեայի լեզու) կամ մասնաւորեկով՝ քէսպլնուօք (Քեսապի լեզու):

Օսմանեան Կայսրութեան վերջին շրջանին թրքախօս էին շրջանի հարաւը գտնուող երեք գիւղակներու՝ Վերի Պաղճաղազի, Վարի Պաղճաղազի եւ Չաթալլէքի շատ մը ընտանիքները: 1920ական թուականներէն սկսեալ անոնք եւս անցան լրիւ բարբառախօսութեան:

Շրջանին մէջ բարբառը հաղորդակցութեան միակ միջոցն էր: Շատեր, մանաւանդ կանայք, բարբառէն բացի ուրիշ լեզու չէին գիտեր դեռ մինչեւ Մեծ Հայրենադարձութեան տարին: 1920ական թուականներուն Քեսապի շրջանին մէջ տեղաւորուած արաբ ալեւի ընտանիքներ սորվեցան բարբառը եւ տեղացիներուն հետ կը խօսին բարբառով:

Օսմանեան իշխանութեան շրջանին թրքերէնը ծանօթ էր այր մարդոց մէկ խաւին, թրքաբնակ գիւղերու մերձակայ Հայ բնակչութեան կամ թուրքմէն գիւղերու մօտ ծառայութեան գացած ընտանիքներուն: Թրքերէնը տարածում կը գտնէ ընտանիքներէ ներս մանաւանդ Աւետարանական Եկեղեցւոյ միջոցով, ուր պաշտամունքները մինչեւ 20րդ դարու սկիզբը թրքերէն կը կատարուէին, իսկ հոգեւոր գրականութիւնն ալ հայատառ թրքերէն էր: Այդ շրջանին արաբերէն գիտէին քիչերը միայն: 1920ական թուականներէն ետք արաբերէնին ծանօթացան դպրոցի միջոցով: Ներկայիս ամէն քեսապցի ազատօրէն կը խօսի խօսակցական արաբերէնը եւ գրաճանաչ է:

Գրական արեւմտահայերէնը դպրոցի եւ մշակութային միութիւններու ջանքերով շրջանին մէջ բաւական տարածում կը գտնէ 19րդ դարու վերջերէն: Փաստ է, որ 1910ին ազգային դպրոցի տնօրէնին՝ ամավերջի Հանդէսին արտասանած խօսքը ծնողներուն համար բարբառի կը թարգմանուի տեղւոյն վրայ:

Քեսապցիք բարբառով կը խօսէին նաեւ Սուէտիոյ կամ Մուսա Լերան, Լաթաքիոյ մօտիկ Արամօ եւ Ղնեմիէ գիւղերու Հայ բնակչութեան հետ: Անոնք եւս իրենց բարբառները կը կոչէին քիստինուօք ու գրեթէ դժուարութիւն չունէին գիրար հասկնալու: 1939ին մուսալեռցիք պարպեցին իրենց գիւղերը: Հոն այժմ կը մնայ միայն Վազըֆ գիւղը ու կը պահէ բարբառը, իսկ Արամոյի եւ Ղնեմիէի բնակիչները 1947ին մեծ մասով ներգաղթեցին Հայրենիք, իսկ մնացող սակաւ ընտանիքներն ալ կորսնցուցին բարբառը եւ անցան արաբախօսութեան:

9.- Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Ա. հատոր, Հալէպ, 1996, էջ 53ի ցանկը, ուր Գայաճըզը՝ Սեւ աղբիւրն է, իսկ Ֆազը Հասանը՝ Վարի Պաղճաղազը. տե՛ս նաեւ Մովսէս վրդ. Ոսկերիչեանի Քեսապի շրջանի մարդահամարի ցանկերը, էջ 393-465:

10.- Ալպոմ Քեսապի եւ շրջակայից, Պէյրութ, 1955, էջ 26:

11.- «Հայաստանի Կոչնակ», 1921, թ. 14, էջ 487ա:

12.- «Սուրիահայ Տարեցոյց», Հալէպ, 1926, Բ. տարի, էջ 223-224:

13.- Ալպոմ, նշուած գործը, էջ 27, Գ. գլխաւոր սիւնակ: Գումարը մերն է:

14.- Նոյնը, Ա. սիւնակ: Գումարը մերն է:

Մեծերը կը պատմէին, թէ դեռ մինչեւ 1850ական թուականները քիստինուօք կը խօսէին նաեւ Քեսապի շրջանին արեւելեան կողմերը գտնուող Արֆալի, Կոչի, Եամատի, Գոնտունա, Վերին Թընզըրի եւ այլ գիւղակներու, ինչպէս նաեւ Ռուճի արեւմտեան Հովտի Բուլուր Դրէն կոչուող երկու մեծ գիւղերու՝ Գնիէի եւ Եագուպիէի հայերը: Անոնք յետոյ բոլորովին կորսնցուցին իրենց բարբառը եւ անցան արաբախօսութեան: Վերջին երկու գիւղերը տակաւին կ'ապրին, ու իրենց արաբերէն խօսուածքին մէջ պահուած հայերէն բառերն ու արտայայտութիւնները ցոյց կու տան, որ անոնց բարբառը պէտք է շատ մօտիկ ըլլար Քեսապի խօսուածքին:

Քիստինուօք խօսող այս շրջանակները, իրարմէ 6-10 ժամ Հետիոտն Հեռուորութեան վրայ, ունէին ազգակցական ու խնամիական կապեր, ու մինչեւ 1939 թուական՝ Համաժողովրդական տօնախմբութիւններու օրեր (Ս. Վարդավառ կամ Պալլում՝ Քեսապ, Ս. Սաչ՝ Սուէտիա, Ս. Աստուածածին՝ Արամօ, Ս. Գէորգ (ապա Ս. Աննա)՝ Եագուպիէ), երբ երեք օր տեւող ուխտագնացութիւնները քովէ քով կը բերէին զանոնք:

Քիստինուօք խօսող այս շրջանակին ամէնէն մօտիկ հայախօս շրջանը Պէյլանն էր, որմէ հիւսիս արեւելք գտնուող հայկական շրջանները լրիւ թրքախօս էին՝ Տէօրթ Եօլ, Հասան Պէյլի, Քիլիս, Այնթապ եւ այլն:

Քիստինուօք խօսող այս շրջանակին մէջ ներկայիս միայն Քեսապի բարբառը կ'ապրի իր ամբողջ բնօրրանին մէջ եւ առօրեային մէջ չի գիշիր գրական արեւմտահայերէնին, որուն բոլորը կը տիրապետեն շրջանին մէջ: Փոքրիկները բարբառին կը վարժուին որոշ տարիքէ մը վերջ: Բարբառը կ'ապրի նաեւ Քեսապէն դուրս գտնուող շատ ընտանիքներու եւ հայրենակիցներու շրջանակին մէջ: Քեսապցիք ամէնուր հպարտութեամբ կը սիրեն գործածել իրենց բարբառը:

4.- ՔԵՍԱՊԻ ԲԱՐԲԱՌԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Հայ բարբառագիտութեան հիմնադիր Հր. Աճառեան «Սուրիայի Բարբառ» ընդհանուր անունին տակ կը դնէ Սուէտիոյ, Արամոյի, Ղնէմիէի, Գնիէի (Ղնիէ) եւ Եագուպիէի հայերէն խօսուածքները¹⁶, իսկ նոյն շրջանակի կարգ մը խօսուածքներ «Անթաքայի (Անտիօք) բարբառ» ընդհանուր անունին տակ կը նշէ իբրեւ Կիլիկիայի բարբառի

15.- Դժբախտաբար ձեռքի տակ ունենալ չկրցայ Հր. Աճառեանի «Հայ Բարբառագիտութիւն. ուրուագիծ եւ դասաւորութիւն բարբառի՝ բարբառագիտական քարտէզով» (Նոր Նախիջեան, 1911) գործը. օգտագործեցի նոյնին «Հայոց Լեզուի Պատմութեան» երկրորդ հատորի (Երեւան, 1951) «Հայերէնի Բարբառները» գլուխը, որ առաջինին ամփոփ շարադրանքն է (առանց ներածութեան եւ նմոյշներու): Վերի տեղեկութեան համար տե՛ս անդ. էջ 348:

ենթաբարբառ¹⁶: Աճառեան իր «Հայոց խօսած լեզուներու եւ բարբառներու քարտէզ»-ին¹⁷ մէջ, թիւր տեղեկութիւններու վրայ հիմնուելով, Քեսապի բարբառին բնակավայրը նշանակած է Անտիօքէն հիւսիս, մինչդեռ ան կը գտնուի վերոյիշեալ գիւղախումբերու կեդրոնը, Անտիօքէն հարաւ արեւմուտք: Աշխարհագրական այս աղօտ պատկերացումն է, կը կարծենք, պատճառը, որ ան նախ Քեսապի բարբառը զատելով Սուրիայի բարբառէն՝ Անթաքայի բարբառ անունով կը դնէ Կիլիկիայի բարբառախումբին մէջ, բայց Սուէտիոյ բարբառին նուիրուած իր աշխատասիրութեան մէջ՝ զայն կրկին կը բերէ Սուրիայի բարբառախումբին մէջ՝ Սուէտիոյ եւ Արամոյի բարբառներուն հետ¹⁸: Իր գործերուն մէջ (Լիակատար Քերականութիւն, Հայոց Լեզուի Պատմութիւն, Արմատական Բառարան) Անտիօքի բարբառէն վկայակոչուած փաստերը յաճախ յատուկ են Քեսապի բարբառին, սակայն միայն մէկ անգամ Արմատական Բառարանին մէջ կը հանդիպինք Քեսապ տեղանունի գործածութեան. այսպէս, քէյնթ (կամ քենթ, քենդ, «էգ շուն») գլխաբառի բարբառային ձեւերու բաժնին մէջ գրած է. «Պահուած է Անտիօքի Քեսապ գիւղում՝ քէյնթ «աղջիկ» ձեւով»¹⁹:

Քեսապի բարբառին առաւել խոր ուսումնասիրութեամբ եւ նկարագրութեամբ կը զբաղի Արարատ Ղարիբեան: Ան «Հայ բարբառների դասակարգման հարցի շուրջը» յօդուածին մէջ²⁰ քննելով շարք մը բարբառներու սահմանական եղանակի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներու կազմութեան ձեւերը՝ նոր ճիւղեր կ'աւելցնէ Աճառեանի յայտնի երեք ճիւղերուն վրայ: Ասոնց մէջ՝ հայ, հա, ա, (ահա) բառ-մասնիկով այդ ժամանակները կազմող բարբառները կը ներկայացնէ իբրեւ առանձին ճիւղ: Այս ճիւղին գլխաւոր բարբառը կը նկատէ Քեսապի բարբառը: Իր մէկ այլ գործին մէջ, «Հայ Բարբառների Հաճիւղը» գլուխին տակ կու տայ Քեսապի բարբառին համառօտ նկարագրութիւնը²¹:

Հոն ներկայացուած են բարբառի ձայնաւորներու պատմական հնչիւնափոխութիւնը, բաղաձայնական եռաստիճան համակարգին մէջ ձայնեղներու խլացումն ու խուլերու ձայնեղացումը իբրեւ տեղաշարժ-տեղափոխութիւն: Զեւաբանութեան մէջ հեղինակը կը թուէ 11 յոգնակերտներ՝ օրինակներով, 6 Հոլովներ՝ 4 օրինակով, թուականները, անձնական դերանունները, մասամբ նաեւ ցուցական եւ հարցական դերանունները իրենց Հոլովումներով, կու տայ սահմանական եղանակի

16.- Հրաչեայ Աճառեան, Հայոց Լեզուի Պատմութիւն, Բ. հատոր, էջ 346:
17.- Տեսած ենք Ա. Մ. Գրիգորեան, Հայ Բարբառագիտութեան Դասընթացք (Երեւան, 1957), ներդիր քարտէզը:
18.- Հրաչեայ Աճառեան, Քննութիւն Կիլիկիայի Բարբառի, Երեւան, 2003, տե՛ս երկրորդ մաս, Սուէտիայի (Մուսա Լեբան) բարբառը բաժնի 347-351րդ էջերը:
19.- Պէտք է ըլլայ քինթ. քէյնթ կամ քէնթ ունինք գր. քիթ բառին դիմաց:
20.- Տե՛ս Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ Հասարակական գիտութիւններու, 1952, թ. 8:
21.- Արարատ Ղարիբեան, Հայ Բարբառագիտութիւն, Եր., 1953, էջ 443-457:

ներկայ, անցեալ անկատար, ապառնի եւ յարակատար ժամանակներու կազմութեան ձեւերն ու խոնարհումի ամբողջական պատկերը: Նմոյշներէն մէկը Հատուած մըն է Յովհաննէս Թումանեանի «Գիքոր»էն, միւսերը՝ մանրապատումներ Նասրէտտին Սոճայէն:

Արարատ Ղարիբեանի կատարած նկարագրութիւնը Համառօտ է, ընդամէնը 14 էջ, ոչ ամբողջական, միւս կողմէ, Հոն նշուած որոշ օրինաչափութիւններ ալ չեն Համաձայնիր բարբառի իսկութեան. այսուհանդերձ՝ ան ընդհանուր պատկերացում մը կրցած է տալ բարբառի մասին եւ գիտական շրջանառութեան մէջ մտցուցած զայն:

Քեսապի բարբառին մէջընդմէջ անդրադառնալով՝ անկէ որոշ երեւոյթներ կը ներկայացնէ նաեւ Տիգրան Անդրէասեան՝ իր «Սուէտիայի Բարբառը» (Երեւան, 1967) ուսումնասիրութեան մէջ:

Քեսապի բարբառին ամբողջական նկարագրութիւնը կատարելու ջանադրութեամբ լոյս տեսած յաջորդ գործը եղաւ մեր այս աշխատութիւնը, որ լոյս տեսաւ Հալէպ, 1986ին: Գիրքի այս երկրորդ Հրատարակութիւնը լոյս կը տեսնէ որոշ բարեփոխութիւններով ու լրացումներով:

Այս գիրքի առաջին Հրատարակութենէն ետք Քեսապի պատմութեան, ազգագրութեան եւ բանահիւսութեան վերաբերող նիւթերու մեր Հաւաքումին ընթացքին²² մեր ձեռքը անցան նաեւ Քեսապի բարբառին վերաբերող անտիպ նիւթեր, որոնցմէ ամէնէն կարելորն է Տոքթ. Աւետիս Ինճեճիքեանի՝ Քեսապին նուիրուած աշխատութեան մէկ բաժինը, զոր Հրատարակեցինք այլ Հրապարակումներու Հետ²³: Մեզի անյայտ բարբառային բառերու շարք մը կար Տոքթ. Ինճեճիքեանի աշխատութեան մէջ, նաեւ այլ բառեր, զորս մենք գտած էինք յետազային: Արդ, այդ շուրջ Հինգ Հարիւր նոր բառերը մենք ներմուծեցինք այս Հրատարակութեան բարբառային բառերու բառարանին մէջ:

5.- ՔԵՍԱՊԻ ԲԱՐԲԱՌԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հր. Աճառեանի կատարած Հայ բարբառներու ձեւաբանական միատեղանիշ դասակարգումին Համաձայն՝ Քեսապի բարբառը կը տեղադրուի ԿԸ ճիւղին մէջ իբրեւ Կիլիկիայի բարբառի ենթաբարբառը, «Անտիոքի Բարբառ» ընդհանուր անունին տակ:

22.- Տե՛ս մեր «Քեսապ» եռահատոր աշխատութիւնը, Ա. Հատոր, Հալէպ, 1995, Բ. Հատոր, Հալէպ, 1998, Գ. Հատոր, Հալէպ, 2004, ինչպէս նաեւ «Անտիոքի Մերձակայ Ռուճի Հովիտի Հայերը», Անթիլիաս, 2006:

23.- Յակոբ Չոլաքեան, Քեսապ, Գ. Հատոր, Տոքթ. Աւետիս Ինճեճիքեան, Քեսապ եւ Իր Բարբառը, էջ 11-181, ուր բարբառին նուիրած է շուրջ 75 էջ: Քեսապի բարբառին առաջին Համառօտ նկարագրութիւններէն մէկը կը պատկանի Ալպերթ Ս. Աբէլեանին, գրուած 1913ին, որ լոյս տեսաւ Երուանդ Հ. Քասունիի ներածականով եւ ծանօթագրութիւններով՝ «Քեսապ եւ Իր Գիւղերը» խորագրով, Պէյրութ, 2002:

Քեսապի բարբառին աւելի մօտէն ծանօթացած Արարատ Ղարիբեան զայն զատելով ԿԸ ճիւղի բարբառներու խումբէն, կը նկատէ բարբառներու նոր ճիւղի մը՝ ՀԱ ճիւղին գլխաւոր բարբառը, իսկ Հնչիւնական միայնականիշ դասակարգումին Համաձայն՝ զայն կը դասէ միջին Հայերէնի բաղաձայնական Համակարգը ունեցող բարբառներու շարքին, որուն յատուկ է եռաստիճան բաղաձայնական Համակարգի տեղաշարժ-տեղափոխութիւնը՝ ձայնեղներու խլացումով եւ խուլերու ձայնեղացումով:

էդ. Աղայեանի կատարած Հայ բարբառներու ձեւաբանական երկ-ճիւղ բաժանումին Համաձայն՝ Քեսապի բարբառը կը մտնէ երկրորդ ճիւղի, այսինքն՝ գրաբարակերտ մասնիկաւոր կազմութեամբ բարբառներու ՀԱ ենթաճիւղին մէջ²⁴:

Ըստ Հայերէն բարբառներու բազմայատկանիշ վիճակագրական դասակարգումին՝ բարբառը կը մտնէ արեւմտեան խմբակցութեան Անտիոքի կամ ծայր Հարաւ արեւմտեան բարբառախումբի Քեսապ-Սուէտիա անկախ ենթախումբին մէջ՝ Քապուսիէի, Եօղուն Օլուգի, Հաճի Հապիպլիի եւ Արամոյի խօսուածքներուն Հետ²⁵:

Անհրաժեշտ կը գտնեմ նկատել տալու, որ Քեսապի բարբառը չափազանց Հարուստ է զուգաձեւութիւններով ու բազմաձեւութիւններով, ինչպէս պատմական Հնչիւնափոխութեան բազմաթիւ վիճակներուն, այդպէս ալ մանաւանդ Հոլովական ու խոնարհումի իր Համակարգերուն մէջ, նոյնպէս եւ շարահիւսական որոշ պարագաներու: Այդ այլազանութիւնը մտածել կու տայ Քեսապի բարբառի տարածքին մէջ փրնտոնել տարբեր խօսուածքներ, ինչպէս տարբեր գիւղերու, մինչեւ իսկ տարբեր թաղերու կամ ընտանիքներու մօտ: Սակայն, վիճակագրական աշխատանքներու արդիւնքը ցոյց կու տայ, որ անոնք, գէթ մեր աշխատասիրութեան այս երկար ժամանակամիջոցին մէջ (1965-էն ի վեր) չըջանին այս կամ այն գիւղին կամ թաղին յատուկ երեւոյթներ չեն, այսինքն՝ ենթաբարբառային բնոյթ չունին, որովհետեւ բազմաձեւութիւնը ինքնին բարբառային երեւոյթ մըն է ու կրնայ պատահիլ նոյն շրջանակի բարբառախօս բոլոր անհատներուն քով:

24.- Էդուարդ Աղայեան, Մեղրու Բարբառը, Երեւան, 1954, էջ 404:

25.- Գէորգ Բ. Զահուկեան, Հայ Բարբառագիտութեան Ներածութիւն, Երեւան, 1972, էջ 132:

կ. Ետնալեզուային պայթական է, արաբերէն «կաֆ» գիրին պէս.
կ. կոկորդային պայթական է, արաբերէն «այն» գիրին պէս:

Ետնալեզուային պայթականներու քմայնացումը յատուկ չէ Քե-
սապի բարբառին: Ան քիչ անգամ կը պատահի բառակիրքին՝ քմային
եւ վերին բարձրութեան ձայնաւորներէ առաջ միայն:

Այսպիսով բարբառս ունի 51 Հնչիւն՝ 12 ձայնաւոր, 6 երկբարբառ,
1 եռարբառ, 6 ձայնորդ, 10 պայթական, 6 կիսաչփական, 10 շփա-
կան:

Բ.- ՀնՁՈՅԹՆԵՐՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1.- Ձայնաւորներ

Բարբառի ա ձայնաւորը կը համապատասխանէ գրաբարի

- Ա-ին՝ շեշտակիր դիրքին մէջ, փ, չ, ջ, ճ, չ, բաղաձայններէն առաջ
(ձայնաւորին եւ բաղաձայններուն միջեւ կրնան պատահիլ ն եւ ը
ձայնորդները), նախաշեշտ դիրքերուն մէջ՝ ո ձայնորդէն եւ ղ, խ
չփականներէն առաջ, վերջավանկի ա ձայնաւորին նախորդող դիրքին
մէջ, բազմավանկ բառերու սկիզբը՝ երկու բաղաձայնէ առաջ ընդ-
հանրապէս, մասնակի կերպով՝ բառերու նախաշեշտ բաց ու փակ եւ
այս պայմաններէն դուրս՝ քանի մը բառերու շեշտակիր ու նախաշեշտ
դիրքերուն մէջ.

- Ե-ին՝ նախաշեշտ եւ մասամբ շեշտակիր դիրքերուն մէջ՝ ո
ձայնորդէն առաջ.

- ԱՅ երկբարբառին բազմավանկ բառերու վերջաւորութեան, ուր
իբրեւ ազատ փոփոխակ, երբեմն անկախ տարբերացում՝ կայ Ու, Ը,
եւ Ո ձայնաւորներուն դիմաց՝ մէկ-երկու նախաշեշտ պարագաներու:

Բարբառի օ ձայնաւորը կը համապատասխանէ գրաբարի

- Ա-ին՝ գրեթէ նոյն պարագաներուն, ինչ որ բարբառի ա պարզ
ձայնաւորը, իբրեւ անկախ տարբերացում, երբեմն ալ իբր ազատ փո-
փոխակ.

- Ը եւ Ո ձայնաւորներուն՝ մէկ-երկու նախաշեշտ պարագաներու.

- Ե-ին՝ նախաշեշտ փակ դիրքին մէջ ղ շփականէն առաջ.

- Ի-ին՝ բազմավանկ բառերու վերջայանգին.

- ԱՅ երկբարբառին՝ միավանկ բառերու փակ դիրքին մէջ:

Բնիկ բառերու մէջ ա եւ օ ձայնաւորները կը հակադրուին իրարու
իբրեւ արտասանական եւ ազատ փոփոխականեր, Հնչոյթային տարբե-
րութիւններ չեն ստեղծեր: Պարզ ա-ն քմայնացումի ընդհանուր միտում
ունի բնիկ բառերուն մէջ:

օ ձայնաւորը Հնչոյթային հակադրութիւններ ունի փոխառեալ բա-
ռերու պարզ ա-ին հետ. այսպէս՝

օղօ (Հաղի)

աղա (կալուածատէր)

օս (Հայս)

աս (խաղի թուղթերէն մէկը)

օնս (Հի+այս)

եաս (լծկան եզներու ուղղուած կանչ)

օնն (Հի+այն)

եան (թեք)

Բարբառի է ձայնաւորը կը համապատասխանէ գրաբարի

- Ա-ին՝ նախաշեշտ բաց վանկին մէջ սովորաբար, մասամբ մըն
ալ փակ (բացի ո, ղ, խ, փ, չ, ջ, ճ, չ, բաղաձայններէն առաջ).

- Ի-ին՝ միայն մէկ բառ:

Շեշտակիր դիրքին մէջ չի հանդիպիր: Է ձայնաւորին չի հակա-
դրուիր, որովհետեւ վերջինը բնիկ բառերու առհասարակ միայն շեշ-
տակիր դիրքին մէջ կը հանդիպի: Կը թուի, թէ կարգ մը բառերու
որոշեալ ուղղականի եւ անորոշ սեռականի մէջ է եւ օ ձայնաւորներու
հակադրութիւն մը կայ, ինչպէս՝

լնկանը (տաշտը) - լնկնը՝ (տաշտի)

Բայց հոս իմաստազատիչ յատկանիչը պէտք է փնտոել ը ձայնա-
ւորին տարբեր որակներուն մէջ: Հետեւաբար է ձայնաւորը Հնչոյթային
արժէք չունի, ան օ ձայնաւորին դիրքային փոփոխակն է:

Բարբառի է ձայնաւորը կը համապատասխանէ գրաբարի

- Ի-ին՝ բառերու փակ դիրքին մէջ, ուր կայ նաեւ էյ ազատ փո-
փոխակը.

- ՈՅ եւ մասամբ մըն ալ ԻԻ երկբարբառներուն՝ բազմավանկ
բառերու փակ դիրքին մէջ:

Կը հանդիպի բնիկ բառերու շեշտակիր, իսկ փոխառեալ բառերու
նաեւ նախաշեշտ դիրքերուն մէջ: Իբրեւ Հնչոյթ կը հակադրուի շարք
մը ձայնաւորներու.

է-իէ՝ գէր (Հգիր) - գիէր (Հգէր)

է-ի՝ վէտ (Հվիթ) - վիտ (Հոտն)

է-ուօ՝ էր (Հիւր) - ուօր (Հօր)

է-ուօյ՝ գէն (Հգին) - գուօյն (Հգոյն)

Բարբառի ը ձայնաւորը կը համապատասխանէ գրաբարի

- Ը-ին՝ բառի գրեթէ բոլոր դիրքերուն մէջ.

- Ե-ին՝ նախաշեշտ ը կապակցութենէն եւ ղ շփականէն առաջ եւ
աւելի բազմավանկ բառերու նախաշեշտ բաց եւ փակ վանկերուն մէջ.

- Ո-ին՝ կարգ մը բառերու նախաշեշտ եւ շեշտակիր դիրքերուն եւ
միավանկ բառերուն սկիզբը՝ վը (<ո) կապակցութեան մէջ.

- ՈԻ-ին՝ եռավանկ բառերու նախաշեշտ դիրքին մէջ.

- Ա-ին՝ շարք մը, իսկ է-ին՝ մէկ-երկու բառերու մէջ:

Ը ձայնաւորը իբրեւ յաւելուած կայ նաեւ եուօթթը, էօթթը, էննը,
տուօսը թուականներուն վերջը եւ կարգ մը ը-ով սկսող փոխառեալ
բառերու սկիզբը՝ իբրեւ աճական:

Բացի միավանկ բառերէն, բառասկիզբի ածականէն ու վերջավանկի բաց դիրքէն՝ ը ձայնաւորը ընդհանրապէս ունի ի ազատ փոփոխակը:

Վերջավանկին մէջ երեւան կը բերէ երկու արժէք՝ ը, որ թոյլ ու շեշտազուրկ է, ը', որ լիաձայն ու շեշտակիր է: Առաջինը կը համապատասխանէ գրաբար ը-ին ու վերջավանկին մէջ կ'երեւի մէկուկէս վանկանի բառերու գաղտնավանկին մէջ՝ Թանձր>Թունձրը, մանր>մունտը, մեղր>միէղը եւ այլն, Թըղ//Թը (<Թող) ըղձական եղանակաւորիչին, սահմանականի ներկայ եւ անցեալ անկատար, բացարձակ ապառնի, անկատար ապառնի ժամանակներու կը եւ պըը նախադաս մասնիկներուն, ըր (որ) յարաբերական դերանունին, մը յետադաս յօդին մէջ եւ վերոյիշեալ չորս թուականներուն վերջայանգին: Շեշտազուրկ է նաեւ վերջայանգի ը յօդը: Մնացեալ պարագաներուն՝ ը ձայնաւորը շեշտակիր է:

Ը եւ ը' ձայնաւորները անկախ Հնչոյթներ են: Իմաստազատիչ յատկանիչը ամէնէն աւելի երեւան կու գայ որոշեալ ուղղականի եւ անորոշ սեռականի հակադրութեամբ, ինչպէս՝

- ժանկը (ժանգը) - ժանկը' (ժանգի')
- չուղը (չողը՝ տաքը) - չուղը' (չողի՝ տաքի')
- մումը (մոմը) - մումը' (մոմի')
- բաղարջը - բաղարջը'
- նաեւ՝
- մը (յետադաս յօդը) - մը' (արգելական)

Ի ձայնաւորը կը համապատասխանէ գրաբարի

- Ա-ին՝ ժ, չ, ջ, ճ, չ բաղաձայններէն առաջ եւ մասնակի կերպով՝ շարք մը բառերու նախաշեշտ դիրքերուն մէջ.
- Ե-ին՝ շեշտակիր փակ (բացի ո, դ, իս բաղաձայններէն առաջ), երկվանկ բառերու նախաշեշտ բաց (բացի նոյն բաղաձայններէն առաջ) դիրքերուն մէջ եւ շարք մը միավանկ բառերու սկիզբը. կայ նաեւ նոյն դիրքի ել (<ե) կապակցութեան մէջ.
- է-ին՝ բառավերջին.
- ԱՅ-ին՝ նախաշեշտ, իսկ ԵԱ-ին՝ բազմավանկ բառերու շեշտակիր փակ դիրքերուն մէջ.
- Ո-ին՝ շարք մը բառերու մէջ:

Բարբառի ի ձայնաւորը երբեմն (գրաբարի Ա եւ Ո ձայնաւորներուն դիմաց) իբրեւ արտասանական, երբեմն ալ իբրեւ ազատ տարբերակ ունի ի, իսկ ից ազատ տարբերակը թոյլ կերպով կը զգացուի որոշ բառերու շեշտակիր դիրքին մէջ (գրաբար Ե-ի դիմաց): Լիարժէք Հնչոյթ է, իմաստազատիչ հակադրութիւններ կրնայ կազմել գրեթէ բոլոր ձայնաւորներուն հետ:

Ի ձայնաւորը շարք մը բառերու որոշ դիրքերուն մէջ կրնայ հանդէս

գալ իբրեւ բարբառի ի եւ ը ձայնաւորներու արտասանական տարբերակը, միայն խօսքի շղթային մէջ: Ան յատկապէս զգալի է ս եւ դ յօդերէն առաջ ինկած գաղտնավանկին մէջ: Ազատօրէն կրնայ փոխարինուիլ ը-ով: Հնչոյթ չէ:

- ա ձայնաւորը կը համապատասխանէ գրաբարի
- Ա-ին՝ շեշտակիր դիրքին մէջ, ն եւ մ ձայնորդներէն առաջ (բացի բարբառի նկ, նկ/նդ կապակցութիւններէն առաջ).
- ԱԻ երկբարբառին՝ նախաշեշտ դիրքին մէջ.
- Ո-ին՝ շեշտակիր եւ նախաշեշտ դիրքերուն մէջ.
- ՈԻ-ին՝ երկվանկ բառերու նախաշեշտ եւ աւելի բազմավանկ բառերու նախաշեշտ դիրքերուն նախորդող դիրքերուն մէջ.
- Մասամբ մըն ալ Ե-ին՝ նախաշեշտ դիրքերուն մէջ եւ մէկ-երկու օրինակներով՝ ԵԱ-ին եւ ԱՅ-ին:

Ու ձայնաւորը իբրեւ արտասանական ազատ տարբերակ հանդէս կու գայ ա-ին՝ վերոյիշեալ գրեթէ բոլոր դիրքերուն մէջ: Զօրաւոր է յատկապէս վերջայանգ ԱՅ-ին ու կարգ մը բառերուն մէջ՝ Ը-ին համապատասխանող դիրքերուն մէջ:

Բնիկ բառերու մէջ ա եւ ու ձայնաւորներու արտասանական ազատ տարբերակներ ըլլալու հանգամանքը շարք մը նմանաձայն զոյգեր կը ստեղծէ, ինչպէս՝

կամ (<կամն)	-	կամ (<կեամ)
մամ (<կնքամայր)	-	մամ (<մոմ)
պլրմն (<պարան)	-	պլրմն (<պարոն)

Բնիկ բառերուն մէջ, ա ձայնաւորին նման, ու ձայնաւորն ալ քմայնացման ընդհանուր միտում մը ունի:

Ամենայնդէպս, ա եւ ու ձայնաւորներու իմաստազատիչ տարբերութիւնները երեւան կու գան միայն բնիկ ու փոխառեալ բառերու հակադրութեամբ: Հակադրուող զոյգերուն մէջ առաջիններուն մէջ ձայնաւորը միշտ քմայնացած է, իսկ միւսերուն մէջ պարզ է.

փմս (<փոս)	-	փուս (մշուչ)
փմլ (<փուլ)	-	փուլ (դրոշմաթուղթ)
կում (<կոմ)	-	կում (կարողութիւն)

Օ ձայնաւորը կը համապատասխանէ գրաբարի

- Ո-ին՝ բառին մէջ, շեշտակիր դիրքին, նոյնպէս՝ ԻԻ-ին եւ Ե-ին՝ քանի մը բառերու մէջ:
- ՈԻ-ին՝ բառի շեշտակիր դիրքին մէջ, ուր կան նաեւ օ, օը, էօ արտասանական, դիրքային եւ ազատ փոփոխակները: Հոս անոր դիրքերն են դ, իս շփականներէն, մասամբ ն ձայնորդէն եւ արմատական երկու բաղաձայններէ առաջ, ո ձայնորդէն առաջ եւ վերջ:

Փակ դիրքին մէջ ազատ տարբերակ ունի օը, երբեմն օ եւ էօ: օ ձայնաւորին զգալի դիրքն է գրաբարի ում կամ ումն, ուկ եւ ուկն

կապակցութիւնները: Իբրեւ ազատ տարբերակ բացառուած չեն օր եւ էօ երկբարբառայինները:

Օ ձայնաւորը (օ, օր, էօ տարբերակներով) կրնայ իմաստային Հակադրութիւններ ստեղծել միւս ձայնաւորներուն հետ: Լիարժէք Հնչոյթ է:

Այսպիսով Քեսապի բարբառի 12 ձայնաւոր Հնչիւններէն 9ը Հնչոյթներ են՝ ա, օ (է), է, ը (ի), ը', ի, ու, օ (օ, օր, էօ):

2.- Երկբարբառներ

էյ երկբարբառը կը Հանդիպի շարք մը բառերու շեշտակիր փակ դիրքին մէջ, իբրեւ բարբառի է ձայնաւորին (գրաբար Ի-ի դիմաց) ազատ տարբերակը: Անկախ Հնչոյթ չէ:

էօ երկբարբառը կը Համապատասխանէ գրաբար Ո-ին՝ վերջավանկին մէջ, ուր Հանդէս կու գայ բարբառի օ (օ) ձայնաւորին իբրեւ դիրքային (վերջայանգ) եւ արտասանական (փակ դիրքի մէջ երբեմն) տարբերակը: Կը Հանդիպի նաեւ փոխառեալ բառերու նախաշեշտ դիրքերուն մէջ, ու դարձեալ չի Հակադրուիր օ (օ) ձայնաւորին, որովհետեւ վերջինը միայն վերջավանկին մէջ տեղ ունի:

Նոյնն է նաեւ օր երկբարբառը, որ Հանդէս կու գայ օ (օ) ձայնաւորին եւ ուօ երկբարբառին իբրեւ արտասանական ազատ տարբերակը:

Իյ երկբարբառը նոյնպէս անկախ Հնչոյթ չէ, կը Հանդիպի շարք մը բառերու շեշտակիր փակ դիրքին մէջ, իբրեւ բարբառի ի ձայնաւորին (գրաբար Ե-ի դիմաց) ազատ տարբերակը:

Իէ երկբարբառը կը Համապատասխանէ գրաբարի

- Ե-ին՝ ո ձայնորդէն եւ ղ, խ շփականներէն առաջ եւ մասնակի կերպով՝ շարք մը այլ բառերու շեշտակիր դիրքերուն մէջ, մէկ-երկու միավանկ բառերու սկիզբը՝ եիէ (երգ>եիէրգ, յարդ>եիէրդ) խումբին մէջ:

- է-ին՝ ընդհանրապէս.

- Իի երկբարբառին՝ մէկ-երկու բառերու շեշտակիր փակ դիրքերուն մէջ:

Կը պատահի նաեւ քանի մը միավանկ բառերու վերջայանգին. բացառականի Հոլովամասնիկ է՝ ի տարբերակով: Լիարժէք Հնչոյթ է, կրնայ Հակադրուիլ բարբառի ինչպէս միւս, այդպէս ալ է եւ ի ձայնաւորներուն.

գիէր (<գէր) - գէր (<գիր)
դիէ մը (<դում մը) - դէ' (<դի'ր)

միէ մը (մի ոմն) - մի (<մեզ)
կիէր (<կայր) - կիր (<կեր)

Ուօ երկբարբառը կը Համապատասխանէ գրաբարի
- Ա-ին (բացառուած է ն, մ ձայնորդներէն, Ժ, շ, ջ, ճ, չ բաղա-
ձայններէն առաջ, վերջիններուն եւ ձայնաւորին միջեւ կրնան պատահիլ
ն եւ ը ձայնորդները).

- Ո-ին՝ միավանկ բառերուն մէջ՝ վ շփականէն առաջ, եուօ, եուօւ, եուօն (Հոս, Հող, Հոն) դերանուններուն եւ քանի մը այլ բառերու
մէջ.

- Աի երկբարբառին:

Միշտ շեշտակիր փակ դիրք ունի՝ օր ազատ տարբերակով: Կը Հակադրուի գրեթէ բոլոր ձայնաւորներուն, որոնց կարգին՝ նաեւ մօտիկ ու, օ, օ ձայնաւորներուն, էօ երկբարբառին եւ ուօյ եռաբարբառին.

խուօղ (<խաղ) - խուղ (<Հող)
դուօր (<դար) - դմր (<դէպի ուր)
ծուօն (<ծառ) - ծօն (<ծուռ)
տուօ (<ծօ) - տէօ' (<տո'ւր)
կուօր (<կար) - կուօյր (<կոյր)
քուօր (<քար) - քուօյր (<քոյր)

Ուօյ եռաբարբառը կը Համապատասխանէ գրաբարի

- ՈՅ-ին՝ միավանկ եւ քանի մը բազմավանկ բառերու շեշտակիր փակ դիրքին մէջ:

- ՈՅ-ին՝ միավանկ բառերու փակ դիրքին մէջ:

Վերջայանգին չի պատահիր: Լիարժէք Հնչոյթ է, կրնայ Հակա-
դրուիլ գրեթէ բոլոր ձայնաւորներուն, որոնց կարգին՝ մօտիկ օ, ու
ձայնաւորներուն, էօ եւ ուօ երկբարբառներուն.

բուօյն (<բոյն) - բմն (<բան)
դուօյր (<դոյր) - դմր (<դէպի ուր)
քուօյն (<քոյ) - քէօն (<քուն)
քուօյր (<քոյր) - քուօր (<քար)

3.- Ձայնորդներ

Գրաբարի ձայնորդները մասնակի փոփոխութիւններ ունին բար-
բառին մէջ: Այսպէս՝

Բ ձայնորդը ապահնչոյթացած է: Ռ եւ ը ձայնորդներու միջեւ
բառային Հակադրութեան միւսներ չեն պահուած, որովհետեւ՝

ա.- պատմական Հնչիւնափոխութեան ընթացքին՝ անոնց կից
ձայնաւորը տարբեր փոփոխութիւններու ենթարկուած է.

ձեռն>ձառ - ձեր>ձիր

Հեռու>Հառու - Հերու>Հիրէօ
բեռն>բիէն - բեր>բի
բ.- գրաբարի Հակադրուող միաւորներէն մէկը չէ պահուած կամ
երկուքն ալ.

վառեմ>վառիմ - վարեմ>...
դեռ>դառ - դեր>...
առու>առուօն - արու>...
ուռ>օռ - ուր>...
լուռ>... - լուր>...

գ.- Իսկ այն պարագային, երբ նախորդ ձայնաւորները նոյն Հըն-
չինսփոխութեան կեննթարկուին՝ Հակադրութիւնը կը ստեղծուի ուրիշ
տեղ՝

մոռանամ>մանում - մեռանիմ>մանէմ:

Այսպիսով ը ձայնորդը տեղ մը ու-ի արտասանական տարբերակն
է, ուրիշ տեղ՝ անոր ազատ տարբերակը: Բաւական շատ են նաեւ ը
ձայնորդի անկման պարագաները կամ ինչպէս վերի երկրորդ շարքէն
կ'երեւի՝ ը ունեցող բնիկ բառերու զգալի նուազումը:

Բ (ո) ձայնորդը կրնայ Հանդիպիլ բառին սկիզբը, ընդհանրապէս
փոխառեալ բառեր, ինչպէս՝ ըանկ (երանգ), ըանճապար եւ այլն, բայց
սովորաբար, աւելի Հին փոխառութիւններու մէջ, ունի ը աճականը՝
ըրբօզ (բրինձ), ըրբօպ (ոռւպ), ըրօպ (քառորդ), ըրբուօխ (Հագուստ),
ըրխաթ (Հանգիստ):

Գրաբարի Համեմատութեամբ բարբառի ե(Հի//յ) ձայնորդի ան-
փոփոխ պարագաներէն գլխաւորը ձայնաւորով սկսող բառերու ե (Հյ)
նախդիրն է՝ երկէնքը (յերկինս), եէս (յիս), եաչխուօրքը (յաչխարհ):
Կը պատահի նաեւ միավանկ բառերու սկիզբը իբրեւ քարացած ձեւ
կամ յաւելուած՝ յարդ>բիէրդ, յո>եօ, ետ>եիտ, երբ>եիէբ, երգ>եիէրգ,
եղն>եիէղ, բառին մէջ՝ գրաբարի նկ եւ նգ խումբերուն, երբեմն ալ գ
եւ կ պայթականներուն դիմաց, փոխառեալ բառերու բոլոր դիրքերուն
մէջ: Իբրեւ բաղադրիչ կայ նաեւ էյ, իյ երկբարբառայիններուն եւ ուօյ
եռաբարբառին մէջ:

Բառասկզբին կը տառադարձենք ե գիրով, իսկ մէջն ու վերջը՝ յ:

Մ ձայնորդին Համար բացառուած է բարբառի պ ձայնեղ պայթա-
կանին նախորդող դիրքը՝ ամպ>անպ, ամբար>անպուօր, Համարեմ
>Հննպըրիմ, խաչահամբոյր>խաչանպուօր եւ այլն:

4.- Շփականներ

Շփականներու երկանդամ Համակարգը՝ ձայնեղութիւն-խլութիւն
յատկանիչով, առկայ է բարբառին մէջ: Կան որոշ սահմանափակումներ
եւ ընդլայնումներ:

Ղ ձայնեղ շփականը կը Հանդիպի նաեւ սկիզբը՝ ընդհանրապէս
փոխառեալ բառեր, որոնց շարքին քանի մը Հատ ալ Հին Հայերէնեան՝
ղօղ (<ողն), դէօնկ (<եղունգ), դաղէկ (<խաղիկ՝ յօղ), դուրկիմ (<ու-
դարկեմ), Ղալան (<Ղուկաս), Ղէգուօր//Ղանգար (<Ղազար): Կրնայ
այս դիրքին մէջ ալ Հնչոյթային Հակադրութիւն ստեղծել խ-ին Հեո՝
դէօնկ (<եղունգ) - խօնկ (<խունկ): Շարք մը, ընդհանրապէս փոխառ-
եալ, բառերու մէջ եւ վերջը կ' պայթականն ու ղ շփականը ազատ
տարբերակներ են՝ կափուօն//կափուօղ (կափարիչ), առքստուօն//
առքստուօղ (<առաստաղ), բառի աճման պարագային՝ ղ-ն դիրքային
տարբերակ է՝ կափուօն-կափաղիմ: Բառասկիզբին բացառուած է ղ-ի
տարբերակային արժէքը: Բնիկ բառերուն մէջ միտում ունի բացառ-
ուելու բառավերջին խուլ պայթականէ առաջ դիրքին մէջ՝ մեղք>
միէլք, ճեղք>ճիէլք, թուղթ>թօխթ, աղբ>ուօխբ, նաեւ բառամէջին,
չնչեղ խուլէ առաջ՝ խաղք ընել>Հանքըրիմ, աղքատ>անքուօտ,
քաղցրանամ>քանքըրնում, աղաչեմ>անչիմ, ղՀ խումբը՝ աղուհացք>
անխուօսք, քաղհանեմ>քանիմ: Բայց այս երեւոյթը աւարտած չէ:

Պ ձայնեղ կոկորդային շփականը կը Համապատասխանէ արա-
բերէն «այն» բաղաձայնին: Կ'երեւի բառի բոլոր դիրքերուն մէջ: Փո-
խառեալ Հնչոյթ է:

Հ խուլ շփականին Համար բացառուած է ը ձայնորդին յաջորդող
դիրքը: Գրաբարի Համեմատութեամբ շատ են Հ-ի անկման եւ յաւելման
պարագաները:

Վ շփականի գործառական ոլորտի ընդլայնում կայ լ>վ պատմական
Հնչինսփոխութեան Հետեւանքով:

Փ շփականը կը Հանդիպի յատկապէս օտար բառերու բոլոր դիր-
քերուն մէջ: Բնիկ քանի մը բառերու մէջ կը Համապատասխանէ գրա-
բար վ-ին՝ վայթեմ>ֆիթիմ, ֆիթէօկ (թափթփուկ), ֆիթֆիթիմ
(թափթփել), լ>վ-ին՝ տերեւ>տիրիֆ. Հ-ին՝ սահիմ>սիֆէմ, սիֆէօկ
(սահուն): Ուրիշ օրինակներ չկան:

5.- Պայթականներ եւ կիսաշփականներ

Քեսապի բարբառը պահած է գրաբարի պայթական եւ կիսա-
շփական բաղաձայններու եռաստիճանութիւնը, սակայն ենթարկուած
է տեղաշարժ-տեղափոխութեան, ուր գրաբարի ձայնեղները խուլցած
են, իսկ խուլերը՝ ձայնեղացած: Շնչեղ խուլերը տեղաշարժի չեն ենթար-
կուած: Այսպիսով, բարբառը ունի կիլիկեան Հայերէնի բաղաձայնական
Համակարգը:

գրաբար	ձայնեղ	խուլ	չնչեղ խուլ
բարբառ	խուլ	ձայնեղ	չնչեղ խուլ
	բ	պ	փ
	գ	կ	ք
	դ	տ	թ
	ձ	ծ	ց
	ջ	ճ	չ

Այս եռանդամ շարքը չեն խանգարեր՝

ա.- գրաբարի ձայնեղներու պահպանումը ն ձայնորդէն ետք.

բ.- չնչեղ խուլներուն խլացումը բարբառի խուլ շփականներէն ետք.

գ.- կիսաչփականներու պարզ շփականի վերածումը՝ յատկապէս գ (<ք) խուլ պայթականէն առաջ.

դ.- փոխազդեցական եւ դիրքային մասնակի փոփոխութիւնները:

Պայթականներու շարքին մէջ բարբառին յատուկ է ⁴ ետնալեզուային պայթականը, որ կ'երեւի յատկապէս փոխառեալ բառերու բոլոր դիրքերուն մէջ, կը համապատասխանէ արաբերէն «կաֆ» բաղաձայնին: Բառին մէջը եւ վերջը յաճախ ունի ղ (երբեմն՝ խ) ազատ ու դիրքային տարբերակը: Կը պատահի ոչ քիչ թուով (չուրջ քսան) բնիկ բառերու մէջ ու կը համապատասխանէ կ, գ եւ ղ (վերջինը միայն բառավերջ) բաղաձայններուն: Փոխառեալ Հնչոյթ կը մնայ:

Կ, գ, ք ետնալեզուային պայթականներու քմայնացումը յատուկ չէ բարբառին, բայց անոնք քմայնացումին երբեմն կը հանդիպինք յատկապէս քմային ա, ա, օ, նաեւ ի, է ձայնաւորներէն առաջ, բառին սկիզբը: Անոնք արտասանական տարբերակներ են միայն եւ Հնչոյթային արժէք չունին:

6.- Եզրակացութիւն

Քեսապի բարբառի 51 Հնչիւններէն 43 հատը ունին Հնչոյթային արժէք. 9 ձայնաւոր՝ ա, ա (է), է (էյ), ը', ը (ի), ի (իյ), ու, ա, օ (օ, օը, էօ):

2 երկբարբառ՝ իէ, ուօ.

1 եռաբարբառ՝ ուօյ.

5 ձայնորդ՝ լ, մ, ն, ո (ր), ւ (յ).

10 շփական՝ վ, գ, ժ, դ, ճ.

Փ, ս, չ, խ, հ.

16 պայթական եւ կիսաշփական՝ պ, տ, կ, կ, ճ, ճ.

բ, դ, գ, ձ, ջ

փ, թ, ք, ց, չ:

Փակագիծի մէջ դրուածները ենթահնչոյթներ են: Ե եւ յ՝ նոյն

Հնչոյթի տառադարձման դիրքային տարբերակներն են:

Գ.- ԵԵՇՏ ԵՒ ԵԵՇՏԱՓՈՒՍԱԿԱՆ ՀՆՁԻՒՆԱՓՈՒՍԻԹԻՒՆ

Շեշտը Քեսապի բարբառին մէջ վերջավանկային է՝ ցիբի'կ, քիշի'ր, ճանփու'գ: Ուժեղ է նաեւ առաջավանկի կամ երկրորդական շեշտը, որուն իբրեւ հետեանք՝ երկու ձայնաւորներու միջեւ գտնուող բաղաձայնը երբեմն կը կրկնուի եւ վերջավանկի մէջ առաջացող ը ձայնաւորը կը դառնայ տոկուն ու լիահունչ ը', ինչպէս՝ Մանուչ՝Մէննը՝չ, ամէն՝ ըմմը՝ն, աչակերտ՝չէկը՝րտ, ախոո՝ախը՝ո:

Բարբառի ը ձայնաւորը շեշտ չի ստանար: Շեշտ չի ստանար նաեւ ի՞ ձայնաւորը, երբ հանդէս կու գայ ը ձայնաւորին իբրեւ արտասանական ազատ տարբերակը՝ յատկապէս ս եւ դ յօդերէն առաջ ինկած գաղտնավանկին մէջ, ինչպէս՝ մուտըս//մուտիս (Վատս), տէօնը//տէօնի (Վտունդ):

Միավանկ ու բազմավանկ բառերու մէջ շեշտափոխական Հնչիւնափոխութեան տարբեր օրէնքներ կը գործեն: Բազմավանկ բառերու մէջ ձայնաւորները առհասարակ կ'իյնան կամ ը//ի կը դառնան: Վերջայանգին արմատական բոլոր ձայնաւորներն ալ կ'իյնան, բացի էօ երկբարբառէն եւ օ//օ ձայնաւորէն, որոնք կը դառնան վ (վը): Բառի վերջաւորութեան ածականները սովորաբար կ'իյնան՝ առօսն՝ առվը՝ (առուի), մըղէօնք՝մաղվը՝ (մեղուի):

Շեշտափոխական Հնչիւնափոխութեան չեն ենթարկուիր միայն ը', մասամբ ալ ու, ա ձայնաւորները:

Ա (ա)

Ա (ա) ձայնաւորը (գրաբար ԱՅ-ի դիմաց) փակ դիրքի մէջ կը դառնայ ի: Օր.՝ ա - խուօր, տագըր - տիգրուչ, կաճ - կիծուօկ, փատ - փիտէօնք եւ այլն. նոյն շարքի բառերէն՝ ա՛ն ունին լան - լնութէն, ըրկան - ըրկննում. աղբար բառին մէջ ա-ն շեշտափոխութեամբ տեղ մը կ'ըլլայ ի՝ աղբիրունք, տեղ մը ը՝ աղբըրտաք:

Միավանկ բառերու փակ դիրքին մէջ, ժ, չ, ջ, ճ, չ բաղաձայններէն առաջ (գրաբար Ա-ի դիմաց) նոյնպէս կը դառնայ ի, երբեմն՝ ի: Օր.՝ խաչգ - խիչկիմ, ճանճ - ճինճիր, ժաժ - ժիժիմ, աչք - իչիմ եւ այլն: Անփոփոխ կը մնայ մաճ - մաճիր, փարչ - փարչիր, ժանկ - ժանկըրիմ, ճառ - ճառը՝ (վերջինը՝ Ե-ի դիմաց) բառերուն մէջ: Ը կը դառնայ չանկ - չընդիմ բառին մէջ:

Նոյն շարքի բազմավանկ բառերուն մէջ կ'իյնայ կամ կը դառնայ ը: Օր.՝ ալանճ - էլընճիմ, կանաչ - կենչօկ, բաղարջ - բաղըրջտուն:

Անփոփոխ կը մնայ եառանճ - եառանճկրնճէթ բառին մէջ:

Վերջայանգին կը սղի՝ խրնամա - խրնճնութէն, քառա - քառկէն, քիստինն - քիստինը՝ եւ այլն:

է

է ձայնաւորը (գրաբար Ի ձայնաւորի եւ ՈՅ երկբարբառի դիմաց) միավանկ բառերու մէջ կը դառնայ ը, բազմավանկ բառերու մէջ կ'իյնայ կամ նոյնպէս ը կը դառնայ: Օր.՝ գէր - գըրիմ, գէրկ - գըրկիմ, նէստ - նըստէմ, կէրմէր - կըրմըրէօկ, դըղէն - դճղնիմ, գըրէց - գուրցիմ, պէտրէս - պէտըրսիմ եւ այլն:

Ձէն (<ձի) եւ թէն (<թի) բառերը ն աճականը կորսնցնելով կ'ունենան է>ի փոփոխութիւն՝ ձիւլուր, թիւմ: Նոյնպէս՝ քէչ - քիչկէօկ բառին մէջ:

է ձայնաւորը (գրաբար Իի երկբարբառի դիմաց) կը դառնայ ի: Օր.՝ էր - իրինց, հիրէր - հիրիրին, վիրէն - վիրիննատ, իլէր - իլիրնատ եւ այլն:

Ը՝

Ը՝ ձայնաւորը կայուն է ու նախաչեչտ վանկ երթալով պարզապէս կը շեշտագրուի: Օր.՝ վըսպ - վըսպուօն, վըռք - վըրքուօց, ախը՛ո - ախըռտուն, չէկը՛րտ - չէկըրտնա, ըմմը՛ն - ըմմընիէն եւ այլն:

Ի

Ի ձայնաւորը միավանկ բառերու մէջ կը մնայ անփոփոխ՝ թիւ - թիւիր, սիւ - սիւնու, ձիւ - ձիւիմ, բազմավանկ բառերու մէջ նոյնպէս անփոփոխ կը մնայ կամ կը դառնայ ի, ինչպէս՝ թիթիւ - թիթիւնու, ցիրիկ - ցիրիկիւն, ընկիր - ընկիրճչ, տիրիֆ - տիրիֆտուն, բայց յաճախ ալ կը դառնայ ը կամ բոլորովին կ'իյնայ՝ ընկիր - ընկըրթնուօք, բուվիկ - բուվիկնա, կուրիկ - կուրկը՝ եւ այլն:

Վերջայանգին կենիւնայ, միայն մէկ բառ, կիրէկի - կիրէկնւլուօր:

Ոի (ն)

Ու (ն) ձայնաւորը (գրաբար Ա-ի դիմաց) միավանկ բառերու փակ դիրքին մէջ կը դառնայ է: Օր.՝ ունպ - էնպիմ, բուն - բնիր, հում - հմտըսիմ, նոյնպէս մէկուկէս վանկանի բառերուն մէջ, ուր երբեմն

աւելի տիրական է՝ թննծըր - թննծըրկէկ, մննտըր - մննտըրկէկ, սննտըր - սննտըրիմ: Ու>ա՝ բունճըր - բանճըրկէկ: Բազմավանկ բառերու մէջ կը սղի կամ ը կը դառնայ՝ էմն - էմրննա, բիրն - բարնիէն, պէտրէն - պէտրէնուօկ, բէրիկն - բէրկըմնու մ եւ այլն:

Ու (ն) ձայնաւորը (գրաբար Ո-ի դիմաց) չարք մը բառերու մէջ անփոփոխ կը մնայ՝ շուղ - շուղիմ, խաղուղ - խաղուղտուն, բննիր - բննիրկութէն, հուրթ - հուրթվա, իսկ քանի մը բառերու մէջ կը դառնայ ը՝ փուլս - փըլսիմ, խընծիր - խընծըրինն:

Վերջայանգին, ուր կայ նաեւ ա ազատ փոփոխակը (գրաբար ԱՅ-ի դիմաց) բոլորովին կը սղի՝ տըղու//տըղա - տըղէն, փիսու - փիսը՛, սատանու//սատանա - սատանը՛:

Օ (օ, օր, օ)

Միավանկ բառերու փակ դիրքին մէջ ընդհանրապէս կը դառնայ ը, ինչպէս՝ դօռ - դըռուն, ծօռ - ծըռուիմ, ճօղ - ճըղըրրիմ, թօխթ - թըխդիր, ցօրտ - ցըրտանում, լէօծ - լըծօուն, մէօկ - մըյնիր, ջէօր - ջըրուտ եւ այլն: Նոյնպէս բազմավանկ բառերու մէջ՝ եարսօն - եարսընին, վէճձէօն - վէճձընին, արթօն - արթըննում, մըրջօմ - մըրջըմնուց եւ այլն:

Կարգ մը բառերու մէջ կ'ըլլայ ու, ինչպէս՝ կօռ - կուրիմ, դօղ - դուղում, շօն - շունվա, էնօչ - էնուչուօկ, ընճօղ - ընճուղտուն//ընճըղտուն:

Վերջայանգին կը դառնայ վ (վը)՝ հառօ - հաուլընիկ, առօն - աուլը՛, թըթթէօ - թըթթիմ, կըծօօ - կըծվընում, լէօկ - լըվիր եւ այլն:

Իէ

Իէ երկբարբառը (գրաբար Ե-ի դիմաց) միավանկ բառերու փակ դիրքին մէջ, դ, ի, ո բաղաձայններէն առաջ կը դառնայ ա (ն): Օր.՝ դիէդձ - դնդձինն, միէդգ - մնիքընում, միէդը - մնըրը՛, լիէո - լառուուն, բիէր - բանում եւ այլն: Իէ>ը կայ քանի մը բառերու մէջ՝ ծիէդ - ծըղիր, տիէդ - տըղէօք, ճիէդք - ճըղքիմ: Բազմավանկ բառերու մէջ կ'ըլլայ ը, ինչպէս՝ էսսիէդ - էսսըղիմ, ճըմիէո - ճըմըուիւն, կըչիէոք - կըչըռքտուն, սիսիէո - սիսըռուօն, բուվիէո - բուվըռտուն եւ այլն:

Միավանկ բառերու սկիզբին եիէ կապակցութիւնը փաստօրէն իէ երկբարբառի դիրքային տարբերակն է. շեշտափոխական քանի մը Հնչիւնափոխութիւններու կ'ենթարկուի. եիէ>ը՝ եիէդ - ըղըտիմ, եիէ>եէ՝ եիէք - եէքվիւն, եիէրգ - եէրգիմ, եիէ>ա՝ եիէրդ - արդօք, արդընուց:

Շարք մը միավանկ ու բազմավանկ բառերու մէջ (գրաբար է-ի դիմաց) կը դառնայ ի: Օր.՝ իէչ - իչվն, միէչ - միչը՛, միէգ - միգգին,

տիէր - տիրաճ, էնիէսգ - էնիծիմ եւ այլն: Իէ>ը կայ գումիէչ - գումըչտուն, խըլիէգ - խըլըգտուն յոգնակիներուն մէջ, Իէ>ի՝ գիէր- գիրութէն, բայց Իէ>ա՝ գարճիկ, գարնում ձեւերուն մէջ: Իէ>ի կայ նոյնպէս այլ շարք մը բառերու մէջ (գրաբար Ե-ի դիմաց): Օր.՝ խիէվ- խիվօկ, դիէվ - դիվօկ, նիէր - նիրվրտա. վերջին բառը ունի նաեւ Իէ>ա՝ նարտըկէն բարդութեան մէջ:

ՈՒՕ

Ուօ երկբարբառը (գրաբար Ա-ի դիմաց) միավանկ եւ եռավանկ բառերուն մէջ, ո, խ, դ բաղաձայններէն առաջ կը դառնայ ա (օ): Օր.՝ ուօխը - օխը, ծուօ - ծառի, ուօղ - օղի, խուօղգ - հախքըրիմ, առքատուօկ - առքատաղէկ, իսկ անկէ դուրս՝ է: Օր.՝ ուօփ - էբըլթիմ, հուօց - հէցցէօնք, կուօրգ - կըրգիմ, պէտէրուօգ - պէտէրէգիմ եւ այլն: Ուօ>ու կայ ուօրջ - ուրջտէն բառին մէջ: Նոյն շարքի երկվանկ բառերուն մէջ կ'իյնայ կամ կը դառնայ ը: Օր.՝ քաղուօք - քաղքը, կէքուօվ - կէքըվտուն, պատուօռ - պատոհիմ եւ այլն. ուօ>ա կայ ըռուօտ-ըռուտուն բառին մէջ:

Ուօ երկբարբառը (գրաբար Ո-ի եւ Ա-ի դիմաց) կը դառնայ ու (օ): Օր.՝ քըրուօգ - քըրաօգիմ, կուօվ - կաօվի, մուօտ - մաօտկէկ, ուօր - օրի, օղուօթք - օղաթիմ, հըրուօր - հըրաօրիմ եւ այլն:

ՈՒՕՅ

Ուօյ եռբարբառը կը դառնայ ու: Օր.՝ ձուօյն - ձունիմ, սուօյն - սունուօկ, աղքուօյր - աղքուրէկ, թուօյլ - թուլճիկ, բուօյն - բունիմ, քուօյր - քուրվրտա, հավկուօյթ - հավկութտուն եւ այլն:

**Դ.- ԹԵՔՄԱՆ ՀԵՏԵԻԱՆՔՈՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՄ
ՁԱՑՆԱԻՈՐՆԵՐՈՒ ՓՈՆԱԶԴԵՑԱԿԱՆ ԵՒ ԴԻՐՔԱՅԻՆ
ՀՆՁԻՒՆԱՓՈՆՈՒԹԻՒՆ**

Շեշտափոխական հնչիւնափոխութեան իբրեւ հետեւանք՝ նախաշեշտ վանկին մէջ երբեմն կ'առաջանան դիրքային տարբերութիւններ, որոնք իրենց կարգին նախաշեշտ ձայնաւորի փոփոխութեան պատճառ կը դառնան: Այդպիսի փոփոխութիւններու կ'ենթարկուին ա, ը, ի ձայնաւորները. այսպէս՝

օ//ա>է. վերջայանգի ա ձայնաւորի սղման պարագային նախաշեշտ վանկի ա ձայնաւորը կը դառնայ է. առնմանութեան երեւոյթի

վերացման հետեւանք է. ինչպէս՝ տաօր - տըրվին, գաօր - գէրը՝: ը>օ. երբ դ բաղաձայնէն առաջ նախաշեշտ բաց ը ձայնաւորը շեշտազրկուած ձայնաւորի սղման պարագային փակ դիրք կը ստանայ: Օր.՝ սըղուն - սաղնը, դըղէն - դաղնիմ, մըղէօնք - մաղվը՝:

ը>ու. վերի օրինաչափութեամբ՝ զըրէց - զուրցիմ, պէտըրէս - պէտուրսիմ: Ի>ա. վերի օրինաչափութեամբ՝ բիրաճն - բարնը՝:

Բարբառի ձայնաւորներուն հնչիւնափոխութեան մէկ պարագան ալ, շեշտափոխութենէն անկախ, վերջավանկին մէջ երեւան կու գայ, երբ վերջայանգի ձայնաւորը, ս, դ, ն յօդերու եւ ք յոգնակերտի միջոցով փակ դիրք կը ստանայ: Այս դիրքային հնչիւնափոխութեան կ'ենթարկուին օ//ա, ի, ու, ը՝ ձայնաւորները:

օ//ա>է. խընամա - խընէմէք, խընէմէս, խընէմէդ, խընէմէն, տաօր - տէրէն, գաօտա - գաօտէս:

ի>էն//իէն. կիրէկի (<կիրակի) - կիրէկէն//կիրէկիէն. նոյնը կը պատահի բացառականի հոլովամասնիկին՝ չէթի - չէթէն//չէթիէն:

ու//ա>ա (գրաբարի ԱՅ-ի դիմաց)՝ փիսու//փիսա (փեսայ) - փիսաս, փիսադ, փիսան: Նաեւ նոյն շարքի բառերուն ք-ով յոգնակիներուն մէջ՝ տըղու//տըղա (տղայ) - տըղաք, սատանու//սատանա - սատանաք:

Սեռականի ը՝ հոլովամասնիկը որոշեալի մէջ կը դառնայ՝ ը՝>է. խընէմը՝ - խընէմէն, գըրը՝ - գըրէն, գէրը՝ - գէրէն, ծառը՝ - ծառէն, գըլխը՝ - գըլխէն:

ը՝>օ. թիպիկը՝ - թիպիկաճ, դէնկըկը՝ - դէնկիկաճ, հուրթիկը՝ - հուրթիկաճ:

ը՝>օ. հուրթը՝ - հուրթօն, մարդը՝ - մարդօն:

ը՝>օ. կաօվը՝ - կաօվօն:

ը՝>էօ. իչը՝ - իչէօն, իծօր՝ - իծօէօն:

Վերջին երեքը (օ, օ, էօ) փաստօրէն գրաբարի ՈՒ արտաքին հոլովումին բարբառային տարբերակներն են: Անորոշին մէջ գրաբարի այդ հոլովումը չէ պահուած:

Յօդառութեան կամ աճման պարագային բաղաձայնները չեն հնչիւնափոխուիր: Ասկէ կը շեղին բարբառիս կ-ով եւ նախորդ ձայնաւորով մը վերջացող արմատական եւ ոչ արմատական բառերը: Ասոնք ս, դ, ը յօդերը ստանալով կը կորսնցնեն վերջայանգի կ բաղաձայնը, բայց կը պահեն հիմքի ձայնաւորը եւ յօդը բառին կապող գաղտնավանկը: Օր.՝ բուօկ (<բակ) - բուօրս, բուօրդ, բուօր, սընտէօկ (<սնտուկ) - սընտէօրս, սընտէօրդ, սընտէօր, չըտտէկ (<ծիտիկ) - չըտտէրս, չըտտէրդ, չըտտէր: Նոյնպէս՝ բառավերջի կ-ն կը վերածուի դ-ի կամ ի-ի, ինչպէս՝ առքատուօկ՝ առքատուօղը, կափուօկ՝ կափուօղը, սանտօկ՝ սանտօխը, իսկ օտար բառերու վերջայանգի թ-ն կ'ըլլայ դ, ինչպէս՝ սաճնաթ՝ սաճնադիլ, ալուօթ՝ ալուօղը:

Ա>ի, ա>ի.- Երկրորդ փոփոխակը քիչ կը պատահի, երբեմն՝ զուգաձեւաբար առաջինին: Փոփոխութիւնը յատուկ է միայն նախաչեչտ դիրքերուն.

ա.- Ժ, չ, ջ, ճ, չ բաղաձայններէն առաջ: Օր.՝ աչեմ>իչիմ, պաշար>պիշուօր, կաշի>կիշի, բաժին>բիժէն, բաժնեմ>բիժնիմ, տաճիկ>տիճէկ, խաչեմ>խիչկիմ, մաչեմ>միչիմ, հաչուեմ>հիչվիմ, նաչիւ>նիչիւ եւ այլն: Զայնաւորին եւ այդ բաղաձայններուն միջեւ գտնուող ը ձայնորդի անկումէն ետք՝ արժեմ>իժիմ, խարչեմ>խիչիմ, քարչեմ>քիչիմ:

Ա>ի կայ նոյն տեսակի շարք մը բառերու մէջ, ինչպէս՝ աշուն(ք)>իշէօնք, խաչատուր>իշիչիւ, շարժեմ>ժիժիմ, աղջիկ>իշկէն եւ այլն:

Այս օրինաչափութենէն կը շեղին աճիմ>աճիմ եւ աջ(ենի)>աճընա բառերը:

բ.- Շեշտակիր իւ երկբարբառին նախորդ դիրքին՝ լ եւ ը ձայնորդներէն առաջ. երեք բառ միայն՝ ալիւր>իլէր, արիւն>վիրէն, հարիւր>հիրէր//հէրէր. վերջինը ունի երկրորդ ձեւ մըն ալ:

գ.- Իբրեւ մասնակի պարագայ՝ շարք մը բառերու մէջ, ինչպէս՝ շահան>իհհան, պահեմ>պիհիմ//պուհիմ, սահիմ>սիֆիմ, սահուկ>սիֆիօկ, ազատ>իզզուօտ, մարիմ>միրէմ, պատիմ>պիտէմ, ապուշ>իպը՛շ, անկաւ>ինկուօվ, անկանիմ>ինյէմ, կանչեմ>կինչիմ եւ այլն:

Ա>է.- Այս փոփոխութիւնը յատուկ է բազմավանկ բառերու սկիզբին, երբ ձայնաւորը առանձինը վանկակազմ է, եւ բառերու նախաչեչտ բաց ու փակ դիրքերուն: Օր.՝ աման>էման, արեւ>էրիվ, արօս>էրուօս, ազի(ք)>էզէք (քղանցք), ակօս>էկուօս, դանակ>դէնուօկ, զատիկ>զէտէկ, կարկուտ>կէրկէօտ, խանձող>խէնձուղ, համտես>հէմտիս, մանգաղ>մէնկուղ, պատարագ>պէտէրուօգ եւ այլն:

Նոյն Հնչիւնափոխութիւնը կայ բառասկզբին, երբ երկրորդ ձայնաւորը կը սղի, կամ ալ բաղաձայնը կը կրկնուի. երկու պարագային ալ փակ վանկ կը ստեղծուի, ինչպէս՝ անագան>էնգան, ածու>էծծէօք, ասեղն>էսիէղ, ածեմ>էծծիմ եւ այլն:

Իբրեւ մասնակի պարագայ՝ ա>է փոփոխութիւն կայ նաեւ շարք մը բառերու սկիզբի փակ դիրքին մէջ, ուր օրինաչափական է ա>ա//ա փոփոխութիւնը: Այդ բառերն են՝ ապրիմ>էպրէմ, ապրուստ>էպրէօստ, ափսոս>էփսոս, ափկից>էփքէս, ամպոտ>էնպոտ, ամպեմ>էնպիմ, արբենամ>հէրբէմ:

Կարգ մը բառերու մէջ ա>է փոփոխութեան կողքին՝ զուգաձեւաբար երկրորդ մըն ալ կայ, ինչպէս՝ ամէն>էմնն//լմմնն՝ ա>է//ը, հարիւր>հէրէր//հիրէր՝ ա>է//ի, անօթի>էնթիւ//էօնթիւ՝ ա>է//էօ, դադար>դէդուօր//դադար՝ ա>է//ա:

Նախաչեչտ վանկերու ա>է Հնչիւնափոխութենէն օրինաչափօրէն շեղելով ա>ա//ա փոփոխութիւն կայ ո, դ, իս բաղաձայններէն առաջ եւ քմային եւ պարզ ա-ին նախորդող բաց վանկին մէջ, առնմանութեան օրէնքով, ա>ի//ի փոփոխութիւն կայ Ժ, չ, ջ, ճ, չ, բաղաձայններէն

առաջ. ա>է Հնչիւնափոխութենէն կը շեղին Հնչիւնական որեւէ օրէնքով դժուար բացատրուող բառերու այլ շարքեր եւս:

Ա>ը.- Այս փոփոխութիւնը կայ Ա>ա//ա եւ ա>է փոփոխութիւններու ոլորտէն շեղող երկար շարք մը բառերու մէջ: Օր.՝ ծարիր>ծըրէր, յարագեմ>ըրընիմ, սարիք>սըրէք, սամի>սըմէն, խախուտ>խըրխը՛դ, վանգիւն>վըննիւն, սարսոսամ>սըրսըռում, ցախսարիկ>ճըխսէրէկ, առաստաղ>աըստուօղ եւ այլն: Ա>ը՛ փոփոխութիւն կայ նաեւ վերջաւորութեան՝ ահա>ըհը՛, հապա>հէպը՛//հէպու:

Ե

Գրաբարի Ե ձայնաւորի դիմաց բարբառին մէջ գոյացած են ա, ան, ի, ի, իէ, մասամբ մըն ալ՝ եիէ, եի, եա, ու, ան, օ:

Միավանկ բառերու սկիզբը կան հետեւեալ Հնչիւնափոխութիւնները.

Ե>եիէ՝ երբ>եիէբ, երգ>եիէրգ.

Ե>եի՝ ետ>եիտ.

Ե>ի՝ ե՛լ>ի՛լ, ես>իս եւ եմ>իմ:

Ե>իէ.- Շեշտակիր դիրքի այս Հնչիւնափոխութիւնը կը հանդիպի հետեւեալ պարագաներուն.

ա.- Իբրեւ օրէնք՝ ո ձայնորդէն եւ դ, իս շփականներէն առաջ: Օր.՝ տեղ>տիէղ, դեղ>դիէղ, մեղ>միէլագ, մեղը>միէլըր, ծեղ>ծիէղ, ասեղ>էսիէղ, մնճղեխ>մընճղիէղ//մընճընիէկ, մորեխ>մուրիէխ, լեռն>լիէռ, բեռն>բիէռ, ձմեռն>ձըմիէռ, սիսեռն>սիսիէռ, բեռն>բուվիէռ եւ այլն:

Այս օրինաչափութենէն կը շեղին՝ ձեռն>ձառ, դեռ>դառ, ուր կայ ե>ա եւ իսեռ>իսռ, ուր կայ ե>օ փոփոխութիւն:

բ.- Մասնակի կերպով շարք մը բառերու մէջ, որոնք կը շեղին Ե>ի փոփոխութենէն եւ կ'ենթարկուին ասոր, ինչպէս՝ խեւ>խիէվ, դեւ>դիէվ, շերտ>շիէրտ, ներ>նիէր:

Ե>ի.- Ցատուկ է շեշտակիր եւ նախաչեչտ դիրքերուն.

ա.- Շեշտակիր դիրքի մէջ, բացի դ, իս շփականներէն առաջ եւ մասնակի կերպով Ե>իէ Հնչիւնափոխութեան ենթարկուող բառերու վերոյիշեալ շարքէն: Օր.՝ թեւ>թիւ, սեւ>սիվ, ձեւ>ձիվ, սերմ>սիրմ, հետ>հիտ, վեց>վիճ, մեծ>մինծ, թեփ>թիփ, հեշտ>հիշտ, տերեւ>տիրիֆ, թեթեւ>թիթիվ, գիշեր>քիշիր, ընկեր>ընկիր, ցերեկ>ցիրիկ, բեւեկն>բուվիկ եւ այլն:

Այս օրինաչափութենէն կը շեղի նաեւ աչակերտ>չէկը՛րտ, որ ենթարկուած է Ե>ը՛ փոփոխութեան:

բ.- Երկվանկ բառերու նախաչեչտ բաց դիրքին, բացի դ շփականէն

եւ ու ձայնորդէն առաջ: Օր.՝ երես>իրիս, երազ>իրուօզ, եզ(երք)>իզ-
զիրք, տերեւ>տիրիֆ, ձեւեմ>ձիվիմ, Հեւամ>Հիվում, գետին>գիտէն եւ
այլն: Նոյն Հնչիւնափոխութեան կ'ենթարկուի նաեւ գրաբարի անցեալ
կատարեալի աճական ե-ը, ինչպէս՝ եթող>իթող, եհան>իհուն, եբեր>
իբիձ, ետուր>իտուօց եւ այլն:

Այս օրինաչափութենէն կը շեղին ե>ու//ւ մասնակի փոփոխութե-
ան ենթարկուող շարք մը բառեր եւս. տե՛ս քիչ անդին:

Ե>ա.- Կը գործէ նախաշեշտ դիրքին՝ ու ձայնորդէն առաջ: Օր.՝ Հե-
ու>Հաոոօ, Հեոանամ>Հաովրնում, քեռի>քառա, քեռակին> քառկէն,
մեռանիմ>մառնէմ եւ այլն: Նոյնպէս՝ քանի մը օրինակներով, իբրեւ
մասնակի պարագայ, ը ձայնորդէն առաջ՝ քերթեմ>քարթիմ, վերանամ>
վարնում:

Ե>ա փոփոխութիւնը շեշտակիր դիրքի մէջ միայն երկու բառերու
մէջ կայ՝ ձեռն>ձառ, դեռ>դառ:

Ե>ւ.- Նախաշեշտ փակ դիրքին մէջ՝ ղ շփականէն առաջ: Օր.՝
եղջիւր>աղջէր, եղբայր>աղբար, եղտոտ>աղտուտ, դեղնիմ>դաննէմ,
խեղդեմ> խանդիմ, խեղդուկ>խանդո, կեղեւեմ>կանդիմ, նեղութիւն>
նանգութէն, նանգէօ եւ այլն:

Ե>ը//ի.- Այս փոփոխութիւնը կը գործէ Հետեւեալ պարագանե-
րուն.

ա.- Նախաշեշտ ըկ կապակցութենէն առաջ: Օր.՝ երկայն>ըրկան/
/իրկան, երկու>ըրկը//իրկը, երեք>ըրգ//իրգ, երկինք>ըրկէնք//
իրկէնք, երկանք>ըրկունք//իրկունք, երկաթ>ըրկուօթ//իրկուօթ,
իրկուին (երեկոյ)>ըրկէօն//իրկէօն եւ այլն:

բ.- Նախաշեշտ բաց դիրքին մէջ՝ ղ շփականէն առաջ: Օր.՝ եղէգն>
ըղիէգ//իղիէգ, Եղիսաբէթ>Ըղիս//իղիս, սեղան>սըղուն//սիղուն, մե-
ղու>մըղէօնք//միղէօնք, դեղին>դըղէն//դիղէն, եկեղեցի>կըղըցա//
կիղիցա եւ այլն:

գ.- Երկվանկ բառերու նախաշեշտ փակ եւ աւելի բազմավանկ
բառերու նախաշեշտ բաց եւ փակ բոլոր դիրքերուն մէջ: Օր.՝ մեկնիմ
>մընկիմ//մինկիմ, ներքին>նըրքէն//նիրքէն, Պետրոս>Պըտրուս//
Պիտրուս, բարեկենդան>բըրկընտուն//բըրիկինտուն, գերեզման>գը-
րըզմուն//գիրիզման, ալեւոր>Հէլըվուր//Հէլիվուր, սերկելիլ>սըրկը-
վէլ//սիրկիվէլ եւ այլն:

Այս ընդհանուր օրինաչափութենէն կը շեղի երեսուն>եարսօն
բառը, ուր կայ ա>եա:

Ե>ու, Ե>ւ.- Ասոր կ'ենթարկուին յատկապէս ե>ի Հնչիւնափո-
խութեան ոլորտէն շեղող կարգ մը բառեր, ինչպէս՝ բեւեկն> բժվիկ,
բեւեկնի>բժվիկինա, բեւեռ>բուվիէռ, բեւեռեմ>բուվըրիմ, երդումն>ուվ-

դօմ, Հերիւն>Հուրէն, բետատ>փուտուօտ, պեծակ>պժտզիկ, երթամ>
ուրթում, մերկանամ>մարկընում, մերկ(իկ)>մարկէկ, քերեմ>քուրիմ:

Է

Գրաբար է երկբարբառակերպին դիմաց բարբառին մէջ գոյացած
են իէ եւ ի, մէկ-երկու օրինակներով ալ՝ ը՛ եւ իը:

Է>իէ.- Կը գործէ շեշտակիր դիրքին մէջ: Օր.՝ Էչ>իէչ, մէջ>միէջ,
գէր>գիէր, դէմ>դիէմ, մէկ>միէկ, տէր>տիէր, գոմէչ>գումիէչ, խլէզ>
խըլիէզ, անէծք>էնիէսգ, Յովսէփ>Ուսիէփ//Ուսը՛պ եւ այլն:

Բացառութիւն կը կազմեն ամէն>էմըն//ըմըն եւ աղէտ>աղը՛տ
բառերը, որոնք ունին է>ը՛: է>ը՛ կայ նաեւ Յովսէփ>Ուսիէփ//Ուսը՛պ
գոյգ ձեւին մէջ:

Է>ի.- Բառավերջին՝ թէ>թի, կիւրակէ>կիրէկի, չէ>չի. վերջինը ունի
նաեւ չիը ձեւը՝ է>իը: է աճականը նոյնպէս ի է հառ>իուօռ բառին մէջ:

Ը

Գրաբարի Ը ձայնաւորը բարբառին մէջ բառի բոլոր դիրքերուն
մէջ մնացած է անփոփոխ, ինչպէս՝ ընկեր>ընկիր, ընկոյգ>ընկուօյգ,
ընդ գայս>ընծաս, ընտանի>Հընտանա, սկեսուր>ըսկըսօր, սկեսրայր>
ըսկըսար, սպանանեմ>ըսպէնիմ, սպիտակեմ>ըսպըտիկիմ, ստեղծեմ>
ըստըղծիմ, գրեմ>գըրիմ, գրոյց>գըրէց, թանձր>թանծըր, բարձր>բուն-
ձըր, մեղր>միէղըր, մանր>մանտըր եւ այլն:

Ը ձայնաւորի Հնչիւնափոխութեան Հետեւեալ պարագաները միայն
կան.

Ը>ը//ի.- ս եւ դ յօդերէն առաջ ինկած գաղտնավանկին մէջ՝ նըլօ-
խըս//նըլօխիս (գլուխ), ձառըղ/ձառիղ (ձեռքը), էնէօնըս//էնէօնիս
(անունս) եւ այլն:

Ը>ա՛ ընդոստեմ>Հանդուգտիմ, թրթուր>թարթօր:

Ը>ւ՛ Դչխոյ>Դանչխուն, պտղաւոր>պժտըղվուր, պտղաւորեմ>
պժտըղվըրիմ, յղի>անղիւ:

Ը>ի՛ դժուար>դիժուօր, ցնկնեմ>ձիյնեմ, յստակ>իստուօկ, քշտեմ>
քիշտիմ, ձգտիմ>ձիյտէմ, թթենի>թիթինա, թգենի>թիգինա, ձգեմ>
իսգիմ, շփեմ>իչբիմ. վերջին երկու բառերուն մէջ ձայնաւորը դրափոխ-
ուած է:

Ը>ու, Ը>ւ՛ բղխիմ>փուխիմ, պղինձ>պուղէնձ, Հպիմ>Հժպպիմ,
Հրապարակ>Հժրպէրուօկ, զրուցեմ>զժրցիմ, դրդեմ>տուրթիմ, գմբէթ>
կումբէթ, թոռն>թոռուն, ճպտ>չուպուօթ, դրօշակ>դժրժուօկ (ծայր),
կտոր>կժտոր (դրամ):

Գրաբարի Ի ձայնաւորի դիմաց բարբառին մէջ գոյացած են ի, է, էյ, ա, քանի մը օրինակներով ալ, իբրեւ մասնակի պարագաներ՝ է, ուօյ, ան, ը, ան:

Ի>ի.- Անփոփոխ կը մնայ նախաչեչտ դիրքերու մէջ: Օր.- Իմանամ> իմնում, իրար>իրուօր, գինի>գինան, գիշեր>քիշիր եւ այլն: Նոյնպէս ի նախդիրը՝ իդան (այն կողմ), իդան (այս կողմ), իվիր (ի վեր) եւ այլն:

Շարք մը բառեր վերի օրինաչափութենէն շեղելով կ'ենթարկուին Հետեւեալ մասնակի փոփոխութիւններուն.

Ի>ա՝ գիրնամ>գարնում, գիրուկ>գարճիկ, բայց գիրութիւն>գիրութէն բառին մէջ անփոփոխ կը մնայ:

Ի>է՝ իրաւ>էրվէօ, իրաւացի>էրվուցէն.

Ի>ը՝ միգեմ>մըզգիմ (կաթ-կաթ Հոսիլ).

Ի>ան՝ գիտենամ>գատէնում, գիտեմ>գատիմ, գատէսկան (ծանօթ):

Ի>է//էյ.- Յատուկ է շեչտակիր փակ դիրքին. երկրորդ փոփոխակը զգալի է յատկապէս միավանկ բառերու մէջ: Օր.- իր>էր//էյր, ինք>էնք//էյնք, իք>էք//էյք, սիրտ>սէրտ//սէյրտ, գիրկ>գէրկ//գէյրկ, նիստ>նէստ//նէյստ, քիթ>քէնթ//քէյնթ, քիչ>քէչ//քէյչ, կաղին>կանղէնտ, գետին>գիտէն//գիտէյն, կարմիր>կէրմէր//կէրմէյր, չամիչ>չէմէչ, տաճիկ>տիճէկ եւ այլն: Ն աճականի յաւելումով՝ թի եւ ձի բառերը փակ դիրք կը ստանան ու կ'ենթարկուին նոյն Հնչիւնափոխութեան՝ թէն, ձէն:

Վերի օրինաչափութենէն կը շեղի Հաւկիթ>Հավկուօյթ բառը, ուր կայ ի>ուօյ փոփոխութիւնը:

Ի>ա, ի>ան.- Բազմավանկ բառերու վերջաւորութեան: Օր.- տարի>տարան, գարի>գարան, Հայելի>Հիլան, եկեղեցի>կիղիցան, խնամի>խընամա, տանձենի>տնձինան, թիթենի>թիթինան եւ այլն:

Գրաբարի Ո ձայնաւորի դիմաց բարբառին մէջ գոյացած են ա, ան, ը, ի, օ, ու, ան, էօ, ուօ, վի, վը, վօ, օվը:

Միավանկ բառերու սկիզբը կան Հետեւեալ փոփոխութիւնները.

Ո>վը՝ որբ>վըրբ, որդ>վըրդ, որձ>վըրձ, ոսպ>վըսպ, ոռ(ք)>վըրք.

Ո>վի՝ ոտն>վիտ//վիտք.

Ո>ը՝ որ>ըր.

Ո>ան՝ ով>անվ.

Ո>օ՝ ո (ով)>օ. կը գործածուի կանչի ատեն՝ օ մանր (ով մայր):

Ո >ուօ.- Շեչտակիր դիրքի այս փոփոխութիւնը կը գործէ Հետեւեալ

պարագաներուն.

ա.- Միավանկ բառերու մէջ՝ վ չփականէն առաջ, ինչպէս՝ ծով>ծուօվ, կով>կուօվ, քով>քուօվ, ջով>ջուօվ եւ այլն:

բ.- Արեւմտահայերէնի տեղ ցոյց տուող Հոս, Հոդ, Հոն դերանուններուն մէջ՝ եուօս, եուօտ, եուօն:

գ.- Իբրեւ մասնակի պարագայ՝ չարք մը բառերու մէջ, ինչպէս՝ դողոչ>դուղուօզ, ճպոտ>չուպուօդ, քարոզ>քէրուօզ:

Ո>ու, ո>ան.- Բացի մասնակի կարգ մը պարագաներէ՝ յատուկ է միավանկ ու բազմավանկ բառերու փակ ու նախաչեչտ բոլոր դիրքերուն: Քմային փոփոխակը զգալի է յատկապէս ը ձայնորդէն առաջ: Օր.- ձող>ձուղ, փոս>փուս, փոխ>փախ, մոմ>մանմ, Հորթ>Հուրթ, կոթ>կանթ, շող>շուղ, խաղող>խաղուղ, կտոր>կանտոր (դրամ), մորի> մանրան, բոլոր>բանտոր (կտոր), բորոտ>բանտան, խնձոր>խընձոր, որոմ> մանրան, կորկոտ>կանտոր, կորեակ>կանրիկ, ողորմած>ուղուրմուօծ եւ այլն:

Ո>ուօ եւ ո>ու//ան փոփոխութիւններու ոլորտէն դուրս մնացած՝ միավանկ բառերու փակ ու բազմավանկ բառերու շեչտակիր ու նախաչեչտ դիրքերուն մէջ կան Հետեւեալ մասնակի փոփոխութիւնները.

- Ո>օ կայ քանի մը միավանկ բառերու մէջ՝ կոռ>կուօ, դող>դուօ, ողն>ղուօ, վերջին բառին սկիզբը կայ դ-ի յաւելում: Թող բայաձեւը ունի ձայնաւորի փոփոխութեան երկու ձեւ՝ թօ՛ղ//թըղ. առաջինը Հրամայական ձեւն է, իսկ երկրորդը՝ ըղձականի եղանակաւորիչ:

Ո>ի կայ նախաչեչտ դիրքերու մէջ՝ ոջիլ>իջլիլ, ոսկի>իսկան, խորովեմ>խիրվիմ, ցորեան>ցիրին, կոփեմ>կիփիմ, կոփիւն>կիփէն, կոփիչ>կիփէչ, թոնիր>թինէր, ցորեկ>ցիրիկ, Հոգի>Հիգգան:

Ո>ը կայ նախաչեչտ եւ շեչտակիր դիրքերուն մէջ՝ կոծիծ>կըճէճ, ծողրին>զըթըրէն, լողտուրք>լըղտուրք, բորբոսիմ>փըլփըսիմ, կողկողեմ>կըղկըղում, կողեմ>կըղղում, խոնջան>խընճուն, լոմլոմեմ>լըմմիմ, մորմենի>մըրմինան, ոսկը>ըսկան, ախոռ>ախը՛ռ, փորոք>փանր՛ք, Յակոբ>անկը՛ք, Ստեփանոս>Փէնը՛ս, Սերոբ>Սիրը՛ք, Քերոբ>Քիրը՛ք եւ այլն:

Ո>ա՝ մոռնամ>մառնում, ոռնամ>առուում:

Ո>ան՝ մոխիր>մանխիսէր:

Ո>ուօյ՝ ականջթոռ>էկըժդուօյո:

Վերջաւորութեան ունինք երկու դէպք.
Ը>էօ՝ յո>եէօ (ո՞ւր) եւ ո>օ//օվը՝ այո>Հօ//Հօվը:

Գրաբարի Ու ձայնաւորի դիմաց բարբառը ունի ու, ան, օ, օ, օր, էօ, ը՛, ը, ի, վ:

Շեչտակիր փակ դիրքին մէջ կը գործեն ու, ան, օ, օ, օր, էօ, ը՛:

Ու>ու ունինք միայն սողուն>ձուղուն բառին մէջ:

Ու>օ փոփոխութիւն կայ.

ա.- Ռ ձայնորդէն եւ դ, խ շփականներէն առաջ, ինչպէս՝ ուն>օու, ծուռ>ծօռ, դուռն>դօռ, սանդուխ>սանտօխ, մուխ>մօխ, գլուխ>ղլօխ եւ այլն:

բ.- Արմատական երկու բաղաձայններէ առաջ, երբ առաջինը ն ձայնորդը չէ: Օր.՝ թուղթ>թօխդ, բուրդ>բօրդ, լուրջ>լօրջ (կապոյտ), ցուրտ>ցօրտ եւ այլն:

գ.- Ն ձայնորդէն առաջ՝ մասնակի կերպով: Օր.՝ չուն>չօն, արթուն>արթօն, առու>առօն, երեսուն>եարսօն, քառասուն>քառսօն եւ այլն:

Ու>օ փոփոխութիւն կայ նաեւ ուրիշ բառերու մէջ, ուր աւելի կը Հանդիպին օ, օ, էօ, օր փոփոխութիւնները: Արդէն դժուար է որոշել Ու-ի դիմաց օ, օ, էօ, օր փակ դիրքի փոփոխութիւններուն ոլորտները: Ու>օ ունեցող այդ բառերէն յիշենք՝ ում>օմ, ամուր>ամօր, թրթուր>թարթօր, անմեռուկ>մառնօկ եւ այլն:

Ու>օ փոփոխութիւնը զգալի է ում կամ ումն վերջաւորութեան մէջ, ինչպէս՝ խթումն>խըթօմ, Հում>Հօմ, թաղումն>թաղօմ, խնդում>խընտօմ եւ այլն:

Ու>էօ//օր. ասոնք երբեմն կը գործեն զուգաձեւաբար. կրնայ եւ ու>օ փոփոխութեան երրորդ տարբերակն ալ առաջանալ կարգ մը բառերու պարագային: Հիմնականը առաջինն է: Ասոր կ'ենթարկուին վերի պարագաներէն ամբողջապէս կամ մասնակի կերպով դուրս մնացած բառերու երկար շարքեր, ինչպէս՝ ու>էօս, թուզ>թէօզ//թօրզ, կուժ>կէօժ//կօրժ, թութ>թէօթ//թօրթ, ջուր>ջէօր//ջօրր, անուշ>էննէօշ, փրփուր>փըրփէօր//փըրփօրր, ածու>էծօէօք//էծօքք եւ այլն: Երկու բաղաձայններէ առաջ, վերջինը ոչ արմատական, ինչպէս՝ տուրք>տէօրք, լուծք>լէօսք, մանաւանդ ն ձայնորդէն առաջ՝ մեղու>մըղէօնք, խունկ>խէօնկ, Հունդ>Հէօնտ, գունդ>գէօնտ, սունկ>սէօնկ եւ այլն: Ն ձայնորդէն առաջ՝ քուն>քէօն, դուն>դէօն, յիսուն>եիսսէօն, վաթսուն>վէձձէօն եւ այլն:

Ու>ը՝. քանի մը բառերու մէջ միայն՝ Մանուշ>Մէնը՛շ, խախուտ>խըրխը՛դ, ապուշ>իպը՛շ:

Վերջայանգին ու ձայնաւորը ունի Հետեւեալ փոփոխութիւնները.

Ու>էօ. Հերու>Հիրէօ, կծու>կըծօէօ, լեզու>լիզզէօ, թթու>թըթէօ:

Ու>ը՝. երկու>ըրկը՛//ըրկէօք:

Ու շաղկապը ունի ու կամ ը:

Ու>օ. Հեռու>Հառօ:

Ուրիշ օրինակներ չկան, որովհետեւ Ու ունեցող միւս բառերը բաղաձայնի յաւելում կրելով փակ դիրք ստացած են, ինչպէս՝ կատու>կէտօն, լու>լէօկ, ածու>էծօէօք, մեղու>մըղէօնք, դու>դէօն եւ այլն:

Ու ձայնաւորը կը քմայնանայ կամ անփոփոխ կը մնայ երկվանկ

բառերու նախաշեշտ ու աւելի բազմավանկ բառերու նախաշեշտ վանկին նախորդող դիրքերուն մէջ: Օր.՝ ուրբաթ>աւրբուօղ, ուրագ>աւրուօգ, ուսանիմ>ասնէմ, մուրացկան>մաւրէկան եւ այլն:

Ու>ը//ի փոփոխութիւն կայ եռավանկ բառերու նախաշեշտ դիրքին մէջ: Օր.՝ պատուհան>պէտըհուն//պէտիհուն, մանուշակ>մէնըշուօկ//մէնիշուօկ, անուշակ>էնըշուօկ//էնիշէօկ եւ այլն:

Ու>վ կամ ըվ փոփոխութիւն կայ ձայնաւորէ մը առաջ, ինչպէս՝ սիրուիմ>սիրվէմ, չուան>չըվուն, Աստուածածին>Ասվածածին եւ այլն:

2.- Երկբարբառներ

ԱՅ

Գրաբար ԱՅ երկբարբառին դիմաց գոյացած են ա , ան , ի , ու , քանի մը օրինակներով ալ՝ այ:

Այ>ան.- Ընդհանուր է շեշտակիր փակ դիրքին: Օր.՝ այդ>անտ, այս>անս, այն>անն, այլ>անլ, այծ>անծ, գայլ>գանլ, մայր>մանր, լայն>լանն, ծայր>ծանրք, կայծ>կանծ, Հայս>Հանս, փայտ>փանտ, տայգր>տանգրըր, երկայն>ըրկանն, եղբայր>անղբար եւ այլն:

Այ>ա//ու.- կը գործէ բազմավանկ բառերու վերջաւորութեան: Օր.՝ տղա>տըղա//տղու, ակոյա>ակոկա//ակու, բակլայ>բէկլա//բէկլու, սատանայ>սատանա//սատանու, մեքենայ>մաքինա//մաքինու եւ այլն: Փեսայ>փիսու բառը առաջին ձեւը չունի, իսկ վերայ>ըրվան բառին մէջ ն ձայնորդի յաւելումէն ետք տեղի ունեցած է այ>ա փոփոխութիւնը:

Այ երկբարբառը անփոփոխ կը մնայ միավանկ բառերու վերջաւորութեան. օրինակները օտար բառեր ու բացականչութիւններ են՝ չայ, վայ, Հայ եւ այլն:

Այ>ի.- Ընդհանուր է նախաշեշտ դիրքին: Օր.՝ այգի>իգգան, կայծակ>կիծծուօկ, պայծառ>պիծծուօռ, փայծաղն>փիծծուօխ, այսօր>իսուօր եւ այլն: Նոյնպէս, ձայնաւորէ մը առաջ՝ Հայելի>Հիլլան//Հիլլան, վայելէմ>վիլլիմ, գայեմ>գիլիմ:

Վերի օրինաչափութենէն կը շեղին այտոյցք>ուտէսք, այտնում>ուտըցիմ բառերը, ուր կայ այ>ու փոփոխութիւնը:

ԱԻ

Գրաբարի ԱԻ երկբարբառը բարբառին մէջ տուած է՝ ուօ, ան, երկփեղկուած՝ ձայնաւորի ու բաղաձայնի:

Աւ>ուօ.- Ընդհանուր է շեշտակիր փակ դիրքին: Օր.՝ աւձ>ուօձ, աւր>ուօր, խաւսք>խուօսք, մաւտ>մուօտ, արաւս>էրուօս, աղաւթք>աղուօթք, արաւր>էրուօր, կենաւք>կինուօք եւ այլն:

Բացառութիւն է աղանի>աղվուն բառը, ուր Աւ երկբարբառը դարձած է ձայնաւոր (ա) եւ բաղաձայն վ (ւ) կապակցութիւն ու դրափոխութեան ենթարկուած, ապա բառավերջի ձայնաւորի սղումով՝ օրինաչափօրէն այս ձեւը ստացած: Բարբառը ունի նաեւ անղունուօկ բառը՝ աղանեակ:

Աւ>աւ.- Ընդհանուր է նախաշեշտ դիրքին՝ բաղաձայնէ մը առաջ: Օր.՝ աւժիտ>աժէտ, անաւթի>էնթի, գաւտի>գաժտ, խաւսիմ>խաւսէմ, աւրաւրեմ>աւրաւրիմ, աւղ(իկ)>աղէկ, սաւսի>սասա, աւրոցք>աւրաւսք եւ այլն:

Վերջաւորութեան եւ որեւէ ձայնաւորէ մը առաջ կը դառնայ ձայնաւոր (ա) եւ բաղաձայն (ւ>վ) կապակցութիւն: Ձայնաւորը կը կրէ Համապատասխան Հնչիւնափոխութիւն: Օր.՝ Հաւ>Հուօվ, կաքաւ>կէքուօվ, ծարաւ>ծէրուօվ, աւել>էվիլ, աւելուկ>էվիլուօկ, աւերեմ>էվըրկիմ, թագաւոր>թէքէվուր եւ այլն:

ԵԱ

Գրաբարի **ԵԱ** երկբարբառին դիմաց բարբառին մէջ գոյացած է ի, մէկ-երկու օրինակներով ալ՝ իէ:

Եա>ի.- Բառերու շեշտակիր դիրքին մէջ: Օր.՝ իւրեանք>իրինք, կորեակ>կորիկ, ցորեան>ցիրին, ատեան>էտին, իւրեանք>իրինք, գրեաց>գրից, գրեալ>գրի, սեամ>չիմք եւ այլն:

Եա>իէ կայ միավանկ երկու բառերու մէջ միայն՝ լեան>լիէո, տեան>տիէր: Գրեանք>գրեանք բառին մէջ անփոփոխ մնացած է:

Կեամ>կամ պակասաւոր բային մէջ տեղի ունեցած է Ե բաղադրիչի անկում, մ ընգայինէն առաջ ա>ա օրինաչափ Հնչիւնափոխութիւն:

ԵԱՅ

Եայ>ա փոփոխութիւն կայ քրիստոնեայ>քրիստինա բառին մէջ միայն:

Գրաբարի արծաթեայ, ոսկեայ, երկաթեայ եւ նման ձեւերուն դիմաց բարբառը կը գործածէ գոյականի Հոլովաձեւերը, գլխաւորաբար սեռական, ինչպէս՝ արծաթը՝, իսկը՝ եւ այլն:

ԵԱԻ

Եաւ>եուօ փոփոխութիւն կայ եաւթն>եուօթթը բառին մէջ միայն: Հոս առաջին բաղադրիչը վերածուած է կիսաձայնի, իսկ աւ-ը, իբրեւ երկբարբառ, ենթարկուած է իրեն յատուկ Հնչիւնափոխութեան:

Եաւ>իվ փոփոխութիւնը ընդհանուր է վերջաւորութեան. Հոս եա բաղադրամասը, իբրեւ երկբարբառ, ենթարկուած է իրեն յատուկ Հնչիւնափոխութեան, իսկ վերջին բաղադրիչը վերածուած է բաղաձայնի (ւ>վ): Օր.՝ բարեաւ>բէրիվ, սեաւ>սիվ եւ այլն:

ԵԻ

Երկբարբառային պարագաները քննուած են իԻ երկբարբառին տակ:

Վերջաւորութեան եւ ձայնաւորէ մը առաջ՝ կը դառնայ ձայնաւորի եւ բաղաձայնի (ւ>վ) կապակցութիւն: Ձայնաւորը կ'ենթարկուի Համապատասխան Հնչիւնափոխութեան, ինչպէս՝ դեւ>դիէվ, թեւ>թիվ, սեւ>սիվ, թեթեւ>թիթիվ, ալեւոր>էլըվուր, երեւանամ>ըրվընում եւ այլն:

ԻԻ

Գրաբարի **ԻԻ** երկբարբառի դիմաց բարբառին մէջ առաջացած են է, ի, ձայնաւորի եւ բաղաձայնի երկփեղում, մասամբ ալ՝ ուօյ, իէ, եիէ, օ, էօ, ան:

Միավանկ բառերու սկիզբը կան Հետեւեալ փոփոխութիւնները.

- Իւ>է՝ իւր>էր.
- Իւ>իէ//եիէ՝ իւղ>իէղ//եիէղ:
- Միավանկ բառերու մէջ կան.
- Իւ>ուօյ՝ ձիւն>ձուօյն, Հիւթ>Հուօյթ, ձիւթ>ձուօյթ, սիւն>սուօյն.
- Իւ>օ՝ ձիւղ>ձօղ.
- Իւ>իէ՝ գիւղ>գիէղ.
- Իւ>էօ՝ իւնձ>էօնձ.
- Իւ>ան՝ Հիւսկ>Հանսգ:

Իւ>է.- Յատուկ է բազմավանկ բառերու շեշտակիր փակ դիրքին: Օր.՝ ալիւր>իլէր, արիւն>վիրէն, Հարիւր>Հէրէր, եղջիւր>աղջէր, Հորիւն>Հուրէն եւ այլն: Նոյնպէս ութիւն ածանցը՝ Հիւանդութիւն>Հիվընտութէն, բարեկամութիւն>բէրըմկութէն եւ այլն:

Շարք մը բառեր վերի օրինաչափութենէն շեղելով կ'ենթարկուին Հետեւեալ Հնչիւնափոխութիւններուն.

Իւ>ուօյ՝ աղբիւր>աղբուօյր:

Իւ>օ՝ մըջիւմն>մըրջօմ, ընձիւղ>ընձօղ:

Իւ>ի.- Յատուկ է նախաչեչտ դիրքերուն, բաղաձայնէ առաջ: Օր.՝ Իւրեանք>իրինք, Իւրեանց>իրինց, կիւրակէ>կիրէկի եւ այլն:

Վերջաւորութեան եւ ձայնաւորէ մը առաջ Իւ երկբարբառը կ'երկ-
փեղկուի ձայնաւորի եւ բաղաձայնի (ւ>վ): Ձայնաւորը կը կրէ համա-
պատասխան փոփոխութիւն: Օր.՝ հովիւ>հովվէվ, հիւանդ>հիվանտ, շի-
ւան>շիֆան եւ այլն: Վերջին օրինակին մէջ բաղաձայնը իր կարգին
կրած է վ>ֆ փոփոխութիւն:

ՈՅ

Գրաբարի Ոյ երկբարբառի դիմաց բարբառին մէջ գոյացած են
ուօյ, է, մէկական օրինակներով ալ՝ օ, էօ, ուօ, ի:

Ոյ>ուօյ.- Յատուկ է միավանկ բառերու փակ դիրքին: Օր.՝ բոյն>
բուօյն, բոյս>բուօյս, բոյր>բուօյր, գոյն>գուօյն, թոյլ>թուօյլ, լոյս>լուօյս,
կոյզ>կուօյզ, կոյր>կուօյր, յոյս>հուօյս, քոյր>քուօյր եւ այլն:

Իբրեւ մասնակի պարագայ՝ բազմավանկ բառերէն միայն ընկոյզ>
ընկուօյզ, հանգոյց>հանկուօյս:

Վերի օրինաչափութենէն կը շեղի շոյտ>աշտ բառը, որ սկիզբէն
աձականը ստանալով՝ կ'ենթարկուի բազմավանկ բառերու յատուկ
փոփոխութեան:

Ոյ>է.- Յատուկ է բազմավանկ բառերու շեշտակիր փակ դիրքին:
Օր.՝ շոյտ>աշտ, պատրոյզ>պէտրէզ, պատրոյս>պէտրէս, այտոյցք>
ուտէսգ, արտոյտ>արտէտ, գրոյց>գըրէց եւ այլն: Բացառութիւն են
ընկոյզ>ընկուօյզ, հանգոյց>հանկուօյս՝ ոյ>ուօյ եւ խաչահամբոյր>խա-
չանպուօր՝ ոյ>ուօ:

ՈՅ վերջաւորութեամբ կան երկու բառեր, որոնք ունին ն բաղա-
ձայնի յաւելում. կ'ենթարկուին տարբեր փոփոխութիւններու. ոյ>օ՝
Դշխոյ>Դաշխան. ունի նաեւ Դաշխի ձեւը, ուր կայ ոյ>ի: Ոյ>էօ՝ երե-
կոյ>ըրկէօն:

3.- Ձայնորդներ

Գրաբարի լ, մ, ն, ր, ո ձայնորդները բառին տարբեր դիրքերուն
մէջ ընդհանրապէս անփոփոխ մնացած են բարբառին մէջ: Օր.՝ լաղ>
լուօղ, ալիւր>իլիւր, խելք>իլիք, թոյլ>թուօյլ, մարդ>մուօրդ, ամիս>էմէս,
երդում>ուվդում, ում>օմ, նուչ>նէօչ, անագան>էնգան, սանդ>սանտ,

արին>վիրէն, բուրդ>բօրդ, արջ>ուօրջ, բերեմ>բիրիմ, ծաղը>ծուօղըր,
եղբայր>աղբար, առնում>առնիմ, ձեռն>ձառ, դեռ>դառ, ձմեռն>ձըմիէռ
եւ այլն:

Մասնակի եւ առանձին հետեւեալ փոփոխութիւնները նկատուած
են.

Լ>ն՝ ելանեմ>ըննիմ, լինեմ>ըննում, յուլութիւն>աւնութէն, ուլուն>
հըննօկ՝ լրիւ առնմանութեամբ. մի+այլ+օր>մէննուօր՝ մ-ի մասնակի
առնմանութեամբ:

Լ>ր՝ զնճիլ>զընճէր:

Մ>ն՝ բարբառի պ ձայնեղէն առաջ, տարնմանութեան օրէնքով:
Օր.՝ անպ>անպ, ամբար>անպուօր, բամպակ>բանպուօկ, թմբուկ>թըն-
պօկ, համար>հէնպուօրք, համարեմ>հէնպըրիմ եւ այլն: Նաեւ՝ լկամ>
լըկանք, որոմն>որան:

Ն ձայնորդը, իբրեւ օրէնք, կորսուած է բառավերջին, բաղաձայնէ
մը ետք, ինչպէս՝ լեան>լիէռ, ձեռն>ձառ, ձմեռն>ձըմիէռ, սիսեռն>սի-
սիէռ, հարսն>հուօրս, ոտն>վիտ եւ այլն: Բացառութիւն է թոռն>թոռուն
բառը, որուն ն ձայնորդը մնալով՝ գաղտնավանկին մէջ ու կ'երեւայ:

Նկ եւ նգ խումբերը ն ձայնորդէն առաջ կը դառնան՝ յ, ինչպէս՝
անկայիմ>իյնէմ, ցնկնիմ>ձիյնէմ, կանգնիմ>կէյնէմ, կանգն(ուկ)> - կէյ-
նէօկ, կանգնած>կէյնուօծ:

Ն>մ՝ բան մը>բամ մը, հանգչիմ>հէմչէմ՝ ն-ի լիակատար առնմա-
նութեամբ, վերջինը՝ բայի ներկայ ձեւերուն Ա. դէմքին մէջ միայն.
ճանապարհ>ճանփուօգ՝ պ>փ-ի մասնակի առնմանութեամբ:

Ն>լ՝ անալի>անլան, բանալի>բէլէնք՝ լ-ի լիակատար առնմանութ-
եամբ, նմանեմ>ըմէնէմ, մ-ի տարնմանութեամբ, նուրկ>ըրկէկ:

Ն>ո՝ անուանակից>անուանկէն/էվրնկէն, անխօս>անխուօս:

Ր եւ ո ձայնորդներու պարագային կարելի է ըսել, որ բարբառին
մէջ զգալի է ր ձայնորդի կոշտացում եւ արտասանական նոյնացում
ո-ի հետ. սակայն ո եւ ր ձայնորդներու դրացնութեամբ ձայնաւորներու
կրած պատմական ու շեշտի հետ կապուած փոփոխութիւններու տար-
բեր օրինաչափութիւնները՝ այս երկու ձայնորդներուն կու տան հա-
կադրութեան եզրեր:

Ր>ն՝ բարձր>բունձըր, բարձրանամ>բանձըրնում, բարձրութիւն>
բանձրութէն/բանձրուօգ՝ ր-ի տարնմանութեամբ:

Ր>լ՝ բորբոսիմ>փըրլիբսիմ, պարուրեմ>փլուրիմ:

Ի ձայնորդը անհետացեր է բարբառէն: Իբրեւ բաղաձայն նոյնացած
է վ շփականին: Օր.՝ հիւանդ>հիվանտ, աւել>էվիլ, արեւ>էրիվ, հաւ>
հուօվ եւ այլն:

Ի>վ>ֆ՝ տերեւ>տիրիֆ, շնորհաւոր>շընըֆուր, շնորհաւորեմ>շը-
նըֆըրիմ, շիւան>շիֆան:

Ի>վ>պ փոփոխութիւն կայ թաւալիմ>թէպլէմ բառին մէջ, հաւա-
նաբար տապալիմ բառի համաբանութեամբ:

Յ ձայնորդը ունի երեք կարգի փոփոխութիւններ.

ա.- Բազմավանկ բառերու սկիզբը ընդհանրապէս ինկած է՝ յատակեմ>էկտիմ, յաւելանամ>էվլնում, յետին>իտտէն, յատակ>իստուօկ, յօրանջեմ>ըրըժկըտում, յարդանոց>արդընուց, յարագեմ>ըրըկիմ, Յարութիւն>Արթին, Յովսէփ>Ուսիէփ, Յակոբ>էկմբ, Յիսուս Քրիստոս>իսսիս Քրիստոս, յիշած>իշուօժ բէրէն (բարեյիշատակ) եւ այլն: Նոյնպէս բազմավանկ բառերու վերջը՝ սատանայ>սատանա, փեսայ>փիսու, տղայ>տըղու եւ այլն:

բ.- ՅՀ փոփոխութիւն կայ կարգ մը բազմավանկ բառերու սկիզբը՝ յամենամ>Հիմիմ, յօտեմ>Հոտտիմ, յառնեմ>Հառնիմ եւ օտար բառերու սկիզբը՝ յունուար>Հունվար, յունիս>Հունիս, յուլիս>Հուլիս, որոնք գրական լեզուէն փոխառութիւններ են. յիսուն բառը ունի երկու ձեւ. տեղ մը ձայնորդը պահուած է՝ եիսսէօն, տեղ մը Հ-ի վերածուած՝ Հիսսէօն:

գ.- Յ ձայնորդը անփոփոխ մնացած է քանի մը բառերու սկիզբը՝ յարդ>բիէրդ, յետ>բիտ, յիսուն>բիսսէօն, եւ իբրեւ կանոն՝ Ե (յ) նախդիրը ձայնաւորով սկսող բառերուն սկիզբը՝ եէօ (Հյո), երկէնք (Հյերկինս), եէնք (Հյինքն), երրվան (Հի վերայ) եւ այլն: Բնիկ բառերուն մէջ եւ վերջաւորութեան չէ պահուած, այդ դիրքերուն մէջ գոյութիւնը զուտ բարբառային է:

Յլ՝ Հայեկի>Հիլիւմ//Հիլւմ՝ Լ-ի լիակատար առնմանութեամբ:

4.- Եփականներ

Գրաբարի շփականները՝ գ, ս, ժ, չ, դ, խ, վ, ֆ, հ, բարբառին մէջ բառին գրեթէ բոլոր դիրքերուն մէջ առհասարակ մնացած են անփոփոխ: Օր.՝ վախ>վուօխ, Հովիւ>Հոմվէվ, ծով>ծուօվ, գատիկ>գէտէկ, եզերք>իզզիրք, Հազ>Հուօզ, սուղ>սուղ, ասեմ>էսիմ, ես>իս, ժանգ>ժանկ, արժեմ>իժիմ, կուժ>կէօժ, չուք>չէօք, կաչի>կիչի, նուչ>նէօչ, խակ>խուօկ, ախոռ>ախը՛ռ, մուխ>մօխ, Համ>Հոմ, եհան>իհան, եղունգ>ղէօնկ, եղբայր>նղբար, մաղ>մուօղ եւ այլն:

Կան Հետեւեալ մասնակի ու առանձին փոփոխութիւնները.

վ>ֆ՝ վայթեմ>ֆիթիմ, ֆիթֆիթիմ, ֆիթէօկ. ւ>վ>ֆ՝ տերեւ>տիրիվ//տիրիֆ, շնորհաւոր>շընըվուր//շընըֆուր, շնորհաւորեմ>շընըվըրիմ//շընըֆըրիմ, շիւան>շիվան//շիֆան:

Ջ>չ՝ զանգ>չանկ, զանգիւն>չընդէն, զանգեմ>չընդիմ:

Ջ>ժ՝ ազոխ>էժժուխ:

Դ>ժ. (ըն)դ+գոր օրինակով՝ ընժըր, ընժըրնա, ընժըրնատ, ընժըրնա. (ըն)դ+գ+այս օրինակով՝ ընժնա, ընժնատ, ընժնա: Կայ նաեւ՝ դըզ//ժըզ//ժըս (պէս) նախդիրին մէջ:

Ս>ն՝ ուսուցանեմ>ունցընիմ, լուսուցանեմ>լունցընիմ՝ ց-ի տարնըմանութեամբ:

Ս>զ՝ ընդոստեմ>Հանդուգտիմ, կերաս>քըրուօզ:

Ս>ձ՝ սողուն>ձուղուն, սողամ>ձուղում:

Ս>չ՝ սեամ>չիմք:

Ս>ց՝ Աւետիս>Ավիտից:

Թս>ձձ՝ վաթսուն>վէձձէօն:

Տս>ց՝ արտասունք>արցօնք:

Ժ>ճ՝ ժողովեմ>ճուղիմ, վարժուհի>վարճի, ոյժ>էօժ//էօճ:

Շ>ժ՝ շարժ>ժմժ, շարժեմ>ժըժիմ՝ Ժ-ի առնմանութեամբ:

Շ>զ՝ դողոչ>դուղուօզ:

Շ>ս՝ ապըրչում>ալըրսէմ:

Շ>չ՝ շիւ>չէվ:

Շ>ճ՝ շի նուազական մասնիկը, առանց բացառութեան, ինչպէս՝ բոլորչի>բոլորճիկ, լայնչի>լինճիկ, կէրմըրճիկ (կարմրաւուն), գարճիկ (գիրուկ) եւ այլն:

Ղ>խ՝ իբրեւ օրէնք, բառավերջի ք, թ եւ բառամէջի ք, ց բաղաձայններէն առաջ. առաջին երկուքը իրենց կարգին կը խլանան, ինչպէս՝ մեղք>միէլսգ, ճեղք>ճիէլսգ, թուղթ>թօխթ, աղքատ>ախքուօտ, քաղցած>քախցուօժ, քաղցրանամ>քախցըրնում, խաղք ընել>Հախքըրիլ եւ այլն: Ղ>խ փոփոխութիւնը կարելի է զգալ վերոյիշեալ դիրքերէն դուրս եւս, ինչպէս նաեւ բարբառի միւս շնչեղ խուլերու եւ խուլերու նախորդող դիրքին մէջ, սակայն բարբառի ներկայ վիճակին մէջ ան բացարձակ չէ եւ ընդհանուր օրինաչափութեան չէ վերածուած: Ղ>խ ունին նաեւ սանդուղ>սանտօխ, փայծաղն>փիծժուօխ, խիղ>խըղ//քը՛խ (մնկ.):

Ղ>խ՝ քաղհանեմ>քախնիմ, աղուհացք>ախուօսգ:

Ղ>լ՝ ծղրիթ>զըլղէդ, ճնճղուկ(իկ)>ճընճըլկէկ:

Ղ>կ՝ սեղմեմ>սուկմիմ, սուկմիկ, մրգնեղ>մըրզընիէկ:

Տղ խումբը կը դառնայ գ՝ լուսաստղ>լուսուօսգ բառին մէջ:

Ս>ղ՝ դոխն>դուղ (ջրաղացի ձագար), խեռիմ>ղէրիմ, ուխիմ (ուղխիմ)>ուղէմ, խտղեմ>տըղտըղիմ, խծալիմ>ժըղալիմ: Վերջին երկուքը՝ դրափոխութեամբ:

Ս>կ՝ ջախեմ (ջաղխեմ)>չանկիմ, վարճոխ (վարճող)>վարճօկ:

Ս>Հ՝ խաղք ընել>Հախքըրիլ, խոցտուկիմ>Հուսկուտէմ:

Հ>Ֆ՝ սահիմ>սիֆէմ, սահուկ>սիֆէօկ:

Հ>խ՝ հող>խուղ՝ մասնակի առնմանութեամբ:

Դ>Հ>թ՝ ընդհարուիմ>թէրվէմ (գօտեմարտիլ), ընդհարում>թէրվէն, ընդհարականիմ>թէրկիմ (յաղթել):

5.- Պայթականներ եւ կիսաշփականներ

Գրաբարի բ, գ, դ, ձ, ջ ձայնեղ բաղաձայնները բարբառին մէջ կը ներկայանան Հետեւեալ կերպով.

ա.- բառասկիզբը, բառամէջը, բառավերջը, եթէ ն (կամ՝ մ>ն) ոնգայինին չեն յաջորդեր, կ'արտասանուին խուլ (այսինքն՝ գրաբարի եւ արեւելահայերէնի արտասանութեամբ պ, կ, տ, ծ, ճ): Օր.՝ բաժին>

բիժէն, բանամ>բէնում, բարակ>բէրուօկ, բարկ>բուօրկ, եղբայր>աղբար, շաբաթ>չէբուօղ, արբենամ>հէրբէմ, որբ>վը'րբ, երբ>բիէբ, գէր>գիէր, գայլ>գալ, հոգի>հիգալ, ագի>ալգալ, պագ>պուօգ, կարգ>կուօրգ, դեռ>դառ, դադար>դէդուօր, դուռն>դուռ, արդար>արդուօր, խեղդեմ>խախ- դիմ, մարդ>մուօրդ, ձիւն>ձուօյն, ձեռն>ձառ, ձուկն>ձօկ, բարձ>բուօրձ, որձ>վըրձ, օձ>ուօձ, ջուր>ջէօր, ջնջեմ>ջընջըխիմ, ոջիլ>իջիլ, շուրջառ> շուրջուօռ, արջ>ուօրջ, մէջ>միէջ եւ այլն:

բ.- ն ռնգայինէն ետք կը պահեն իրենց ձայնեղութիւնը (այսինքն՝ կ'արտասանուին գրաբարի եւ արեւելահայերէնի բ, գ, դ, ձ, ջ բաղա- ձայններուն պէս): Այս շարքին մէջ կը մտնեն մը>նպ փոփոխութիւն կրող բառերը: Օր.՝ ամբար>անպուօր, թմբուկ>թըմպօկ, գամբիւղ> գէնպիէղ, համ(բ)ար>հէնպուօր, բամբակ>բանպուօկ, ժանգ>ժանկ, գանգատ>գէնկուօտ, երանգ>ընանկ, եղունգ>ղէօնկ, խնդամ>խընտամ, անդանիմ>էնտիմ, կաղանդ>կաղունտ, սանդ>սանտ, գունդ>գէօնտ, սինձ>սէնձ, ինձ>ինձի, թանձր>թանձըր, հնձեմ>ընձիմ, պղինձ>պուղէնձ, բանջար>բանձուօր, առաջ>եռանձ, ականջ>ակննձ եւ այլն:

Առաջին օրինաչափութենէն կը շեղին նաեւ հետեւեալ մասնակի եւ առանձին պարագաները.

Բ>պ՝ ձայնեղութիւնը պահած է, սուրբ>սէօպ (մաքուր յղուած), բոլորեմ>պուլըրիմ (փաթթել), բառաջեմ>պառջիմ, բառաջիւն>պառջէն, բուղայ>պուղա, բզէգ>պըզիէգ, բուրգն>պօրգ:

Բ>փ՝ բետատ>փուտուօտ, բեկոր>փիկօր, բորբոսիմ>փըլփըսիմ, բղխիմ>փուլիմ:

Դ>տ՝ ձայնեղութիւնը պահած է, դարման>տէրմուն, դարմանեմ> տէրմէնիմ, դրդեմ>տուրթիմ, շոյդ>ուչէտ: Նաեւ՝ ցուցական դերանուն- ներու հոլովական եւ առանձին ձեւերու մէջ՝ անտ, իտու, եուօտ, էտկիէց եւ այլն:

Դ>թ՝ դրդեմ>տուրթիմ, կորդոյնք>կուրթէնք:

Դ<թ՝ ընդհարուիմ>թէրվէմ (գօտեմարտիլ), ընդհարում>թէրվէն, ընդհարկանիմ>թէրկիմ (յաղթել):

Դգ>ծ՝ (ըն) դ+գ+այս օրինակով՝ ընծան, ընծատ, ընծան. (ըն) դ+գ+ որ+այս օրինակով՝ ընծըրան, ընծըրատ, ընծըրան:

Գ>կ՝ գորտ>կուրտ, կուրտընքուօք, գտանեմ>կըննէմ, եգիտ>իկէօձ, գործելի>կըրգիլի, ագուա>ակորհուօկ, գլուխ>կըլօխ, գլխացաւ>կըլ- խըցուօկ, որձեւէգ>վըրձըվիէկ, կնի (գոգ. ժայռի մէջ առաջացած փոս, ուր ջուր կը հաւաքուի), կնիկ (<գայլիկ՝ սկիւռ):

Գ>յ՝ ձգտիմ>ձիյտէմ:

Գ>ք՝ գիչեր>քիչիւր, թագաւոր>թէքէվուր, կոր ագի>կըրընքա (կա- րիճ):

Ձ>ճ՝ ընձիւղ>ընձօղ:

Ձ>ց՝ ձարմաղ>ցըրմուօղ:

Ձ>ս՝ ձգեմ>իսգիմ:

Ջ>ճ՝ աջ>անճնա, ջրորդան>ճըրդուն, ճըրդընիլ, ջուհակ>ճըլլուօկ: Ջ>չ՝ խնջեմ>խընչիմ, նաեւ՝ ոջ>աչ հոլովամասնիկը՝ տիրոջ>տիրաչ, տայգրոջ>տիգրաչ, (եղբայր) կնոջ>աղբըրկընաչ եւ այլն:

Նջ>ժ՝ բաղաձայնէ մը առաջ, ինչպէս՝ յօրանջկտեմ>ըրըժկտում, ականջամուտ>էկըժմէօտ, ականջատակ>էկըժտուօք, ականջթոռ>էկըժ- դուօյռ:

Ջ>չ՝ ք շնչեղ խուլէն առաջ, որ իր կարգին կը կորսնցնէ իր շնչե- դութիւնը. այստեղ պարզացման ու խլացման փոփոխութիւնները առ- նմանութեամբ կը բացատրուին: Օր.՝ մէջք>միէչգ, բէջք>բիէչգ, նոյնը կայ նաեւ իչգէն (<աղիջ - կին՝ աղջիկ) բառին մէջ:

Երկրորդ օրինաչափութենէն կը շեղին հետեւեալ մասնակի եւ ա- ռանձին պարագաները.

Գրաբարի գ ձայնեղը բարբառի ն ռնգայինէն ետք խուլ է՝ անա- գան>էնգուն:

Նգ>յ, բառին մէջ Ն ձայնորդէն առաջ, կանգնիմ>կէյնէմ, կանգն (ուկ)>կէյնէօկ:

Գ>կ//ղ՝ գանգ>չանկ//չանղ:

Գ>ղ՝ գանգիւն>չընղէն, գանգեմ>չընղիմ:

Գ>կ՝ վանգեմ>վընկում, վանգիւն>վընկէն, գլուխ>գըլօխ//կըլօխ:

Գրաբարի դ ձայնեղը բարբառի ն ռնգայինէն ետք խուլ է՝ ընդու- տեմ>հանդուգտիմ:

Գրաբարի ձ ձայնեղը բարբառին ն ռնգայինէն ետք խուլ է՝ բարձր> բունձըր, բարձրանամ>բանձըրնում, բարձրութիւն>բարձրութէն// բանձըրուգ:

Գրաբարի խուլ պ, կ, տ, ծ, ճ խուլ բաղաձայնները բառասկիզբը, բառամէջը եւ բառավերջը կ'արտասանուին ձայնեղ (այսինքն՝ գրա- բարի եւ արեւելահայերէնի արտասանութեամբ բ, գ, դ, ձ, ջ): Օր.՝ պաղ>պուօղ, պատ>պուօտ, պարապ>պըրուօպ, պինդ>պէնտ, տապա- կեմ>տէպկիմ, ապրուստ>էպրօստ, ապուր>էպէօր, ամպ>մնպ, ոսպ> վը'սպ, կար>կուօր, կեր>կիւր, կէս>կիէս, կանգար>կէնկուօր, կարկուտ> կըրկէօտ, երկու>ըրկը', երկայն>ըրկան, բակ>բուօկ, ծակ>ծուօկ, ակն> ուօկ, տէր>տիէր, տուն>տէօն, տասն>տուօսսը, տղայ>տըղու, տախ- տակ>տախտուօկ, տտեան>էտին, հատ>հուօտ, հաստ>հուօստ, առատ> ըռտուօտ, ծառ>ծուօռ, ծուռ>ծու, ծեղ>ծիէղ, ածու>ծօժէօք, արծաթ> արծուօթ, արածեմ>արծիմ, ծիծ>ծէժ, մեծ>մինձ, խած>խուօժ եւ այլն:

Այս գլխաւոր օրինաչափութենէն կը շեղին հետեւեալ մասնակի եւ առանձին պարագաները.

Պ>կ՝ սեպտեմբեր>սէկտէմբէր՝ բ-ի տարնմանութեամբ:

Պ>փ՝ ճանապարհ>ճանփուօգ, պարուրեմ>փըլմըրիմ, սպասաւորեմ> փնէվըրիմ:

Կ խուլ պայթականը կը պահէ իր խուլութիւնը կարգ մը բառերու

մէջ՝ մէկ>միէգ, միգգին, կարկաչեմ>կէրգձճիմ, կարկաչին>կէրգձճէն, աղիջ-կին>իշգէն (աղջիկ): Մէկ>միէգ բառը իբրեւ անորոշ դերանուն յաճախ ունի միէկ ձևը:

Կ>կ՝ կոծիծ>կըճէճ, կտրեմ>կըրդիմ, կողամ>կըղղում, կողկողեմ>կըղկըղում, մոծակ>մուճոկ, ճուռակ>ճըռուիէկ:

Կ>ք՝ կարաւան>քէրվան, կոտտեմ>քձթթում, կերաս>քըրուօգ, տակ>տուօք, ափկից>էփքէս, կրակ>կըրուօկ//կըրուօք, կրակոց>կըրէ-քձց (կրակի տեղ):

Կ>յ՝ ականամոմ>էյմմ, ակն մտանեմ>էյմըտիմ. նոյնպէս՝ նկ խումբը ն ձայնորդէն առաջ՝ անկանիմ>իյնէմ, ցնկնիմ>ձիյնէմ:

Կ>ղ՝ ընկոյգ>ընդուօյգ//ընկուօյգ:

Կ>պ՝ բոկ(իկ)>բձպէկ՝ բ-ի մասնակի առնմանութեամբ:

Տ խուլ պայթականը կը պահէ իր խլութիւնը կարգ մը բառերու մէջ՝ փտիմ>բըրդէմ, փտուկ>բըրդօկ, խախուտ>խըրխը՛ր, ճպտոտ>չու-պուօղ, կտրեմ>կըրդիմ, սխտոր>սըխդձր, գխտոր>գըխդձր:

Տ>թ՝ կոտտամ>քձթթում, սուտ>սէօտ//սօթ. վերջինը կը նշա-նակէ երկրորդական ծիլ:

Տս>ց՝ արտասուք>արցօնք:

Մ>ճ՝ մոծակ>մուճոկ, կոծիծ>կըճէճ, ծորամ>ճըրրում, ծկիկ>ճըկէկ (ճկոյթ):

Մ>չ՝ ծիտ>չէտ:

Մ>ս՝ իբրեւ օրէնք իր շնչեղութիւնը կորսնցուցած ք պայթականէն առաջ. պարզ խուլերու դրացնութիւն կը ստեղծուի: Օր.՝ կուրծք>կօսգ, ծիծք>ծէսք, անէծք>էնիէսգ, խօսուածք>խուսվուօսգ, գանգ(ածք)>գէնկուօսգ եւ այլն: Մ>ս փոփոխութիւնը կայ նաեւ այլ շարք մը բառերու մէջ՝ ծծեսցո>ճըսցէօ, փիծ>փիս, յածեմ>ասսիմ:

Մ>զ՝ ծածկեմ>ծէզկիմ, կայծկտայ>կըզկըտում, կըզկըտէն, ծղրիթ>զըրլէդ, ծոթրին>զըրզրէն, գործելի>զըրզիլի, ծանլ>զըմմիէլ, ծամտակ>զէմտուօկ, ծաւալ>զէվուօլ, ծունկ>զօնկ, զընկըտվի, զընկըտվուօկ, ծմակ>զըմմուօկ եւ այլն:

Ճ>ջ՝ մորճ>մուրջ:

Ճ>չ՝ ճպտոտ>չուպուօղ:

Ճ>ժ՝ բաղաձայնէ մը առաջ, խղճմտանք>խըժմըտունք, կոճակեմ>կուժկիմ, կարճանամ>կէժկընում, կարճուկ>կէժկէօկ:

Գրաբարի փ, ք, թ, ց, չ շնչեղ խուլերը բարբառին մէջ բառի գրեթէ բոլոր դիրքերուն մէջ անփոփոխ մնացած են: Օր.՝ փոր>փուր, փայտ>փանտ, փոխեմ>փըխիմ, փետուր>փիտէօր, փրփուր>փըրփիօր, կոփեմ>կիփիմ, շերեփ>չիրիփ, ծեփ>ծիփ, թեփ>թիփ, քիթ>քէնթ, քար>քուօր, քոյր>քուօյր, աղքատ>ալքուօտ, կաքավ>կէքուօվ, թեզանիք>թիզնէք, պարտք>պուօրք, թան>թան, թակ>թուօկ, թել>թիլ, թութ>թէօթ, երկուշաբթի>ըրկըչէթի, կաթիլ>կէթէլք, կաթ>կուօթ, կոթ>կձթ, մութ>մէօթ, ցուրտ>ցօրտ, ցորեան>ցիրին, քացախ>քէցուօխ, ցեց>ցից,

Հաց>Հուօց, չափ>չուօփ, չոր>չձր, կանաչ>կաննչ, չամիչ>չճմէչ եւ այլն: Իբրեւ շեղում՝ կան Հետեւեալ պարագաները.

Փ>պ՝ թափօր>թափօր//թապուր, Յովսէփ>Ուսիէփ//Ուսը՛պ:

Փ>բ՝ շփեմ>իշքիմ, ափ(լղել)>էբըրդիմ, փտիմ>բըրդէմ, փտուկ>բըր-դէօկ, լափեմ>լըբբիմ, լափ>լըբ (մնկ.):

Ք>զ՝ իբրեւ օրէնք, բարբառի խուլ շփականներէն (ս, չ, խ) վերջ. պարզ խուլերու դրացնութիւն կը ստեղծուի: Օր.՝ լուծք>լէօսք, անէծք>էնիէսգ, այտոյց(ք)>աւտէսք, աչք>աչգ, մէջք>միէչգ, մեղք>միէլագ, բէջք>բիէչգ, ճեղք>ճիէլագ եւ այլն:

Ք>գ փոփոխութիւն ունին նաեւ երեք>ըրգ, չորք>չձգ:

Թ>ղ՝ իբրեւ օրէնք, բարբառի խուլ շփականներէն (յատկապէս խ) վերջ. պարզ խուլերու դրացնութիւն կը ստեղծուի: Օր.՝ թուղթ>թօխդ, մաղթ>մալիդ, թթխմոր>թըրդիմ, թաթախեմ>թաղիսիմ եւ այլն:

Թ>ղ փոփոխութիւն ունին նաեւ աբէթ>էբիդ, թաս>ղուօս, թրջեմ>ղըրջիմ, ականջթոռ>էկըժդուօյո, ծղրիթ>զըրլէդ, ուրբաթ>աւրբուօղ, շա-բաթ>չէբուօղ: Հոս նշենք նաեւ, որ օտար բառերու վերջայանգի թ-ն բառի աճման պարագային՝ սովորաբար կ'ըլլայ դ, ինչպէս՝ ազիաթ - ազիլիլի(չարչարել), իլլաթ - իլլաթիտ (Հիւանդոտ), Հասրուօթ, Հաս-րաղիլ (կարօտնալ՝ անարգական) եւ այլն:

Թ>տ՝ վիթ>վէտ:

Յ>ս՝ իբրեւ օրէնք՝ իր շնչեղութիւնը կորսնցուցած ք բաղաձայնէն առաջ. կը ստեղծուի պարզ խուլերու դրացնութիւն, ինչպէս՝ լիցք>լէսգ, լուածք>ըլվուօսգ, ջրաղացք>ջաղուօսգ, այտոյցք>ուտէսգ եւ այլն:

Յ>ս փոփոխութիւն կայ նաեւ նախաշեշտ վանկերու փակ դիրքին մէջ, ինչպէս՝ խոցոտիմ>խուստիմ//Հուսկըտէմ, քացախիմ>քէսիսիմ, փրցըլինք>փիսլէնք, անցանեմ>աննէմ, երէցկին>ըրըսկէն. նոյնպէս եւ պատճառականի մէջ՝ վէզզըսնիմ (վազեցնեմ), խումցըսնիմ (խմեցու-ցանեմ), իմցըսնիմ (իմացուցանեմ): Վերջայանգին՝ ափկից>էփքէս, Հանգոյց>Հանկուօյս:

Յ>ծ՝ ցայթեմ>ծիթիմ, ցրդի>ճըրդի:

Յ>չ՝ ցանկ>չէօնկ(ծայր):

Յ>ձ՝ ցնկնեմ>ձիյնէմ. նաեւ շարք մը տարաՀիմք ու զարտուղի բա-յերու անցեալ կատարեալի եւ Հրամայականի ձևերուն մէջ՝ գաձաձ (գա-ցի), գէձի (գացիր), գընուօձ (գնաց), կիձ (գտիր), իկիօձ (գտաւ), իբիձ (բերաւ), իդէձ (դրաւ) եւ այլն:

Յ>ճ՝ անուանակից>անվընկէճ//էվընկէճ, բաժնեկից>բիժինկէճ:

Չ>չ՝ իբրեւ օրէնք՝ բաղաձայնէ մը առաջ, ինչպէս՝ աչք>աչգ, քիչ մը>քէչ մը, քիչ պակաս>քէչպէկուօս, փոնչտամ>փրոռչտում, ամաչկոտ>էմըչկիտ եւ այլն:

Չ>ճ՝ կարկաչեմ>կէրգձճիմ, կարկաչին>կէրգձճէն, կոփիչ>կիփիէճ:

Չ>ջ՝ բառաչեմ>պառջիմ, բառաչիւն>պառջիւն:

2.- ԴԻՐՔԱՅԻՆ ԵՒ ՓՈՌԱԱԳԻՅԱԿԱՆ ՀՆՁԻՆԱՓՈՒՈՒԹԻՒՆ

Քեսապի բարբառին մէջ լայն տեղ կը գրաւեն դիրքային եւ փոխադրեցական Հնչիւնափոխութեան գործօնները: Առնօնքով՝ առնմանութեան, տարնմանութեան, Հնչիւններու պարզացման ու բարդացման բոլոր դէպքերը նշուած են «Պատմական Հնչիւնափոխութիւն» գլուխին մէջ: Հոս կը բաւականանանք ընդհանրացումներ կատարելով՝ առանց կրկնելու Հնչիւնափոխութեան բոլոր դէպքերը:

1.- Առնմանութիւն

Կերպայ երկու տեսակ՝ լիակատար եւ մասնակի: Լիակատար առնմանութիւն կը պատահի ա) բառի տարբեր դիրքերուն մէջ գտնուող երկու բաղաձայններու միջեւ, ինչպէս՝ շժ>ժժ՝ շարժ>ժաժ, խղ>խխ՝ խիղ>խըխ, խղ>ղղ՝ խաղիկ>ղաղէկ եւ բ) իրար կից երկու բաղաձայններու միջեւ. ասիկա կը ստեղծէ տեւական բաղաձայններ, ինչպէս՝ նլ>լլ՝ անալի>ալլա, յլ>լլ՝ հայելի>հիլլի//հիլիլ, նմ>մմ՝ բան մը>բաժմ մը, տն>նն՝ գտանեմ>կըննէմ, մտանեմ>մըննէմ, մատանի>մաննա, մատնոց>մէննուց, լն>նն՝ ելանեմ>ըննիմ, լինեմ>ըննում: Լիակատար առնմանութիւն կայ նաեւ ձայնաւորներու մէջ. ասոր իբրեւ օրինակ կարելի է բերել այն պարագան, ուր ա-ի նախորդող վանկին մէջ ա-ն կը մնայ անփոփոխ՝ ականջ>անկանձ, գարի>գարն, բայց առաջինի փոփոխութեան պարագային՝ երկրորդը փոփոխութեան կ'ենթարկուի՝ անկանձ>էկընձիլ, գարն>գէրէն:

Մասնակի առնմանութիւնը կ'ընդգրկէ ինչպէս առանձին երեւոյթներ (հող>խուղ, բոկիկ>բուկէկ), այդպէս ալ ընդհանուր ոլորտներ. ասոր իբրեւ օրինակ՝ յիշենք խուլերու մօտ խուլերու առաջացման պարագան, որ օրինաչափական է Քեսապի բարբառին համար:

2.- Տարնմանութիւն

Բաղաձայններու տարնմանութիւնը Քեսապի բարբառին մէջ ընդհանուր ոլորտներ չունի. կը սահմանափակուի բաւական երկար շարք մը առանձին օրինակներով, ինչպէս՝ ր>ն՝ բարձր>բունձըր, բարձրանամ>բանձըրնում, բանձրութէն, բանձրուագ (ր-ի տարնմանութեամբ), ն>լ՝ նմանիմ>ըլմէնէմ (ն-ի տարնմանութեամբ), պ>կ՝ Սեպտեմբեր>Սէկտեմբեր (բ-ի տարնմանութեամբ), ն>ո՝ անուանակից>նովնկէճ (ն-ի տարնմանութեամբ), խ>հ՝ խաղք ընել>հախքըրիլ (խ-ի տարնմանութեամբ):

3.- Հնչիւններու բարդացում

Հնչիւններու բարդացման հետեւեալ միջոցները կան.

ա.- երկու պարզ բաղաձայններու ձուլումով բարդ բաղաձայնի մը ստեղծումը, ինչպէս՝ դգ>ժ՝ ընդ-գոր>ընժըր, ընդ-գայս>ընժաս, ընդ-գայն>ընժան եւ այլն. թս>ժ՝ վաթսուն>վէճձէօն, տս>ց՝ արտասուք>արցօնք, դհ>թ՝ ընդհարկանեմ>թէրկիմ, ընդհարուիլ>թէրվիլ:

բ.- գ, ս, ժ, շ շփականներու կիսապայթականներու վերածում, ինչպէս՝ գ>ժ՝ ագոխ>էծծախ, գ>չ՝ գանգ>չանկ, գանգեմ>չընդիմ, գանգիւն>չընդէն, ս>ժ՝ սողուն>ձուղուն, սողամ>ձուղում, ս>ց՝ Աւետիս>Ավիտից//Ավտից, ժ>ճ՝ ժողովեմ>ձուղիմ, վարժուհի>վարճի, շ>ճ՝ լայն-չի>լէնճի, բոլորչի>բալբաճիկ:

գ.- Հնչիւնի բարդացումը կարելի է նկատել պարզ պայթականներու վերածումը շնչեղ խուլ պայթականներու. բ>փ՝ բետատ>փուտուտ, բեկոր>փիկօր, բորբոսիմ>փըլփըսիմ, բղխիմ>փուխիմ. դ>թ՝ դրդեմ>աթթիմ, կորդոյնք>կուրթէնք. գ>ք՝ գիշեր>քիշիր, թագաւոր>թէքեվոր, կոր ագի>կըրրաքա. պ>փ՝ ճանապարհ>ճանփուօգ, պարուրեմ>փէլուրիմ. կ>ք՝ կարաւան>քէրվան, կոտտամ>քաթթում, կերաս>քըրուօգ, տակ>տուօք, կրակ>կըրուօք, տակ>տուօք (կոճղ, տունկ), ափկից>էփքէս. տ>թ՝ կոտտամ>քաթթում, սուտ>սէօտ//սէօթ եւ այլն:

4.- Հնչիւններու պարզացում

Հնչիւններու պարզացման հետեւեալ միջոցները կան.

ա.- կիսաշփականներու՝ պարզ շփականներու վերածում: Բարբառին յատուկ է ինչպէս առանձին միակորներու, այդպէս ալ որոշ ոլորտներու մէջ գործող այս Հնչիւնափոխութիւնը: Օր.՝ ձ>ս՝ ձգեմ>խագիմ, ջ>ժ (նշխումը բաղաձայնէ մը առաջ)՝ յօրանջ(կոտ)եմ>ըրըժկըտում, ականջատակ>էկըժտուօք, ականջամուտ>էկըժմէօտ, ականջաթոռ>էկըժդուօյո. ջ>չ՝ իբրեւ օրէնք, ք շնչեղ խուլէն առաջ, որ իր կարգին կը դառնայ խուլ՝ մէջք>միէչգ, բէջք>բիէչգ եւ այլն, նաեւ իչգէն (աղիլկին) բառը. ծ>ս՝ իբրեւ օրէնք բարբառի գ (<ք) խուլէն առաջ՝ կուրծք>կօսգ, անէծք>էնիէսգ եւ այլն. ինչպէս եւ ծծեսցո>ծըսցէօ, փիծ>փիս, յածեմ>ասսիմ բառերուն մէջ. ծ>զ (ծկ>զկ խումբը, ինչպէս՝ ծածկեմ>ծէզկիմ, կայծկտամ>կըզկըտում եւ այլն. եւ երկար շարք մը բառերու մէջ՝ ծմակ>զըմմուօկ, ծամտակ>զէմտուօկ, ծաւալ>զէվուօլ, գործելի>կըրզիլա եւ այլն. ճ>չ՝ ճպտ>չուպուօղ, ճ>ժ՝ բաղաձայնէ մը առաջ՝ խղճմտանք>խըժմըտունք, կոճակեմ>կուժկիմ, կարճ(կուկ)>կիժկէօկ, կարճ(կ)նամ>կիժկընում. ց>ս՝ իբրեւ օրէնք՝ բարբառի գ (<ք) խուլէն առաջ, ինչպէս՝ լիցք>լէսգ, լուացք>լըվուօսգ, այտոյցք>ուտէսգ եւ այլն. նաեւ շարք մը բառերու մէջ՝ խոցտուկիմ>չուսկուտէմ, քացախիմ>քէսիմ, փրցլինք>փիսլէնք, անցանեմ>ասնէմ, ափկից>էփքէս, երէց-

կին>ըրբսկէն, Հանգոյց>Հանկուօյս եւ այլն. չ>չ, բաղաձայնէ մը առաջ, աչք>աչգ, քիչ>քէչ մը, քիչ պակաս>քէչպէկուօս, ինչ գիտեմ>ըչ գաստիմ եւ այլն:

բ.- բարբառին մէջ նկատելի է նաեւ կիսաչփականներու երկփեղ- կում պարզ պայթականի եւ շփականի. օրինակները քիչ են. ծ>տս՝ պեծակ>պծտգիկ, ց>ղա՝ կըզսըվմն (կցուած):

գ.- Հնչիւններու պարզացում կարելի է նկատել նաեւ շնչեղ խու- լերու շնչեղութեան կորուստը եւ վերածումը պարզ պայթականներու. այս փոփոխութիւնը կը գործէ ինչպէս առանձին միաւորներու, այդպէս ալ որոշ դիրքերու մէջ. օրինաչփական է յատկապէս բարբառի խուլ շփականներուն յաջորդող դիրքին մէջ, ինչպէս՝ ք>գ՝ լուծք>լէօսգ, մէջք>միէչգ, ճեղք>ճիէխգ, թ>դ՝ թուղթ>թօխդ, մաղթ>մախդ եւ այլն:

5.- Բաղաձայններու յաւելում

Գ-ի յաւելում՝ նեղութիւն>նախգութէն, նեղանամ>նախգընում, նախգէօ, ճանապարհ>ճանփուօգ, մի>միէգ, եւ ք>գ փոփոխութեամբ՝ վերջաւորութեան. այս պարագան սակայն ունի բառակազմական յատկութիւն եւ կը գիտցուի իբրեւ ածանց՝ բէջք>բիէչգ, մէջք>միէչգ, ջրաղաց(ք)>ջաղուօսգ, աչք>աչգ եւ այլն:

Ն-ի յաւելում՝ ցնցեմ>ցընցըխիմ, ջնջեմ>ջընջըխիմ:

Կ-ի յաւելում՝ լու>լէօկ, համոզեմ>հնմըզկիմ, քիչ(ութիւն)>քըչ- կութէն, քիչ(անալ)>քըչկընում, քիչ(ուկ)>քիչկէօկ, կարճանալ>կէժկը- նում, կարճութիւն>կէժկութէն, կարճ(ուկ)>կէժկէօկ:

Հ-ի յաւելում բառասկիզբը՝ ոգի>հիգգա, որթ>հուրթ, ազանիմ> հնգնէմ, ազանելիք>հնգնելէք, ալեւոր>հնըվմը, ալեւորութիւն>հնը- վուրթէն, ալեւորանամ>հնըվըրնում//հնըվըրիմ, արտորալ>հատըր- նում, արօր>հնրուօր, արօրեմ>հնրուրիմ, ընտրեմ>հընտըրիմ, հընտը- րուօկ (ընտրուած), ընտանի>հընտանն, ընտանութիւն>հընտնութէն, ի տուն>հիտէօն, ընդոստեմ>հանդուզտիմ, ուլունք> հըննօկ, արբենամ> հնրբէմ, ածեմ>հնծօիմ, ապա>հնպու, ունդ>հնստ:

Մ-ի յաւելում՝ խփուցանեմ>խումցընիմ:

Ն-ի յաւելում բաղաձայններէ առաջ՝ մեծ>մինծ, քիթ>քէնթ, առաջ> ետանն, թաթուլ>թանթուլ, այնոք(իկ)>նաանք, այսոք(իկ)>նաանք, այ- տոք(իկ)>նաանք, արտասունք>արցօնք, ամաչեմ>նմընչիմ, պոռուկ> պըռօնկ, արմուկ>արմէօնկ, ետ երկու>եիտնըրկէօ (նորէն), բանալի> բնէնք, մեք>մինք, կրուկն - կրուկ>կրէօնկ: Ն-ի յաւելում վերջաւորութե- նան՝ ձի>ձէն, թի>թէն, դրացի>դըրըցէն, առու>առօն, կատու>կտէօն, դու>դէօն, սկիհ>սըկէն, սամի>սըմէն, երեկոյ>ըրկէօն, Դչխոյ>Դաչխան, դեհ>ասդէն, անդէն, ատդէն, լուսնկայ>լուսընկան:

Նք խումբի յաւելում՝ մեղու>մըղէօնք, բանալի>բնէնք:

Պ-ի յաւելում մը կապակցութեան մէջ՝ համար>հնպուօրք, հա-

մարեմ>հնպըրիմ, թմրիմ>թընպըրիմ:

Շ-ի յաւելում՝ օրհնեմ>աչնիմ:

Վ-ի յաւելում՝ արիւն>վիրէն, վիրինիլ, վիրինաւ, երդում>ուվդօմ, երդումն>ուվըրննիլ, հեռանամ>հաուվընում, հաուվութէն:

Տ-ի յաւելումնը կապակցութեան մէջ՝ մանր>մանտըր, ծանր>ծան- տըր, սանր>սանտըր, նաեւ երկու բառի թեք ձեւերուն մէջ՝ թոնիր- թոնիրի>թընտըրը՝, պանիր-պանիրի>պնտըրը՝:

Բ-ի յաւելում՝ աւերակել>արվըրկիլ (խակ պտուղէն բերնի անհա- մանալը), սարկաւազ>սարկավարգ: Բայական ըղձական եղանակաւորիչը ունի Հնարաւոր երեք ձեւեր՝ թըղ, թը, թ (<թող). վերջին պարագային ու-ով սկսող շարք մը բայեր կրնան ունենալ ր-ի յաւելում ըղ- ձականի ցուցիչի գոյութեան պարագային, ինչպէս՝ թըղ ուզուն կամ թը ուզուն, բայց՝ թաւրգուն (<թող գան), այսպէս ալ թաւրտին (<թող ուտեն), թաւրտուն (<թող տան), թաւրգին (<թող ուզեն) եւ այլն:

6.- Ձայնաւորներու յաւելում

Ը-ի յաւելում կայ վերջաւորութեան՝ եօթն>եուօթթը, ութ>էօթթը, ինն>էննը, տասն>տուօսսը, նաեւ չէ>չի//չիը, հա>հօ//հօվը. սկիզբը՝ լի(ք)>ըլլէք եւ շարք մը բարբառային փոխառեալ բառերու՝ ըրօպ (քա- ոորդ), ըրօպ (ոռւպ), ըրգուօկ (կալուած), ըրօզ (բրինձ), ըրրուօխ (հագուստ), ըրդադ (գործաւոր), ըրխաթ (հանգիստ) եւ այլն:

Ու-ի յաւելում կայ գամ>ազում, լամ>ալում, տամ>ատում բայերուն եւ շոյտ>ուչէտ մակբային սկիզբը, բառամէջ՝ ոսկը>ըսկաթր:

Օ-ի յաւելում՝ ճիկո>ճիկու:

Ի-ի յաւելում՝ եզը>իզգիրք, այլ>ալ//իլի//լի:

7.- Բաղաձայններու անկում

Բ-ի անկում կայ մը խումբին մէջ, բաղաձայնէ մը առաջ՝ թմբուկ- (ել)>թըմկիլ, բամպակ(անալ)>բամկըրիլ, բամբակ(ուկ)>բամկօկ (մա- կարոյծ մը):

Գ-ի անկում կայ՝ հանգչիմ>հնմչէմ:

Դ-ի անկում կայ՝ հիւանդանամ>հիվըննում, հիվընճիկ:

Թ-ի անկում կայ՝ զարթուցանեմ>զարցընիմ:

Ժ-ի անկում ունի շարժ՝ ժաժ>ըժկըտիլ:

Ն-ի անկում կայ՝ խտղտել>տըղտըղիլ, խտղտացնել>տըղտը- ղացնիլ:

Կ-ի անկում կայ՝ բոնկցնելիք>բըռնցընելէք. նաեւ ձայնաւորէ մը ետք, վերջաւորութեան, բառի ուղղական եւ հայցական հոլովներու եզակի ձեւերուն մէջ, յօդառութեան պարագային. բայց հետաքրքրա-

կան է, որ կ-ի անկումէն ետք բառը կ'առնէ ը յօղը (եւ ոչ թէ ն, ինչպէս որ սովորական է ձայնաւորով վերջացող բառերու պարագային) եւ ս, դ յօղերուն ու արմատական ձայնաւորին միջեւ կը պահուի գաղտնա-վանկը, ինչպէս՝ ձուկն>ձէօկ՝ ձէօրս, ձէօրդ, ձէօր, բակ>բուօկ՝ բուօրս, բուօրդ, բուօր, վառեակ>վառկէկ՝ վառկէրս, վառկէրդ, վառկէր, կորեակ>կորիկ՝ կորիւս, կորիւրդ, կորիւր եւ այլն:

Հ-ի անկում կայ, իբրեւ օրէնք, ը ձայնորդէն ետք՝ շնորհք>չընուրք, շնորհաւոր>չընըփուր, աշխարհ>աշխուօրք, ջրհոր>ջրորձը, օրհնեմ>աշննիմ եւ երկար շարք մը բառերու մէջ. բառասկիզբ՝ հաւատամ>հավտում, հնձեմ>ընծիմ, բառամէջ՝ պահք>պուօք, քամահրեմ>քամարիմ, խաչ հանեմ>խչչնիմ, խաչահամբոյր>խաչանպուօր, վարժուհի>վարճի, ջուհահակ>ճըլլուօկ, քաղհանեմ>քախնիմ, աղուհացք>ախուօք, պահեմ>պիհիմ//պիիմ, երկու հոգիք>ըրկըգգէք (յղի), հարիւր>հէրէր եւ հազար>հազգուօր բառերու բարդութեան իբր երկրորդ բաղադրիչ, երբ առաջինը բաղաձայնով կը վերջանայ՝ երեք հարիւր>ըրքէրէր, չորս հարիւր>չուքքէրէր, ութ հազար>եօթազգուօր, իննազար>էննազգուօր. բառավերջ՝ նաչիհ>նիչի, սկիհ>սըկէն, դեհ>դէր, անդէն, անդէն, անդէն:

Ձ-ի անկում կայ՝ համարձակիմ>հնմըրկիմ:

Ղ-ի անկում կայ՝ աղիջ-կիին>իչգէն, ուղղորդ>ուղուրդ, խղճմտանք>խըժմըտունք, լուսաստղ>լուսուօք, թող>թըղ//թը//թ. վերջինը իբրեւ ըղձականի եղանակաւորիչ:

Մ-ի անկում կայ՝ ջերմ>ջիր, ջերմութիւն>ջիրութէն:

Յ-ի անկման պարագաները տե՛ս «Պատմական Հնչիւնափոխութիւն» բաժինը:

Ն-ի անկում կայ՝ իբրեւ օրէնք, վերջաւորութեան, բաղաձայնէ մը ետք, ինչպէս՝ ձուկն>ձէօկ, ակն>ուօկ, բեւեկն>բուվիկ, ամառն>ամուօռ եւ այլն: Նաեւ երկար շարք մը բառերու մէջ՝ ականջատակ>էկըժտուօք, ականջամուտ>էկըժմէօտ, ականջաթոռ>էկըժդուօյր, ընդկէս>ըդկիէս, անցանիմ>անսեմ, ապարանջան>ապըրճուն, բանալի>բէլէնք, կորչիմ>կուսնիմ, անասուն>անսէօն, ինչ գիտեմ>ըչգթտիմ, փոնչտամ>փըոըչտում, խորունկ>խուրօ, ոռնամ>առուում, ականամոմ>էյմձմ:

Լ-ի անկում կայ՝ առնեմ>ինիմ, առողջութիւն>ջուղութէն, առողջանամ>ջնղնում:

Ս-ի անկում կայ՝ սպասաւորեմ>փնսնվուրիմ, սփռեմ>փըոռիմ:

Վ-ի անկում կայ՝ վճարեմ>ճէրիմ, վճարում>ճուրօմ:

Տ-ի անկում կայ՝ քիստ>քէս, եգիտ>իկուօձ, վաստակիմ>վէսկէմ, յստակիմ>իսկէմ, պարտք>պուօք, պարտական>պարկուն, դատարկիմ>դարկիմ, դատարկութիւն>դարկութէն, հարստանամ>հէրանում, խըրտուցանեմ>խըրցընիմ, պստիկ(անալ)>պըզկընիւ, պըզկըսնիւ, պըզկութէն, գանգատ>գէնկուօք, գանգատիմ>գէնկէմ, Աստուած>Աստուօժ//Ասվուօժ, Աստուածածին>Ասվածածին, լուսաստղ>լուսուօք, կարօտնամ>կէրվընում, պիտի որ>պըր//մըր եւ այլն:

Ր-ի անկում կայ՝ արժեմ>իժիմ, շարժեմ>ժըժիմ, շարժ>ժնժ, կարժ>

կնժ, քարչեմ>քիչիմ, խարչեմ>խիչիմ, խարչ(ուկ)>խիչէօկ, կարճ(կ)-նամ>կէժկընում, կարճ(կ)ուկ>կէժկէօկ, արտորամ>հատըրնում, տարգալ(տըգալ)>ղըգուօլ, երբ>բիէք, երբ որ>բիէքըր, երդնում>ուվըրնում, ճանապարհ>ճանփուօք, ներքս>նըքսի, ներքս(անց)>նըքսնց, փրցըլինք>փիւլէնք, ջրորդան>ճըրդուն, ջրաղաց>ջնղուօք, հրամայեալ>հնմի, քրիստոնեայ>քիստինն, փուխը>փօխ, չորք>չնք, շնորհաւոր>չընըփուր, շնորհաւորեմ>չընըփըրիմ, կորչիմ>կուսնիմ, կուրծք>կուօք, սուրբ>սէօպ, օրհնեմ>աշննիմ:

Փ-ի անկում կայ՝ խփուցանեմ>խումցընիմ, թօթափէմ>թնթիմ:

Ք-ի անկում կայ՝ հասկաքաղ>հեսկուօղ, հասկաքաղեմ>հեսկըրիմ:

8.- Դրափոխութիւն

ա.- երկու բաղաձայններու միջեւ դրափոխութեան դէպքեր.

թխ>խդ՝ թաթախեմ>թնդիսիմ//թնխդիմ:

խս>սխ՝ խստոր>սըխոր:

խծ>ծղ՝ խծպիմ>ծըղպիմ:

կն>նկ՝ արմուկն>արմէօնկ, պուկն>պըրէօնկ, մեկնիմ>մընկիմ:

կու>վկ՝ իրիկուան>իրիվկնն, իրիվկընիւ (ընթրիք, ընթրել):

կո>ոկ՝ ակոայ>աոկու:

ղջ>ջղ՝ առողջանամ>ջուղնում, առողջութիւն>ջուղութէն:

կմ>մկ՝ բարեկամանամ>բէրմկընում, բարեկամութիւն>բէրմկութէն:

նր>րն՝ անարատ>էրէնուօտ:

չխ>խչ՝ Դչխոյ>Դնչխուն//Դնխուն, բաշխիչ>պնխչչչ:

թփ>փթ՝ թփրտամ>փըթըրտում:

պղ>ղպ՝ ճապաղիմ>ճնղպիմ, ճնղպէօկ:

ոչ>լո՝ մոայլիմ>մըլլաոիմ:

վր>րվ՝ սովորիմ>սուրվէմ, սովորոյթ>սնրվէթք, վայրի կարոս>արվըկէրուօս, վերայ>ըրվան:

տր>րտ՝ դատարկ>դարտուօկ, վտարեմ>վըրէտիմ, կտրեմ>կըրըրիմ//կըրտիմ:

տկ>կտ՝ խոցտուկիմ>հուսկուտէմ, յատակիմ>էկտիմ:

տղ>ղտ՝ կատաղիմ>կնղտիսում, կատաղութիւն>կնղտութէն:

րտ>տր՝ խլրտիմ>խըլտըրտիմ, խլրտումն>խըլտըրտէն:

րճ>ճր՝ կըճտեմ>կըճըրտիմ:

ւլ>լվ՝ աւելանամ>լըվնում, աւելցուք>լըվցէօք//լըֆցէօք:

բ.- Բաղաձայնի եւ ձայնաւորի միջեւ դրափոխութեան դէպքեր.

լի>ըն՝ լինիմ>ըննում:

լը>ըլ՝ լուանամ>ըլվէնում, լուացք>ըլվուօք, լկամ>ըլկնք:

ճը>իս՝ ճգեմ>իսգիմ:

նը>ըլ՝ նմանիմ>ըլմէնէմ:
չը>իչ՝ չփեմ>իչբիմ:
վեր>ըրվ՝ վերայ>ըրվան:
ող>ղու՝ առողջանամ>ջուղնում, առողջութիւն>ջուղութէն:

9.- Ամփոփում

ա.- Ամփոփում բազմավանկ բառերու.

առողջանամ>ջուղնում, առողջութիւն>ջուղութէն
ականամում>էյմսմ
ապարանջան>ապրընուն
անասուն>էսսէօն
բանալի>բէլէնք
դատարկեմ>դարկիմ
ընտանի>տանն
ընդհարկեմ>թէրկիմ
ընդհարուիմ>թէրվէմ
հասկաքաղ>հէսկուղ
հասկաքաղեմ>հէսկըղիմ
հարստանամ>հէրըսնում
հիւանդանամ>հիվըննում
համարձակիմ>հէմըրկէմ
հրամայեա>հէմմի
չնորհաւոր>չընըֆուր, չնորհաւորեմ>չընըֆըրիմ
ճանապարհ>ճանփուօգ
ջրյորդան>ճըրդուն
Տեառնընդառաջ>Տէրնտանչ:
Օրինակները կարելի է բազմապատկել:

բ.- Ամփոփում՝ բառակապակցութիւններու.

արի եկ առ>էրկուօռ
ակն մտանեմ>էյմըտիմ
ամէն մէկ>ամմիէկ
ամէն մարդ>ամմուօրդ
առաջին յաւուրէ>առջըվիրի
բեր եւ արի>բիվէրի
գնա՝ տո՛ւր>գընտէօ՛
ընդ զ (հայցականի ցուցիչ)>ծըզ//ծըս//տըզ
ընդ ուր>ըմբ
ընդ իրար>դիրուօր

իմ մայրը>իմմրը
պիտի որ>պըր//մըր
մի այլ օր>մէննուօր

10.- Բաղաձայններու կրկնութիւն

Բաղաձայններու կրկնութիւնը սովորական երեւոյթ մըն է Քեսապի բարբառին մէջ. կը կրկնուին գրեթէ բոլոր բաղաձայնները: Կրկնութիւնը երկու ձեւով կ'ըլլայ. ա) երկու ձայնաւորի միջեւ գտնուող բաղաձայնի տեւականացում՝ Հազար>Հազգուօր, առատ>ըռտուօտ եւ բ) բառի տարբեր դիրքերու մէջ գտնուող նոյն կամ առնմանութեամբ նոյնացած բաղաձայններու յարաչարութիւն՝ որոշ հնչիւններու անկման հետեւանքով՝ ամէն մէկ>ամմիէկ, անալի>անլլա, գտանեմ>գըննէմ:

Ձայնորդներ.- Մ՝ ամուր>ամմօր, ծմակ>զըմմուօկ, դմակ>դըմմուօկ, ծամեմ>ծմմիմ, ամէն մարդ>ամմուօրդ. Ն՝ անոյչ>էննէօչ, հնանամ>հըննում, հիւանդանամ>հիվըննում, մտանեմ>մըննէմ. Ռ՝ առատ>ըռտուօտ, առու>առոսն, հեռու>հառոս, ծոփմ>ծուփէմ, ոռնամ>առտում. Լ՝ փ>ըլլէք, անալի>անլլա, հայելի>հիլլա, հալեմ>հէլլիմ. Յ (ե)՝ հայիմ>հիէմ //հիյեէմ, գայեմ>գիիմ//գիյեիմ: Օրինակները կրնան բազմապատկուիլ: Բ՝ ձայնորդի կրկնութեան կարելի է հանդիպիլ միայն բարբառային կազմութիւններու եւ փոխառութիւններու մէջ՝ ժանկըրրիլ, ածխըրրիլ, մըխըրրիլ:

Ձայնեղ չփականներ.- Ձ՝ վազեմ>վէզգիմ, Հազամ>Հէզգում, Հազար>Հազգուօր, լեզու>լիզգէօ եւ այլն. Ժ՝ քանի մը բառի մէջ՝ չարժեմ>ժըժիմ, կուժ>կըժէօնք: Վ եւ Ղ չփականներու կրկնութեան դէպքեր մեզի ծանօթ չեն:

Ոռլ չփականներ.- Ս՝ ասեղն>էսսիէղ, յիսուն>իսսէօն, Յիսուս>իսսաս, կիսեմ>կիսսիմ, տասն>տուօսսը. Ծ՝ աշուն>իչչէօնք, քչեմ>քըչիմ, փչոտ>փըչչտ, իչու>իչչը՝. Ն՝ մոխիր>մախիէր, մխեմ>մըխիիմ, մըխամ>մըխիլըրիմ: Ֆ-ի կրկնութիւն կայ քանի մը օտար բառերու մէջ՝ Հ չփականը չի կրկնուիր:

Ձայնեղ պայթականներ եւ կիսաչփականներ.- Բ՝ լըբբիլ (լափել), Հաւիալ>Հաբբուօլ. Դ՝ բըղղիլ, բըղղօկ (փտիլ, փտուկ), չըղղիլ (ճայթիլ), դղում>դըղում. Գ՝ հոգի>հիգգա, այգի>իգգա. միգգին (մէկնոց), չիգգին (չորսնոց). Զ՝ վաթսուն>վէձձէօն. Զ՝ հաջեմ>Հաջիլլիմ:

Ոռլ պայթականներ եւ կիսաչփականներ.- Պ՝ ապպիլ (լեցնել), Հապպիլ (տաք չոգիի բոնել կամ չիրը տաք ջուրով հականեխել), տըպ-

պիլ (չորեքթաթ քայել). Տ՝ Հոտիմ>Հատտէմ, Հոտոտամ>Հուտտում, ետքէն>իտտէն, Կ՝ մըկնիլ (ծծել), ճըկնուն (ուրախ առիթով մորթուող աքլոր). Ճ՝ աճճօր (աճուր), աճճէկ (բանջարեղէնով ձուածեղ). Ծ-ն շատ կը կրկնուի՝ կծու>կըծծէօ, կծիկ>կըծծէք, ածու>լծծէօք, մածուն>մլծծէօն, ածեմ>լլծծիմ, խածոտեմ>խլծծըտիմ, այծեր>իծծիր եւ այլն: Կ-ի կրկնութեան պարագաներ չկան:

Շնչեղ խուլեր.- Ք՝ տքամ>տըքքում, թքեմ>թըքքիմ. Թ՝ թթու>թըթթէօ, կթեմ>կըթթիմ, կթան>կըթթան. Յ՝ հացեր>հցցցէօնք, հացիկ>հցցցէկ, կցեմ>կըցցիմ: Փ եւ Չ կրկնութեան պարագաներ չունին:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ի Խ

Ձ Ե Ի Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Ա.- Գ Ո Յ Ա Կ Ա Ն

1.- Ցոգնակի թիւին կազմութիւնը

Առանց հաշուելու յարացոյցային տարբերակները, Քեսապի բարբառը կը ճանչնայ գոյականի 29 յոգնակերտներ: Բարբառի յոգնակերտներն են՝ իր, օնք (ծնք, էօնք), վա, վընա, վըննիր, վօնք, իրք, իրքվուն, վըտա, վըտաք, ուտա//ըտա, ուտաք//ըտաք, էնտա, էգ, էք, տուն, վուն, ըննիր, նիր, տա, տաք, ըստուն//ըցտուն, նա, ինա, ք, վիր, անք, ինք, ունք:

Ըստ կազմութեան՝ կան պարզ եւ բաղադրեալ յոգնակերտներ: Բաղադրեալները կազմուած են պարզ յոգնակերտներու բարդութեամբ: Կան ոմանք, որ երկուքէ աւելի, նոյնիսկ չորս պարզ յոգնակերտներու եւ այլ տարրերու բաղադրութեամբ կազմուած են:

Գործածութեան ոլորտներուն տեսակէտէն՝ միայն իր եւ օնք (ծնք, էօնք) յոգնակերտները միավանկ բառերու պարագային կարելի է համարել ընդհանուր, իսկ միւսերը հանդէս կու գան երբեմն իրրեւ իրենց յատուկ ոլորտները ունեցող, երբեմն իրրեւ ազատ բաշխման, երբեմն ալ իրրեւ զուգաձեւութիւններ եւ բազմաձեւութիւններ կազմող յոգնակերտներ:

Համակարգային են այն յոգնակերտները, որոնք Հնչիւնական, ձեւաբանական եւ իմաստային ընդհանուր յատկանիշներ ունեցող բառերը կ'առնեն իրենց ոլորտներուն մէջ, իսկ ոչ համակարգային են այն յոգնակերտները, որոնցմով յոգնակի կազմող բառերը ոչ մէկ ընդհանուր օրինաչափութեան տակ կը մտնեն: Համակարգային յոգնակերտներն են իր, օնք (ծնք, էօնք), վա, վընա վըննիր, վօնք, վըտա, իրք, իրքվուն, վըտաք, ըննիր, ըստուն//ըցտուն, ք, ինա//ընա, ինք, տաք, էնտա. ասոնցմէ ոմանք՝ միայն մասնակի կերպով: Ոչ համակարգային յոգնակերտներն են՝ ուտա//ըտա, ուտաք//ըտաք, նիր, տա, անք, էգ, էք, էցվիր:

Միավանկ բառերու յոգնակերտներն են՝ իր, օնք (ծնք, էօնք), վա, վընա, վըննիր, վօնք, իրք, իրքվուն, վը-

տա, վրտաք, ուտա//ըտա, ուտաք//ըտաք, Էնտա, էք, էք:

Միավանկ բառերը առհասարակ, ազատ բաշխման եղանակով, իսկ երբեմն զուգաձեւաբար յոգնակի կը կազմեն իր եւ օնք (ծնք, օնք) յոգնակերտներով: Ասոնք միավանկ բառերու ընդհանուր յոգնակերտներ կարելի է նկատել: Առաջինը կազմուած է եար>եր>իւր պատմական Հնչիւնափոխութեան զարգացումով: Օնք (ծնք, օնք) յոգնակերտի ծագման բացատրութիւնը, որ տուած է Հ. Զ. Պետրոսեան (Գոյականի Թուի Կարգը Հայերէնում, Երեւան, 1972, էջ 399), վիճելի կը գտնենք: Ան բարբառիս այս յոգնակերտին ծագումը կը կապէ Հայերէնի ոնք յոգնակերտին հետ: Ըստ մեզի, բարբառիս օնք յոգնակերտը չի ծագիր միջին Հայերէնեան ոնք (օնք) յոգնակերտէն: Այդ պարագային, ըստ բարբառիս ո>ու շեշտակիր դիրքի Հնչիւնական օրէնքին, պիտի ունենային ոնք (ոնք), որ անկախաբար գոյութիւն ունի բարբառիս մէջ իբրեւ Համակարգային տարր՝ ազգակցական նշանակութիւն ունեցող բառերէն Հաւաքական եւ դերանունական յոգնակիներ կազմելու պաշտօնով, ինչպէս՝ միրանք (մայր-ոնք), պէպանք (պապ-ոնք), Էսունք (ասոնք), Էտանք (ատոնք), Էնանք (անոնք) եւ այլն, այսինքն՝ ճիշդ այնպէս, ինչպէս ոնք (օնք) յոգնակերտը միջին Հայերէնի եւ բարբառներուն մէջ ընդհանրապէս: Ասկէ անկախ, բարբառիս օնք (ծնք, օնք) յոգնակերտը կազմուած է ոնք>օնք (ծնք, օնք) պատմական Հնչիւնափոխութեամբ, որ օրինաչափական է բարբառիս Համար: (Ունք-ը գրաբարի մէջ ն-ով եւ նախորդ բաղաձայնով վերջացող բառերու յոգնակի ձեւն է՝ ակն - ակունք, չուրթն - չրթունք, մասն - մասունք եւ այլն):

Օնք (ծնք, օնք) յոգնակերտը ունի նաեւ բառակազմական արժէք (տե՛ս Գ. մասի «Ածանցում» բաժինը):

Իր եւ օնք (ծնք, օնք) յոգնակերտները միավանկ բառերէն կը կազմեն զուգաձեւ յոգնակիներ, ինչպէս՝ Հուօց (Հաց) - Հէցցիր//Հէցցէօնք, բուօկ (բակ) - բէկիր//բէկէօնք, ճօղ (ճիւղ) - ճըղիր//ճըղօնք, Թէօփ (Թուփ), Թըփփիր//Թըփփէօնք, պուօտ (պատ) - պէտիր//պէտէօնք, խան (խոտ) - խանտիր//խանտէօնք եւ այլն: Բայց առհասարակ անոնք ազատ բաշխման յոգնակերտներ են. իր-ով յոգնակի կը կազմեն կենդանի ցոյց տուող շարք մը եւ այլ կարգի բազմաթիւ բառեր: Օր.՝ կուօվ (կով) - կափիր, օլ (ուլ) - ալիր, ած (այծ) - իծծիր, չէտ (ծիտ) - չըտտիր, կուրտ (գորտ) - կուրտիր, գալ (գայլ) - գալիր, խան (խոզ) - խանգիր, ուօձ (օձ) - ածիր, ճանճ (ճանճ) - ճինճիր, ճուօզ (ճագ) - ճէգիր, դիէվ (դեւ) - դիվիր, կաթ (կոթ) - կաթիր, կած (կայծ) - կիծծիր, ուօր (օր) - ուրիր, լուօյս (լոյս) - լուսիր եւ այլն:

Գրաբար ն-ով եւ նախորդ բաղաձայնով վերջացող բառերէն ոմանք իրենց յոգնակին կը կազմեն իր-ով: Այս պարագային երբեմն կը վերականգնին Հնչիւնը, ինչպէս՝ Հուօրս (Հարսն) - Հարսնիր, կէթ (կաթն) - կէթնիր, ձէօկ (ձուկն) - ձըյնիր, մէօկ (մուկն) - մըյնիր, բիէն (բեռն) - բառնիր, իսկ ոմանց պարագային՝ ոչ, ինչպէս՝ մուօտ (մատն)

- մէտիր//մէտէօնք, ուօկ (ակն) - էկիր, վըրդ (որդն) - վըրդիր եւ այլն:

Երկու բաղաձայնայնագ զաղտնավանկ ունեցող մէկուկէս վանկանի բառերը առհասարակ դարձեալ իր մասնիկով յոգնակի կը կազմեն, ինչպէս՝ տալըր (տայգր) - տիգրիր, մուօխըր (մախր) - մախրիր, սանըր (սանր) - սանրիր եւ այլն: Երեք բաղաձայնայնագ զաղտնավանկ ունեցող բառերը (Թանձր>Թանձըր, մանր>մանտըր) յոգնակի կը կազմեն բազմավանկ բառերու յատուկ յոգնակերտով:

Բարբառին մէջ նկատելի է իր յոգնակերտի ոլորտի ընդլայնում: Օնք (ծնք, օնք) յոգնակերտով յոգնակի կը կազմեն այնպիսի միավանկ բառեր, որոնք առհասարակ զանգուած ցոյց տուող գոյականներ են: Օր.՝ ջէօր (ջուր) - ջըրէօնք, ուօղ (աղ) - աղօնք, ունպ (ամպ) - նապէօնք, լիէն (լեռն) - լառոնք, բօրդ (բուրդ) - բըրդօնք եւ այլն: Բարբառին մէջ նկատելի է օնք յոգնակերտի ոլորտի նեղացում:

Վա.- Ունեցած է լի >ուի >վի >վա զարգացումը: Միջին Հայերէնին երկակի կառուցաձեւերու Հնդեւրոպական ծագումով յոգնակերտ է:

Վա մասնիկով յոգնակի կը կազմեն.

ա.- Մարմնի գոյգ մասեր ցոյց տուող միավանկ շատ բառեր: Այս բառերուն մէջ պահուած է երկակի Թուի նշանակութիւնը, ինչպէս՝ վիտ (ոտն) - վիտվա, կուղ (կող) - կուղվա, օս (ուսն) - ասվա, ձառ (ձեռն) - ձառվա, աչգ (աչք) - իչվա, ծէծ (ծիծ) - ծիծվա, բիէչգ (բէջք) - բիչվա, դէօնկ (եղունգ) - դընկվա, շօրթ (չուրթն) >չըրթվա եւ այլն:

բ.- Կենդանի եւ տեղ ցոյց տուող բառերու կողքին նաեւ այլ կարգի քանի մը բառեր՝ Հուրթ (Հորթ) - Հուրթվա, իէչ (էչ) - իչվա, դօռ (դուռն) - դըռվա, միէլ (մէջ) - միջվա, Հիտ (հետ՝ հետք) - Հիտվա, վըրք (որք) - վըրքվա, ձան (ձայն) - ձինվա եւ այլն:

Այս կարգի բառերէն ոմանք յոգնակի կրնան կազմել նաեւ իր-ով եւ իրք-ով, ինչպէս՝ կուղ - կուղիր//կուղիրք, Հուրթ - Հուրթիր, ձան - ձինիր, օս - ասիր//ասիրք, ոմանք՝ օնք-ով, ինչպէս՝ ձառ - ձառօնք, իսկ ուրիշներ՝ երկուքով ալ, ինչպէս՝ օս - ասիր//ասէօնք//ուսսիրք, տիէղ - տըղիր//տըղէօնք:

Վընա, վըննիր, վօնք յոգնակերտներով կրնան յոգնակի ունենալ վա յոգնակերտի ոլորտին մէջ մտնող բառերը:

Վընա (վի+նի>վինի>վընա) յոգնակերտը ունի Հաւաքական յոգնակիի նշանակութիւն, որն ալ կը ներկայացնէ անոր իմաստային իւրա-յատկութիւնը: Ասով յոգնակի կը կազմեն վա յոգնակերտի ոլորտին մէջ գտնուող բոլոր բառերը, սակայն յոգնակիի իմաստի վերոյիշեալ տարբերութեամբ: Օր.՝ վիտ - վիտվընա (ոտքերնին, անոնց ոտքերը), ձառ - ձառվընա, աչգ - իչվընա, վըրք - վըրքվընա եւ այլն:

Վըննիր (վան {<վի-ան} + ներ {<նի-եար} վաններ>վըննիր) յոգնակերտը ունի փաղաքական-փոքրացուցիչ նշանակութիւն, որն ալ կը

ներկայացնէ անոր իմաստային իւրայատկութիւնը: Օր.՝ ձառ - ձառվըն-
նիր (փոքրիկ ձեռքեր), աչգ - իչվըննիր, շօն - շընվըննիր, տօն -
տընվըննիր եւ այլն:

Վօնք (վի+ունք>վունք>վօնք) յոգնակերտը գրեթէ դադրած է գոր-
ծածութենէ: Միայն քանի մը բառերու պարագային կը Հանդիպի եր-
բեմն՝ աչգ - իչվօնք, դօռ - դըռվօնք, տիէղ - տըղվօնք:

Վ Հնչիւնով վերջացող բառերը վա, վընա, վըննիր, վօնք մաս-
նիկներով յոգնակի չեն կազմեր:

Իրք (եար+ք>երք>իրք) եւ իրքվուն (իրք (եար+ք>երք) + վուն (վի+
ան>վան)) յոգնակերտներով յոգնակի կրնան կազմել մարմնի զոյգ
մասեր ցոյց տուող քանի մը բառեր՝ կուղ - կուղիրք//կուղիրքվուն,
էօս - ուսիրք//ուսիրքվուն, թիվ - թիվիրք//թիվիրքվուն, կուպ -
կուպիրք: Այս բառերը, ինչպէս տեսանք, յոգնակի կրնան ունենալ նաեւ
իր, օնք, վա, վընա, վըննիր, վօնք յոգնակերտներով:

Քեսապի բարբառի միավանկ բառերուն համար սովորական է
յոգնակիի բազմաձեւութիւնը՝ էօս>մասիր, մասօնք, մասվա, մասվընա,
մասվըննիր, մասվօնք, մասիրք, մասիրքվուն:

Վըտա (<վի+տի>վիտի) եւ վըտաք (<վիտի>վըտա+ք) յոգնակերտ-
ներով զուգակաբար յոգնակի կը կազմեն իգական իմաստ արտայայ-
տող քանի մը բառեր՝ քուօյր (քոյր) - քարվըտա//քարվըտաք, նիէր
(ներ) - նիրվըտա//նիրվըտաք, տուօլ (տալ) - տալվըտա//տալվըտաք
եւ ասոնց համաբանութեամբ բազմավանկ լէլէօ (քոյր, հօրաքոյր) -
լէվըտա//լէվըտաք բառը, որ կրնայ ունենալ նաեւ լէվըննիր փաղաք-
չական ձեւը, բազմավանկ բառերու յատուկ ըննիր յոգնակերտով:

Ուտա//ըտա (<ուտ+ի>ուտի) եւ ուտաք//ըտաք (<ուտի>ուտա//
ըտա+ք) յոգնակերտները կ'առնեն քանի մը բառեր՝ ուօրջ (արջ) -
ուրջուտա//ուրջուտաք, էօնծ (ունծ) - ունծրտա//ունծրտաք, վըրձ
(որձ) - վըրձըտաք: Ասոնք յոգնակի ունին նաեւ իր մասնիկով՝ ուրջիր,
ունծիր, վըրձիր:

Քնտա (<ան+տի>անտի) յոգնակերտը կ'առնեն քանի մը բառեր՝
ձէն (ձի) - ձիէնտա, թէն (թի) - թիէնտա, գիէղ (գիւղ) - գըղէնտա:
Այս բառերը յոգնակի ունին նաեւ իր եւ օնք մասնիկներով, առաջին
երկուքը առանց ն ածականի՝ ձիիր//ձիօնք, թիիր//թիօնք, գըղիր//
գըղօնք:

Քնտա յոգնակերտով կը հանդիպի նաեւ Չուրա (Չորի) - Չուրէնտա
բառը, հաւանաբար ձի բառին համաբանութեամբ: Այդ բառի յոգնակի
սովորական ձեւն է՝ Չուրըստուն, բազմավանկ բառերու յատուկ ըստուն
յոգնակերտով:

էգ (<իկ) յոգնակերտով ունինք միայն մուօրդ (մարդ) - մարդէգ:
էք յոգնակերտով ունինք միայն կէննէք (կանայք) բառը:

Բազմավանկ բառերու յոգնակերտներն են տուն, վուն, ըննիր, նիր,
տա, տաք, ըստուն/ըցտուն, նա, ինա, ք, էցվիր, քք, ինք, ուն:

Տուն (<տի+ան>տան>տուն) եւ վուն (<ուի>վի+ան>վուն) յոգ-
նակերտներէն առաջինը կը ստանան մեծ թիւով բառեր, որոնք սակայն
համակարգային օրինաչափութեամբ մը չեն բացատրուիր: Վուն յոգնա-
կերտը տուն յոգնակերտին հետ հանդէս կու գայ զուգաձեւաբար, այն
ալ քիչ թիւով բառերու մէջ միայն: Օր.՝ անանձ (ականջ) - էկըժտուն
//էկըժվուն, անջէր (եղջիր) - անջըրտուն//անջըրվուն, ուտիլա
(ուտելիք) - ուտըլտուն//ուտըլվուն, իզգիրք (եզերք) - իզգըրքտուն
//իզգըրքվուն, բուվիէն (բեւեռն) - բուվըրտուն, պուղէնծ (պղինձ՝
կաթսայ) - պուղընծտուն, թիպիկ (թորեկ) - թիպիկտուն, պուտգիկ
(պեծակ) - պուտգիկտուն եւ այլն: Տուն մասնիկով յոգնակի կ'առնեն
գրեթէ բոլոր պտուղներու անունները, ինչպէս՝ խընծուր (խնձոր) -
խընծրտուն, խաղուղ (խաղող) - խաղուղտուն, դամմէն (դամոն) -
դամմընտուն եւ այլն: Այս պարագային տուն մասնիկը կարելի է
համակարգային յոգնակերտ նկատել:

Ըննիր (<ան+նի+եար>աններ) յոգնակերտով յոգնակի կը կազմեն
բոլոր նուազական ածանցումները, ինչպէս քէրէօկ (քար-ուկ) - քէր-
կըննիր, դըգէլէկ (դգալ-իկ) - դըգէլկըննիր, ծառօկ (ծառ-ուկ) - ծառկըն-
նիր, ուլէկ (ուլ-իկ) - ուլկըննիր, հէվէօկ (հաւ-ուկ) - հէվկըննիր եւ
այլն: Երբեմն նուազականի մասնիկը չի պահուիր, բայց յոգնակին կը
պահէ իր նուազական, փոքրացուցիչ-փաղաքչական նշանակութիւնը,
ինչպէս՝ ձէգէօկ (ձագ-ուկ) - ձէգըննիր, չըտտէկ (ծիտ-իկ) -
չըտտըննիր, տըղիկ (տղեկ) - տըղըննիր, կաձօկ (կով-ուկ) - կաձըննիր
եւ այլն: Հետեւաբար ըննիր յոգնակերտին մէջ ինքնին առկայ է
նուազական, փոքրացուցիչ-փաղաքչական իմաստ մը:

Ինա//ընա (<ենի) յոգնակերտով, իբրեւ կանոն, յոգնակի կը կազ-
մեն կ-ով եւ անոր նախորդող ձայնաւորով մը վերջացող արմատական
կամ իբրեւ այդպիսին գիտակցուող բառերը, ինչպէս՝ դէնուօկ (դանակ)
- դէնկընա, սընտէօկ (սնտուկ) - սընկինա, քուռուօկ (քուռակ) -
քուռկընա, պըզտէկ (պզտիկ) - պըզկինա, ծաղէկ (ծաղիկ) - ծաղկընա,
սակայն ասոնք ըննիր յոգնակերտով կրնան կազմել նաեւ իրենց նուա-
զական-փոքրացուցիչ յոգնակին, ինչպէս՝ դէնկըննիր, սընկըննիր,
քուռկըննիր, պըզկըննիր, ծաղկըննիր եւ այլն, դարձեալ առանց նուա-
զականի մասնիկը (ուկ, ալ, իկ) պահելու:

Թիպիկ (<թորեկ), պուտգիկ (<պեծակ) բառերը երբեմն կը գիտակ-
ցուին իբրեւ նուազական ածանցումներ եւ յոգնակի կ'առնեն ըննիր
մասնիկով, կորսնցնելով վերջայանգը՝ թիպըննիր, պուտգըննիր: Այս

բառերը սովորաբար յոգնակի կը կազմեն տուն յոգնակերտով՝ թիպիկ-տուն, պուտզիկտուն:

Նիր (նի+եար>ներ) յոգնակերտով յոգնակի կը կազմեն քանի մը բառեր՝ իչգէն (աղջիկ) - իչգըննիր, կէրկըտուն (<կարկտան) - կէրկըտըննիր, դըրնցն/դըրնցէն (<դրացի) - դըրնցնիր:

Տա (<տի) յոգնակերտը կ'առնեն քանի մը բառեր՝ պէրուն (<պարան) - պէրնտա, լըֆցօք (<աւելցուք) - լըֆցըտա:

Տաք (<տի>տա+ք) յոգնակերտով յոգնակի կազմող բառերը առհասարակ փոխանուանաբար գործածուող ածականներ են, բացի քանի մը հատէն: Կը վերջանան ը ձայնորդով, բայց ը ձայնորդով վերջացող բոլոր բառերը չեն, որ յոգնակի կը կազմեն այս մասնիկով: Օր.՝ անուր (աղուր) - անուրտաք, բնիւր (<բուր՝ կլոր) - բնիւրտաք, կէրմէր (<կարմիր) - կէրմէրտաք, խնչնի (<խոչոր) - խնչնիտաք, հէլիւր (<այլուր) - հէլիւրտաք, անբար (<եղբայր) - անբարտաք եւ այլն: Նաեւ՝ երեք բաղաձայնով գաղտնավանկ ունեցող բառերը, որոնք իբրեւ բազմավանկ կը գիտակցուին, ինչպէս՝ թունծըր (<թանձըր) - թունծըրտաք, բունձըր (<բարձըր) - բունձըրտաք, մանտըր (<մանըր) - մանտըրտաք եւ ասոնց համաբանութեամբ՝ մինծըրտաք (մեծ՝ մինծ բառի յոգնակին): Տաք-ը կարելի է նկատել ը ձայնորդով վերջացող եւ գոյականաբար գործածուող բազմավանկ ածականներու յոգնակերտ:

Ըստուն//ըցտուն (<ստան), երկրորդը քիչ պատահող արտասանական տարբերակ է: Այս մասնիկով յոգնակի կը կազմեն.

ա.- ան (<ի) ձայնաւորայանգ երկվանկ բոլոր բառերը, բացի բոյս ու շնչաւոր ցոյց տուող բառերէն: Օր.՝ մաննան (<մատանի) - մաննըստուն, հիգգան (<հոգի) - հիգգըստուն, անգան (<ագի) - անգըստուն, իգգան (<այգի) - իգգըստուն, գանտան (<գօտի) - գանտըստուն, փնչան (<փոչի) - փնչըստուն, կիչան (<կաչի) - կիչըստուն եւ այլն:

բ.- գրաբարի ի եւ ու ձայնաւորայանգ այնպիսի բառեր, որոնք բարբառին մէջ ունին ք ձեւական ածանցը, որ կ'իյնայ յոգնակիի կազմութեան ժամանակ: Օր.՝ անդէք (<անդի-ք) - անդըստուն, կըծծէք (<կծի-ք) - կըծծըստուն, վարտէք (<վարտի-ք) - վարտըստուն, էծծէօք (<ածու-ք) - էծծըստուն եւ այլն:

Նա (<նի) յոգնակերտը կը ստանան բաղաձայնայանգ բառեր.

ա.- առհասարակ ածականներ, որոնք գոյականաբար կը գործածուին, բացի ը ձայնորդով վերջացողները, ինչպէս՝ անուտ (<անտոտ) - անտոտնա, անքուտ (<անքատ) - անքանա, հէրէօստ (<հարուտ) - հէրընա, վէրպիտ (<վարպետ) - վէրպըտնա, ուղուրդ (<ուղորդ) - ուղուրդնա, հիվանտ (<հիւանդ) - հիվընա եւ այլն:

բ.- շարք մը գոյականներ, որոնք համակարգային օրինաչափութեամբ մը չեն բացատրուիր, ինչպէս՝ հէվուտ (<հաւատ) - հավանա, էման (<աման) - էմընա, դըգուտ (<դգալ) - դըգընա, շէկըրտ (<աշակերտ) - շէկըրտնա, գիտէն (<գետին) - գիտընա եւ այլն:

գ.- հայերէնի ութիւն ածանցով վերջացող բառերը: Օր.՝ հիվընտութէն (<հիւանդութիւն) - հիվընտութնա, գուղութէն (<գողութիւն) - գուղութնա եւ այլն: Այսպիսի բառերը յոգնակի ձեւով քիչ կը գործածուին:

դ.- բաղաձայնայանգ փոխառեալ բառերու մեծամասնութիւնը: Օր.՝ ըրրուտ (<հագուտ) - ըրրախնա, ըրրուտ (<կալուած) - ըրրակնա, անքան (<գինուոր) - անքաննա, մուխար (<գիւղապետ) - մուխարնա, կանաթ (<փեղկ, թել) - կանաթնա եւ այլն:

Ինա//ընա (<ենի) տարբերակները երբեմն զուգաձեւաբար, երբեմն ալ ազատ բաշխման եղանակով կը գործածուին: Անոնցմով յոգնակի կը կազմեն.

ա.- կ-ով եւ նախորդող ձայնաւորով մը վերջացող արմատական կամ այդպէս գիտակցուող բոլոր բառերը: Օր.՝ սընտէօկ (<սնտուկ) - սընկինա, տանտուտ (<տախտակ) - տանկինա, դէնտուտ (<դանակ) - դէնկինա, մէտուտ (<մատակ) - մէտընա, ծանդէկ (<ծաղիկ) - ծանդընա, ճանփուտ (<ճամբայ) - ճանփընա եւ այլն:

բ.- գրաբարի ու ձայնաւորով վերջացող քանի մը բառեր, որոնք բարբառին մէջ ունին ն ածականը, ինչպէս՝ առուտ (<առու) - առունա //առվընա, կէտէօն (<կատու) - կէտունա//կէտվընա:

գ.- ա//ու վերջայանգ ունեցող բոլոր փոխառեալ բառերը: Օր.՝ պանդու (պարտէզ) - պանդինա, փնճըրու (պատուհան) - փնճըրինա, թնճըրու (կաթայ) - թնճըրինա, խարապու (աւերակ) - խարապինա եւ այլն:

Ք յոգնակերտով յոգնակի կը կազմեն.

ա.- ա//ան (<ի) վերջայանգ ունեցող բոյս ու շնչաւոր ցոյց տուող բառերը, ինչպէս՝ խընծիւրինա (<խնձորենի) - խընծըրինէք, կաննան (<կաղնի) - կաննէք, մանքան (<մաքի) - մանքէք, պանխըն (<պախրի՝ եղ) - պանխընէք եւ այլն:

բ.- ու (<այ) վերջայանգ ունեցող բոլոր բառերը՝ առկու (<ակոյ) - առկաք, տըղու (<տղայ) - տըղաք, սատանու (<սատանայ) - սատանաք եւ այլն:

Վիր յոգնակերտով ունինք միայն փխնցէօ (փեսացու) - փխնցվիր բառը:

անք (<այք) յոգնակերտը կը պահեն երկու բառ՝ պէրան (<պարոն) - պէրաննք, թէքէվուր (<թագաւոր) - թէքէվըրնք:

ինք (< ենք) եւ ունք (< ունք) մասնիկները կը կազմեն յոգնակի նշանակութեամբ Հաւաքական գոյականներ, որոնք ցոյց կու տան խմբակցութեան, գերդաստանի, տոհմի կամ ընտանիքի պատկանող անձեր: Այս մասնիկներու անկախութիւնը պայմանաւորուած է զիրենք ստացող բառերուն Հնչիւնային եւ իմաստային որոշ իւրայատկութիւններով: Ունք մասնիկը կը ստանան.

ա.- կ-ով եւ նախորդող ձայնաւորով մը վերջացող բառեր, ինչպէս՝ Պրզտիկանք (պզտիկ բառէն), Ուրչկանք (Ուաչիկ անունէն), Անդրանիկունք (Անդրանիկ անունէն) եւ այլն:

բ.- Հայրենակցական, ընտանեկան կապեր արտայայտող բառերը, ինչպէս՝ միրանք (մայր բառէն), մուրքըրանք (մորաքոյր բառէն), խրնճունք (խնամի բառէն), անդրիրանք (եղբայր բառէն) եւ այլն:

գ.- որոշ դերանուններ. տե՛ս Համապատասխան բաժինը:

Ինք մասնիկը կը ստանան այն բոլոր բառերը, որոնք վերոյիշեալ խումբերէն որեւէ մէկուն մէջ չեն մտներ, ինչպէս՝ Ղէզըրինք (Ղազար անունէն), Վարդապետինք (վարդապետ բառէն), Լըրջինք (լուրջ՝ կապոյտ բառէն) եւ այլն:

2.- Հոլովումներ եւ Հոլովիչներ

Քեսապի բարբառը ունի տասներեք Հոլովումներ: Անոնցմէ տասը կը պատկանին արտաքին թեքումի Հոլովումներուն, երեքը՝ ներքին: Արտաքին թեքումի Հոլովումներն են՝ ը', ուն, վին, ան, ու, ուօց, ց, ք/ուօց, ք/ուց, ք/ց:

Ներքին թեքումի Հոլովումներն են՝ ան, ուօ, եւ ուօր/էվէօր:

Ստորեւ ցոյց կու տանք Հոլովումներու նկարագրութիւններն առանձին-առանձին:

ա.- Ը' Հոլովում

Ը' Հոլովումը կազմուած է գրաբարի ի Հոլովումին դիմաց: Ան բարբառի ընդհանրական կամ Հասարակ Հոլովումն է: Ը' Հոլովման կ'ենթարկուին.

1.- բարբառի միավանկ թէ բազմավանկ փակ վերջայանգ ունեցող բառերու մեծամասնութիւնը: Օր.՝ գալ (< գալ) - գալը', քաղաք (< քաղաք) - քալքը', մուօր (< մարդ) - մարդը', ան (< ան) - անը', ծաղիկ (< ծաղիկ) - ծաղկը':

2.- ու եւ ա ձայնաւորայանգ բառերը, որոնք թեք Հոլովաձեւերուն մէջ, որպէս կանոն, կը կորսնցնեն իրենց վերջայանգ ձայնաւորը: Օր.՝ գալ (< գալ) - գալը', տղու (< տղայ) - տղը':

3.- գրաբարի ձի եւ թի բառերը, որոնք բարբառիս մէջ ունին ն աճականը՝ ձէն, թէն: Թեք Հոլովաձեւերուն մէջ ն աճականի անկումով

Հոլովական վերջաւորութիւնը կը կցուի այդ բառերուն՝ առանց Հիմքի ձայնաւորի անկումին՝ ձէն-ձիը', թէն-թիը':

4.- բոլոր այն յոգնակիները, որոնք կազմուած են իր, նիր, ըննիր, վրննիր, էցվիր յոգնակերտներով: Օր.՝ չըտտիր (< ծիտեր) - չըտտիրը', իչզըննիր - իչզըննիրը':

5.- բայերուն աներեւոյթը՝ խումիլ (< խմել) - խումիլը', խաղիլ (< խաղալ) - խաղիլը':

6.- գրաբարի ու վերջայանգ ունեցող բառերը, որոնք բարբառին մէջ ունին ն աճականը՝ առոտ (< առու) - կէտէտ (< կատու): Այս բառերուն եզակի սեռականի կազմութեան ատեն աճականը կ'իյնայ, իսկ արմատի ձայնաւորը (օ, էօ) կը վերածուի վ-ի՝ առոտ - առվը', կէտէտ - կէտվը': Վերջինը ունի նաեւ կէտունը՝ ձեւը:

բ.- Ուն Հոլովում

Ուն Հոլովումին կ'ենթարկուին գրաբարի ն վերջայանգ ունեցող բառերէն ոմանք, որոնք, որպէս կանոն, ուղիղ ձեւերուն մէջ կորսնցուցած են ն Հնչիւնը: Օր.՝ լիէն (< լեան) - լառուն, դօն (< դուն) - դրուն, բիէն (< բեան) - բառուն, բօն (< բուն) - բրուն, ձէօկ (< ձուկն) - ձրկուն, մէօկ (< մուկն) - մըկուն: Այս Հոլովումը գրաբարի աներեւոյթ թեքումի Հոլովումն է, բայց ուղիղ ձեւերուն մէջ ն-ի անկումին պատճառով կը գիտակցուի որպէս ուն (ան) արտաքին թեքում: Ուն Հոլովումին ենթարկուող բառերը կրնան Հոլովուիլ նաեւ ը Հասարակ Հոլովիչով, սակայն այս պարագային ն Հնչիւնը չի վերականգնիր՝ դօն - դրը':

Ուն Հոլովումին կ'ենթարկուին նաեւ գէրէօնք (< գարուն-ք) եւ իչչէօնք (< աշուն-ք) բառերը՝ ունենալով միայն սեռական-տրական Հոլովաձեւ՝ գարնուն, իչնուն: Այս ձեւերը պահուած են գրաբարի գարնան եւ աշնան սեռական ձեւերուն դիմաց:

Գէրէօնք եւ իչչէօնք բառերը, բոլոր ժամանակ ցոյց տուող բառերուն պէս, կը Հոլովուին նաեւ վին Հոլովիչով:

գ.- Վին Հոլովում

Գոյացած է միջին Հայերէնի ւան>ուան>վան մասնիկին դիմաց: Իմաստաբանական առանձնայատկութեամբ պահպանուած Հոլովումն է, որով կը Հոլովուին բոլոր ժամանակ ցոյց տուող բառերը՝ շէրուօ (< շարաթ) - շէթըվին, ժէմէնուօկ (< ժամանակ) - ժէմէնկըվին, ան (< ան) - անըվին, գէրէօնք (գարուն) - գէրէնքըվին եւ այլն: Ուօր (< օր) բառը, բացի իր պատմական ուօր>էվէօր Հոլովաձեւէն, կը Հոլովուի նաեւ վին Հոլովումով՝ ուօր - ուրվին:

Ժամանակ ցոյց տուող բոլոր բառերը կրնան Հոլովուիլ նաեւ ը՝ Հասարակ Հոլովումով՝ շէրուօ - շէթը, ան - անը: Բայց ասիկա

սովորական զուգաձեւութիւն չէ, այլ պայմանաւորուած է կիրառական առանձնայատկութիւններով, ինչ որ կայ նաեւ գրական լեզուին մէջ՝ Էմսըվին մը բուն (ամսուան մը գործ), բայց՝ Էմսէն իտիչզը (ամսուն վերջը):

դ.- ձէ Հոլովում

Պատմա-իմաստարանական առանձնայատկութիւններով գոյատեւող Հոլովում: Գրաբարի ոչ Հոլովումն է: Անով կը Հոլովուին տնօրր (<տայգր) - տիրաձէ, ընկիր (<ընկեր) - ընկիրաձէ, տիէր (<տէր) - տիրաձէ, ըսկըսէօր (<սկեսուր) - ըսկըսաձէ, նիէր (<ներ) - նիրաձէ, ինչպէս եւ գրաբարի քոյր, կին, տիկին բառերով բաղադրեալ բառերը՝ Հուրքուօյր (<Հօրաքոյր) - Հուրքըրաձէ, մուրքուօյր (<մօրաքոյր) - մուրքըրաձէ, իրըսկէն (<երէցկին) - իրըսկընաձէ, վերպըտկէն (<վարպետ - կին) - վերպըտկընաձէ, աղբըրկէն (<եղբայրակին՝ Հօրեղբօր կինը) - աղբըրկընաձէ, նարտըկէն (<ներ-տիկին) - նարտըկէնաձէ, տալտըկէն (<տալ-տիկին) - տալտըկէնաձէ: Կին եւ տիկին բառերը բարբառիս մէջ անկախ գործածութիւն չունին: Կայ կընէկ (<կնիկ) ածանցաւոր ձեւը, որ կ'ենթարկուի ը' Հոլովման:

Այս բառերը, բացի կին եւ տիկին բառերով բաղադրեալ ձեւերէն, երկրորդաբար կրնան Հոլովուիլ նաեւ ը' Հասարակ Հոլովումով:

ե.- Ու արտաքին Հոլովում

Պատմա-իմաստարանական առանձնայատկութիւններով պայմանաւորուած Հոլովում: Գրաբարի այ արտաքին թեքումի Հոլովումն է: Հոլովումին կ'ենթարկուին տեղ ցոյց տուող գրեթէ բոլոր յատուկ անունները: Օր.՝ Քնուօպ (Քեսապ) - Քնապու, Հէլուօպ (Հալէպ) - Հէլապու, Շունապ (Շամ - Գամասկոս) - Շունապու: Նաեւ՝ Աստուօծ (<Աստուած) - Աստունծու բառը:

Տեղ ցոյց տուող յատուկ անունները երկրորդաբար կրնան Հոլովուիլ նաեւ ը' Հասարակ Հոլովումով:

զ.- Ք/ուօց Հոլովում

Գոյացած է գրաբարի ք/աց Հերթագայական Հոլովումին դիմաց՝ ձառք - ձառուօց (<ձեռք - ձեռաց):

Բարբառիս մէջ մարմնի մասեր ցոյց տուող կարգ մը բառեր Հանդէս կու գան ք ձեւական ածանցով կամ առանց անոր, ինչպէս՝ ձառք// ձառ (<ձեռն), վիտք//վիտ (<ուտն) կամ միայն ք ձեւական ածանցով՝ խիլք (<խելք), աչգ (<աչք), բիէչգ (<բէջք), մաթօք (<մօրուք) եւ այլն: Այս բառերը սովորաբար կ'ենթարկուին ք/ուօց Հոլովումին, որ կ'արտայայտէ անեզականութեան գաղափար, ինչպէս՝ ձառուօց,

վիտուօց, խիլուօց, իչուօց, բիջուօց, մաթուօց եւ այլն:

Անոնցմէ ոմանք երկրորդաբար կը Հոլովուին նաեւ ը' Հասարակ Հոլովումով, առանց պահելու ք ածանցը՝ ձառը՝, վիտը՝:

Նոյն Հոլովման կ'ենթարկուին նաեւ կէննէք (<կանայք) եւ (մարդէգ) (<մարդիկ) յոգնակիները՝ կէննուօց, մարդուօց, որոնց մէջ Հերթագայուող ձեւերը էք եւ էգ յոգնակերտներն են:

է.- Ք/ուց Հոլովում

Այս Հոլովման կ'ենթարկուի ք/ուօց Հոլովումէն շեղող միայն կօսգ (<կուրծք) - կըրծուց բառը:

ը.- Ուօց Հոլովում

Ի Հակադրութիւն ք/ուօց Հոլովումին, ուօց Հոլովումին ենթարկուող բառերը չեն կորսնցնել իրենց վերջայանգ ք ածանցը:

Ուօց Հոլովումին կ'ենթարկուին.

1.- բաղաձայնայանգ այնպիսի բառեր ու բայահիմքեր, որոնք իրենց վերջաւորութեան ստացած են ք ձեւական ածանցը: Օր.՝ ըրկէնք (<երկինք) - ըրկընքուօց, բիրունք (<բերան-ք) - բիրընքուօց, Հիմք (<Հիմ-ք) - Հիմքուօց, տիսք (<տես-ք) - տիսքուօց:

2.- բաղաձայնայանգ ածականներէն ք ածանցով կազմուած գոյականները: Օր.՝ ըրկանք (<երկայն-ք) - ըրկանքուօց, լայնք (<լայն-ք) - լանքուօց:

3.- ք ածանցով այնպիսի բառեր, որոնք ածանցը չունեցող ձեւերէն կը տարբերին նաեւ նշանակութեամբ: Օր.՝ տէրէք (<տարի-ք) - տէրիքուօց, վըռք (<ոռ-ք) - վըռքուօց:

4.- իրք յոգնակերտով կազմուած յոգնակիները՝ թիվիրք (թելեր) - թիվիրքուօց:

Այս բոլոր բառերը երկրորդաբար կրնան Հոլովուիլ նաեւ ը' Հասարակ Հոլովումով, առանց ք-ի անկումին:

թ.- Ք/ց Հոլովում

Ք/ց Հերթագայական Հոլովումին կ'ենթարկուին.

ա.- ինք եւ ձնք ածանցներով կազմուած Հաւաքականները: Օր.՝ վարդապիտինք - վարդապիտինց, միրանք - միրանց:

բ.- անք, տաք, վըտաք, օնք (օնք, էօնք), վօնք եւ ք յոգնակերտներով կազմուած յոգնակիները՝ պարունանք (պարուններ) - պարունուօց, թէքվըրանք (թագաւորներ) - թէքվըրուօց, բէկէօնք (բակեր) - բէկուօց, անքըրտաք (եղբայրներ) - անքըրտուօց, քարվըտաք (քոյրեր) - քարվըտուօց, մըղէօնք (մեղուններ) - մըղուօց, տըղաք (տղաք) - տըղուօց, սատանաք (սատանաներ) - սատանից, ալոաք (ալոաններ) - ալոից:

Հերթագայուող ք/ց բաղաձայնին նախորդող ձայնաւորը թեք ձեւերուն մէջ կ'ենթարկուի դիրքային եւ փոխազդեցական Հնչիւնափոխութիւններու: Անոնք Հոլովամասնիկին մաս չեն կազմեր:

գ.- եզակիին մէջ ք ձեւական ածանցն ունեցող՝ գրաբարի ու եւ ի վերջայանգով բառեր՝ վարտէք (<վարտի-ք) - վարտից, էծծէօք (<ածու-ք) - էծծաց:

ժ.- Յ Հոլովում

Յ Հոլովումին կ'ենթարկուին բոլոր այն յոգնակիները, որոնք կազմուած են իրքովուն, վուն, տուն, ըստուն//ըցտուն յոգնակերտներով: Օր.՝ թիվիրքվուն (թեւեր) - թիվիրքվունց, էլըժվուն (ականջներ) - էլըժվունց, իջըլտուն (ոչիւներ) - իջըլտունց, փուչըստուն (փոչիներ) - փուչըստունց: Նոյն Հոլովման կ'ենթարկուին նաեւ ութէն (<ութիւն) ածանցով բառերու յոգնակիները՝ հիվընտուութուննա (<հիւանդութիւններ) - հիվընտուութունց, թէքէվուրթուննա (թագաւորութիւններ) - թէքէվուրթունց:

ժա.- ձ ներքին Հոլովում

Ու ներքին Հոլովումին կ'ենթարկուին.

ա.- ութէն (<ութիւն) վերջածանց ունեցող բոլոր բառերը: Թեք Հոլովածեւերը կը կազմուին է/ու ներքին Հերթագայութեամբ: Օր.՝ հիվընտուութէն (<հիւանդութիւն) - հիվընտուութն, շուղութէն (<շողութիւն՝ ջերմ) - շուղութն:

բ.- չարք մը միավանկ բառեր, ինչպէս՝ տէօն (<տուն) - տնն, շօն (<չուն) - շնն, սուօյն (<սիւն) - սնն, ձուօյն (<ձիւն) - ձնն:

ժբ.- Ու ներքին Հոլովում

Պատմա-իմաստաբանական առանձնայատկութեամբ պահպանուած Հոլովում: Ասոր կ'ենթարկուին անորմա (եղբայր) - անորմուր եւ մար (<մայր) - մուր բառերը միայն եւ անոնցմով կազմուած բարդութիւնները՝ փիսանորմա (փեսայ-եղբայր) - փիսանորմուր, մինծմար (<մեծ մայր) - մինծմուր եւ այլն: Թեք Հոլովածեւերը կը կազմուին ա/ուօ Հերթագայութեամբ: Նոյնին կ'ենթարկուի նաեւ նանար (մեծ մայր) բառը: Բարբառը չէ պահած Հայր բառը. ունի տուօտ:

ժգ.- Ուր/էվէօր Հոլովում

Պատմական առանձնայատկութեամբ պահպանուած Հոլովում՝ գրաբարի աւր՝ աւուր բառին դիմաց: Իբրեւ ժամանակ ցոյց տուող բառ՝ կը Հոլովուի նաեւ վին արտաքին Հոլովումով՝ ուր- արվին:

3.- Հոլովներն ու անոնց կազմութիւնը

Քեսապի բարբառի Հոլովական Համակարգը կը զանազանէ եօթ Հոլով՝ ուղղական, Հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական եւ ներգոյական:

Հոլովները կը բաժնուին երկու խումբերու՝ անվերջաւոր եւ թեք կամ վերջաւոր Հոլովներ:

Անվերջաւոր Հոլովներն են՝ ուղղական, Հայցական եւ ներգոյական, իսկ թեք Հոլովները՝ սեռական, տրական, բացառական եւ գործիական:

ա.- Ուղղական Հոլով

Գոյականի ուղղական եզակին վերջաւորութիւն չունի. ան բառի ուղիղ ձեւն է, այնպէս ինչպէս կը գիտակցուի բարբառին մէջ, իսկ յոգնակի ուղղականը՝ եզակի ուղղականն է, առաւել՝ յոգնակերտ վերջաւորութեան ելակէտային ձեւը, ինչպէս՝ ծուօտ՝ ծառի, անորմար՝ անորմարաք, թէքէվուր՝ թէքէվուրք, նման՝ նմանա, աչգ՝ իչվա, մէննա՝ մէննըստուն, մուօրդ՝ մարդէք, տըղու՝ տըղաք եւ այլն:

բ.- Հայցական Հոլով

Գոյականի Հայցական Հոլովը ունի բառին ուղղականի ձեւը, բայց որոշեալին մէջ սկիզբէն կ'առնէ զ նախդիրը: Ինչպէս գրաբարի, այնպէս ալ բարբառին մէջ Հայցականի կազմիչը զ նախդիրն է: Երբ բառը բաղաձայնով սկսի կամ նախդիրը բաղաձայնայանգ բառի մը կը յաջորդէ՝ կ'արտասանուի ըզ, իսկ երբ ձայնաւոր է բառին առաջին Հնչիւնը կամ նախդիրը ձայնաւորայանգ բառի մը կը յաջորդէ՝ ուղղակի կը կապուի բառին: Օր.՝ «Բէղդիցէք ըզփատը ի կըրուօքը» (նետեցէ՛ք փայտը կրակին մէջ), «Իէշը եէօ՞ գնտի գնէօշը, կուրթու կնտի գփէօշը» (էշը ի՞նչ գիտէ նուշը, կ'երթայ կ'ուտէ փուշը):

Ոսքի մէջ զ նախդիրը կը դրուի Հայցական Հոլովով խնդիրին լրացեալին վրայ. «Սիրիմ գիչուօցըդ լուօյսը» (սիրեմ աչքերուդ լոյսը):

Զ նախդիրը, «զը» ձեւով, բարբառին մէջ ունի նաեւ փոխանուանական գործածութիւն, Հանդէս գալով եզակի Գ. դէմքով անձնական դերանունի անկախ դերով, երբ կ'արտայայտէ խօսքին մէջ յիշուած գոյականը Հայցական Հոլովով արտայայտուած իր ձեւին մէջ. «Փատը չար է, բէղդիցէք զը ի կըրուօքը» (փայտը չոր է, նետեցէ՛ք զինք կրակին մէջ): Այս գործածութեամբ ան կը նոյնանայ անձնական դերանունի եզակի Գ. դէմքի Հայցական ձեւին՝ «զէնք» կամ «զան»:

Զ նախդիրը Հանդէս կու գայ նաեւ անձնական դերանուններու Հայցական Հոլովի կազմութեան մէջ, երբ կը դրուի տրական Հիմքի վրայ, սակայն խօսքի մէջ կ'արտայայտուի արտասանական եռաձեւութեամբ՝ ըզքի//զըզքի//զըսքի (Բ. դէմք, եզակի), ըզձի//զըզձի/

/զըսձի (Բ. դէմք, յոգնակի), ըզմի//զըզմի//զըսմի (Ա. դէմք, յոգնակի): Տե՛ս Համապատասխան բաժինը:

գ.- Սեռական Հոլով

Գոյականի սեռական Հոլովը կը կազմուի ուղղականի հիմքին վրայ՝ արտաքին եւ ներքին թեքումներով: Տե՛ս «Հոլովումներ եւ Հոլովիչներ» բաժինը:

դ.- Տրական Հոլով

Գոյականի տրական Հոլովը կը նոյնանայ սեռականին: Զեւաբանական այս ընդհանուր յատկանիչէն կը չեղի ը՛ Հոլովման բառերուն մեծամասնութիւնը: Այսպէս, այդ բառերուն համար տրական Հոլովի Հոլովական վերջաւորութիւնը ա ձայնաւորն է: Այսպիսով կը ստեղծուի սեռական եւ տրական Հոլովներու ձեւաբանական հակադրութիւնը՝ քուօր (<քար)>՝ քէրը՝ - քարա, մուօրդ (<մարդ)>՝ մարդը - մարդա: «Քուօր քէրը՝ ըրվան» (քար քարի վրայ), «Քուօր քարա չըմընու» (քար քարի չմնայ):

Ը՛ Հոլովումին ենթարկուող բարբառիս ան (<ի) եւ ա//ու (<այ) ձայնաւորայնագ բառերը չեն մտներ այս կանոնին մէջ: Այդ պարագային պիտի նոյնանային ուղղական եւ տրական Հոլովաձեւերը: Միւս կողմէ սակայն անոնք ունին նոյն ձեւը սեռական եւ տրական Հոլովներուն համար՝ խընծըրինա (խնձորենի)- խընծըրինը՝ - խընծըրինը՛, տըղու/տըղա (տղայ) - տըղը՝ - տըղը՛:

Սեռական եւ տրական Հոլովներու վերոյիշեալ ձեւաբանական հակադրութիւնը կը վերանայ որոշեալին մէջ, ուր, փակ դիրքի մէջ, ը՛ եւ ան Հոլովամասնիկները կ'ենթարկուին նոյն Հնչիւնափոխութեան՝ քուօրը (քարը)՝ քէրէն - քէրէն, մուօրդը (մարդը)՝ մարդօն - մարդօն: «Քուօրը քէրէն ըրվան» (քարը քարին վրայ), «Քուօրը քէրէն չըմընու» (քարը քարին չմնայ):

ե.- Բացառական Հոլով

Բացառական Հոլովը բաւական բարդ կազմութիւն ունի: Անոր համար պէտք է նկատի ունենալ երեք երեւոյթներ՝ նախդիր, հիմք եւ վերջաւորութիւններ:

Ը՛ եւ ուօր/էվէօր Հոլովումները բացառականը կը կազմեն ուղղականի հիմքէն, իսկ միւս Հոլովումները՝ սեռականի:

Բացառականի նախդիրը [գրաբար ի (յ)] երկու ձեւի է. ի, որ կը դրուի բաղաձայնով սկսող բառերուն սկիզբը անկախաբար եւ ե, որ կը դրուի ձայնաւորով սկսող բառերուն սկիզբը: Օր.՝ «Տիւքէն իլուօվ ի թըփփիէն» (աղուէսը թուփէն ելաւ), «Հա ըննիէր ի Հէվէտիէն»

(Հաւատէն կ'ելլէր), «Հօգէր ըննէր ե՛ճծօցը» (կու գար կ'ելլէր ածուէն):

Սակայն նկատելի է, որ ի նախդիրը առհասարակ դուրս կու գայ բարբառի բացառական Հոլովի կազմութեան մէջ ունեցած իր դերէն: Ան բնաւ չի գործածուիր, եթէ բացառական Հոլովով դրուած անդամը կը նախորդէ ստորոգիչին՝ «Տիւքէն թըփփիէն իլուօվ», «Հէվէտիէն հա ըննիէր», իսկ միւս պարագաներուն՝ ի տարբերակին կը հանդիպինք հազուադէպ, բայց ե տարբերակը տակաւին լայնօրէն կը կիրարկուի աղբուօյր - եաղբուրի (աղբիւրէ), ըրկէնք - երրկինքուօց (երկինքէն):

Ժամանակ ցոյց տուող բառերուն եւ բայերու աներեւոյթին բացառականը կը կազմուի առանց նախդիրի:

Բացառական Հոլովը ունի հինգ վերջաւորութիւններ՝ ի//իէ, իէց, ունց, միէ//մինիէ//մինի եւ անվերջաւոր պարագայ մը:

Ի եւ իէ վերջաւորութիւններու ոլորտները այնքան յատուկ են, որ որ կարելի է զանոնք իբրեւ առանձին ու անկախ վերջաւորութիւններ նկատել: Կարգ մը բառերու համար ի ձեւը բացարձակ է, իսկ ուրիշներու պարագային իէ ձեւը թէեւ աւելի յատուկ է, բայց երբեմն զգալի է ի-ով տարբերակը: Այսպէս՝

Ի վերջաւորութեամբ բացառական կը կազմեն.

1.- Ժամանակ ցոյց տուող բառերու բաւական երկար շարք մը, երբ կ'ենթարկուին ը՛ Հասարակ Հոլովման (եւ ոչ թէ վին)՝ էմէս (<ամիս) - էմսի, տարա (<տարի) - տէրի, ուօր (<օր) - արի, սանաղ (<ամ) - սանաղի:

2.- բայերուն աներեւոյթը՝ վէզդիլ (<վազել) - վէզդիլի, խումիլ (<խմել) - խումիլի:

Իէ//ի վերջաւորութեամբ բացառական կը կազմեն.

1.- ը՛ Հոլովման ենթարկուող բառերուն մեծամասնութիւնը՝ անաղբուօյր (աղբիւր) - եաղբուրիէ//եաղբուրի, ուօրտ (արտ) - եարտիէ//եարտի, բուօկ (բակ) - (ի) բէկիէ//ի) բէկի:

2.- ուն եւ ան Հոլովման բառերը՝ լիէն (<լեան) - (ի) լանիէ//ի) լանի, դօն (<դուն) - (ի) դընիէ//ի) դընի, տէօն (<տուն) - տանիէ, ձուօյն (<ձին) - ձունիէն եւ այլն:

Իէ//ի վերջաւորութեամբ բացառականը յօդառութեան ատեն կ'ունենայ իէն ձեւը:

Իէց Հոլովական վերջաւորութիւնը կը ստանան ժամանակ ցոյց տուող բառերը, երբ կ'ենթարկուին վին Հոլովման, որ կրնայ անփոփոխ մնալ կամ պահել միայն վ բաղադրիչը, ինչպէս՝ չէբուօղ (<չաբաթ) - չէթըվին - չէթըվինիէց//չէթըվիէց, իրիէկ (<երէկ) - իրիկվին - իրիկվինիէց//իրիկվիէց:

Ունց Հոլովական վերջաւորութիւնը կը ստանան տեղ ցոյց տուող, բայց մակբայական կիրարկութեամբ հանդէս եկող բառեր: Անոնք, իբրեւ տեղի անուններ, բացառականը կը կազմեն իէ//ի վերջաւորութեամբ. ուստի՝ ունց վերջաւորութիւնը հանդէս կու գայ տեղի անուն-

ներէն բացառականի իմաստով մակբայներու կազմութեան պաշտօնով՝ Հառո (Հեռու) - Հառվունց, տիէղ (Հտեղ) - տրղունց, նըքսի (Ներս) - նըքսնց, վիրիվ (Վերել) - վիրիվնց, վիրննց, վըրք (Վոք՝ տակ) - վըրքունց եւ այլն:

Միէ//մինիէ//մինի բառը բարբառին մէջ բացառական ձեւով եւ իմաստով անձնական դերանունն է, որ յօդառութեամբ կ'արտայայտէ երեք դէմքերն ալ՝ միէս//մինիէս, միէղ//մինիէղ, միէն//մինիէն (ինձ-մէ, քեզմէ, իրմէ): Այս բառը, նաեւ իբրեւ լայնօրէն գործածուող ձեւոյթ՝ Հանդէս կու գայ բացառականի կազմութեան մէջ: Կը դրուի բառի սեռական Հոլովէն ետք: Ներքին թեքումով բառերուն կը միանայ, իսկ արտաքին թեքումով բառերէն անկախ Հանդէս կու գայ: Օր.՝ մար (Հմայր) - մուօրմինիէ//մուօրմինի, իչգէն (աղջիկ) - իչգինէն մինիէ//իչգինէն մինի:

Միէ//մինիէ//մինի բացառականի կազմիչը, որպէս կանոն, կը ստանան անձ կամ անասուն ցոյց տուող բառերը: Ջայն ազատ կերպով կը ստանան նաեւ բոյս եւ տեղ ցոյց տուող անունները: Նկատելի է գործածութեան ոլորտի ընդլայնում: Երբեմն անով բացառական կը կազմեն վերոյիշեալ շարքերէն դուրս գտնուող բառեր եւս: Ամենայն-դէպս, միայն ժամանակ ցոյց տուող բառերը յատակ կերպով դուրս կը մնան անոր ոլորտէն:

Անվերջաւոր բացառական ունին, այսինքն՝ ձեւով կը նոյնանան սեռական-տրական Հոլովաձեւին, արտաքին թեքումի ուչ, ու, ք/ուօց, ք/ուց, ուօց, ք/ց, ց եւ ներքին թեքումի ու Հոլովումներուն ենթարկուող բառերը: Ասոնցմէ շատերը սեռական-տրականի Հետ նոյնացումէն կը խուսափին միէ//մինիէ//մինի բացառականի կազմիչի օգնութեամբ՝ ըսկըսրաձ մինիէն, անըրըտուօց մինիէն, վիտուօց մինիէն, կամ ե նախդիրի գործածութեամբ՝ երկինքուօց, եճծուցը (երկինքէն, ածուէն): Կը պատահի նաեւ երկու ցուցիչներու Համատեղ գործածութիւնը սեռականի Հիմքին Հետ՝ երկինքուօց մինիէն, եճծուցը մինիէն: Երեք Հոլովներուն նոյնացումը կատարեալ կ'ըլլայ մանաւանդ ու արտաքին Հոլովման ենթարկուող տեղանուններու պարագային, երբ բացառականի մէջ ի նախդիրը կը բացակայի բաղաձայնով սկսող բառերէն առաջ, ինչպէս՝ Քէսպու վիրիվը (Քեսապի վերելը՝ սեռական), Քէսպու իչի (Քեսապին նայէ՝ տրական), Քէսպու Լէտէկ իջու (Քեսապէն Լաթաքիա իջայ՝ բացառական):

զ.- Գործիական Հոլով

Գործիական Հոլովը կը կազմուի ուօն (աւ+ն) վերջաւորութեամբ, որ կը դրուի ուղղականի Հիմքին վրայ: Այսպէս գործիական Հոլով կը կազմեն գոյականներու մեծ մասը, անոնք որ կ'ենթարկուին ը', ուն, վին արտաքին եւ ձ ներքին Հոլովումներուն, ինչպէս՝ խուղ (Հնող) - խուղուօն, Հուօց (Հհաց) - Հէցցուօն, ջէօր (Հջուր) - ջըրուօն, տիէղ

(Հտեղ) - տրղուօն, ջաօր (Հջորի) - ջարուօն, գաօտի (Հգօտի) - գաօտուօն, շէկըրտ (Հաշակերտ) - շէկըրտուօն, խուսիլ (Հխօսիլ) - խուսիլուօն, ցիրիկ (Հցերեկ) - ցիրիկուօն, գիչիլ (Հգիչեր) - գիչիլուօն, թէն (Հթի) - թիլուօն, ձէն (Հձի) - ձիլուօն, տէօն (Հտուօն) - տանուօն, ձուօյն (Հձիւն) - ձուլուօն, աղուրութէն (Հաղուրութիւն) - աղուրութուօն, շունութէն (Հշնութիւն) - շունութուօն եւ այլն:

Նոյն ձեւով գործիական Հոլովը կը կազմեն բարբառի իր, իրք, վըննիր, վիր, ըննիր, նա, ինա//ընա յոգնակերտներով կազմուած յոգնակի գոյականները: Օր.՝ քէրիլ (քարեր) - քէրիլուօն, ասսիրք (ուսեր) - ասսիրքուօն, ձաուլըննիր (ձեռուըներ) - ձաուլըննիրուօն, փիսնցվիր (փեսացուներ) - փիսնցվիրուօն, ակըրննիր (ուլիկներ) - ակըրննիրուօն, էմըննա (ամաններ) - էմըննուօն, սընկինա (սնտուկներ) - սընկինուօն եւ այլն:

Միւս յոգնակերտներով կազմուած յոգնակիները գործիականը կը կազմեն երկու եղանակով. ա) գործիականի մէջ յոգնակերտը փոխելով՝ ուսվա՝ ուսսիրուօն (վա յոգնակերտը փոխարինուած է իր-ով). բ) նկարագրական եղանակով՝ երբ բառին Հետ կը գործածուի Հիտ (Հհետ) կապը, որ կընայ յետադաս կամ նախադաս ըլլալ: Երբ յետադաս է՝ բառը կը դրուի սեռական Հոլովով՝ գըղէցից Հիտ (գիւղացիներուն Հետ), իսկ երբ նախադաս է՝ ուղիղ ձեւով՝ Հիտ գըղէցէք, անըրըտուօց Հիտ //Հիտ անըրըտաքը (եղբայրներուն Հետ):

Գործիական Հոլով չունին նաեւ ձէ եւ ու արտաքին Հոլովումներուն պատկանող բառերը: Ասոնք կը դիմեն նկարագրական եղանակին: Օր.՝ ըսկըսըրաձ Հիտ//Հիտ ըսկըսէօրը (սկեսրոջ Հետ), տիգըրաձ Հետ//Հիտ տագըրը (տագրոջ Հետ): Ք/ուօց Հոլովման ենթարկուող բառերը գործիականը կը կազմեն առանց ք ածանցի, ը՝ Հոլովման ենթարկուող բառերուն պէս՝ խիլք (Հխելք) - խիլուօն, ձաոք (Հձեք) - ձաուօն, աչգ (Հաչք) - իչուօն, վիտք (Հուտք) - վիտուօն:

է.- Ներգոյական Հոլով

Ներգոյական Հոլովը նոյնպէս ունի բառին ուղղականի ձեւը, բայց սկիզբէն կ'առնէ ի կամ ե [Հի (յ)] նախդիրը: Երբ բառը բաղաձայնով սկսի՝ նախդիրը ունի անկախ արտասանութիւն՝ ի, իսկ երբ ձայնաւոր է բառին սկիզբը՝ ի նախդիրը կը դառնայ ե կիսաձայն ու կը ձուլուի բառի սկիզբին: Ներգոյական իմաստով դրուած գոյականը լրացում ունենալու պարագային՝ նախդիրը կը դրուի լրացումին վրայ:

Ներգոյական Հոլովը ցոյց կու տայ՝ ա) այն անձը կամ առարկան, որուն բան մը կը մատուցուի կամ որուն կը յանգի գործողութիւնը. բ) այն տեղը, դէպի ուր կ'ուղղուի, գ) ուր կամ որուն մէջ կը կատարուի գործողութիւնը: Վերջին երկուքը անոր Հիմնական նշանակութիւններն են, իսկ առաջին նշանակութեամբ կընայ Հանդէս գալ առհասարակ բառի տրական Հոլովաձեւը: Օր.՝ «Գնուօց ի լակըրթիլը» (գնաց գրու-

ցելու), «Բեղդիցէք զէս ի կրրուօքը» (նետեցէ՛ք զիս կրակին մէջ), «Ըրկը նօս կէր ի ծնցը» (երկու նուս կար ծոցին մէջ), «Ըսկա իջուս ի մայտունը» (ահա իջայ մէյտանը), «Ձէօրը նուզվա ի գօրը» (ջուրը կը հաւաքուի գուտին մէջ), «Կածը թաղին ի մախիւէրը» (կայծը կը թաղեն մոխիրին մէջ), «Մըտանք ի սէկտէմբէր չմէսը» (մտանք սեպտեմբեր ամսուն մէջ), «Հուօցը իփին ի թինէրը» (հացը կենսփեն թոնիրը), «Գնու մէօտ ի խաչքօշը» (գնա՛ մտի՛ր հաւնօցը), «Թունը դընէն ե՛նմանը» (թանը կը դնեն ամանին մէջ), «Հիրէք է ըննիս ե՛րուօսը» (հերիք է ելլես արօսը), «Ձիշվա քիթէօն երիսը» (աղջկան երեսին չի նայուիր), «Ե՛նտնու ծախին ցիրին» (Ատանայի մէջ ցորեն կը ծախեն):

Սակայն նկատելի է, որ ի նախդիրը առհասարակ դուրս կու գայ բարբառի ինչպէս բացառական, այդպէս ալ ներգոյական հոլովի կազմութեան մէջ ունեցած իր դերէն: Ներկայիս անոր գործածութիւնը պատահական կերպով կը զգացուի, այս ալ պատճառ կը դառնայ ուղղականաձեւ ներգոյականի կազմութեան:

Ի նախդրաւոր ներգոյականը գրեթէ քարացած ձեւով հանդէս կու գայ «տուն» բառին հետ՝ հի ձեւով, ինչպէս «Հիտէօն վառուօծ էր կըրուօք» (տան մէջ վառած էր կրակ), «Հիտէօն գնուօց» (տուն գնաց), «Քինթը հիտէօն կու» (աղջիկը տունն է):

Ի նախդիրը, եր կամ իր ձեւով, բարբառին մէջ ունի նաեւ փոխուանուանական գործածութիւն, հանդէս գալով եզակի Գ. դէմքով անձնական դերանունի անկախ դերով, երբ կ'արտայայտէ խօսքին մէջ յիշուած գոյականը ներգոյական հոլովով արտայայտուած իր ձեւին մէջ. «Պանդան մուտկէ եէր, մտանք եր» (պարտէզը մօտիկ էր, մտանք անոր մէջ):

Բացի ներգոյական հոլովաձեւէն, բարբառս ներգոյականի իմաստ ձեռք կը բերէ նաեւ բառի սեռական հոլովաձեւի եւ միէջ (մէջ) յետադաս կապի շարահիւսական կապակցութեամբ: Օր.՝ տան միէջ (տան մէջ), Էծծաք միէջ (ածուին մէջ), ջըրը՝ միէջ (ջուրի մէջ):

4.- Յօդառութիւն

Քսասպի բարբառի յօդերն են՝ ս, դ, ն (ը) եւ մը (մ): Ս, դ, ն (ը) յօդերը գլխաւորաբար ունին որոշեալի, ս եւ դ՝ ստացականութեան, մասամբ՝ դիմորոշի նշանակութիւններ, իսկ մը (մ)՝ անորոշի: Ս յօդը ունի նաեւ ցուցական նշանակութիւն:

Ս, դ յօդերը կը ստանան ձայնաւորայանգ եւ բաղաձայնայանգ բառերը, ը յօդը՝ միայն բաղաձայնայանգ, ն յօդը՝ միայն ձայնաւորայանգ, իսկ խօսքի մէջ՝ նաեւ բաղաձայնայանգ բառերը, որոնց կը յաջորդէ ձայնաւորով մը սկսող բառ մը:

Բաղաձայնայանգ բառերուն մէջ ս եւ դ յօդերու պարագային,

վերջաւորութեան առաջացած գաղտնավանկի ձայնաւորը ը կամ ք անչեչտ ձայնաւորն է՝ սըղուն (<սեղան) - սըղունըս//սըղունիս, վուօրդ (<վարդ) - վուօրդըդ//վուօրդիդ:

Ինչպէս տեսանք «Հնչիւնաբանութիւն» բաժնին մէջ, բարբառս կը տարբերէ ը ձայնաւորի երկու որակ՝ անչեչտ եւ շեչտաւոր: Անչեչտ ը ձայնաւորը բարբառին անցած է գրաբարէն ու հիմնականին մէջ պահած է իր յատկութիւնները: Ը յօդը անչեչտ է: Շեչտաւոր ը՛ ձայնաւորը յատկապէս երեւան կու գայ ը՛ հոլովման բառերու սեռական հոլովի կազմութեան մէջ: Այդպիսի բառերու որոշեալ ուղղական եւ անորոշ սեռական հոլովաձեւերուն մէջ երեւան կու գան անոնց որակային եւ իմաստազատիչ տարբերութիւնները՝ ակնանը (որչ. ուղղ.) - ակնանը՛ (անըչ. սեռ.), ցիրինը (որչ. ուղղ.) - ցիրինը՛ (անըչ. սեռ.):

Ս, դ յօդերը դրուելով գոյականներու վերջաւորութեան՝ ցոյց կու տան անոնց պատկանելիութիւնը ըստ Ա. եւ Բ. դէմքերու անձնական եզակի դերանուններուն սեռականներուն՝ տէօնըս (<տունս), տէօնըդ (<տունըդ), գափտէս (<գօտիս), գափտէդ (<գօտիդ): Ասոնք ստացական յօդեր են: Ը (ն) յօդը կ'արտայայտէ որոշեալի առումը՝ տէօնը (<տունը), գափտէն (<գօտին):

Միայն վընա յօգնակերտը, ստանալով ստացական յօդերը, կ'արտայայտէ յատկացուցիչի յօգնակի նշանակութիւնը՝ ձինվընա՝ ձինվընէս (մեր ձայները), ձինվընէդ (ձեր ձայները):

Ս յօդը ունի նաեւ ցուցական նշանակութիւն՝ մասնաւորաբար երբ կը գործածուի ժամանակ ցոյց տուող բառերու հետ՝ իտիչզըս (վերջերս), արիբըս (օրերս), ժմէնկըվինս (այս ժամանակուայ): Ս յօդի այսպիսի կիրառութեան պարագային բառին կընայ ընկերանալ աւս (այս) ցուցականը՝ աս իտիչզըս, աս ուրիբըս:

Տիրբան Անդրէասեան բարբառիս դիրան, դիրան, դիրան ցուցական շարքը (գրուած՝ տիպէս, տիպէդ, տիպէն. տես՝ Սուէտիայի Բարբառը, Երեւան, 1967, էջ 50) կը համարէ դէպի կապի եւ յօդերու կցումով առաջացած շարք: Այս շարքը սակայն կազմուած է դէպ կապի եւ բարբառի աս, ատ, ան ցուցականներու կցումով:

Ս եւ դ յօդերը ունին նաեւ դիմորոշ նշանակութիւն՝ ալէյըս (բոլորս), ալէյըդ (բոլորդ), ըմմընըս (ամէնքս), ըմմընըդ (ամէնքդ), անմիէըս (ամէն մէկս), անմմիէըդ (ամէն մէկդ) եւ այլն: Միէ//միսիէ//միսի բառը բարբառին մէջ բացառական ձեւով եւ իմաստով անձնական դերանուն է, որ յօդառութեամբ կ'արտայայտէ երեք դէմքերն ալ՝ միէս//միսիէս, միէդ//միսիէդ, միէն//միսիէն (ինձմէ, քեզմէ, իրմէ):

Յօդ չեն ստանար ա) գործիական հոլովը, բ) ինք եւ ունք ածանցներով կազմուած հաւաքական անունները, գ) ու, ուն, վին արտաքին հոլովումներուն ենթարկուող բառերուն թեք ձեւերը: Վին հոլովման բառերուն թեք ձեւերը կը ստանան միայն ս ցուցական յօդը:

Անորոշ յօդը հանդէս կու գայ երկու ձեւով՝ մը եւ մ: Երկուքն ալ ունին յետադաս գործածութիւն: Մ ձեւը կը գործածուի միայն էական

բայէն եւ երբեմն ձայնաւորով մը սկսող բառերէն առաջ՝ մուօրդ մի (մարդ մըն է), չէկըրտ միմ (աշակերտ մըն եմ):

Յօդառութեան իբրեւ հետեւանք բարբառի ձայնաւորները կ'ենթարկուին դիրքային եւ փոխազդեցական հնչիւնափոխութեան, զոր տեսանք «Հնչիւնափոխութիւն» բաժնին մէջ:

5.- Հոլովման աղիւսակ

ա.- ր' հոլովում

1.- Էման (Համան)		2.- գմտան (Հգտի)	
անրչ.	որչ.	անրչ.	որչ.
ուղղ. Էման	Էմանը	գմտան	գմտէն
Հայց. Էման	զԷմանը	գմտան	ըզգմտէն
սեռ. Էմանը'	Էմանէն	գմտը'	գմտէն
տր. Էման	Էմանէն	գմտը	գմտէն
բցո. ե՛մանի//	ե՛մանիէն	գմտի//	ի գմտիէն
	ե՛մանիէ		ի գմտիէ
գործ. Էմանուան	Էմանուան	գմտուան	գմտուան
ներգ. ե՛ման	ե՛մանը	ի գմտա	ի գմտէն
3.- ձէն (ձի)		4.- ծառիք (ծառեր)	
անրչ.	որչ.	անրչ.	որչ.
ուղղ. ձէն	ձէնը	ծառիք	ծառիքը
Հայց. ձէն	ըզձէնը	ծառիք	ըզծառիքը
սեռ. ձիը'	ձիօն	ծառիքը'	ծառիքէն
տր. ձիան	ձիօն	ծառիքան	ծառիքէն
բցո. ի ձիի//	ի ձիէն//	ի ծառիքի//	ի ծառիքէն//
	ձիի մինի	ծառիքի մինի	ծառիքիէն մինիէն
գործ. ձիուան	ձիուան	ծառիքուան	ծառիքուան
ներգ. ի ձէն	ի ձէնը	ի ծառիք	ի ծառիքը

5.- խումիլ (խմել)

անրչ.	որչ.
ուղղ. խումիլ	խումիլը
Հայց. խումիլ	ըզխումիլը
սեռ. խումիլը'	խումիլէն
տր. խումիլան	խումիլէն
բցո. խումիլի	խումիլիէն
գործ. խումիլուան	խումիլուան
ներգ. ի խումիլ	ի խումիլը

6.- առու (առու)

անրչ.	որչ.
ուղղ. առու	առունը
Հայց. առու	զառունը
սեռ. առուը'	առունէն
տր. առուան	առունէն
բցո. առուի	առունիէն
գործ. առուուան	առունուան
ներգ. առու	առունը

7.- վառկէկ (վառեակ-իկ)

անրչ.	որչ.
ուղղ. վառկէկ	վառկէր
Հայց. վառկէկ	ըզվառկէր
սեռ. վառկիկը'	վառկիկուն
տր. վառկիկան	վառկիկուն
բցո. ի վառկիկի//	ի վառկիկիէն//
	վառկիկի մինի
գործ. վառկիկուան	վառկիկուան
ներգ. ի վառկէկ	ի վառկէր

8.- առջիվ (առջեւ)

անրչ.	որչ.
ուղղ. առջիվ	առջիվը
Հայց. առջիվ	զառջիվը
սեռ. առջիվը'	առջիվէն
տր. առջիվան	առջիվէն
բցո. առջիվի//	առջիվիէն//
	առջիվուան
գործ. առջիվուան	առջիվուան
ներգ. առջիվ	առջիվը

բ.- ուն հոլովում լիէո (լեան)

անրչ.	որչ.
ուղղ. լիէո	լիէոը
Հայց. լիէո	ըզլիէոը
սեռ. լառուան//լառուն	լառուան//լառուն
տր. լառուան//լառուն	լառուան//լառուն
բցո. ի լառնիէ	լառնիէն
գործ. լառնուան	լառնուան
ներգ. ի լիէո	ի լիէոը

գ.- վին հոլովում քիշեր (գիշեր)

անրչ.	որչ.
ուղղ. քիշեր	քիշերը
Հայց. քիշեր	ըզքիշերը
սեռ. քիշերվին	քիշերվին
տր. քիշերվին	քիշերվին
բցո. քիշերվինիէն//քիշերվիէն	քիշերվինիէն//քիշերվիէն
գործ. քիշերուան	քիշերուան
ներգ. -	-

դ.- ձէ հոլովում

1.- տանգըր (տայգր)		2.- հուրքուայր (հորաքոյր)	
անրչ.	որչ.	անրչ.	որչ.
ուղղ. տանգըր	տանգըր	հուրքուայր	հուրքուայրը
Հայց. տանգըր	ըզտանգըր	հուրքուայր	զհուրքուայրը
սեռ. տիգրան	տիգրան	հուրքըրան	հուրքըրան
տր. տիգրան	տիգրան	հուրքըրան	հուրքըրան
բցո. տիգրան մինի	տիգրան մինիէն	հուրքըրան մինի	հուրքըրան մինիէն
գործ. -	-	-	-

ներգ. ի տնօրր ի տնօրր ի Հուրքույր ի Հուրքույրը

Ե.- ու արտաքին Հոլովում

1.- Քնուլայ (Քեսապ)

	<i>անրչ.</i>		<i>որչ.</i>
ուղղ.	Քնուլայ		Քնուլայը
Հայց.	Քնուլայ		ըզ Քնուլայը
սեռ.	Քնուլու		Քնուլու
տր.	Քնուլու		Քնուլու
բցո.	ի Քնուլու//ի Քնուլու//Քնուլու միէ		Քնուլու միէն
գործ.	-		-
ներգ.	ի Քնուլայ		ի Քնուլայ

2.- աստուած (աստուած)

	<i>անրչ.</i>		<i>որչ.</i>
ուղղ.	աստուած		աստուածը
Հայց.	աստուած		զաստուածը
սեռ.	աստունծու		աստունծու
տր.	աստունծու		աստունծու
բցո.	եաստունծու//եաստունծմի		եաստունծմիէն
գործ.	աստունծուսն		աստունծուսն
ներգ.	եաստուած		եաստուած

Գ.- ք/ուց Հոլովում

1.- ձառք (ձեռք)

	<i>անրչ.</i>		<i>որչ.</i>
ուղղ.	ձառք		ձառքը
Հայց.	ձառք		ըզձառքը
սեռ.	ձառուց		ձառուցը
տր.	ձառուց		ձառուցը
բցո.	ի ձառուց//ձառուց մինի		ի ձառուցը//ձառուցը մինիէն
գործ.	ձառուսն		ձառուսն
ներգ.	ի ձառք		ի ձառքը

2.- մարդէգ (մարդիկ)

	<i>անրչ.</i>		<i>որչ.</i>
ուղղ.	մարդէգ		մարդէգը
Հայց.	մարդէգ		ըզմարդէգը
սեռ.	մարդուց		մարդուցը
տր.	մարդուց		մարդուցը
բցո.	մարդուց մինի		մարդուցը մինիէն
գործ.	-		-
ներգ.	ի մարդէգ		ի մարդէգը

Է.- ք/ուց Հոլովում

կօսգ (կուրծք)

	<i>անրչ.</i>		<i>որչ.</i>
ուղղ.	կօսգ		կօսգը
Հայց.	կօսգ		ըզկօսգը
սեռ.	կըրծուց		կըրծուցը
տր.	կըրծուց		կըրծուցը
բցո.	ի կըրծուց		ի կըրծուցը մինիէն
գործ.	կըրծուսն		կըրծուսն
ներգ.	ի կօսգ		ի կօսգը

Ը.- ուց Հոլովում

1.- ըրկէնք (երկինք) 2.- խուսգ (խօսք)

	<i>անրչ.</i>		<i>որչ.</i>		<i>անրչ.</i>		<i>որչ.</i>
ուղղ.	ըրկէնք		ըրկէնքը		խուսգ		խուսգը
Հայց.	ըրկէնք		զըրկէնքը		խուսգ		խուսգը
սեռ.	ըրկընքուց		ըրկընքուցը		խուսքուց		խուսքուցը
տր.	ըրկընքուց		ըրկընքուցը		խուսքուց		խուսքուցը
բցո.	եըրկընքուց		եըրկընքուցը		ի խուսքուց		ի խուսքուցը
գործ.	ըրկընքուսն		ըրկընքուսն		խուսքուսն		խուսքուսն
ներգ.	եըրկէնք		եըրկէնքը		ի խուսգ		ի խուսգը

3.- լանք (լայնք)

	<i>անրչ.</i>		<i>որչ.</i>
ուղղ.	լանք		լանքը
Հայց.	լանք		ըզլանքը
սեռ.	լնքուց		լնքուցը
տր.	լնքուց		լնքուցը
բցո.	ի լնքուց		ի լնքուցը
գործ.	լնքուսն		լնքուսն
ներգ.	ի լանք		ի լանքը

4.- վրոք (ոռք)

	<i>անրչ.</i>		<i>որչ.</i>
ուղղ.	վրոք		վրոքը
Հայց.	վրոք		ըզվրոքը
սեռ.	վրոքուց		վրոքուցը
տր.	վրոքուց		վրոքուցը
բցո.	ի վրոքուց		ի վրոքուցը
գործ.	վրոքուսն		վրոքուսն
ներգ.	ի վրոք		ի վրոքը

5.- թիվիք (թեւ-եր-ք, յոգ.)

	<i>անրչ.</i>		<i>որչ.</i>
ուղղ.	թիվիք		թիվիքը
Հայց.	թիվիք		ըզթիվիքը
սեռ.	թիվիքուց		թիվիքուցը
տր.	թիվիքուց		թիվիքուցը
բցո.	ի թիվիքուց		ի թիվիքուցը
գործ.	թիվիքուսն		թիվիքուսն
ներգ.	ի թիվիք		ի թիվիքը

Թ.- ք/ց Հոլովում			
1.- խրնճումնք (խնամի-ոնք)		2.- պլրննաք (պարոն-աք, յոգ.)	
<i>անրչ.</i>	<i>որչ.</i>	<i>անրչ.</i>	<i>որչ.</i>
ուղղ. խրնճումնք	խրնճումնքը	պլրննաք	պլրննաքը
Հայց. խրնճումնք	ըզխրնճումնքը	պլրննաք	ըզպլրննաքը
սեռ. խրնճումնց	խրնճումնց	պլրննուօց	պլրննուօցը
տր. խրնճումնց	խրնճումնց	պլրննուօց	պլրննուօցը
բցո. խրնճումնց	խրնճումնց	պլրննուօց	պլրննուօց
	մինի		մինիէն
գործ.	-	-	-
ներգ.	ի խրնճումնք	ի խրնճումնք	ի պլրննաք
			ի պլրննաքը

3.- բնկէօնք (բակ-ունք, յոգ.)		4.- ակոաք (ակոայ-ք, յոգ.)	
<i>անրչ.</i>	<i>որչ.</i>	<i>անրչ.</i>	<i>որչ.</i>
ուղղ. բնկէօնք	բնկէօնքը	ակոաք	ակոաքը
Հայց. բնկէօնք	ըզբնկէօնքը	ակոաք	զակոաքը
սեռ. բնկանց	բնկանցը	ակոից	ակոիցը
տր. բնկանց	բնկանցը	ակոից	ակոիցը
բցո. ի բնկանց	ի բնկանցը	եակոից//	եակոիցը//
		ակոից մինի	ակոիցը մինիէն
գործ.	-	-	-
ներգ.	ի բնկէօնք	եակոաք	եակոաքը

5.- տըղաք (տղայ-ք, յոգ.)		6.- չծծէօք (ածու-ք)	
<i>անրչ.</i>	<i>որչ.</i>	<i>անրչ.</i>	<i>որչ.</i>
ուղղ. տըղաք	տըղաքը	չծծէօք	չծծէօքը
Հայց. տըղաք	ըզտըղաքը	չծծէօք	զչծծէօքը
սեռ. տըղուց	տըղուցը	չծծանց	չծծանցը
տր. տըղուց	տըղուցը	չծծանց	չծծանցը
բցո. տըղուց մինի	տըղուցը մինիէն	եչծծանց	եչծծանցը
գործ.	-	-	-
ներգ.	ի տըղաք	եչծծէօք	եչծծէօքը

Ժ.- ց Հոլովում	
1.- մնննըստուն (մատանի-ստան, յոգ.)	
<i>անրչ.</i>	<i>որչ.</i>
ուղղ. մնննըստուն	մնննըստունը
Հայց. մնննըստուն	ըզմնննըստունը
սեռ. մնննըստանց	մնննըստանցը
տր. մնննըստանց	մնննըստանցը
բցո. ի մնննըստանց	ի մնննըստանցը

գործ.	-	-
ներգ.	ի մնննըստուն	ի մնննըստունը
		2.- խիվութուննա (խելութիւն-նա, յոգ.)
	<i>անրչ.</i>	<i>որչ.</i>
ուղղ.	խիվութուննա	խիվութուննէն
Հայց.	խիվութուննա	ըզխիվութուննէն
սեռ.	խիվութունց	խիվութունցը
տր.	խիվութունց	խիվութունցը
բցո.	ի խիվութունց	ի խիվութունցը
գործ.	-	-
ներգ.	ի խիվութուննա	ի խիվութուննէն

Ժա.- ձ ներքին Հոլովում			
1.- խիվութէն (խելութիւն)		2.- տէօն (տուն)	
<i>անրչ.</i>	<i>որչ.</i>	<i>անրչ.</i>	<i>որչ.</i>
ուղղ.	խիվութէն	տէօն	տէօնը
Հայց.	խիվութէն	ըզտէօն	ըզտէօնը
սեռ.	խիվութան	տան	տանը
տր.	խիվութան	տան	տանը
բցո.	ի խիվութան	տանի	ի տանիէն
գործ.	խիվութունուօն	տանուօն	տանուօն
ներգ.	ի խիվութէն	ի տէօն/ Հիտէօն	ի տէօնը

Ժբ.- ուօ ներքին Հոլովում			
1.- մար (մայր)		2.- փիսանդար (փեսեղբայր)	
<i>անրչ.</i>	<i>որչ.</i>	<i>անրչ.</i>	<i>որչ.</i>
ուղղ.	մար	փիսանդար	փիսանդարը
Հայց.	մար	ըզփիսանդար	ըզփիսանդարը
սեռ.	մուօր	փիսանդարուօր	փիսանդարուօրը
տր.	մուօր	փիսանդարուօր	փիսանդարուօրը
բցո.	մուօր մինի	փիսանդարուօր մինի	փիսանդարուօրը մինիէն
գործ.	միրուօն	միրուօն	փիսանդարիւօն
ներգ.	ի մար	ի մարը	ի փիսանդար
			ի փիսանդարը

Ժգ.- ուօր/ւվուօր ներքին Հոլովում	
միայն օր>ուօր բառը	
<i>անրչ.</i>	<i>որչ.</i>
ուղղ.	ուօր
Հայց.	ուօր
սեռ.	ւվէօր

տր.	էվէօր	էվէօրը
բցո.	աօրի	աօրիէն
գործ.	ուրուօն	ուրուօն
ներգ.	եուօր	եուօրը

Բ.- ԱՄԱԿԱՆ

Քեսապի բարբառը չունի յարաբերական ածականներու յատուկ համակարգ: Առարկային ծագման, սերման եւ պատկանելիութեան յատկանիչները կ'արտայայտուին գոյականի սեռական եւ գործիական հոլովներով: Օր.՝ լառուն ծաղիկ (լեռնային ծաղիկ), կինկը՝ ըռուօխ (կանացի հագուստ), տախկուօն դրգուօլ (փայտեայ դգալ), ըրկէթուօն դօռ (երկաթեայ դուռ), իսկուօն մէննաց (ոսկեայ մատանի) եւ այլն:

Բարբառը ունի միայն որակական ածականներ: Ածականը չթեքուող խօսքի մաս է:

Բարբառիս որակական ածականի աստիճաններն են՝ դրական, բաղդատական եւ գերադրական: Վերջինները կը կազմուին վերլուծական ձեւով:

Առաւելութեան բաղդատական աստիճանը կը կազմուի.

1.- քան կապը գործածելով համեմատուող առարկայի հայցական հոլովին հետ՝ ածականի դրական աստիճանի առկայութեամբ: Օր.՝ քուօյրը քան զաղբարը մինծ ի (քոյրը մեծ է քան եղբայրը՝ քոյրը եղբորմէն մեծ է), ա սաղուր ի քան զան (այս լաւ է քան զայն՝ այս անկէ լաւ է):

2.- համեմատուող առարկայի արտայայտութիւնը բացառականով՝ ածականի դրական աստիճանի առկայութեամբ: Օր.՝ ձիւր տէօնը միւր տէնէն բունձըր է (ձեր տունը մեր տունէն բարձր է):

Առաւելութեան բաղդատականի իմաստը սաստկացնելու համար ածականին դրական աստիճանին առջեւ սովորաբար կը դրուին էվիլա (աւելի), շուօտ (չատ), շուօտ էվիլա (չատ աւելի), տահա (թրք.՝ դեռ), Ֆազլա (թրք.՝ աւելի) եւ այլն: Օր.՝ քան զաղբարը մինծ, քան զաղբարը էվիլա մինծ, քան զաղբարը շուօտ մինծ, քան զաղբարը շուօտ էվիլա մինծ եւ այլն:

Հաւասարութեան բաղդատական աստիճանը կը կազմուի քան կապը գործածելով համեմատուող առարկայի հայցականին հետ՝ առանց ածականի դրական աստիճանի: Օր.՝ Դէօն քան զէս իս (դուն քան զիս ես՝ դուն ինծի չափ ես), Մուօրը քան լիէռ մը մինցուօլ (ծառը լեռան մը չափ մեծցաւ):

Նուագական բաղդատական, որ կրնայ արտայայտուիլ քէչ (քիչ) եւ պէկուօս (պակաս) բառերով, որոնք կը դրուին ածականէն առաջ: Օր.՝ քան զէր տէօնը պէկուօս աղուր (նուագ լաւ քան իր տունը):

Գերադրական աստիճանը կը կազմուի՝

ա) քան կապի եւ ըմմըն (ամէնքը, բոլորը) գոյականական դերանունի հայցական կապակցութեամբ՝ ածականի դրական աստիճանէն առաջ: Օր.՝ քան զըմմընը պըզտէկ (քան ամէնքը պզտիկ՝ ամէնէն պզտիկ): Այստեղ համեմատուող առարկան արտայայտուած է ըմմընը գոյականական դերանունով, որ ունի նաեւ իր ածականական ձեւը՝ ըմմըն: Հետեւաբար գերադրական աստիճանը կրնայ կազմուիլ համեմատուող առարկային անունին առջեւ դնելով ըմմըն վերադիրը, որ իր վրայ կ'առնէ հայցական անունին գ նախդիրը: Օր.՝ քան զըմմըն մարդէզը կարճ (քան ամէն մարդիկը կարճ՝ բոլոր մարդոցմէ կարճ):

Ըմմըն բառի այս պաշտօնով կրնան հանդէս գալ նաեւ ալէր (թրք.՝ ամէնքը, բոլորը) եւ ալէկ (ամէն, բոլոր) բառերը:

բ) օնկը, օնկըր, ըմմընիէն, էն կամ էնը դնելով ածականի սկիզբէն: Օր.՝ օնկը մինծ, օնկըր մինծ, ըմմընիէն մինծ, էն մինծ, էնը մինծ (ամէնէն մեծ):

Գ.- ԹՈՒԱԿԱՆ

Քեսապի բարբառը ունի քանակական, դասական եւ չափական թուականներ: Քանակական բացարձակ թուականներու որոշ կապակցութիւններով կ'արտայայտուին նաեւ բաշխական ու կոտորակային թուականները:

Պարզ քանակական բացարձակ թուականներ.- միաւորներ՝ միէգ, ըրկը//ըրկէօք, ըրգ, չաօ, հէնկ, վիձ, եուօթթը, էօթթը, էննը. տասնաւորներ՝ տուօսսը, քըսսուն, եարսօն, քառսօն, հիսսէօն//եիսսէօն, վէձձէօն, երթմըչ, սաքզան, տօկզան. նաեւ՝ հիրէր//հէրէր, հազգուօր:

Տասնաւորներէն՝ երթմըչ (70), սաքզան (80), տօկզան (90) թուականները փոխառեալ են թրքերէնէ. հայերէն ձեւերը չեն պահուած:

Բարդ քանակական բացարձակ թուականները կը կազմուին տասնաւորներու եւ միաւորներու կցումով, որ կը կատարուի երկու ձեւով՝ ուղղակի կցումով եւ բաղճիւսութեամբ: Կցական բարդութիւնն այն է, երբ երկու բաղճիւսները կը կցուին առանց որեւէ հնչիւնական կապի կամ յօդակապի, ինչպէս՝ տըսնըմիէգ (11), եարսօնվիձ (36): Բաղճիւսական բարդութիւնն այն է, երբ բաղճիւսները կը միանան վ (եւ) շաղկապով: Վ շաղկապը առկայ է միայն այն պարագային, երբ երկրորդ բաղճիւսը ձայնաւորով մը սկսի՝ տըսնըվըրկէօք (12), տըսնըվըրք (13), տըսնըվէօթթը (18), տըսնըվէննը (19): Այդ թուականները կրնան կազմուիլ նաեւ առանց վ շաղկապի՝ տըսնըրկէօք, տըսնըրք,

տրանսլեթթը, տրանսլեյնը:

Հարիւրէն բարձր թուականները կը կազմուին յարադրաւոր բարդութեամբ, բաղադրիչները Հանդէս կու գան անկախ արտասանութեամբ՝ Հիրէր քրսսունհէնկ (125), Հազգուօր եուօթթը Հէրէր քաուօնվիձ (1746):

Քանակական բացարձակ թուականները ցոյց կու տան առարկաներու բացարձակ թիւն ու քանակը, ունին ածականական որոշչային իմաստ: Անոնք կրնան նաեւ գործածուիլ գոյականաբար, այսինքն՝ իրենց մէջ բացի թուային որոշչային նշանակութենէն՝ կրնան մէկտեղել գոյականի նշանակութիւն: Կրնան յօդ առնել ու Հոլովուիլ ը' Հոլովման ենթարկուող բառերուն պէս, Հանդէս գալով գոյականին յատուկ շարահիւսական պաշտօններով:

Ըրկը//ըրկէօք գուգաձեւ թուականին առաջին տարբերակը Հանդէս կու գայ միայն ածականաբար, մինչ երկրորդ տարբերակը՝ միայն գոյականաբար:

Միէգ թուականը թուական իր նշանակութենէն բացի՝ Հանդէս կու գայ այլ նշանակութիւններով եւս ու Համապատասխան գործածութիւններով:

1.- իբրեւ անորոշ դերանուն, ուր ունի միէկ արտասանութիւնը՝ նա միէկ մուօրդ (ոչ մէկ մարդ), անմիէկ իր բանը գաձտի (իւրաքանչիւրը իր գործը գիտէ): Միէկ դերանունը ուղիղ ձեւի որոշեալին մէջ կը կորսնցնէ կ վերջայանգը՝ մէր (մէկը), նոյնպէս մը անորոշ յօդը առնելով՝ միէմը: Օր.՝ միէր դօրը Հա թընկի (մէկը դուռը կը բախէ), միկէն Հարցօ (մէկուն Հարցո՛ւր), միէմը ըրվընցուօլ (մէկը երեւցաւ):

2.- իբրեւ գոյական՝ Հայերէնի «Հատ» բառի նշանակութեամբ. Հանդէս կու գայ թուականներու եւ չափ ու քանակ արտայայտող բառերու իբրեւ որոշեալ, օր.՝ ըրկը միէգ (երկու Հատ), քա՞ն միէգ//քէնմիէգ (քանի՞ Հատ):

3.- մ (մը) անորոշ յօդի եւ իլի (ալ) շաղկապին Հետ՝ իբրեւ մակբայ, «անգամ մըն ալ, մէյ մըն ալ» իմաստով՝ միէմիլի իլի (մէյ մըն ալ նայէ՛):

4.- միէգ-միէգ կրկնաւորը բացի իր բաշխական նշանակութենէն Հանդէս կու գայ նաեւ «երբեմն» մակբայի նշանակութեամբ: Օր.՝ միէգ-միէգ ըրվընցէ (երբեմն երեւցի՛ր):

Լրացեալ գոյականը, երբ մէկէն բարձր թուական մը ունի իբրեւ լրացուցիչ, ապա կրնայ Հանդէս գալ ե՛ւ եզակի ե՛ւ յօգնակի: Պէտք է նշել, որ գոյականի եզակի գործածութիւնը աւելի սովորական է:

Գոյականը եզակի կը դրուի.

1.- երբ ունի չափի, գինի, արժէքի ու ժամանակի իմաստ: Օր.՝ Հէնկ թէգ բանձրուօգ կունա (Հինգ թիգ բարձրութիւն ունի), քրսսուն

լէտըր կըշոփց (քսան լիդը կշոփց):

2.- երբ նոյն ձեւով խօսքի մէջ ունի չափ ու քանակի միաւորի իմաստ: Օր.՝ ըրգ գըլօխ սուխ (երեք գլուխ սոխ), չափ պէրկէօճ Հէմիմ (չորս պարկուճ պղպեղ):

3.- «Թաւ» եւ «աղըգ» (անգամ) բառերը, որոնց Հետ թուականը կ'արտայայտէ գործողութեան կատարման քանակը: Օր.՝ ըրկը թալ իկա (երկու անգամ եկայ), վիձ թալ իջուօլ ի ծուօլը (վեց անգամ իջաւ ծովը):

4.- երբ առանձնապէս կը շեշտուի թուական որոշիչի գաղափարը: Օր.՝ ըրկը անըքը էրէն (երկու եղբայր էին), Հէրէր ծուօն տընկիցա (Հարիւր ծառ տնկեցի):

Գոյականը յօգնակի կը դրուի.

1.- երբ անունը որոշեալ է եւ առանձնապէս ուշադրութեան կ'առնուի անոր յօգնակիութեան գաղափարը: Օր.՝ ըրգ աղբըրտաքըա Հիտէօն դարձուն (երեք եղբայրներս տուն դարձան):

2.- երբ անունը թուականէն բաժնուած է որակական ածականով: Օր.՝ վիձ ամօր Հիծծընտուն (վեց ամուր Հեծաններ):

Քանակական բաշխական թուականը կը կազմուի բացարձակ թուականի թուականի կրկնութեամբ եւ ազատօրէն կրնայ գործածուիլ բայերու եւ գոյականներու Հետ: Օր.՝ ըրգ-ըրգ խընծա՛ր իտէօց (երեք-երեք խնձոր տուաւ՝ երեքական խնձոր տուաւ), չափ- չափ իկէն (չորս-չորս եկան):

Քանակական կոտորակային թուականի կազմութեան կը մասնակցին երկու բացարձակ թուականներ: Ցայտարարը կ'արտայայտուի բացառական Հոլովով ու կը նախորդէ Համարիչ թուականին: Կոտորակային թուականի բաղադրիչները առհասարակ որոշեալ ձեւով կը գործածուին, ինչպէս՝ վիձձէն միէր (վեցէն մէկը), Հիրիւրէն տուօսը (Հարիւրէն տասը): Պարզ կոտորակային թուականներ են ըրօպ (քառորդ) եւ կիէս (կէս):

Դասական թուականը բարբառիս մէջ ունի Հնարաւոր երեք ձեւ, ինչպէս՝ առջը՛, առջա, առջէն(ը) (առաջին): Ասոնցմէ առաջին ձեւը միշտ Հանդէս կու գայ որոշիչի շարահիւսական պաշտօնով, ինչպէս՝ առջը՛ սըղանը պըզտէ ի (առաջին սեղանը պըզտիկ է), Հէնկիւնձը՛ ծուօըր ծաղկուօճ ի (Հինգերորդ ծառը ծաղկած է): Երկրորդ ձեւը միշտ Հանդէս կու գայ ստորոգելիական վերադիրի պաշտօնով, ինչպէս՝ իս առջա էրէմ (ես առաջին էի), դէօն Հէնկիւնձա ըղուօր (դուն Հինգերորդ եղար): Վերջին ձեւը միշտ Հանդէս կու գայ ը որոշիչ յօդով, կը Հոլովուի եւ խօսքի մէջ կը կատարէ գոյականի պաշտօնները, ինչպէս՝ առջէնը քան գալէը ըրկա՛ն ի (առաջինը ամէնէն երկարն է), Հէնկիւնձէնը չը իուսա տահա (Հինգերորդը չի խօսիր տակաւին):

Հայերէնի դասական թուականներէն միայն առաջինը պահուած է բարբառին մէջ՝ առջը՝, առջա, առջէն(ը): Երկրորդ եւ երրորդ դասականները թրքերէն են՝ իքինճը՝, իքինճա, իքինճէն(ը) եւ ուչունճը՝, ուչունճա, ուչունճէն(ը): Միւս դասականները կը կազմուին բարբառիս բացարձակ թուականներու վրայ թրքերէն դասական թուականի ինճա մասնիկի բարբառային ինճը՝, ինճա եւ ինճէն(ը) ձեւերը աւելցնելով, ինչպէս՝ հէնկ (հինգ)՝ հէնկինճը, հէնկինճա, հէնկինճէն(ը): Ստորեւ դասական թուականի երրորդ ձեւի հոլովման յարացոյցը.

ուղղ.	առջէնը
հայց.	զառջէնը
սեռ.	առջընէն
տր.	առջընէն
բցո.	եառջընիէն//առջընէն մինիէն
գործ.	առջընուօն
ներգ.	եառջէնը

Չափական թուականը կը կազմուի բացարձակ թուականներու վրայ ին ածանցը աւելցնելով՝ միէգգին, ըրկուքին, ըրգին, չձգգին, հէնկին, վիճճին, եռօթթին, էօթթին, էննին, տասսին, քըսսանին, եարսընին, քառընին, եխսընին, վէճճընին, եէթմըչին, սձքգձնին, տօկզանին, հէրըրին, հազըրրին եւ այլն: Ասոնք ունին Հայերէնի մէկնոց, հինգնոց, տասնոց եւ նման թուականներու իմաստը:

Չափական թուականները ունին ածականական որոշչային եւ գոյականական նշանակութիւններ: Վերջին նշանակութեամբ կրնան յօդ առնել եւ հոլովուիլ ը' հոլովումով:

Դ.- ԴԵՐԱՆՈՒՆ

1.- Անձնական դերանուններ

Անձնական դերանուններն են՝ իս, դէօն, էնք, մինք, դէօք, իրենք:

Գրաբարի դիմաց՝ դէօն եւ մինք դերանուններուն մէջ կայ նշիւնի յաւելում: Գ. դէմքի անձնական դերանուններու դերերով հանդէս կու գան նաեւ ան եւ նախք ցուցական դերանունները:

Ստորեւ անձնական դերանուններու հոլովական յարացոյցը.

Ա. դէմք

	եզակի		յոգնակի
ուղղ.	իս		մինք
հայց.	զէս		ըզմի//զըզմի
սեռ.	իմ		միր
տր.	ինծի//ինծիկ		ի մի//միզ
բցո.	իմմինի//մինիէս//եըրմիէս		միր մինի//մինըսնիրիէս

գործ.	-	-
ներգ.	եէս	ի մի

Բ. դէմք

	եզակի		յոգնակի
ուղղ.	դէօն		դէօք
հայց.	ըզքի//զըզքի//զըսքի		ըզճի//զըզճի//զըսճի
սեռ.	քու//քուօյն		ճիր
տր.	քի//քիզ		ճի//ճիզ
բցո.	քու մինի//մինիէզ// եըրմիէզ//քինի		ճիրմինի//ճինի// մինըսնիրիէզ

գործ.	-	-
ներգ.	ի քի	ի ճի

Գ. դէմք

	եզակի		յոգնակի
ուղղ.	էնք		իրինք
հայց.	զէնք		զիրենք
սեռ.	էր		իրինց
տր.	էր		իրինց
բցո.	եէրմինի//եըրմի//մինիէն		իրինցմինի//մինըսնիրիէն
գործ.	-		-
ներգ.	եէնք		եիրինք

Դերանունը բաղաձայնով սկսելու պարագային Հայցականի գ նախդիրը կրնայ ունենալ ըզ, զըզ, զըս ձեւերը. յետ այսու կը գործածենք միայն առաջինը:

Գ. դէմքի էնք (ինքն) եզակի ուղղականը չէ պահած գրաբարի իր թեք հոլովաձեւերը: Անոր սեռականը գրաբարի տարահիմք իւր>էր դերանունն է: Յոգնակին՝ իւրեանք>իրինք, ք/ց հերթագայութեամբ կը հոլովուի: Սեռական եւ տրական հոլովներուն համար Գ. դէմքի դերանունները ունին մէկական ձեւ՝ էնք՝ էր - էր, իրինք՝ իրինց - իրինց:

Ա. եւ Բ. դէմքերու դերանունները սեռական եւ տրական հոլովներուն համար ունին առանձին ձեւեր, այսպէս՝

իս՝ իմ - ինծի//ինծիկ. մինք՝ միր - մի//միզ.
դէօն՝ քու//քուօյն - քի//քիզ. դէօք՝ ճիր - ճի//ճիզ.

Բ. դէմքի եզակի սեռականը գուգաձեւ է՝ քու//քուօյն. երկրորդը ունին հնչիւնի յաւելում. հետեւանք է քոյն - քոյն>քուօյն գարգացումի, ինչպէս՝ գոյն>գուօյն, բոյն>բուօյն եւ այլն:

Ա. դէմքի եզակի տրականը գրաբարի ինճ ձեւին դիմաց ունի ինծի//ինծիկ, ուր կը գտնենք ձծ փոփոխութիւն եւ ի կամ իկ հնչիւններու

յաւելում:

Տրական Հոլովը Ա. դէմքի յոգնակի եւ Բ. դէմքի եզակի եւ յոգնակի թիւերուն մէջ ունի երկուքական տարբերակ՝ մի//միգ, քի//քիգ, ձի//ձիգ, գ-ով տարբերակները գրաբարաձեւ են, քիչ կը հանդիպին:

Բացառական Հոլովը ունի կազմութեան քանի մը ձեւեր, որոնցմէ ստորեւ բերուած միայն առաջինը ընդհանուր է բոլորին համար, իսկ միւսերը կը հանդիպին միայն որոշ պարագաներու. այսպէս՝

ա.- սեռականի հիմքի վրայ մինի աւելցնելով. այս վերջաւորութիւնը ձեւով բացառական՝ դերանունական ձեւոյթ մըն է: Բացառականի այս ձեւը ընդհանուր է բոլոր դէմքերուն ու թիւերուն համար՝ իմմինի, միրմինի, քումմինի//քուօյնմինի, ձիրմինի, եէրմինի, իրինցմինի: Յօդառութեան պարագային վերջայանգի ի հնչիւնը կը դառնայ իէ: Ն որոշիչ յօդը կը ստանան բոլոր բացառականները՝ իմմինիէն, միրմինիէն, քումմինիէն, ձիրմինիէն, եէրմինիէն, իրինցմինիէն, իսկ ս եւ դ դիմորոշները՝ միայն Ա. եւ Բ. դէմքերու եզակիները՝ իմմինիէս, քումմինիէդ:

բ.- մինի ձեւոյթը ստանալով ս եւ դ յօդերը՝ կրնայ անկախաբար գործածուիլ եւ արտայայտել Ա. եւ Բ. դէմքերու բացառական եզակիները՝ մինիէս, մինիէդ, յոգն.՝ մինըսնիրիէս, մինըսնիրիէդ, մինըսնիրիէն:

գ.- Գ. դէմքի եզակի բացառականին երկրորդ տարբերակը՝ երրմի, ստանալով ս եւ դ յօդերը, նոյնպէս կրնայ արտայայտել Ա. եւ Բ. դէմքերու բացառական եզակիները՝ երրմիէս, երրմիէդ:

դ.- Բ. դէմքը բացառականի համար ունի նաեւ՝ քինի (եզ.), ձինի (յոգ.):

Անձնական դերանուններու բացառական Հոլովի կազմութեան չի մասնակցիր բարբառի ի (ե) նախդիրը. անիկա զգալի է միայն Գ. դէմքի եզակիին մէջ՝ եէրմինիէն//եերմիէն:

Բարբառս դերանունական Հոլովումներուն համար չունի գործիականի առանձին Հոլովաձեւ: Նշանակութիւնը կ'ապահովուի վերլուծական եղանակով՝ դերանունի եւ հետ>հիտ կապի նախադաս կամ յետադաս կապակցութեամբ: Երբ կապը նախադաս է՝ դերանունը կը դրուի տրական ձեւով՝ հիտ ինծի, հիտ ձի, իսկ երբ յետադաս է՝ սեռական ձեւով՝ իմ հիտ, ձիր հիտ:

Անձնական դերանուններու Հայցական Հոլովը կը կազմուի գ (ըգ, զըգ, զըս), իսկ ներգոյականը՝ ի (ե) նախդիրով: Երբ բառը բաղաձայնով սկսի՝ Հայցականին մէջ նախդիրը հանդէս կրնայ գալ ըգ, զըգ, զըս ձեւերով, իսկ ներգոյականի մէջ՝ ի ձեւով. ձայնաւորով սկսելու պարագային՝ գ եւ ե (գրաբար՝ յ): Ա. դէմքի եզակի (իս) եւ Գ. դէմքի (էնք, իրենք) դերանունները այդ Հոլովները կը կազմեն ուղղակի հիմքի վրայ՝ զէս, եէս, զէնք, եէնք, զիրենք, եիրինք, իսկ միւս անձնականները՝ տրականի հիմքի վրայ, ինչպէս՝ ըզմի, ի մի, ըզքի, ի քի, ի ձի:

2.- Անդրադարձ դերանուններ

Անդրադարձ դերանունները ըստ կազմութեան բաղադրեալ են: Առաջին բաղադրիչը միշտ անձնական դերանունի ուղղական ձեւը կ'ունենայ, իսկ երկրորդ բաղադրիչը, ըստ Հոլովի՝ Հայցական, սեռական, տրական, բացառական եւ ներգոյական ձեւերը նոյն դերանունին: Հետեւաբար անդրադարձ դերանունները ուղղական Հոլով չունին:

Անդրադարձ դերանուններու Հոլովական մէկ ձեւը ունի իւրայատուկ կառոյց, ուր հանդէս կու գայ ըդ (դ) նախդիրը: Ըդ նախդիրը կը դրուի երկրորդ բաղադրիչին վրայ, որ Ա. դէմքի յոգնակի եւ Բ. դէմքի դերանուններուն համար տրականաձեւ է՝ մինքըզմի, դէօնըզքի, դէօքըզի, իսկ Ա. դէմքի եզակի եւ Գ. դէմքի դերանուններուն համար՝ ուղղականաձեւ՝ իսըդէս, էնքըդէնք, իրինքդիրինք: Վերջին պարագային նախդիրը հանդէս կու գայ դ ձեւով, առանց ձայնաւոր հնչիւնի: Ըդ (դ) նախդրաւոր այս ձեւերը կ'արտայայտեն «ես ինծի հետ, դուն քեզի հետ, ինք իր հետ...առանձին, մինակ» իմաստները. հետեւաբար կ'արտայայտեն գործիականի Հոլովական ընդհանուր նշանակութիւնը եւ խօսքի մէջ հանդէս կու գան ձեւի պարագայի պաշտօնով:

Ստորեւ անձնական անդրադարձ դերանուններուն Հոլովական յարացոյցը.

Ա. դէմք

	եզակի	յոգնակի
ուղղ.	-	-
հայց.	իսզէս	մինքըզմի
սեռ.	իսիմ	մինքմիր
տր.	իսինծի//իսինծիկ	մինքմի
բցու.	իսիմմինի	մինքմիրմինի
գործ.	իսըդէս	մինքըզմի
ներգ.	իսէս	մինքիմի

Բ. դէմք

	եզակի	յոգնակի
ուղղ.	-	-
հայց.	դէօնըզքի	դէօքըզմի
սեռ.	դէօնքուօյն	դէօքմիր
տր.	դէօնքի	դէօքմի
բցու.	դէօնքումմինի	դէօքմիրմինի
գործ.	դէօնըզքի	դէօքըզմի
ներգ.	դէօնիքի	դէօքիմի

Գ. դէմք

	եզակի	յոգնակի
ուղղ.	-	-

Հայց.	էնքզէնք	իրինքզիրինք
սեռ.	էնքէր	իրինքիրինք
տր.	էնքէր	իրինքիրինք
բցո.	էնքեէրմինի	իրինքիրինքմինի
գործ.	էնքըզէնք	իրինքզիրինք
ներգ.	էնքեէնք	իրինքեիրինք

3.- Փոխադարձ դերանուն

Բարբառի փոխադարձ դերանունն է մէկըզմիէկ, որ ունի Հոլովական ձևերը: Միւս փոխադարձ դերանուններն են միէկըզմիէկ, դիրուօր, եիրուօր, իրուօր:

Միէկըզմիէկ դերանունը կազմուած է միէկ (մէկ) բառի եւ նոյնին Հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական եւ ներգոյական Հոլովներու բաղադրութեամբ: Ուղղական Հոլով չունի: Կրնայ ըստանալ ն որոշիչ եւ ս, դ դիմորոշ յօդերը:

Ստորեւ անուանական ը' Հոլովման պատկանող անոր յարացոյցը.

	անրչ.	որչ.		
ուղղ.	-	-	-	-
Հայց.	միէկըզմիէկ	միէկըզմիէլ	միէկըզմիէլս	միէկըզմիէլդ
սեռ.	միէկմիկը'	միէկմիկէն	միէկմիկէս	միէկմիկէդ
տր.	միէկմիկմ	միէկմիկէն	միէկմիկէս	միէկմիկէդ
բցո.	միէկմիկը'	միէկմիկը'	միէկմիկը'	միէկմիկը'
	մինի	մինիէն	մինիէս	մինիէդ
գործ.	միէկմիկուօն	-	-	-
ներգ.	միէկիմիէկ	միէկիմիէլ	միէկիմիէլս	միէկիմիէլդ

Կայ նաեւ ըզ նախդիրով միէկըզմիէկ ձևը (մէկ-դ-մէկ), որ յօղ չևառնեք եւ Հանդէս կու գայ վերի Հայցական եւ ներգոյական ձևերու իմաստներով եւ կիրառութեամբ: Օր.՝ միէկըզմիէկ Հա սիրին (գիրար կը սիրեն. Հայց., սեռի խնդիր), միէկըզմիէկ տիսուն (գիրար տեսան, Հայց., սեռի խնդիր). միէկըզմիէկ անցուն (իրարու անցան):

Բարբառս ունի նաեւ դիրուօր (<ըլընդ) - իրար), եիրուօր (<ի - իրար) եւ իրուօր փոխադարձ դերանունները:

ա.- Դիրուօր եւ եիրուօր դերանունները կը գործածուին իյնիլ (<անկանել) եւ ասնիլ (<անցանել) բայերուն հետ «վիճիլ, կոուիլ, իրարու մէջ մտնել» իմաստներով. դըրնցիները դիրուօր ինկուն (դրացիները վիճեցան, կոուեցան), «դարձուննէն եիրուօր անցուն» (դերձանները իրարու անցան, խճճուեցան):

բ.- Իրուօր դերանունը կը գործածուի հիտ (<հետ) նախադաս կապին հետ. հիտ իրուօր գէցէն (իրարու հետ գացին, միասին գացին), հիտ իրուօր Հա դէտէն (իրարու հետ կ'աշխատին, միասին կ'աշխատին):

4.- Յուցական դերանուններ

Փրոֆ. Արարատ Ղարիբեանը իր «Հայ Բարբառագիտութիւն» (Եր., 1953) գիրքին մէջ Քեսապի բարբառի յուցական դերանուններու Համակարգին տակ նշած է միայն ան, անտ, ան եւ իսու, իդու, ինու յարաբերակից շարքերն ու տուած անոնց Հոլովական յարացոյցը, իսկ չՀոլովուող յուցականներէն՝ քանգան, քանգանտ, քանգան եւ ընձան, ընձանտ, ընձան շարքերը (էջ 448-449. պահած ենք երեւանեան տառադարձութիւնը):

Քեսապի բարբառի յուցական դերանուններու շարքերը ասոնցմով չեն աւարտիր. անոնք շատ աւելի են: Ստորեւ կը ներկայացնենք այդ շարքերը՝ անոնց կազմութեան, ծագման, Հնչիւնական փոփոխութիւններու եւ գործածութեան նկարագրութիւններով.

ան//իս, անտ, ան

ըսսու//իսսու, իսու, ինու

Այս երկու շարքերուն մէջ մտնող Համապատասխան գոյգերը նոյնանիչ են եւ ունին միեւնոյն կիրառութիւնները:

Տիգրան Անդրէասեան նշելով Սուէտիոյ բարբառի աս, ադ, ան եւ ըսսու, իդու, ինու գոյգ ձևերը (Սուէտիայի բարբառը, Եր., 1967, էջ 76), վերջիններուն մէջ կը գտնէ մատնանչական իմաստ, որ իբր առաջինները չունին: Իմաստային այսպիսի զատորոշում ընդհանրապէս գոյութիւն չունի Հայ բարբառներու նման զուգածութիւններու մէջ: Որեւէ յուցական դերանուն յուցական է ճիշդ այդ մատնանչական իմաստին համար միայն: Բարբառիս մէջ այս գոյգը կը գիտակցուի իբրեւ նոյնանիչ, այսինքն տարբեր միջոցներով գոյացած, սակայն իմաստով ու կիրարկութեամբ նոյնացած լեզուական միաւորներ:

Առաջին շարքը գոյացած է գրաբարի այս, այդ, այն յուցականներու դիմաց՝ շեշտակիր փակ դիրքի այ>ան օրինաչափ Հնչիւնափոխութեամբ: Առաջինը ունի իս տարբերակը, ուր, որպէս մասնակի երեւոյթ, կայ այ>ի: Ամենայնդէպս, իս ազատ տարբերակը ունի Հազուադէպ գործածութիւն ու կը Հանդիպի միայն քանի մը խաղիկներու մէջ.

Իչկէն Էնէօնըդ Սարա,

Գրնու փանտի գանրան,

Ակար խիլուօք թի կը կինուօս՝

Հուօրս պըր ըննուօս իս տանրան:

Երկրորդ շարքի ձևերը իրենց կազմութեամբ նման են Հայերէնի կարգ մը բարբառներու էսի, էտի, էնի (Պէյլան), իսա, իդա, ինա (Համչէն) ձևերուն: Յայտնի է, որ գրաբարի այս, այդ, այն յուցականները բաղադրեալ ձևեր են՝ ս, դ, ն արմատական բաղաձայններու հիմքով, իսկ վերջիններս հիմքի ձայնաւորին հետ սկզբնապէս ունեցած են սո, դո, նո ձևերը: Հիմքի այդ ձայնաւորը պահպանուած է գրաբարի յուցականներու կարգ մը Հոլովներուն մէջ, ինչպէս՝ այսորիկ, սովաւ,

սովիմբ, սոյն եւ այլն: Հետեւաբար բարբառիս իսսու//ըսսու, իտու, ինու (Հայտո.. այդո.. այնո..) ցուցականներու վերջավանկի ձայնաւորը պատմական Հնչիւնափոխութեան ենթարկուած Հիմքի ձայնաւորն է, իսկ առաջնավանկին մէջ կայ նախաչեչտ դիրքի այ>ի օրինաչափական փոփոխութիւն: Մասնակի այ>ը փոփոխութիւն կայ միայն առաջին դերանունի երկրորդ տարբերակին մէջ՝ ըսսու:

ան, անտ, ան // ըսսու, իտու, ինու ցուցական շարքերը ունին առարկայական եւ յատկանշային ընդհանուր նշանակութիւններ, խօսքի մէջ կրնան փոխարինել գոյական եւ ածական խօսքի մասերը: Իբրեւ առարկայական ընդհանուր նշանակութիւն արտայայտող դերանուններ կը հոլովուին: Ծարքի գոյգերը թէեւ դերանունական նոյն հոլովումին կ'ենթարկուին, սակայն կը պահեն իրենց Հիմքերու Հնչիւնային տարբերութիւնները: Այսպէս՝

ուղղ.	ան	իսսու//ըսսու
Հայց.	զան	զիսսու//զըսսու
սեռ.	էնն	իսսն//ըսսն
տր.	էնն	իսսն//ըսսն
բցո.	եւնն//եւնն մինի	եիսսն//եըսսն//եըսսն մինի
գործ.	էսնվուօն//էսնվուօն	-
ներգ.	եան	եիսսու//եըսսու

ան եւ ան դերանունները կը հոլովուին ան, իսկ իտու, ինու դերանունները՝ իսսու տիպարներով: Երկրորդ տիպարին ըսսու տարբերակը կը մնայ առանձին երեւոյթ:

Ի տարբերութիւն գրաբարի այս, այդ, այն ցուցականներուն, բարբառիս ցուցականները սեռական եւ տրական հոլովներուն համար ունին նոյն հոլովաձեւերը: Գրաբարի մ հոլովակազմիչով տրականը (այսմ, այդմ, այնմ) չկայ. տրականը ձեւով նոյնացած է սեռականին:

Բացառականի մինի կազմիչը կրնայ ունենալ երկրորդ ձեւ մը՝ մի, որ ուղղակի կը կցուի սեռական Հիմքին՝ եիսսնմի, եիտնմի, եիննմի եւ այլն: Բացառականի ի վերջայանգը կրնայ առնել ն որոշիչ յօղը ու փակ դիրք մէջ կը դառնայ իէ՝ եըսսնմիինէն//եըսսնմիին եւ այլն:

Գործիականը ունի իւրայատուկ ձեւ՝ էսնվուօն, էտնվուօն, էննվուօն (այս-ով-աւ-ն). կրնան կ յաւելուածով տարբերակ ալ ունենալ՝ էսնվուօնկ, էտնվուօնկ, էննվուօնկ: Կրնայ արտայայտուիլ նաեւ հիտ կապին միջոցով: Երբ կապը յետադաս է՝ դերանունը կը դրուի սեռականաձեւ, ինչպէս՝ էսն հիտ, էտն հիտ, իսկ երբ նախադաս է՝ դերանունը կը դրուի ուղղականաձեւ, ինչպէս՝ հիտ ան, հիտ ան:

Հայցական հոլովի կազմութեամբ հանդէս կու գայ զ նախդիրը, իսկ բացառական (սեռական Հիմք) եւ ներգոյական (ուղղական Հիմք) հոլովներու կազմութեամբ՝ ե (ի) նախդիրը: Մինի կամ մի հոլովակազմիչով բացառականին մէջ ե նախդիրը կրնայ եւ հանդէս չգալ:

ան, անտ, ան եւ իսսու//ըսսու, իտու, ինու դերանունները ունին

յոգնակի թիւ: Առաջին շարքը յոգնակին կը կազմէ ունք մասնիկով՝ էսնք, էտնք, էննք, իսկ երկրորդ շարքը՝ նք մասնիկով՝ իսնք//ըսնք, իտնք, իննք: Ստորեւ յոգնակիին հոլովական յարացոյցը.

ուղղ.	էսնք	իսսնք (երկրորդ տարբերակը զանց կ'առնենք)
Հայց.	զէսնք	զիսսնք
սեռ.	էսնց	իսսնց
տր.	էսնց	իսսնց
բցո.	եւսնց//եւսնց մինի	եիսսնց//եիսսնց մինի
գործ.	-	-
ներգ.	եւսնք	եիսսնք

էտնք, էննք կը հոլովուին էսնք, իսկ իտնք, իննք կը հոլովուին իսսնք տիպարներով:

ան, անտ, ան եւ իսսու//ըսսու, իտու, ինու ցուցականները ունին նաեւ յատկանշային ածականական նշանակութիւն: Այս նշանակութեամբ անոնք չեն հոլովուիր, յոգնակի թիւ չունին:

անք

Թրքերէնէ փոխառեալ է: Ինչպէս աշխարհաբարինոյն դերանունի պարագային, այնը ցուցականի մէջ եւս մեռած է կամ չկայ Գ. դէմքի Հետ ունեցած տարածական եւ ժամանակային յարաբերութեան իմաստը: Ան կը գործածուի խօսքի մէջ արդէն նշուած յատկանիչը մատնացոյց ընելու համար՝ առանց նկատի ունենալու անոր ունեցած յարաբերութիւնը Ա., Բ., Գ. դէմքերու նկատմամբ:

անք դերանունը կրնայ մատնանշել ա) յատկանիչ, այսինքն կրնայ ունենալ որոշիչի շարահիւսական պաշտօն եւ բ) առարկայ կամ անձ կամ յատկանիչի Հետ նաեւ այդ վերջինները՝ հանդէս բերելով գոյականական ընդհանուր նշանակութիւն: Ն որոշիչ յօղը առնելով կը հոլովուի: Ուղղական, սեռական եւ տրական հոլովներուն համար ունի նոյն ձեւը՝ այնէն, Հայց.՝ զայնէն, բցո.՝ այնիէն, գործ.՝ այնուօն. ներգոյականը առանձին հոլովաձեւ չունի, կ'արտայայտուի նկարագրական եղանակով՝ այնէն միէջ (նոյնին մէջ):

- եռուս, եռուօ, եռուօն
- իեռուս, իեռուօ, իեռուօն
- հիեռուս, հիեռուօ, հիեռուօն
- հմասն, հմատն, հմնն

Այս նոյնանիչ շարքերը ծագումով, իմաստով եւ կիրառութեամբ առնչակից են միջին Հայերէնեան ի հօս, ի հօտ, ի հօն ցուցականներուն: Ունին մակբայական նշանակութիւն: Կը գործածուին բայերու Հետ եւ ցոյց կու տան այն տեղը, ուր կը կատարուի գործողութիւնը,

Հանդէս գալով տեղի պարագայի շարահիւսական պաշտօնով: Օր.[՝] եուլոս էրի (Հոս եկո՛ւր), Հմասմ-Հմնմ Հա վիլվա (Հոս-Հոն կը պտտի):

Էսկիէ, Էտկիէ, Էնկիէ
 Հէսկիէ, Հէտկիէ, Հէնկիէ
 Հէսկիէց, Հէտկիէց, Հէնկիէց
 Էսկիէ, Էտկիէ, Էնկիէ
 Էսկիէց, Էտկիէց, Էնկիէց
 Հմսկի, Հմտկի, Հմնկի

Ջարմանայի բազմաձեւութիւն ունեցող այս խումբը ծագումով առնչակից է միջին Հայերէնեան ասկից, ատկից, անկից (ասկէ, ատկէ, անկէ) բացառական Հոլովածեւով մակբայական դերանուններուն: Իմաստով եւ կիրառութեամբ ալ նոյնը կը մնայ. ցոյց կու տայ այն տեղը, ուրկէ կը սկսի կամ որուն վրայէն, մօտէն, մէջէն կ'անցնի գործողութիւնը, Հանդէս գալով տեղի պարագայի շարահիւսական պաշտօնով: Օր.[՝] Հէսկիէ Հաովըցէ (ասկէ Հեռացի՛ր), Հմսկի անցուով (ասկէ անցաւ) եւ այլն:

դէս, դէտ, դէն
 իդմս, իդմտ, իդմն
 դիրմս, դիրմտ, դիրմն
 տէն

Նոյնանիչ շարքերը ցոյց կու տան այն տեղը դէպի ուր կ'ուղղուի կամ ուրկէ կ'անցնի գործողութիւնը: Ունին մակբայական նշանակութիւն եւ Հանդէս կու գան տեղի պարագայի շարահիւսական պաշտօնով: Օր.[՝] դէս իչի (այս կողմը նայի՛ր), իդմս էրի (այս կողմը եկո՛ւր), դիրմս դարձէ (այս կողմը դարձի՛ր) եւ այլն:

Առաջին շարքի ձեւերը կազմուած են անորոշ ձեւով չպատահող դէր (<դեհը՝ կողմ) եւ ս, տ (դ), ն յօդերու բաղադրութեամբ: Այս շարքին մէջ յօդերը ցայտուն կերպով ունին ցուցական նշանակութիւն:

Երկրորդ շարքի ձեւերը կազմուած են ի եւ դ (<ընդ) նախդիրներու եւ ան, անտ, ան ցուցականներու բաղադրութեամբ:

Երրորդ շարքի ձեւերը կազմուած են Հայերէնի դէպ (ի) կապի եւ բարբառի ան, անտ, ան ցուցականներու բաղադրութեամբ: Բաղադրիչ կապը բարբառիս մէջ անկախ գործածութիւն չունի:

Տէն (Հոն, այնտեղ) դերանունը այս շարքին մէջ առանձին կը մնայ: Կը գործածուի տէն ի եւ տէն կու (Հոն է) եւ նման կապակցութիւններու մէջ:

Դիսսմ, դիտմ, դինմ - դիսսմնք, դիտմնք, դինմնք
 Դիսսմը, դիտմը, դինմը - դիսսմնց, դիտմնց, դինմնց

Առաջին շարքի ձեւերը կազմուած են դ (<ընդ) նախդիրի եւ իսսու, իտու, ինու եւ իսսմնք, իտմնք, ինմնք եզակի եւ յոգնակի ցու-

ցականներու, իսկ երկրորդ շարքի ձեւերը՝ նոյն ցուցականներու ձեւով սեռական Հոլովածեւերու բաղադրութեամբ: Առաջին շարքի ձեւերը կ'արտայայտեն «դէպի այս կողմը, դէպի այդ կողմը...» իմաստները, իսկ երկրորդ շարքի ձեւերը՝ «դէպի այս կողմէն, դէպի այդ կողմէն...» իմաստները: Յոգնակի ձեւերը տեղը անորոշ ձեւով ցոյց կու տան՝ «դէպի այս կողմերը..., դէպի այս կողմերէն...»: Օր.[՝] դինմ գընուոց կամ դինմնք գնուոց (դէպի այն կողմը գնաց, դէպի այն կողմերը գնաց), դինմը անցուով, դինմնց անցուով (այն կողմէն անցաւ, այն կողմերէն անցաւ) եւ այլն: Ունին մակբայական կիրառութիւն եւ Հանդէս կու գան տեղի պարագայի շարահիւսական պաշտօնով:

անտիէդ, անտիէդ, անտիէդ

Շարքը կազմուած է ան, անտ, ան ցուցականներու եւ տիէդ (<տեղ) բառի բաղադրութեամբ: Ունի անուանական նշանակութիւն, յօդ կ'առնէ ու կը Հոլովուի անուանական Հոլովումով: Յոգնակի թիւը կը կազմէ էօնք յոգնակերտով, որ կ'ենթարկուի ք/ց Հերթագայութեան, թեք ձեւերուն մէջ յոգնակերտի էօ ձայնաւորը կ'ըլլայ ու: Ստորեւ Հոլովական տիպար յարացոյցը.

	եզ. անրչ.	եզ. որչ.	յոգ. անրչ.	յոգ. որչ.
ուղղ.	անտիէդ	անտիէդը	անտըէօնք	անտըէօնք
Հայց.	անտիէդ	զանտիէդը	անտըէօնք	զանտըէօնքը
սեռ.	անտըդը՝	անտըդէն	անտըդմնց	անտըդմնցը
տր.	անտըդան	անտըդէն	անտըդմնց	անտըդմնցը
բցո.	եանտըդի	եանտըդիէն	եանտըդմնց	եանտըդմնցը
գործ.	-	-	-	-
ներգ.	եանտիէդ	եանտիէդը	եանտըէօնք	եանտըէօնքը

անդէր, անդէր, անդէր
 անդըդէր, անդըդէր, անդըդէր

Այս նոյնանիչ շարքերը կ'արտայայտեն «այս կողմը, այդ կողմը, այն կողմը» իմաստները: Կազմուած են ան, անտ, ան ցուցականներու եւ Հայերէնի դի (կողմ) բառի որոշեալին բաղադրութեամբ: Վերջինս բարբառին մէջ ունի անկախ գործածութիւն եւ կը գիտակցուի իբրեւ ուղիղ ձեւ, որոշիչ յօդ (ն, ը) չ'առնելով, բայց ս եւ դ ստացական յօդերը ստանալով ազատօրէն կրնայ պահել կամ չպահել վերջայանգի ը ձայնաւորը՝ անդէրս//անդէս, անդէրը//անդէդ: Երկրորդ շարքին մէջ այս բաղադրիչը կը կրկնուի: Կ'ենթարկուի ը՝ անուանական Հոլովումին: Յոգնակի թիւը կը կազմուի էօնք յոգնակերտով, որ կ'ենթարկուի ք/ց Հերթագայութեան: Ստորեւ Հոլովումի տիպարը.

ուղղ.	անդէր	անդիէօնք
Հայց.	զանդէր	զանդիէօնք
սեռ.	անդիը՝	անդիունց
տր.	անդիըն	անդիունց

բցո.	եանդիէն	եանդիունց
գործ.	-	-
ներգ.	եանդէլ	եանդիէօնք

անթը', անթը'
անթէնը, անթէնը

Ա. շարքը ունի յատկացուցիչի կիրառութիւն՝ «այս կողմի, այն կողմի» նշանակութիւններով: Միւսերը ունին նոյնին փոխանուանական նշանակութիւնը՝ «այս կողմինը, այն կողմինը»: Կրնան գործածուիլ նաեւ ս եւ ղ յօդերով: Կը Հոլովուին: Շարքերուն Բ. դէմքի ձեւերը չեն գործածուիր: Ստորեւ Հոլովական յարացոյցը.

ուղղ.	անթէնը
Հայց.	զանթէնը
սեռ.	անթընէն
տր.	անթընէն
բցո.	եանթընիէն
գործ.	անթընուօն
ներգ.	եանթէնը

քան//քնսու, քան, քան
քանզան, քանզան, քանզան//քանծան, քանծան, քանծան
քնզըսու, քնզիտու, քնզինու//
քնծըսու, քնծիտու, քնծինու

Ա. շարքի մէջ բարբառի քան (<քան) կապի վերջայանգին Հնչիւնը յայտեղ գիտակցուելով իբրեւ յօդ՝ կազմուած են ս, տ (ղ) յօդերով ձեւեր եւս՝ «այսքան, այդքան, այնքան» իմաստներով: Հոս յօդերը ունին ցուցական պաշտօն: Շարքը ունի յատկանշային նշանակութիւն: Գոյականներուն Հետ ունի որոշիչի, իսկ բայերուն Հետ՝ չափի ու աստիճանի պարագայական խնդիրի պաշտօններ: Օր.՝ քան բանը ո՞ւր պըր ինի (այսքան գործը ո՞ւր պիտի ընէ), քան ցիրին ջնդուօսգ տէրունք (այդքան ցորեն ջողացք տարինք), քնսու մինցուօլ (այսքան մեծցաւ), քան չըն խուսէ (այդքան չեն խօսիր):

Իբրեւ ածականներու վերադիր՝ շարքը կ'արտայայտէ երկու տարբեր իմաստներ միաժամանակ՝ «այսքան, այդքան, այնքան» եւ՝ «ասկէ աւելի, ատկէ աւելի, անկէ աւելի»: Երկրորդը, ածականի առկայութեամբ, առաւելութեան բաղդատականն է: Օր.՝ քան մինծ տէօն ունէնք (ասկէ աւելի մեծ տուն ունինք), քան աղուր կը Հէգնէնք (անկէ աւելի աղուր կը Հագնինք):

Բ. շարքի ձեւերը կազմուած են քան կապի եւ ան, անտ, ան ցուցականներու Հայցական Հոլովածեւերու միացութեամբ: Ունի վերի շարքին իմաստն ու կիրառութիւնը, սակայն Հոս մասամբ մը զգալի է բաղադրիչներուն բառային անկախութիւնը, իբրեւ «ասոր չափ, ատոր չափ, անոր չափ»: Շարքին երկրորդ տարբերակը առաջացած է զ>ծ

Հնչիւնափոխութեամբ:

Գ. շարքի ձեւերը կազմուած են քան կապի եւ իսու//ըսու, իտու, ինու ցուցականներուն Հայցական Հոլովածեւերու միացութեամբ: Շարքին երկրորդ տարբերակը առաջացած է զ>ծ Հնչիւնափոխութեամբ: Ունի նոյնպէս վերի շարքերուն իմաստն ու կիրառութիւնը: Սակայն Հոս առաւել եւս զգալի է բաղադրիչներուն իմաստային անկախութիւնը, իբրեւ՝ «ասոր չափ, ատոր չափ, անոր չափ»: Շարքը կրնայ որոշապէս գիտակցուիլ իբրեւ կապի եւ ցուցական դերանունի Հայցական Հոլովածեւի շարահիւսական կապակցութիւն, այս պատճառով ալ ունի իր յօգնակին՝ քնզըսանք, քնզիտանք, քնզինանք:

Աւելորդ չէ նշել, որ նոյնպիսի կապակցութիւն մըն է բառային առանձին միաւորի Հնչիւնային տեսք ստացած «քան-զ-ցուցական դերանունի եզակի եւ յօգնակի սեռական Հոլովածեւ» կառուցուածքը՝ Հայցական որոշեալէն առաջ, ինչպէս՝ քնզըսանք, քնզիտանք, քնզինանք, քնզըսանք, քնզիտանք, քնզինանք: Հայցականին զ նախդիրը կ'անցնի յատկացուցիչին: Օր.՝ քանը տէօնը մինծ (քան զ-տունը մեծ՝ տունէն աւելի մեծ), բայց՝ քնզըսանք տէօնը մինծ (քան զ-ասոր տունը մեծ՝ ասոր տունէն աւելի մեծ):

ընծան, ընծան, ընծան
ընծըսու, ընծիտու, ընծինու
ընծըրան, ընծըրան, ընծըրան
ընծըրըսու, ընծըրիտու, ընծըրինու

Ցուցականներու այս խումբին առաջին երկու շարքերը կազմուած են բարբառի ընտ (<ընդ) նախդիրի եւ գրաբարի այս, այդ, այն ցուցականներու դիմաց՝ բարբառիս երկու հոմանիշ շարքերուն (ան, անտ, ան. ըսու// իսու, իտու, ինու) Հայցական Հոլովածեւերու կցումով (ընդ զայս, ընդ զայդ, ընդ զայն): Բարդութեան մէջ կատարուած է զ+ զ>ծ Հնչիւնափոխութիւնը: Կը գործածուին գոյականներու, ածականներու եւ բայերու իբրեւ վերադիր՝ Հանդէս գալով որոշիչի եւ ձեւի պարագայական խնդիրի պաշտօններով եւ արտայայտելով «այսպէս, այդպէս, այնպէս» իմաստները: Օր.՝ ընծան բան (այսպիսի բան), ընծան կըրմէր Փըստան (այնպէս կարմիր Հագուստ), ընծան Հա խուսէր (այդպէս կը խօսէր):

Սակայն պէտք է նշել, որ շարքին միաւորներուն մէջ զգալի են նաեւ Հայերէնի «պէս, նման» կապերու իմաստը, որուն արտայայտիչն է առաջին բաղադրիչը, եւ՝ դերանունի Հայցական Հոլովածեւով արտայայտուած առարկայական այն իմաստը, որուն Հետ կը կատարուի Համեմատութիւնը, իբր՝ «ասոր պէս, ատոր պէս, անոր պէս»: Այսպիսով՝ երկրորդ շարքը կ'ունենայ նաեւ իր յօգնակին՝ ընծըսանք, ընծիտանք, ընծինանք (ասոնց պէս, ատոնց պէս, անոնց պէս):

Վերջին երկու շարքերը կազմուած են բարբառի ընծըր կապի եւ վերոյիշեալ երկշարք ցուցականներու ուղիղ ձեւերու կցումով: Ընծըր

նախադաս կապը (պէս, նման) ունի ընդ-զ-որ կառուցուածքը, հետեւաբար ցուցականներու հոլովը կը մնայ կրկին հայցականը, առաջին բաղադրիչին մէջ գտնուող զ նախդիրով պայմանաւորուած: Այս երկու շարքերն ունին առաջիններուն իմաստն ու կիրառութիւնը, սակայն անոնց մէջ նուազ զգալի է բառային անկախութիւնը. անոնք աւելի շատ շարահիւսական կապակցութեան տպաւորութիւն կը ձգեն՝ արտայայտելով «ասոր պէս, ատոր պէս, անոր պէս» տարանջատուած եզրերով իմաստները: Չորրորդ շարքը ունի նաեւ իր յոգնակին՝ ընծը-րլսսանք, ընծըրիտանք, ընծըրիտանք (ասոնց պէս, ատոնց պէս, անոնց պէս):

Պէտք է նշել նաեւ, որ վերի շարքերը բառային անկախ միաւորի հնչիւնական կազմով հանդէս կրնան գալ նաեւ սեռական հոլովա-ձեւերով: Առաջին երկու շարքերուն համար՝ ընծըսսանք, ընծիտանք, ընծիտանք (եզ.), ընծըսսանք, ընծիտանք, ընծիտանք, իսկ վերջին երկու շարքերուն համար՝ ընծըրլսսանք, ընծըրիտանք, ընծըրիտանք (եզ.), ընծըրլսսանք, ընծըրիտանք, ընծըրիտանք: Ասոնք փաստօրէն կապա-կան բառերու (ընտ, ընծըր) եւ համեմատութեան համար դրուած յատ-կացեալ հայցականի սեռական յատկացուցիչին կապակցութիւններն են, ինչպէս՝ ընծըր իէշը (իշուն պէս), բայց՝ ընծըրլսսանք իէշը (ասոնց իշուն պէս), ընտըզ ծուօը (ծառին պէս), բայց՝ ընծիտանք ծուօը (ատոր ծառին պէս):

Հանձ, Հանձըր, Հանձ-Հանձ, Հանձ-Հունձ, Հանձըր-Հունձըր

Բոլորն ալ կ'արտայայտեն ցուցական դերանունի նշանակու-թիւններ: Առաջինը՝ Հանձ, ունի մակբայական կիրառութիւն եւ խօսքի մէջ երեւան կու գայ ձեւի պարագայի պաշտօնով, իբր՝ «այսպէս», օր.՝ Հանձ գըրի (այսպէս գրէ՛): Իբրեւ պատասխանական բառ գործողութեան կատարման պատճառի մասին՝ ունի «այսպէս, այս պատճառով» կամ՝ «առանց այս կամ այն պատճառի» իմաստը, հանդէս գալով պատճառի պարագայի պաշտօնով: Երբեմն ձեռք կը բերէ տեղի պարագայական խնդիրի պաշտօն, ինչպէս Հանձ էրի (սապէս եկո՛ւր, սա կողմը եկո՛ւր), Հանձ անցէ (սապէս անցի՛ր, այս կողմը անցի՛ր):

Հանձըր տարբերակը (Հանց-որ) ունի միեւնոյն իմաստներն ու կիրառութիւնները: Կայ նաեւ Հունձըր ձեւը, որ յարաբերական դերա-նուն է արդէն՝ «երբ որ, այն ժամանակ» նշանակութեամբ:

Հանձ-Հանձ, Հանձ-Հունձ, Հանձըր-Հունձըր կրկնաւորները նոյնա-նիչ են եւ խօսքի մէջ հանդէս կու գան ձեւի պարագայական խնդիրի պաշտօններով, ինչպէս՝ Հանձ-Հանձ Հա խուսա (այսպէս-այնպէս կը խօսի), Հանձըր-Հունձըր կ'ըննու (այսպէս-այնպէս կ'ընլայ):

միանլ (մի - այլ)

Ունի հայերէնի միւս բառին իմաստը: Կ'արտայայտէ յաջորդութեան

եւ ցուցականութեան որոշ իմաստ: Գոյականներուն հետ հանդէս կու գայ որոշիչի պաշտօնով, ինչպէս՝ միանլ տէօնը (միւս տունը), միանլ գիէղը (միւս գիւղը): Կրնայ մէկտեղել գոյականական նշանակութիւն, երբ յօդ կ'առնէ, կը հոլովուի ը' հասարակ հոլովումով եւ յոգնակի թիւ կ'ունենայ:

Մէննուօր (միւս օր) կազմուած է մի այլ օր կապակցութեան բա-ղադրութեամբ, ուր կան մ-լ>մն մասնակի առնմանութիւն, ն-ի կրկը-նութիւն եւ իա>է հնչիւնափոխութիւն:

Ջ եւ ի նախդիրները՝ ցուցական դերանուն

Բարբառիս մէջ զ-ն հայցական հոլովի նախդիրն է, իսկ ի-ն՝ բացառական եւ ներգոյական հոլովներու: Ասոնցմէ զատ հայցականի զ եւ ներգոյականի ի նախդիրները բարբառիս մէջ հանդէս կու գան նաեւ ցուցական դերանուններու նշանակութեամբ: Երկուքն ալ կը դրուին բայերու վերջաւորութեան՝ զը եւ իը//եը ձեւերով: Վերջինս ձայնաւորայանգ բայէ ետք կ'ըլլայ եը, իսկ բաղաձայնայանգ բայէ ետք՝ իը:

Ջը դերանունը խօսքի մէջ նախապէս յիշուած գոյականին կամ դերանունին ցուցականն է: Ան կ'արտայայտէ այդ գոյականին կամ դերանունին իմաստը, եզակի Գ. դէմքով, հայցական հոլովով ու սեռի խնդիրի շարահիւսական պաշտօնով: Այսպիսով, ան փաստօրէն նոյնանիչ է անձնական զինք ու ցուցական զայն դերանուններուն: Օր.՝ տըղիը կուսնըվիր ի, կըննէնք զը (տղեկը կորսուեր է, գտնենք զինք): Մը՝ քէրի թիզնէքը, կէրկըտէ զը (մի՛ նետեր թեզանիքը, կար-կտնէ՛ գայն):

Իը//եը դերանունը նոյնպէս խօսքի մէջ նախապէս յիշուած գոյա-կանին կամ դերանունին ցուցականն է: Ան կ'արտայայտէ այդ գոյա-կանին կամ դերանունին իմաստը եզակի Գ. դէմքով, ներգոյական հոլո-վով ու տեղի պարագայի եւ յանգման ու մատուցման խնդիրներու պաշտօններով: Օր.՝ թէ՛ փսին եուօն կէր. կըտան իդէձ իը (ափսէն հոն էր, դրամը դրաւ մէջը [ափսէին մէջ]), քինթը աղուր էր, աշըղիցուօլ իը (աղջիկը սիրուն էր. սիրահարուեցաւ անոր), ջըրանը խուրօ էր, քուօր մը քէրիցա եը (ջրհորը խորունկ էր, քար մը նետեցի մէջը [ջրհորին մէջ]). Հա խախդէր. ձառըս մընկիցա եը (կը խեղդուէր, ձեռքս երկարեցի իրեն):

Իը//եը ցուցական դերանունը կրնայ կատարել նաեւ միջոցի խնդիրի շարահիւսական պաշտօն, ինչպէս՝ տէօ գփուտուօտը ինծիկ, պըր փանիմ իը (տո՛ւր բետատը ինծի, պիտի փորեմ անով):

Միացեալ նախադասութիւններու մէջ զը, իը//եը դերանունները կը դրուին վերջին բային վերջաւորութեան: Օր.՝ (ծուօը) կըտրիցունք, շարդիցունք, վառիցունք զը [(ծառը) կտրեցինք, ջարդեցինք ու վա-ռեցինք զայն], ձէնը կէպուօծ էր բուօը, մատկիցու, իշիցա, չէրչըկիցու եը (ձին կապած էր բակը, մօտեցայ, դիտեցի, հիացայ անոր վրայ):

5.- Հարցական դերանուններ

Ըմմո՞ւ, ըմմո՞ւ միէկ

Ըմմու դերանունը կ'արտայայտէ Հարցում ա) որակական յատկանիշի մասին, Հանդէս գալով որոշիչի պաշտօնով, ինչպէս՝ ըմմո՞ւ ճանփքէն զընուօձ (ո՞ր ճամբայէն գնաց), ըմմո՞ւ չուճօնը հօլու (ո՞ր պզտիկը կու լայ), բ) նաեւ՝ առարկայի եւ անձի մասին, Հանդէս գալով գոյականին յատուկ շարահիւսական պաշտօններով: Կը Հոլովուի, յոգնակի կը կազմէ նք յոգնակերտով, որ կ'ենթարկուի ք/ց հերթագայութեան: Այս իմաստով կը գործածուի նաեւ ըմմու միէկ դերանունը: Թեք ձեւերուն մէջ բաղադրիչները սովորաբար կը համաձայնին Հոլովով, առաջինը ունի դերանուանական Հոլովում, իսկ երկրորդը կեննթարկուի ը' հասարակ Հոլովումին: Այս հաշուով՝ անոնք կ'արտայայտեն ո՞ր, ո՞րը, ո՞ր մէկ իմաստները:

Ստորեւ անոնց Հոլովական յարացոյցը.

	եգ.	յոգ.	անրչ.	որչ.
ուղղ.	ըմմու	ըմմանք	ըմմու միէկ	ըմմու մէր
հայց.	զըմմու	զըմմանք	ըմմու միէկ	զըմմու միը
սեռ.	ըմմար	ըմմանց	ըմմու միկը'	ըմմու միկէն
տր.	ըմմար	ըմմանց	ըմմու միկա	ըմմու միկէն
բցո.	եըմմար	եըմմանց	ըմմու միկի	ըմմու միկիէն
գործ.	-	-	ըմմու միկուօն	ըմմու միկուօն
ներգ.	եըմմու	եըմմանք	եըմմու միէկ	եըմմու մէր

Ըմմու դերանունը գործիական Հոլովաձեւ չունի, ան կ'արտայայտուի նկարագրական եղանակով՝ դերանունին եւ հիտ (հետ) կապին միջոցով: Երբ կապը նախադաս է՝ դերանունը կը դրուի ուղիղ ձեւով, ինչպէս՝ հիտ ըմմու, հիտ ըմմանք, իսկ երբ յետադաս է՝ կը դրուի սեռական ձեւով, ինչպէս՝ ըմմար հիտ, ըմմանց հիտ:

Բարբառի ընտ (Հընդ) նախդիրը եւ ըմմու դերանունին Հայցական Հոլովաձեւերը խօսքի կապակցութիւններու մէջ մտնելով՝ կը ստեղծեն բառային անկախ միաւորի Հնչիւնական կազմ ունեցող միաւորներ, ինչպէս՝ ընծընմա, ընծընմանք (որուն պէս, որոնց պէս): Այսպիսի միաւորներ են նաեւ «ընդ-զ նախդիր-դերանունին սեռականը՝ իբրեւ յատկացուցիչ» կառուցուածք ունեցող միաւորները, ինչպէս՝ ընծընմա, ընծընմանք: Օր.՝ ընծընմա շօնը (որո՞ւն շան պէս), ընծընմանց պաղչան (որո՞նց պարտէզին պէս): Այսպիսի միացութիւններուն մէջ գոյութիւն ունին դ+գ>ծ Հնչիւնափոխութիւն եւ նմ>ն լիակատար առնմանութիւն, ինչպէս՝ ընտ-ըզ-ըմմու՝ ընծընմա եւ այլն: Ասոնք որքան ալ բառային անկախ միաւորներու Հնչիւնական տեսք ունենան՝ կը գիտակցուին իբրեւ խօսքի մէջ տարբեր անդամներու շարահիւսական կապակցութիւններ:

ո՞ւվ (Հով)

Կ'արտայայտէ Հարցում անձի մասին: Խօսքի մէջ Հանդէս կու գայ գոյականին յատուկ շարահիւսական պաշտօններով: Կը Հոլովուի դերանուանական Հոլովումով: Յոգնակիի առանձին ձեւեր չունի. անոր նշանակութեամբ կը գործածուի ըմմա դերանունին յոգնակին՝ ըմմանք: Ստորեւ եզակի թիւին Հոլովական յարացոյցը.

ուղղ.	ո՞ւվ
հայց.	զո՞ւվ
սեռ.	օ՞մ
տր.	օ՞մ
բցո.	օմմինի (որչ.՝ օմմինիէն)
գործ.	-
ներգ.	եօմ

Ներգոյական Հոլովաձեւը կը կազմուի սեռական-տրական հիմքի վրայ: Գործիականը առանձին Հոլովաձեւ չունի. կ'արտայայտուի նկարագրական եղանակով, հիտ (հետ) յետադաս կամ նախադաս կապի եւ սեռական-տրական Հոլովաձեւի միջոցով՝ օմ հիտ/հիտ օմ:

չէ՞ (պրս.՝ ի՞նչ)

Կ'արտայայտէ Հարցում առարկայի մասին: Ունի ա) ածականական յատկանշային նշանակութիւն՝ խօսքի մէջ Հանդէս գալով որոշիչի պաշտօնով. չէ՞ բան ի ատ, չէ՞ ի ննչօնը (ի՞նչ բան է ատիկա, ի՞նչ է անունը) եւ բ) ընդհանուր առարկայական նշանակութիւն. ուստի յօդ կը ստանայ, կը Հոլովուի ը' հասարակ Հոլովումով, խօսքի մէջ Հանդէս կու գայ գոյականին յատուկ շարահիւսական պաշտօններով: Ստորեւ Հոլովական յարացոյցը.

	եգ. անրչ.	եգ. որչ.	յոգ. անրչ.	յոգ. որչ.
ուղղ.	չէ	չեը	չըվիը	չըվիըը
հայց.	չէ	չեը	չըվիը	չըվիըը
սեռ.	չըվը'	չըվէն	չըվիըը'	չըվիըէն
տր.	չըվա	չըվէն	չըվիըա	չըվիըէն
բցո.	չըվի//	չըվիէն//	չըվիըի//	չըվիըիէն//
գործ.	չըվուօն	չըվուօն	չըվիըուօն	չըվիըուօն
ներգ.	ի չէ	ի չեը	ի չըվիը	ի չըվիըը

Բարբառի ունի նաեւ չէ-չէ Հարցական կրկնաւորը: Ունի յոգնակի նշանակութիւն: Օր.՝ չէ՞-չէ՞ գըրից (ինչե՞ր գրեց), չէ՞-չէ՞ բիւրի (ինչե՞ր բերի): Կը գործածուի նաեւ գոյականի հետ, ինչպէս՝ չէ՞-չէ՞ բնիւր (ի՞նչ բաներ):

չըվէօտը

Կազմուած է չէ Հարցականի սեռականին (չըվը) եւ ուտ>էօտ մասնիկի միջոցով, միշտ Հանդէս կու գայ ը յօդով՝ չըվէօտը: Կ'արտայայտէ

Հարցում գործողութեան կատարման պայմանի մասին, Հանդէս գալով պայմանի պարագայի շարահիւսական պաշտօնով, ինչպէս՝ չլվէօ՞ւր Հա խաղուն (ի՞նչ պայմանով կամ գրաւի վրայ կը խաղան):

չըվինա՞

Կազմուած է չէ Հարցականի սեռականին (չըվը) եւ ինա (<ենի) ածանցի բաղադրութեամբ: Կ'արտայայտէ Հարցում առարկայի (մասնաւորաբար բոյս ու ծառատեսակ) մասին, յօդ կ'առնէ, կը հոլովուի ը՛ Հասարակ հոլովումով, յոգնակին կը կազմուի ք յոգնակերտով, որ կեննթարկուի ք/ց հերթագայութեան: Սօսքի մէջ Հանդէս կու գայ գոյականին յատուկ շարահիւսական պաշտօններով: Ստորեւ հոլովական յարացոյցը.

	անրչ.	որչ.	անրչ.	որչ.
ուղղ.	չըվինա	չըվինէն	չըվինէք	չըվինէքը
Հայց.	չըվինա	ըզչըվինէն	չըվինէք	ըզչըվինէքը
սեռ.	չըվընը՝	չըվինէն	չըվինից	չըվինիցը
տր.	չըվընը՝	չըվինէն	չըվինից	չըվինիցը
բցո.	չըվինի//	չըվինիէն//	չըվինից մինի	չըվինից մինիէն
	չըվինի մինի	չըվինէն մինիէն -	-	-
գործ.	չըվինուօն	չըվինուօն	-	-
ներգ.	ի չըվինա	ի չըվընէն	ի չըվինէք	ի չըվինէքը

Յոգնակին գործիական հոլովածեւ չունի. կ'արտայայտուի նկարագրական եղանակով՝ հիտ կապին հետ. ան դերանունին սեռականին հետ կը գործածուի յետադաս՝ չըվինից հիտ, իսկ ուղիղ ձեւին հետ՝ նախադաս, ինչպէս՝ հիտ չըվինէքը:

չըվա՞. նէ՞

Չըվա՞ (պրս.՝ ինչո՞ւ) Հարցականը կը Համապատասխանէ աշխարհաբարի ինչո՞ւ Հարցականին: Ունի մակբայական-պարագայական նշանակութիւն: Կ'արտայայտէ Հարցում գործողութեան պատճառի մասին: Ձի հոլովուիր: Ունի նախադաս գործածութիւն, ինչպէս՝ չըվա՞ իկի (ինչո՞ւ եկար), չըվա՞ Հառվըցուօլ (ինչո՞ւ հեռացաւ):

Նէ՞ (թրք.՝ ինչո՞ւ) Հարցականը նոյնիմաստ է, քիչ կը գործածուի:

**եիէ՞ք, եիէբվի՞ն, եիէբվընիէ՞ց
քանը եիէ՞ք//քնիէ՞ք**

Առաջինը կը Համապատասխանէ Հայերէնի ե՞րբ Հարցականին: Կ'արտայայտէ Հարցում գործողութեան դրսեւորման ժամանակի մասին՝ Հանդէս գալով ժամանակի պարագայի շարահիւսական պաշտօնով: Ունի նաեւ սեռական եւ բացառական ձեւեր՝ եիէբվին, եիէբվընիէց: Օր.՝ եիէ՞ք գընուօձ (ե՞րբ գնաց), եիէբվին պըտօղ է (իմա՝ ո՞ր եղանակի պտուղ է), եիէբվընիէ՞ց եուօս կուօս (երբուրնէ՞ Հոս ես):

Վերջին ձեւին դիմաց բարբառ ունի նաեւ յարադրաւոր ձեւ մը՝ քանը եիէ՞ք (<քանի երբ), որ աւելի գործածական է՝ քանը եիէ՞ք միը դիէօնքն իս (երբուրնէ՞ մեր կողմերն ես), քանը եիէ՞ք Հա դէտէս (երբուրնէ՞ կ'աշխատիս): Ունի նաեւ կցական տարբերակը՝ քնիէ՞ք:

չուօ՞ց

Կը Համապատասխանէ Հայերէնի ինչպիսի՞ւ եւ ինչպէ՞ս դերանուններուն: Կ'արտայայտէ Հարցում ա) առարկայի կամ անձի որակական յատկանիշին մասին, Հանդէս գալով իբրեւ որոշիչ, ինչպէս՝ չուօ՞ց մուօրդ ի (ինչպիսի՞ մարդ է) եւ բ) գործողութեան դրսեւորման ձեւի մասին, Հանդէս գալով իբրեւ պարագայ, ինչպէս՝ չուօ՞ց իրի (ինչպէ՞ս ըրիր): Հետեւաբար ունի ածականական եւ մակբայական իմաստներ եւ կիրառութիւն:

եէօ՞

Կը Համապատասխանէ Հայերէնի ո՞ւր Հարցականին: Կ'արտայայտէ Հարցում գործողութեան կատարման տեղի մասին՝ Հանդէս գալով տեղի պարագայի շարահիւսական պաշտօնով: Օր.՝ եէօ՞ գէձի (ո՞ւր գացիր): Ձի հոլովուիր: Կը Համապատասխանէ հին Հայերէնի յո՞ դերանունին:

դա՞ր

Կազմուած է բարբառի դ (ընդ) նախդիրի եւ Հայերէնի ո՞ւր Հարցականի կցումով: Կ'արտայայտէ Հարցում գործողութեան դրսեւորման ուղղութեան մասին: Կը Համապատասխանէ աշխարհաբարի «դէպի ո՞ւր, ուրկէ՞, ո՞ր ուղղութեամբ» Հարցական կապակցութիւններուն ու բառերուն: Սօսքի մէջ Հանդէս կու գայ տեղի պարագայի շարահիւսական պաշտօնով: Օր. դա՞ր գընուօձ (ո՞ւր գնաց), դա՞ր անցուօլ (ուրկէ՞ անցաւ) եւ այլն:

իսկի՞//իսկիէ՞ց//իստի՞

Ձեւով բացառական այս Հարցականը իմաստով ու ծագմամբ կը Համապատասխանէ միջին Հայերէնեան ուսկի՞ց եւ ուստի՞ Հարցականներուն: Կ'արտայայտէ Հարցում գործողութեան ծագման տեղի մասին՝ Հանդէս գալով տեղի պարագայի շարահիւսական պաշտօնով: Օր.՝ իսկիէ՞ց իկիք (ուրկէ՞ եկաւ), իստի՞ ուրթունք (ուրկէ՞ երթանք):

քա՞ն (<քան)

Երբեմն ունի քանը ձեւը, որ քիչ կը գործածուի: Կը Համապատասխանէ Հայերէնի քանի Հարցականին: Կ'արտայայտէ Հարցում առարկայի կամ անձի քանակի ու չափի մասին: Ունի յատկանշային նշանակութիւն, իսօսքի մէջ Հանդէս գալով որոշիչի պաշտօնով: Օր.՝ քա՞ն ծուօս տընկիցի (քանի՞ ծառ տնկեցիր), քա՞ն ուօր դէտիցուօր (քանի՞

օր աշխատեցար), քան կենկէօն կրտուօլ առի (քանի՞ կանգուն կտա առի):

Քան Հարցականը երբեմն կը Հնչուի քան, այսինքն Հնչունապէս կը նոյնանայ արաբերէն նոյնանիչ Հարցականին՝ քան: Այս նոյնութիւնը ծագումնաբանական չէ, այլ Հետեւանք է լիակատար առնմանութեան, օրինակ՝ քան միէկ>քանմիէկ (քանի՞ Հատ), քան մուօրդ>քանմուօրդ (քանի՞ մարդ) եւ այլն, ուր կայ նմ >մ Հնչունափոխութիւն:

քաննա՞ (քանի՞)

Մասամբ կը Համապատասխանէ Հայերէնի քանի՞ դերանունին: Կ'արտայայտէ Հարցում գինի մասին: Ունի նաեւ գործիական Հոլովածեւ՝ քնուօն: Օր.՝ քաննա՞ կիփի (քանի՞ կ'արժէ), քնուօն գընիցի (քանի՞ով գնեցիր):

քնի՞ն//քնընի՞ն

Կազմուած է բարբառի վերոյիշեալ քան կամ քաննա դերանունին եւ չափական թուականներու ին մասնիկի ածանցումով. երկրորդ տարբերակին մէջ մասնիկը կրկնուած է: Կ'արտայայտէ Հարցում չափական թուականի մասին: Օր.՝ քնի՞ն ի (քանինո՞ց է՝ Հասակը, կշիռը, գինը եւ.), քնընի՞ն կըտուր կուզիս (քանինո՞ց դրամ կետուզես՝ դրամին միւտորը):

քանն-քանն (Հքանի՞-քանի՞)

Կ'արտայայտէ Հարցում բաշխական թուականի մասին: Օր.՝ քանն-քանն ծնդէկ ուտում (քանի՞-քանի՞, քանիական ծաղիկ տամ):

քնիննա՞//ըմուիննա՞

Առաջինը բարբառի քան (քանի), երկրորդը ըմու (որ) դերանուններուն եւ դասական թուականներու իննա (թրք.) մասնիկին ածանցումով կազմուած նոյնանիչ դերանուններ են. երկրորդը քիչ կը Հանդիպի: Կ'արտայայտեն Հարցում դասական թուականի մասին: Այս ձեւով Հանդէս կու գան ստորագելիական վերադիրի պաշտօնով, ինչպէս՝ քնիննա՞ ըղուօր (քանիբրո՞րդ եղար): Ունի նաեւ քնիննը//ըմուիննը ձեւը՝ ը վերջայանգով. այս ձեւը կը գործածուի իբրեւ գոյականի լրացում՝ Հանդէս գալով որոշիչի պաշտօնով, ինչպէս՝ քնիննը՞ սըղունը (քանի՞բրորդ սեղանը):

Դերանունը ունի նաեւ քնիննէն//ըմուիննէն ուղիղ ձեւը, որ միշտ ը յօղով Հանդէս կու գայ՝ քնիննէնը//ըմուիննէնը: Ունի եզակի Հոլովում, որ կ'ըլլայ ը՝ Հասարակ Հոլովումով: Ոսօքի մէջ Հանդէս կու գայ գոյականին յատուկ շարահիւսական պաշտօններով:

նադտուօ՞ր

Թրքերէնէ փոխառեալ այս դերանունը կը Համապատասխանէ

Հայերէնի որքա՞ն Հարցականին: Կը պարփակէ բարբառի քան եւ քաննա Հարցականներու իմաստներն եւս: Կ'արտայայտէ Հարցում ա) առարկայի քանական յատկանիչի մասին, Հանդէս գալով որոշիչի պաշտօնով, ինչպէս՝ նադտուօ՞ր չէքուօր առի (որքա՞ն չաքար առիր) եւ բ) գործողութեան դրսեւորման չափի մասին, Հանդէս գալով չափ ու քանակի պարագայական խնդրի պաշտօնով, ինչպէս՝ նադտուօ՞ր Հիմից (որքա՞ն ուչացաւ):

6.- Յարաբերական դերանուններ

Ըր (Հոր) բառը բարբառիս մէջ յարաբերական դերանուն է եւ ստորադասական չաղկապ: Իբրեւ յարաբերական դերանուն կ'արտայայտէ ուղղական եւ Հայցական Հոլովներով դրուած յարաբերեալները, որոնց կրնայ կցուիլ կամ անկախաբար արտասանուիլ: Ունի եզակի թիւ միայն եւ Հոլովական ուղիղ ձեւ՝ Հայցական եւ ուղղական Հոլովածեւերու կիրառութիւններով: Օր.՝ տիսու զան մուօրդը ըր բէրիկումը ի (տեսայ այն մարդը, որ բարեկամդ է), տիսու զան մուօրդը ըր սիրիցի (տեսայ այն մարդը, զոր սիրեցիր):

Ըր յարաբերականին միւս Հոլովներուն եւ յոգնակիին իմաստներն ու կիրառութիւնները կ'արտայայտուին ըմու ըր յարաբերականին թեք ձեւերով (տե՛ս ըմու Հարցականը): Այսպէս՝

- ուղղ. ըմու ըր (որը որ, որ)
- Հայց. զըմու ըր (որը որ, զոր)
- սեռ. ըմմը ըր (որու որ, որուն)
- տր. ըմմը ըր (որուն որ, որուն)
- բցո. երմմը ըր (որմէ որ, որմէ)
- գործ. ըմմը Հիտ ըր//Հիտ օմ ըր (որով որ, որով. արտայայտուած է նկարագրական եղանակով)

ներգ. երմու ըր (որուն մէջ)

Ըմմնք ըր (որոնք որ, որոնք) յոգնակի յարաբերականը կը Հոլովուի ըմմնք Հարցական դերանունին պէս:

Միւս յարաբերական դերանունները առանց Հարցումի Հարցական դերանուններն են, որոնք սովորաբար կը գործածուին ըր յարաբերականին հետ, ինչպէս՝ մվըր (ով որ), չէըր (ինչ որ), չուօցըր (ինչպէս որ), եթօրըր//գմրըր (ուր որ), իսկիէց ըր//իստի երը (ուրկէ որ), նադտուօր ըր (որքան որ) եւ այլն: Միայն քան եւ քաննա Հարցականներէն կազմուած ձեւերը յարաբերական դերանուններ չեն, ինչպէս՝ քանըր (մակրայական նշանակութիւն ունի՝ քանըր զըզքի տիսու լքեզ տեսնելէս ի վեր) եւ քանըր//քնըրմը (կապ է՝ փոխանակ, փոխարէն իմաստով. քնըրմը խուսէս՝ դէտի [փոխանակ խօսիս՝ աշխատի՛ր]):

7.- Որոշեալ դերանուններ

Բարբառիս մէջ, իբրեւ որոշեալ դերանուն, հանդէս կու գան հետեւեալ բառերն ու բառակապակցութիւնները.- Էմըն (ամէն, իւրաքանչիւր), ըմմըն (ամէն՝ ամբողջ), ըմմընը (ամբողջը), ըմմընքը (ամէնքը), Էմմիէկ (ամէն մէկ, իւրաքանչիւր), Էմմիէլ (ամէն մէկը), Էմըն բան (ամէն ինչ), ալէկ (թրք.՝ բոլոր), ալէլ (բոլորը), ալէկ բան (ամէն ինչ) եւ այլն:

Ասոնցմէ յատկանշային ածականական նշանակութիւն կ'արտայայտեն Էմըն, ըմմըն, Էմմիէկ, ալէկ բառերը: Սօսքի մէջ հանդէս կու գան ածականին յատուկ որոշիչի պաշտօնով, օր.՝ Էմըն տէօն զէր բուօր կուսա (ամէն տուն իր բակը ունի), ըմմըն անխուօրքը վիլվիցուօվ (ամբողջ աշխարհը պատեցաւ), Էմմիէկ կըտրէճ տիսու (ամէն մէկ կտրիճ տեսայ՝ հիացմունք արտայայտող երանգ ունի), ալէկ հէվիրը հա հէծօին (բոլոր հաւերը կ'ածեն) եւ այլն:

Միւսերը ունին ընդհանուր առարկայական գոյականական նշանակութիւն: Ասոնց ընդհանուր առարկայական նշանակութիւնը պայմանաւորուած է յօդառութեամբ՝ ըմմընքը, ըմմընքըս, ըմմընքըդ, կը հոլովուին ը՛ ընդհանուր հոլովումով: Սօսքի մէջ հանդէս կու գան գոյականին յատուկ շարահիւսական պաշտօններով: Օր.՝ ըմմընը քի (բոլորը քեզի), Էմմիէկս բան մը իսուօց (ամէն մէկուս գործ մը տուաւ), Էմըն բէնը՝ իտիչգը թըղ բարն ըննու (ամէն ինչի վերջը թող բարի ըլլայ), ալըննուօն եուօն կէրէն (բոլորով հոն էին) եւ այլն:

8.- Ժխտական դերանուններ

Քեսապի բարբառին մէջ ժխտական դերանուններու նշանակութեամբ ու դերով հանդէս կու գան հետեւեալները.- նա միէկ (ոչ մէկ), նա միէլ (ոչ մէկը), նա միէմը (ոչ մէկը), նա միէկ բան//նա բան մը//հի միէկ բան//հի բան մը (ոչ մէկ բան, ոչ բան մը), հի բան (ոչինչ): Նա (ոչ) եւ հի (քնաւ) բաղադրիչները թրքերէնէ փոխառեալ են:

Նա միէկ դերանունը ունի ածականական կիրառութիւն եւ կը դրուի գոյականներու վրայ՝ որոշիչի պաշտօնով, ինչպէս՝ նա միէկ վուօրդ ընծա կը հաատի (ոչ մէկ վարդ այսպէս կը բուրէ), նա միէկ տըղան կէր ի թանգտը (ոչ մէկ տղան թաղման կար): Նա միէլ ձեւը ունի գոյականական նշանակութիւն, կը հոլովուի ը՛ հասարակ հոլովումով եւ խօսքի մէջ հանդէս կու գայ գոյականին յատուկ շարահիւսական պաշտօններով: Օր.՝ նա միէլ չըլըսսի զը (ոչ մէկը կը լսէ զինք), նա միկա մէսի (ոչ մէկուն ըսէ՛) եւ այլն: Նա միէմը դերանունը նոյնպէս ունի անուանական նշանակութիւն. կը հոլովուի նոյն ձեւով. հոլովման ենթարկուող բաղադրիչն է միէ(կ), ինչպէս՝ նա միէլն մէսի (ոչ մէկուն ըսէ՛): Նա միէկ բան եւ յաջորդները ունին առարկայական նշանակութիւն.

կը հոլովուին. հոլովման կ'ենթարկուի բուն բաղադրիչը. նոյնանիչ են: Օր.՝ նա բան մը չէսի (ոչ մէկ բան ըսիր, ոչինչ ըսիր), հի բաննա մա հիւս (ոչ մէկ բանի կարօտ եմ) եւ այլն: Ժխտական դերանուններուն հետ սովորաբար ժխտական բայաձեւ կը գործածուի:

9.- Անորոշ դերանուններ

Բարբառիս անորոշ դերանուններն են հետեւեալները.- միէլ (մէկը), միէմը (մէկ մը՝ մէկը), դէրը (արաբ.՝ ուրիշ), քանը միէլ/քան միէլ (մէկ քանին), քան միէմը//քանը միէմը (քանի մը հատը), դէրը միէկ (ուրիշ մէկ՝ ուրիշը), պազը միէկ (իբրեւ «ոմանց մէջ մէկը». խօսքի մէջ կ'եւարտայայտէ «ոմանք» դերանուան եզակի իմաստը, իբրեւ ենթակայ՝ համաձայնելով եզակի ստորոգիչին հետ, ինչպէս՝ պազը միէկ կու գու, պազը միէկ՝ չիւ. աշխարհաբարի մէջ ասոր յոգնակին՝ «ոմանք կու գան, ոմանք՝ ոչ»: Այլը դերանունը ունի յատկանշային ածականական նշանակութիւն, իսկ միւսերը՝ գոյականական. կը հոլովուին միէկ (<մէկ) բառի տիպարով:

10.- Ստացական դերանուններ

Բարբառիս մէջ ստացական դերանունը կը կազմուի բառին սեռականին վրայ ը ձայնաւորը դնելով: Այդպիսով յատկացուցիչ սեռականը իր մէջ կ'առնէ յատկացեալ գոյականին իմաստը՝ արտայայտելով ստացականութեան դերանուանական նշանակութիւն: Օր.՝ իմ ծուօը ծաղկուօ ի (իմ ծառը ծաղկած է), բայց՝ իմը ծաղկուօ ի (իմը ծաղկած է): Այդպիսի գործածութեամբ հանդէս կրնան գալ նաեւ գոյականները, ինչպէս՝ պաղչէն ծուօը ծաղկուօ ի (պարտէզի ծառը ծաղկած է), բայց՝ պաղչէնը ծաղկուօ ի (պարտէզինը ծաղկած է): Հոս ը ձայնաւորը դրուած է որոշեալ սեռականին վրայ:

Այդպիսի ամբողջական շարքեր կը կազմեն ամէնէն առաջ անձնական դերանուններու Ա., Բ., եւ Գ. դէմքերու եզակին եւ յոգնակին: Այսպէս՝ իմը (իմը), միը (մերը), քուօյնը (քուկինը), ձիը (ձերը), էրը (իրը), իրինցը (իրենցը). ասոնք ունին նաեւ իրենց յոգնակին, որ կը կազմուի անձնական սեռականին վրայ ք յոգնակերտը, ապա ը ձայնաւորը դնելով, ինչպէս՝ իմքը (իմինները), միքը (մերինները), քուօյնքը (քուկինները), ձիքը (ձերինները), իրինցը (իրինցը եզակին չունի յոգնակի ձեւ): Ասոնք կը հոլովուին ը՛ հոլովումի որոշեալ ձեւով: Թեք հոլովաձեւերուն մէջ ք յոգնակերտին կը փոխարինէ նիը (ներ) յոգնակերտը. այսպէս՝

ուղդ. իմը (իմը)	իմքը (իմինները)	քուօյնը (քուկինը)
հայց. զիմը	զիմքը	ըզքուօյնը

սեռ. իմնէն (իմինին) իմնիրէն (իմիններուն) քուկինէն
 տր. իմնէն (իմինին) իմնիրէն (իմիններուն) քուկինէն
 բցո. եիմնիէն (իմինէն) եիմնիրիէն (իմիններէն) քուկինէն մինի
 գործ. իմնուօն (իմինով) իմնիրուօն (իմիններով) քուկինուօն
 ներգ. եիմը եիմքը ի քուօյնը

Միւս ստացականները կը հոլովուին վերի տիպարներով:

Դերանուանական հոլովումի ենթարկուող միւս բառերը ստացա-
 կան դերանունի նշանակութիւն ձեռք կը բերեն նոյն ձեւով՝ սեռականի
 վրայ ը աւելցնելով, ինչպէս՝ Էսթըր (ասորը), Էտթըր (ատորը), Էսթնցը
 (ասոնցը), Էտթնցը (ատոնցը) եւ այլն. ասոնք թեք հոլովածներ եւ
 յոգնակի չունին: Միայն օվ (ով) հարցական դերանունէն կայ նաեւ
 յոգնակի ստացական՝ առանց հոլովածներու՝ օմը (որունը), օմքը
 (որուններունը):

Գոյականներէն այսպիսի դերանուանական ձեւեր կրնան կազմել
 միայն անոնք, որոնք ը՛ հոլովումին կենսութարկուին: Ասոնց եզակի որոշ-
 եալ սեռականը կը դառնայ հիմք, որուն վրայ կ'աւելնայ ը ձայնաւորը:
 Ասոնք յոգնակի չունին, իսկ թեք ձեւերով գրեթէ չեն գործածուիր:
 Օր.՝ պնդչէն պուօտը փըլլուօծ ի, ճանփքէն պուօտը՝ չիը (պարտէզի
 պատը փլած է, ճամբու պատը՝ ոչ), բայց՝ պնդչէնը փըլլուօծ ի, ճանփ-
 քէնը՝ չիը (պարտէզինը փլած է, ճամբունը՝ ոչ): Երկրորդ նախադա-
 սութեան մէջ՝ պնդչէնը եւ ճամփքէնը բառերը կ'արտայայտեն նաեւ
 դերանուանական նշանակութիւն: Դասական թուականները գոյակա-
 նաբար գործածուելու պարագային կը հոլովուին այս ձեւը հիմք ըն-
 դունելով, բայց ատիկա կը գիտակցուի իբրեւ սովորական փոխանուն,
 ինչպէս՝ առջը՝ տէօնը (առաջին տունը), բայց առջէնը (առաջինը),
 հէնկինճը՝ ծուօտը (հինգերորդ ծառը), բայց՝ հէնկինճէնը (հինգերորդը)
 հէնկինճինուօն (հինգերորդով) եւ այլն:

Իբրեւ առանձին երեւոյթ յիշենք նաեւ, որ վընա յոգնակերտով
 կազմուած յոգնակիները ինքնին կ'արտայայտեն յոգնակի Գ. դէմքի
 ստացականութեան իմաստ, ինչպէս՝ ձառվընէն (իրենց ձեռքերը),
 վիտվընէն (իրենց ոտքերը): Ասոնք եւ վերոյիշեալ գոյականները կրնան
 ստանալ նաեւ ս եւ դ ստացական յօդերը, ինչպէս՝ պնդչէնը (պարտէ-
 զինը), պնդչէնըս (իմ պարտէզինը), պնդչէնըդ (քու պարտէզինը),
 ձառվընէս (մեր ձեռքերը), ձառվընէդ (ձեր ձեռքերը) եւ այլն:

Ե.- ԿԱՊ

Քեսապի բարբառի կապերը ըստ տեղի կ'ըլլան նախադրութիւններ
 եւ ետադրութիւններ: Հիտ (հետ) կապը կրնայ ըլլալ նախադաս եւ յե-
 տադաս՝ պահանջելով տարբեր խնդրառութիւն:

Ըստ արժէքի՝ կապերը կ'ըլլան իսկական եւ անիսկական: Միայն

հիտ եւ դէր կապերը անիսկական են, կրնան անկախ գործածուիլ, յօդ
 առնել եւ հոլովուիլ:

1.- Նախադրութիւններ՝ գ, ի (ե), ընտ, ընտըզ//ընծըս, ընծըր, դ,
 դըզ, ծըս, դըր//ծըր, քան//քանըր, դիբ, ընչըր//չըր, նըզը//նըզըր//
 դըզը//դըզըր, թապ, թա, դէր, հնզ, առունց, հիտ, պազը եւ այլն:

Նախադրութիւնները իրենց գործածութեամբ խառն ու հետաքրքր-
 րական վիճակ մը կը ներկայացնեն: Այս իմաստով անոնք չորս խումբի
 կարելի է վերածել ա) սովորական նախադրութիւններ՝ հիտ, առունց,
 դէր, քան եւ այլն. բ) հոլովակերտ նախդիրներ՝ գ, ի (ե). գ) միայն
 որոշ շարքեր ներկայացնող բառերու մէջ քարացած նախդիրներ, որոնք
 մեծ մասով կը շարունակեն պահել իրենց յարաբերութեան իմաստը՝
 ի, դ, ընտ, դիբ եւ այլն. դ) վերի գործածութիւններէն երկուքը կամ
 երեքը միասին ունեցող նախդիրներ՝ ի, քան եւ այլն:

Նախադրութիւնները սովորաբար կը պահանջեն ուղղական եւ հայ-
 ցական հոլովներով խնդրառութիւն, ոմանք՝ ներգոյական, իսկ կարգ
 մը դերանուններուն պարագային՝ տրական հոլովով խնդրառութիւն:

Ստորեւ նախադրութիւնները կը քննենք անջատաբար.

Ձ-ն բաղաձայնով սկսող բառերէ առաջ կրնայ ըլլալ ըզ, զըզ, կամ
 զըս: Հոլովակերտ նախդիր է. դերանուններու եւ որոշեալ գոյականներու
 ուղիղ ձեւին սկիզբը դրուելով՝ կը կազմէ հայցական հոլովը.- օվ՝
 զօվ, աս՝ զաս, տէօնը՝ ըզտէօնը, անձնական դերանուններու առաջին
 դէմքի եզակին ունի առանձին ձեւ.- իս՝ զէս, իսկ յոգնակին եւ Բ. դէմքի
 հայցական հոլովածները կը կազմուին տրականի հիման վրայ.- միր -
 մի՝ զըզմի, դէօն - քի՝ զըզքի, դէօք - ձի՝ զըզձի:

Ձ-ն ձեւով ունի դերանուանական նշանակութիւն եւ գործածութիւն.
 կեարտայայտէ խօսքի մէջ նախապէս յիշուած բառին իմաստը՝ եզակի
 Գ. դէմք, ուղիղ խնդիրի քերականական իմաստներով: Կը դրուի նախա-
 դասութեան վերջը՝ տիսունք զը (տեսանք զինքը):

Ձ նախդիրը կ'ենթադրուի լրացումին՝ անոր գոյութեան պարագային,
 ինչպէս քնդիցա զծնդէր, բայց՝ քնդիցա զըրդէն ծնդէր:

Ի (ե).- գերազանցապէս հոլովակերտ նախդիր է: Հանդէս կու
 գայ բացառական եւ ներգոյական հոլովներու կազմութեան մէջ:
 Ձայնաւորով սկսող բառերէ առաջ հանդէս կու գայ ե (չ) արտասա-
 նութեամբ եւ ուղղակի կը կցուի բառին: Բացառականի մէջ սովորաբար
 ձեւական ներկայութիւն մըն է, որովհետեւ ան ունի իր հոլովական
 վերջաւորութիւնը. հոս գրեթէ խամրած է անոր գործածութիւնը բաղա-
 ձայնով սկսող բառերէ առաջ, բայց ձայնաւորով սկսող բառերէ առաջ
 գրեթէ միշտ ներկայ է՝ (ի) ծառի, ետղբուրի: Ներգոյական հոլովը կը
 կազմէ դրուելով բառի ուղղական հոլովին սկիզբը՝ ի գիէղը, եւմանը.
 անձնական դերանունի Ա. դէմքի եզակին ունի ներգոյականի առանձին
 ձեւ.- իս՝ եէս, իսկ յոգնակին եւ Բ. դէմքի ձեւերը, ինչպէս եւ օվ հար-

ցականի նոյն Հոլովածու կը կազմուին տրական Հիմքի վրայ.- մինք - մի՛ իմի, դէօն - քի՛ իքի, դէօք - ձի՛ իձի, ձվ - օմ՛ եօմ: Ներգոյական Հոլովով դրուած բառը ցոյց կու տայ այն տեղը ա) ուր կը կատարուի գործողութիւնը եւ բ) դէպի ուր կ'ուղղուի գործողութիւնը:

Ի (ե) նախդիրը կ'երթայ լրացումին՝ ասոր գոյութեան պարագային, ինչպէս եճմնը (ամանին մէջ), բայց՝ եիմ էմնը, ի գիէղը, բայց՝ ի նըբը գիէղը: Իը//եը ձեւով ունի դերանուանական նշանակութիւն եւ գործածութիւն. կ'արտայայտէ խօսքի մէջ նախապէս յիշուած բառին իմաստը՝ եզակի Գ. դէմք, տեղի պարագայի եւ յանգման ու մատուցման անուղղակի խնդիրներու քերականական իմաստներով՝ Իջուք եր (իջանք մէջը), Հէսսմնք եր (Հասանք անոր):

Ի նախդիրը քարացած ձեւով Հանդէս կու գայ նաեւ իղնս, իղնո, իղնն (ի-դ-այս, այդ, այն) ցուցականներու եւ իվիր, իվնր (ի վեր, ի վար) բառերուն մէջ՝ անոնց տալով «դէպի» յարաբերութեան իմաստ: Այս բառերը ունին անիսկական կապերու գործածութիւն: Հ յաւելուածով կայ նաեւ Հիտէօն (տան մէջ, դէպի տուն) բառին մէջ: Քարացած ձեւով կայ եուօս, եուօք, եուօն ցուցականներուն մէջ. կրկնակ ձեւով՝ անոր այլ մէկ տարբերակին մէջ՝ իեուօս, իեուօք, իեուօն. վերջինը ունի նաեւ Հ յաւելուածով տարբերակ մը՝ Հիեուօս, Հիեուօք, Հիեուօն:

Ընտ, ընտըզ, ընծրս, ընծըր (պէս).- առաջինը գրաբարի ընդ նախդիրն է, որ Հնչիւնային անփոփոխ ձեւով պահուած կը թուի: Կը պահանջէ որոշեալ Հայցականով դրուած խնդիր՝ ընտ զիէչ (իչու պէս), ընտ զուօձ (օձի պէս): Շատ անգամ սակայն՝ կապին Հայցական խնդիրին զ նախդիրը ըզ ձեւով կ'արտասանուի նախդիրին Հետ՝ անոր տալով ընտըզ ձեւը, որ խօսքի մէջ իբրեւ անկախ բառ կը գիտակցուի, ինչպէս՝ ընտըզ կած (կայծի պէս), ընտըզ կարտէն (որոտումի պէս). այս պարագային կապի խնդիրը ունի ուղղական ձեւ: Ընտըզ կապին Համարժէք են ու անկէ կը ծագին ընծրս եւ ընծըր կապերը: Ասոնց մէջ առկայ է տ+զ>ժ օրինաչափ Հնչիւնափոխութիւն, առաջինին ըս վերջա-յանգը դժուար է բացատրել, Հաւանաբար կրկնուած զ նախդիրն է՝ տարնմանութեամբ առաջացած՝ ընզ+զ>ընծ+զ>ընծըզ>ընծըս. իսկ երկրորդը կազմուած է ընզ+ զ>ընծ+որ>ընծըր եղանակով: Օրինակներ՝ ընտըզ չէտ, ընծրս չէտ, ընծըր չէտ (ծիտի պէս): Ուրեմն՝ կը պահանջեն ուղղական խնդիր, իսկ կարգ մը դերանուններու պարագային՝ տրական խնդիր.- ընտըզ՝ քի, մի, ձի, ընծրս՝ քի, մի, ձի. ընծըր՝ քի, մի, ձի:

Ընտ նախադրութիւնը կարգ մը բառերու, յատկապէս ան, անտ, ան եւ ըսսու, իտու, ինու ցուցական դերանուններու եզակի եւ յոգնակի Հայցական Հոլովածուներուն, իսկ ընծըր նախադրութիւնը նոյն դերանուններուն ուղղական Հոլովածուներուն Հետ գործածուելով կ'առաջացնեն յարադիր բարդութիւններ, առաջին շարքի մէջ տ+ զ>ժ Հնչիւնափոխութեամբ մը՝

ընծան, ընծանտ, ընծան.

ընծէսմնք, ընծէտմնք, ընծէնմնք.
ընծըսսու, ընծիտու, ընծինու.
ընծըսսմնք, ընծիտմնք, ընծինմնք.
ընծըրան, ընծըրանտ, ընծըրան.
ընծըրէսմնք, ընծըրէտմնք, ընծըրէնմնք.
ընծըրըսսու, ընծըրիտու, ընծըրինու.
ընծըրըսսմնք, ընծըրիտմնք, ընծըրինմնք.

Սակայն անոնց մէջ չէ խամրած նախադրութեան արտայայտած յարաբերութեան իմաստը. այսու Հանդերձ, յատկապէս առաջին շարքի եզակիները կ'արտայայտեն ուղղակի յատկանիչ ցոյց տուող ցուցական դերանունի իմաստ՝ «այսպէս, այդպէս, այնպէս»: Վերի շարքերը ունին նաեւ իրենց սեռական Հոլովածուները՝ ընծէսմնք, ընծէտմնք, ընծէնմնք... եւ այլն: Վերջիններու մէջ դերանուանական բաղադրիչները փաստօրէն նախադրութեան Հայցական Հոլովով խնդիրին լրացումներն են, որոնք իբրեւ լրացում իրենց վրայ կ'առնեն խնդիրին զ նախդիրը, ինչպէս՝ զէօլը (ուլը), բայց զէսմն էօլը (ասոր ուլը). մէկ անգամ, որ այսպիսի դիրքով կը մօտենան ընտ նախադրութիւնն ու զ նախդիրով խնդիրի լրացումը՝ կեառաջանայ տ+զ>ժ Հնչիւնափոխութիւն ու կը ստեղծուի բարդութիւն ընտ զէօլը՝ ընտ էսմն զէօլը>ընտ զէսմն էօլը> ընծէսմն էօլը տիպարով:

Դ նախդիրը անկախ գործածութիւն չունի. քարացած ձեւով Հանդէս կու գայ քանի մը շարք բառերու մէջ, որոնց մէջ սակայն սովորաբար չի կորսնցներ իրեն յատուկ «դէպի» յարաբերութեան իմաստը: Այդ իմաստով ալ կը նոյնանայ բարբառի ընտ (<ընդ) նախդիրին Հետ: Դ-ի բաղադրութեամբ կազմուած բառերէն ոմանք կապեր են:

Դ նախադրութիւնը կը Հանդիպի Հետեւեալ քարացած կազմութիւններու սկիզբն ու մէջը.

ա.- ըսսու, իտու, ինու եւ ասոնց յոգնակիներուն սկիզբը՝ դըսսու, դիտու, դինու, դըսսմնք, դիտմնք, դինմնք. ունին նաեւ տրական ձեւ՝ դըսսմնր, դիտմնր, դինմնր, դիսսմնց, դիտմնց, դինմնց: Կ'արտայայտեն ուղղութիւն՝ բացառականի իմաստով, այսինքն՝ մօտաւորապէս՝ «ասկէ, ատկէ, անկէ, այստեղերէն, այդտեղերէն, այնտեղերէն»: Օր.՝ դըսսմնր անցուօզ (ասկէ անցաւ, դէպի այս կողմէն անցաւ), դըսսմնց զընուօց (այս կողմերէն, դէպի այս տեղերէն գնաց):

բ.- իղնս, իղնտ, իղնն (ի-դ-այս, այդ, այն). բոլորն ալ ցոյց կու տան գործողութեան յազման ուղղութիւնը «դէպի այս կողմը, դէպի այդ կողմը, դէպի այն կողմը» իմաստներով, ինչպէս՝ իղնն զընու (դէպի այն կողմ գնա՛, անդին գնա՛), իղնս էրի (դէպի այս կողմը եկո՛ւր, ասդին եկո՛ւր):

գ.- անձնական անդրադարձ դերանուններու ուղղական Հոլովածուներուն մէջ իարդէս, մինքըդմի, դէօնըդքի, դէօզըդձի, էնզըդէնկ, իրինքդիրինք: Դ-ին նախորդողը է Հնչիւնը դիրքային է:

դ.- փոխադարձ դերանուններու տրականին մէջ՝ դիրուօր, միէ-կըդմիէկ:

ե.- դար (դէպի ուր) Հարցականին մէջ:

զ.- դըզ, ծըս, դըր, ծըր նախադրութիւններուն մէջ, որոնց մասին տե՛ս քիչ մը անդին: Դ նախդիրը քարացած ու այլափոխուած ձեւով կայ նաեւ քանի մը այլ բառերու մէջ՝ մէօթըմէօթ (գիչերով, մութով), թէրկիլ (ընդհարկանել), թէրվիլ (ընդհարուիլ). վերջին բառերուն մէջ դ-ն հ-ին հետ օրինաչափօրէն տուած է թ:

Դըզ, ծըս, ծըր, դըր (պէս) Հոմանիչ են ընտրզ, ընծըս, ընծըր նախադրութիւններուն, կազմութեան ձեւով ալ մօտաւորապէս նոյնն են: Նախապէս, ընտ (<ընդ>) նախդիրի պէս՝ հաւանաբար դ նախդիրն ալ կը պահանջէր Հայցական Հոլովով խնդիր՝ դ ըզլուօյսը (լոյսին պէս), սակայն ժամանակի ընթացքին խնդիրի ըզ նախդիրը միանալով նախդիրին՝ կը կազմէ դըզ, որ իբրեւ անկախ նախդիր կը գիտակցուի ու կը պահանջէ ուղղական Հոլովով խնդիր, ինչպէս՝ դըզ լուօյս, (լոյսի պէս), դըզ ծուօն (ծառի պէս): Իսկ ծըս (դ+զ>ծ+զ>ծըզ>ծըս), ծըր (դ+զ>ծ+ռը>ծըր), դըր (դ+ռը>դըր) նախադրութիւնները սովորաբար կը պահեն Հայցական Հոլովով խնդրառութիւն՝ յատկապէս ձայնաւորով սկսող բառերու պարագային, ինչպէս՝ ծըս զիէշ, դըր զանդուօյր եւ այլն:

Քան (<քան՝ չափ) նախադրութիւնը կը պահանջէ Հայցական Հոլովով խնդիր, ինչպէս՝ քան ըզլիէուր (լերան չափ), քան լիէու մը (լերան մը չափ), քան զէնք (իրեն չափ), քան ըզքի (քեզի չափ): Քան նախադրութիւնը Հայցական Հոլովով խնդիրին հետ կեարտայայտէ Հաւասարութեան բաղդատականը, ածականի մը առկայութեամբ՝ ածականի առաւելութեան բաղդատականը՝ քան ըզմարը անդուր (մօրմէն աղուոր, աւելի աղուոր), իսկ ըմմըն եւ ալէկ բառերու առկայութեամբ՝ գերադրական աստիճանը, ինչպէս՝ քան զըմմընը անդուր // քան զալէր անդուր (ամէնէն աղուոր): Տե՛ս նաեւ «Ածական» բաժինը:

Քան եւ անոր առանձին գործածութիւն չունեցող քանծըր (<քան-զ-որ) ձեւը յարադիր բարդութիւններ կրնան կազմել ան, ան, ան եւ ըսու, իտու, ինու դերանուններուն եզակի եւ յոգնակի ձեւերուն հետ, առաջինը՝ անոնց Հայցական, իսկ երկրորդը՝ ուղղական Հոլովածեւերուն հետ. Հայցական բաղդարիչներուն զ նախդիրը կրնայ Հանդէս գալ նաեւ ծ ձեւով.

Քանծան, քանծատ, քանծան.

Քննզնանք, քննզտանք, քննզնանք.

Քննծրասու, քննծրատու, քննծրանու.

Քննծրասանք, քննծրատանք, քննծրանանք.

Քննծրան, քննծրանտ, քննծրան.

Քննծրնանք, քննծրնտանք, քննծրնանք.

Քննծրըսու, քննծրըտու, քննծրընու.

Քննծրըսանք...

Ասոնցմէ յատկապէս յոգնակի ձեւերը դեռ որոշապէս կը գիտակցուին իբրեւ կապի եւ կապական խնդիրի անկախ կապակցութիւններ, իսկ միւսերուն մէջ ամենեւին չէ խամրած կապի յարաբերութեան «չափ» նշանակութիւնը. սակայն մասնաւորաբար առաջին շարքի եզակիները կը գիտակցուին իբրեւ անկախ բառեր՝ չափ ու քանակ ցոյց տուող ցուցականներու իմաստով՝ «այսքան, այդքան, այնքան»: Կան նաեւ այս շարքերուն սեռականաձեւ կազմութիւնները՝ քննծրասանք, քննծրատանք, քննծրանանք... ուր ցուցական բաղդարիչը քան կապի Հայցական Հոլովով խնդիրին լրացումն է, որ իր վրայ կ'առնէ զ>ժ նախդիրը, ինչպէս՝ քան ըզձաուր (ձեռքին չափ), բայց՝ քան զըսասանք ձաուր - քննծրասանք ձաուր:

Քանը, քննը (<քանի, քանի որ) նախադրութիւնները ունին քան կապի իմաստը, բայց անոնց խնդիրը զ նախդիրը չ'առնեն՝ քանը մուօրդ մը, քննը մուօրդ մի (մարդու չափ է): Ունին նաեւ ժամանակ արտայայտող «ի վեր» կապի իմաստը, բայց կը գործածուին դիմաւոր բայերու հետ, քանը իկուօժ ի՝ դարձի չըննի (գալէն ի վեր դուրս չ'ելլեր): Այսպէս ժամանակ արտայայտող գոյականներու ուղղական ձեւին հետ կ'արտայայտեն գործողութեան ելման ժամանակի պարագայի պաշտօն՝ քանը եիէ՞ք չըրվընուօն (երբուրնէ՞ չես երեւիր), քննը եիէ՞ք մի չուգուօն (երբուրնէ՞ մեզի չես գար), քանը կանգնու հիվանտ ի (կանգնուի ի վեր հիւանդ է): Նոյն հիմքէն կայ նաեւ քննէրմը բառը, որ Հանդէս կու գայ միայն ստորադասական շաղկապի դերով՝ «փոխանակ, փոխարէն» իմաստով, ինչպէս՝ քննէրմը խուսէս եարտըմի ըզմի (փոխանակ խօսիս՝ օգնէ՛ մեզի):

Դիբ (<դէպ) - Համարժէք է բարբառիս դ նախդիրին. անկախ գործածութիւն չունի. քարացած վիճակով կայ դիբան, դիբատ, դիբան ցուցականներու շարքին մէջ, ուր պահած է «դէպի» յարաբերութեան իմաստը՝ «դէպի այս կողմը, դէպի այդ կողմը, դէպի այն կողմը»: Օր.՝ դիբան էրի (դէպի այս կողմը եկու՛ր):

Դըզը//նըզը (թրք.՝ թաքի) գուգաձեւ կապը կը համապատասխանէ Հայերէնի «մինչեւ» կապին: Կը պահանջէ ներգոյական Հոլովով խնդրառութիւն, որ գոյականներու պարագային երբեմն կրնայ ըլլալ ուղղականաձեւ, իսկ անձնական դերանուններու պարագային՝ երբեմն տրականաձեւ, ինչպէս՝ նըզը եախըրը (մինչեւ ախորը), նըզը քննըօք (մինչեւ քաղաք), նըզը իքի, նըզը քի (մինչեւ քեզի):

Նըզըր//դըզըր կցական բարդութիւնները ստորադասական շաղկապներ են:

Պանը (թրք.՝ քաք) կապը կը պահանջէ՝ դերանուններէն Հայցական, իսկ գոյականներէն ուղղականաձեւ Հայցական (առանց զ նախ-

դիրի) խնդրառութիւն, ինչպէս՝ պաճը զէս իկի (ինձմէ ետք եկար), պաճը Մէրգունը գէձի (Սարգիսէն ետք գացիր):

Պաճը եւ կրկնաւոր ձեւը՝ պաճը-պաճը ունին նաեւ մակբայական կիրառութիւններ՝ «երբեմն» իմաստով, ինչպէս՝ պաճը էրի. պաճը-պաճը էրի. (երբեմն եկո՛ւր): Պաճան ձեւը կը գործածուի «յետոյ» իմաստով՝ պաճան էրի (յետոյ եկո՛ւր): Պաճը ունի նաեւ դերանուանական նշանակութիւն, երբ հանդէս կու գայ միէկ (մէկ) բառին իբրեւ լրացում՝ պաճը միէկ. կապակցութիւնը կ'արտայայտէ «ոմանք» դերանունին եզակի իմաստը՝ պաճը միէկ սէօտ կը խուսա, պաճը միէկ ուղուրդ (մէկը կամ ինչ որ մէկը սուտ կը խօսի, ինչ որ մէկը՝ շիտակ): Միէկ բաղադրիչին տեղ կրնայ դրուիլ որեւէ գոյական, ինչպէս՝ պաճը մուօրդ, պաճը կիւնէկ, պաճը տէօն եւ այլն:

Թա (պրսկ.՝ դէպի) նախադրութիւնը կը պահանջէ ներգոյական Հոլովով խնդիր, ինչպէս Թա եէս էրի (դէպի ինծի եկո՛ւր), Թա եանն Հնատի (դէպի այն թեքի՛ր), Թա եանդբուօյրը գընուօց (դէպի աղբիւրը գնաց):

Հիտ (<հետ).- ունի նախադաս եւ յետադաս գործածութիւններ: Իբրեւ նախադաս կապ գոյականներէն կը պահանջէ ուղղական, իսկ կարգ մը դերանուններէ՝ տրական Հոլովով խնդրառութիւն, ինչպէս՝ հիտ մարը գընուօց (մօրը հետ գնաց), հիտ ինծիկ չըխուսա (ինծի հետ չի խօսիր). իբրեւ յետադաս՝ կը պահանջէ սեռական Հոլովով խնդրառութիւն, ինչպէս՝ իմ հիտ, մուօրը հիտ եւ այլն: Անհսկական կապ է, յօդ կ'առնէ, կը Հոլովուի եզակի եւ յօգնակի թիւերով:

Առունց (<առանց).- անձնական դերանուններու Ա. եւ Բ. դէմքերէն գուգաձեւաբար հայցական եւ տրական, իսկ միւս բառերէն ուղղական եւ տրական Հոլովով խնդրառութիւն կը պահանջէ, ինչպէս՝ առունց զէս//առունց ինծի, առունց մար//առունց մուօր: Իսկական կապ է:

Ղէր (արար.՝ գատ, բացի) նախադրութիւնը կը պահանջէ հայցական Հոլովով խնդրառութիւն, ինչպէս՝ ղէր զան չիկու (ասկէ բացի չկայ), ղէր ըզմարը միէր չունա (մօրմէն գատ մէկը չունի):

Հանգ (մօտ, քով).- նախադաս իսկական կապ է: Գոյականներէն ուղղական, իսկ անձնական դերանուններէն (Ա. եւ Բ. դէմք) տրական խնդիր կը պահանջէ: Օր.՝ հազ մարը գընուօձ (մօրը գնաց, մօրը մօտ գնաց), հանգ ձի անցունք (ձեզի անցանք):

2.- Ետադրութիւնները ընդհանրապէս անհսկական կապեր են: Միայն Հնուօր (<համար) կապը իսկական է, միւսերուն պէս անկախ գործածուիլ, յօդ առնել եւ Հոլովուիլ չի կրնար:

Ետադրութիւններէն ոմանք կրնան երկրորդաբար նախադաս գործածուիլ՝ յատկապէս խաղիկներու մէջ, առանց խնդրառութեան մէջ փոփոխութիւն մը առաջացնելու, ինչպէս՝ գըրը՝ վիրիվ, բայց՝ վիրիվ գըրէն (գիւղի վերեւ): Կապին նախադաս գործածութեան պարագային՝ կապի խնդիրը անպայման յօդ կ'առնէ: Նախադաս կրնան գործածուիլ նըրքիվ, վիրիվ, միէջ եւ այլն:

Ետադրութիւնները կազմութեամբ կ'ըլլան պարզ ու բաղադրեալ: Բաղադրեալ են՝ վըռք (ոռ-ք՝ տակ), իտիչգ (ետ բառէն), դարիցի (դուրս), նըքսի (ներս), իվիր, իվար (ի վեր, ի վար), դարվար (դար-վար), դարվիր (դարվեր), չըրդէ (չորս դի՛ շուրջ), դէս, դէն (դի-ս, -ն), իղաս, իղան (ի-դ-այս, ի-դ- այն) եւ այլն: Հին հայերէնի տարբեր Հոլովաձեւերէն յառաջացած քարացած ետադրութիւններ են՝ կիւնուօց (կենօք՝ վիճակով), նըրքիվ, վիրիվ, առջիվ եւ այլն:

Բարբառիս մէջ կարգ մը բառերու բացառական եւ գործիական Հոլովաձեւերը երբեմն կորսնցնելով իրենց նիւթական նշանակութիւնները՝ հանդէս կու գան կապական դերով, ինչպէս՝ էր ձառուօն (իր ձեռքով՝ միջոցով), էր եիրիսուօց (իր երեսէն՝ պատճառով) եւ այլն:

Ետադրութիւնները կը պահանջեն սեռական, տրական եւ բացառական Հոլովով խնդրառութիւն:

Տարածական իմաստ արտայայտող կապերը, ինչպէս՝ առջիվ, իտիվ, վըռք, միէջ, խանց (քով) եւ այլն, կրնան յօդ առնել ու Հոլովուիլ պահելով իրենց կապական դերը:

Սեռական Հոլովով խնդիր պահանջող ետադրութիւններ.- Հնուօր (համար), մուօտ, մասկէկ (<մօտ, մօտիկ), դիէմ (<դէմ): Փոխառութիւններէն յիշենք՝ կարչա (հակառակ, դէմ), կէօրան (համեմատ), պատան (փոխարէն) եւ այլն:

Բացառական Հոլովով խնդիր պահանջող ետադրութիւններ են իվիր, իվար, դարվիր, դարվար, իտիչգ (ետք), դուրիցի (դուրս), նըքսի (ներս), դէս, դէն, իղաս, իղան, հառոս, եառանձ (առաջ), էվիլան (աւելի), սօնրա (թրք.՝ ետք) եւ այլն: Ասոնք ունին նաեւ մակբայական գործածութիւններ:

Ձ.- ԲԱՅ

1.- Բայանուն

Քեսապի բարբառի բայի ելակէտային ցուցիչը իլ մասնիկն է: Բայանունը կամ անորոշ դերբայը միշտ կը վերջանայ այս մասնիկով: Օր.՝ բերել>բիրիլ, բռնել>բըռնիլ, փոխել>փըխիլ, գտանել>գըռնիլ, խօսիլ>խուսիլ, վաստակիլ>վէսկիլ, աճիլ>աճիլ, խաղալ>խաղիլ,

իմանալ>իմնիլ, բանալ>բնիլ, բարձրանալ>բանձըրնիլ, լնուլ>լըննիլ, գենուլ>գինիլ, թողուլ>թուղիլ եւ այլն:

Բարբառս չունի միավանկ անորոշ դերբայներ: Գրաբարի տալ, գալ, լալ բայերը սկիզբը ունին ու ածականը՝ ուգիլ, ուլիլ, իսկ առաջինը՝ տըվիլ ձեւը, հաւանաբար խուսափելու համար ուտել>ուտիլ բային հետ նոյնանալէն:

Սոնարհումի ատեն բայի անորոշ դերբայի իլ ցուցիչ մասնիկը կը փոխարինուի դերբայական եւ բայական ժամանակային այլ վերջաւորութիւններով:

2.- Սոսկածանցաւոր բայեր

Բարբառս պահած է միայն ն սոսկածանցը, որ կրնայ ունենալ էն եւ ըն ձեւերը որոշ բայերու մէջ: Սոսկածանցաւոր բայերը, ընդհանուր հայերէնի նման, բայի խոնարհման անցեալ կատարեալի հիմքի ժամանակներուն մէջ կը կորսնցնեն իրենց ն սոսկածանցը:

Ն սոսկածանցաւոր բայերը կազմաւորուած են գրաբարի ն, են, ան սոսկածանցաւոր բայերու անցումով, ինչպէս՝ առնուլ>առնիլ, իմանալ>իմնիլ, տեսանել>տեսնիլ, բարձրանալ>բանձըրնիլ, մեռանիլ>մառնիլ, գիտենալ>գիտնիլ: Էն եւ ըն ձեւերը, որոնց մէջ ձայնաւորի սղման երեւոյթը իր աւարտին չէ հասած, առաջացած են ան եւ են սոսկածանցներէն, փոխանցուած են անոնցմէ կամ տեղ գտած բարբառային կազմութիւններու մէջ, ինչպէս՝ հեռանալ>հառւլընիլ, մօտենալ>մօտկընիլ, բարականալ>բէրկընիլ, պըզկընիլ (պզտիկնալ), պըրըրընիլ (պըրրա՝ արաբ. վայրի դառնալ), գիտենալ>գիտնիլ, կշտանալ>կըշտէնիլ:

Որոշ բայերու մէջ նկատելի է նաեւ ն սոսկածանցի կրկնութիւն, ինչպէս՝ լնուլ>լըննիլ, գտանել>գըննիլ, մտանել>մըննիլ եւ այլն:

Կարգ մը բայեր կորսնցուցած են իրենց սոսկածանցները ու վերածուած՝ պարզ բայերու, ինչպէս՝ արբենալ>հէրբիլ, յամենալ>հիմիլ, իսկ պարզ բայեր վերածուած են սոսկածանցաւոր բայերու, ինչպէս՝ յաւելուլ>լըվնիլ, երեւիլ>ըրվընիլ, դադարիլ>դէդըրնիլ, կարօտիլ>կէրվընիլ եւ այլն:

Որպէս ընդհանուր երեւոյթ, գրաբարի նչ եւ չ սոսկածանցաւոր բայերը կորսնցուցած են իրենց սոսկածանցները ու վերածուած պարզ բայերու, ինչպէս՝ փախչիլ>փախիլ, թռչիլ>թըռուիլ, փակչիլ>փակիլ, խրտչիլ>խըրտիլ եւ այլն: Երկու բայերու մէջ չ գրաբարեան սոսկածանցը պահպանուած է՝ ըմբռնուելով իբրեւ արմատական հնչիւն, որ եւ կը մնայ խոնարհումի անցեալ կատարեալի հիմք ունեցող բայական ժամանակներու մէջ եւս, ինչպէս՝ հանգչիլ>հնմչիլ՝ հնմչիցու, պոռալ>պառչիլ՝ պառչիցա:

Բայը, գրաբարի պէս, խոնարհումի երկու հիմք ունի՝ ներկայի եւ անցեալ կատարեալի: Սոսկածանցաւոր բայերը ներկայի հիմքէն կազմուած ձեւերուն մէջ կը պահեն սոսկածանցները, իսկ կատարեալի հիմքէն կազմուած ձեւերուն մէջ՝ ոչ:

Ներկայի հիմքէն կը կազմուին անորոշ, ժխտական, ապառնի, պարագայական, Ա. եւ Բ. խոնարհումներու ենթարկուող բայերու ենթակայական, Ա. խոնարհումի պարզ բայերու վաղակատար եւ յարակատար դերբայները, սահմանական, ստորադասական, պայմանական, հարկադրական եւ ըղձական եղանակներու ներկայ եւ անցեալ անկատար ժամանակները, ինչպէս նաեւ արգելականը:

Կատարեալի հիմքէն կը կազմուին Ա. խոնարհումի սոսկածանցաւոր եւ միւս խոնարհումներուն ենթարկուող բայերու յարակատար եւ վաղակատար դերբայները, Գ. խոնարհումի բայերուն ենթակայական դերբայը, սահմանական եղանակի անցեալ անկատար ժամանակները, ինչպէս նաեւ արգելականը:

Կատարեալի հիմքէն կը կազմուին Ա. խոնարհումի սոսկածանցաւոր եւ միւս խոնարհումներուն ենթարկուող բայերու յարակատար եւ վաղակատար դերբայները, Գ. խոնարհումի բայերուն ենթակայական դերբայը, սահմանական եղանակի անցեալ կատարեալ ժամանակն ու հրամայական եղանակը:

4.- Դերբայներ

Բարբառը ունի անորոշ, պարագայական, ապառնի, յարակատար, վաղակատար, ենթակայական եւ ժխտական դերբայներ:

ա.- Անորոշ դերբայ

Ասիկա բային ելակէտային ձեւն է՝ բայանունը: Կը կազմուի ներկայի հիմքին վրայ իլ աւելցնելով: Գրաբարի չորս լծորդութիւնները բարբառի անորոշին մէջ կը նոյնանան վերջաւորութեամբ: Օր.՝ վազել>վէզլիլ, գնել>գընիլ, դնել>դընիլ, ծաղկիլ>ծաղկիլ, մարիլ>միրիլ, նստիլ>նըստիլ, մերկանալ>մէրկընիլ, լողալ>լուղիլ, խնդալ>խընտիլ, թողուլ>թուղիլ, առնուլ>առնիլ եւ այլն:

Անորոշ դերբայը բայական եղանակային ձեւեր չի կազմեր: Ան, որպէս բայանուն, յօդ կը ստանայ ու կը հոլովուի ը՛ արտաքին թեքումի հոլովումով՝ խօսքի մէջ հանդէս գալով գոյականին յատուկ շարահիւսական պաշտօններով: Յոգնակի չունի: Ստորեւ անորոշ դերբայի հոլովական յարացոյցը.

	անրչ.	որչ.
ուղղ.	վէզգիլ (վազել)	վէզգիլը
Հայց.	վէզգիլ	ըզվէզգիլը
սեռ.	վէզգիլը'	վէզգիլէն
տր.	վէզգիլի	վէզգիլէն
բցո.	վէզգիլի	վէզգիլիէն
գործ.	վէզգիլուօն	վէզգիլուօն
ներգ.	-	-

Անորոշ դերբայի տրական Հոլովածներ կը նոյնանայ ապառնի դերբային Հետ:

Անորոշ դերբայը Հիմք կը դառնայ պարագայական եւ ապառնի դերբայներու կազմութեան մէջ:

բ.- Պարագայական դերբայ

Այս անունին տակ կը դնենք երկու ձեւեր: Երկուքն ալ բարբառային կազմութիւններ են, առաջացած անորոշ դերբայէն: Անոնք եղանակային ձեւեր չեն կազմեր, ունին գոյականական ու մակբայական նշանակութիւններ եւ խօսքի մէջ Հանդէս կու գան գլխաւորաբար պարագայական խնդիրի պաշտօններով: Այդ իսկ պատճառով յարմար նկատեցինք պարագայական դերբայ անուանումը:

Առաջին ձեւը կազմուած է անորոշ դերբային վրայ էօտը (ուտ-ը) աւելցնելով: Էօտը ածանցը կրնան ստանալ նաեւ գոյականներ. տե՛ս «Ածանցումը» բաժինը: Այս կազմութիւնները, ինչպէս ը յօդը ցոյց կու տայ, կ'արտայայտեն գոյականական նշանակութիւն: Բարբառիս մէջ անոնցմով կը կազմեն տոհմիկ խաղերու անունները: Չեն Հոլովուիր, յոգնակի չունին, իրենց ուղիղ ձեւով Հանդէս կու գան գոյականի եզակի ուղղականի պաշտօններով: Այսուհանդերձ՝ անոնց մէջ ընդհանուր ու Հիմնական է գործողութեան պայմանի կամ գրաւի իմաստը, ինչպէս՝ շնորհիւ էօտը (չուտտիլ՝ վազել-էօտը, վազելու վրայ դրուած պայման կամ գրաւ), խումիլ էօտը (խումիլ-էօտը՝ խմելու գրաւով կամ պայմանով), քիչտիլ էօտը (քիչտիլ՝ Հարուածել-էօտը, Հարուածելու գրաւով կամ պայմանով), ինչպէս եւ՝ պառկիլ էօտը, պառչիլ էօտը եւ այլն: Սօսքի մէջ, բացի գոյականին ուղիղ ձեւին յատուկ պաշտօններէն, կ'արտայայտէ պայմանի պարագայի իմաստ, ինչպէս՝ շնորհիլ էօտը Հա խաղուն (վազելու պայմանով կը խաղան), խումիլ էօտը Հա դէտէն (խմելու՝ արբենալու պայմանով կ'աշխատին) եւ այլն:

Երկրորդ ձեւը կազմուած է անորոշ դերբային վրայ նիքան մասնիկը աւելցնելով: Մասնիկին քան վերջամասը Հաւանաբար թրքերէնի ներկայ դերբայի ցուցիչն է: Բարբառիս մէջ բառաձեւը կ'արտայայտէ տուեալ գործողութիւնը կատարուած պահուն ընդհանուր նշանակութիւնը: Օր.՝ գրելիքան (գրելու ատեն), կարդիլիքան (կարդալու ատեն), աստիլիքան (ուտելու ատեն), քիլիլիքան (քալելու ատեն) եւ այլն:

կը Համապատասխանեն արեւելահայերէնի ներկայ դերբային՝ գրելիս, կարդալիս, ուտելիս, քայլելիս եւ այլն: Բայց եղանակային ձեւեր չեն կազմեր, ունին մակբայական նշանակութիւն եւ խօսքի մէջ Հանդէս կու գան ժամանակի պարագայի շարահիւսական պաշտօնով, ինչպէս՝ ուրթիլիքան գէնք տիսու (երթալու ատեն գինք տեսայ), պառկիլիքան ուօձը խութիլ ի զը (քնացած պահուն օձը խայթեր է գինք) եւ այլն:

գ.- Ապառնի դերբայ

Ապառնի դերբայը բարբառիս մէջ ունի եւս երկու ձեւեր:

Առաջին ձեւը կը կազմուի անորոշին վրայ ան նիքով, ինչպէս՝ վէզգիլ - վէզգիլի, խումիլ - խումիլի, ուտիլ - աստիլ, աստիլ - աստիլի, խընտիլ - խընտիլի եւ այլն: Զեւով կը նոյնանայ անորոշ դերբայի տրական Հոլովածին:

Ապառնի դերբայի այս ձեւը օժանդակ բայի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներուն Հետ կը կազմէ եղանակային բաղադրեալ ձեւեր: Այս բայերը կ'արտայայտեն ապառնի գործողութիւն մը, որ իրականութեան մէջ որոշ նախանշաններու Հետեւանք է: Ան ոչ թէ պարզապէս պիտի կատարուի, ինչպէս սահմանականի ապառնի ժամանակը՝ պիտի փլիչալը փըլլի, պիտի սատկիչալը սասկի, պիտի երթայչալը ուրթու, ոչ ալ Հարկադրաբար պիտի կատարուի, ինչպէս ցոյց կու տան բարբառիս Հարկադրական եղանակին ժամանակները, ինչպէս՝ պիտի փըլլի (պէտք է փլի), պիտի սասկի (պէտք է սատկի), պիտի ուրթու (պէտք է երթայ), այլ որոշապէս կատարուելու սահմանուած գործողութիւն մըն է, ինչպէս՝ պուօտը փըլլիլի եի (պատը փլելու վրայ է. նկատի ունի պատին ուռեցքը, ճեղքերը եւ այլն), իչը սստկիլիլի եի (չը սատկելու վրայ է. նկատի ունի անոր ծանրօրէն Հիւանդ վիճակը), ուրթիլիլի իս (երթալու վրայ ես. նկատի ունի ժամանակը, խօսակիցին պատրաստութիւնը) եւ այլն:

Ապառնի դերբայը չունի ածականական կիրառութիւններ: Այդ նշանակութեամբ կը գործածուի անորոշ դերբայի սեռականը, որ ազատօրէն կը գործածուի գոյականներուն Հետ՝ որոշիչի պաշտօնով: Օր.՝ խումիլը՝ ջէօր (խմելու ջուր), ուտիլը՝ Հուօց (ուտելու Հաց) եւ այլն:

Կարգ մը բայերու ապառնի դերբայները ձեռք ձգած են գոյականական առարկայական նշանակութիւններ, ինչպէս՝ աստիլի (ուտելիք, կերակուր), կըրգիլի (գործելի՝ փայտածուխ) եւ այլն:

Ապառնի դերբայի երկրորդ ձեւը կը կազմուի անորոշ դերբային վրայ էք (էք) աւելցնելով, ինչպէս՝ խումիլ - խումիլէք, աստիլ - աստիլէք, աստիլ - աստիլէք, խընտիլ - խընտիլէք եւ այլն:

Ապառնի դերբայի այս ձեւը գրեթէ կորսնցուցած է իր դերբայական նշանակութիւնը ու եղանակային ձեւեր չի կազմեր: Ունի անկախ գործածութիւն: Հանդէս կու գայ ածականական որոշչային եւ անուա-

նական գոյականական կիրառութիւններով, վերջին պարագային կը ստանայ յօդ ու կը հոլովուի ը' անուանական հոլովումով, յոգնակի թիւ կ'ունենայ:

դ.- Վաղակատար դերբայ

Վաղակատար դերբայը կը կազմուի իր (<եր> ցուցիչի միջոցով, որ կը դրուի ա) առաջին խոնարհումի պարզ բայերու ներկայի հիմքի վրայ, ինչպէս՝ գինիմ (<գինեմ>) - գինիր, գըրիմ (<գրեմ>) - գըրիր, վառիմ (<վառեմ>) - վառիր, վէզիմ (<վազեմ>) - վէզիր եւ այլն. եւ բ) առաջին խոնարհումի սոսկածանցաւոր եւ միւս բոլոր խոնարհումներու բայերուն անցեալ կատարեալի հիմքի վրայ, ինչպէս՝ առնիմ (առնում) - առիր, նըննեմ (<գտանեմ>) - նընտիր, մըննեմ (<մտանեմ>) - մըտիր, սիվնում (<սեւանամ>) - սիվցիր, խաղում (<խաղամ>) - խախցիր եւ այլն:

Վաղակատար դերբայը անկախ գործածութիւն չունի: Ան օժանդակ բայի ներկայ ժամանակի ձեւերուն հետ կը կազմէ վաղակատարի ներկան, ինչպէս՝ նըտիրիմ (գտեր եմ), նըտիրիս (գտեր ես), նըտիրի (գտեր է), նըտիրինք (գտեր ենք), նըտիրէք (գտեր էք), նըտիրին (գտեր են):

Վաղակատար դերբայը չի գործածուիր օժանդակ բայի անցեալ անկատար ձեւերուն հետ, հետեւաբար անկատարի ձեւեր չունի:

Վաղակատար դերբայը հանդէս կու գայ նաեւ երկրորդական բաղադրեալ ժամանակներու կազմութեան մէջ:

ե.- Յարակատար դերբայ

Յարակատար դերբայը կը կազմուի ուօծ (<ած> ցուցիչով, որ կը դրուի բայերու վերոյիշեալ վաղակատարի հիմքերուն վրայ: Օր.՝ Ֆիթիմ (<վայթեմ>) - Ֆիթուօծ, վէզիմ (<վազել>) - վէզուօծ, բըռնիմ (<բռնեմ>) - բըռնուօծ, փնխեմ (<փախչիմ>) - փնխուօծ, թըռուեմ (<թռչիմ>) - թըռուօծ, խաղում (խաղամ) - խախցուօծ, մնտկընում (<մօտկանամ>) - մնտկըցուօծ եւ այլն:

Յարակատար դերբայը գործածուելով օժանդակ բայի ներկայի եւ անկատարի հետ՝ կը կազմէ սահմանական եղանակի յարակատար ներկայ եւ յարակատար անցեալ անկատար ժամանակներու ձեւերը, ինչպէս՝ բիրուօծիմ (բերած եմ), բիրուօծիս (բերած ես), բիրուօծի (բերած է), բիրուօծինք (բերած ենք), բիրուօծէք (բերած էք), բիրուօծին (բերած են):

Յարակատար դերբայը ունի նաեւ ածականական նշանակութիւն եւ որպէս այդպիսին կրնայ անկախ կերպով գործածուիլ ու հանդէս գալ որոշիչի շարահիւսական պաշտօնով, ինչպէս՝ փըլլուօծ տէօն (փլած տուն), շուխցուօծ ջէօր (տաքցած ջուր), էծիլուօծ իրիս (ածիլած երես) եւ այլն: Կրնայ նաեւ գոյականաբար գործածուիլ, յօդ առնել,

հոլովուիլ ը' հոլովումով, յոգնակի ունենալ եւ խօսքի մէջ հանդէս գալ գոյականին յատուկ շարահիւսական պաշտօններով:

զ.- Ենթակայական դերբայ

Ենթակայական դերբայը կը կազմուի ուօղ (<ող> ցուցիչով, որ կը դրուի ա) առաջին եւ երկրորդ խոնարհումներու բայերու ներկայի, իսկ բ) երրորդ խոնարհումի բայերու անցեալ կատարեալի հիմքերու վրայ, ինչպէս՝ գըրիմ (<գրեմ>) - գըրուօղ, քիլիմ (<քայլեմ>) - քիլուօղ, տըսնեմ (<տեսնեմ>) - տըսնուօղ, փնխեմ (<փախչիմ>) - փնխուօղ, էվտում (<հաւատամ>) - էվտեցուօղ, կարդում (<կարդամ>) - կարդացուօղ եւ այլն:

Ենթակայական դերբայը բայական ժամանակներու կազմութեան չի մասնակցիր: Ան ունի ածականական որոշչային եւ անուանական գոյականական նշանակութիւններ. վերջին պարագային կրնայ յօդ ստանալ, հոլովուիլ ը' հոլովումով, յոգնակի կազմել: Խօսքի մէջ հանդէս կու գայ որոշիչի եւ գոյականին յատուկ շարահիւսական պաշտօններով:

Յարակատար եւ ենթակայական վերոյիշեալ ձեւերէն բացի, բարբառս նոյն իմաստները արտայայտող երկու մասնակի ձեւեր եւս ունի:

Առաջին ձեւը կը կազմուի բայահիմքերու վրայ օկ/օկ/էօկ (<ուկ> աւելցնելով: Այս ձեւը գլխաւորաբար կ'արտայայտէ յարակատար դերբայի, իսկ երբեմն նաեւ ենթակայական դերբայի կամ երկուքին իմաստները միաժամանակ, օրինակ՝ պառկօկ (պառկած, պառկած վիճակով), նըստէօկ (նստած, նստած վիճակով), անցօկ (անցած, նաեւ անցնող), Ֆիթէօկ (թափած, նաեւ՝ թափող), մըթնէօկ (մթնած), վառօկ (վառել բայէն՝ վառող, կծող, կծու) եւ այլն:

Երկրորդ ձեւը կը կազմուի բայահիմքերուն վրայ նն/ուն (ան) ածանցը աւելցնելով: Այս ձեւը կ'արտայայտէ ենթակայական դերբայի իմաստը, ինչպէս՝ թըռուն (թռչող), միթն (ճայթող՝ պայթող), ծըննն (ծընող), նըռուն (կռագող) եւ այլն:

Անոնք եղանակային ձեւեր չեն կազմեր, միայն սահմանափակ թիւով բայահիմքերէ կազմուած ածանցումներ են: Առաջինները ունին ածականական եւ մակբայական նշանակութիւններ եւ խօսքի մէջ հանդէս կու գան որոշիչի եւ ձեւի պարագայի շարահիւսական պաշտօններով, ինչպէս՝ անցօկ բնիրը չըն խուսէր (անցած բաները չեն խօսիր), վառօկ հէմիմ քնդիցն (կծու պղպեղ քաղեցի), կուօվը նըստէօկ կը կըթիին (կովը նստած վիճակով կը կթեն), թօխըը պառկօկ հա կարդու (գիրքը պառկած վիճակով կը կարդայ) եւ այլն: Երկրորդ ձեւերը ունին ածականական նշանակութիւն եւ խօսքի մէջ հանդէս կու գան որոշիչի պաշտօնով, ինչպէս՝ թըռուն ձուօղ (թռչող ձագ՝ թռչուն), ծըննն կուօկ (ծնող կով) եւլ.: Երկու ձեւերն ալ կրնան գործածուիլ գոյականաբար, իսկ ոմանք արդէն ձեռք ձգած են առարկայական նշանակութիւն, ինչպէս՝ մթնէօկ (իրիկուն), Ֆըռուօկ (Փոռիլ՝ դառնալ բայէն,

Հոյ), ճիթուն (Հրացան), կըռուուն (ազուա) եւ այլն:

է.- Ժխտական դերբայ

Ժխտական դերբային համար տե՛ս «Ժխտական խոնարհում» բաժինը:

Ե.- Խոնարհումներ

Բայը ունի չորս խոնարհումներ, որոնք իրենց ծագմամբ կը նույնանան գրաբարի խոնարհումներուն: Բայի խոնարհումը կարելի չէ որոշել կամ ճանչնալ անորոշ դերբայէն, որովհետեւ ան միաձեւ է բոլոր բայերուն համար ու կը վերջանայ իլ ցուցիչով: Բայի խոնարհումին տեսակը կրնայ ճանչցուիլ միայն անոր դիմաւոր ձեւերէն, ինչպէս՝ գըրիլ - գըրիմ, թըռուիլ - թըռուէմ, կարդիլ - կարդում, թուղիլ - թուղօմ. ուրեմն՝ բարբառիս խոնարհումներն են՝ ի, է, ու (ա), օ: Ըստ կարգի՝ ասոնք կ'անուանենք առաջին, երկրորդ, երրորդ եւ չորրորդ խոնարհումներ: Բարբառիս խոնարհումները կը համապատասխանեն գրաբարի եւ արեւմտահայ աշխարհաբարի խոնարհումներուն՝ ի (<ե>), է (<ի>), ու//ա (<ա>), օ (<ու>):

Բարբառիս մէջ Հին Հայերէնեան մեծ թիւով բայեր փոխած են իրենց խոնարհումները: Այսպէս՝

ի (<ե> խոնարհումին կ'ենթարկուին.

ա.- գրաբարի ե խոնարհումին գրեթէ բոլոր պարզ բայերը, ինչպէս՝ աղօթեմ>աղթիմ, բերեմ>բիրիմ, բռնեմ>բրոնիմ, վառեմ>վառիմ, վազեմ>վէզիմ, ծամեմ>ծամիմ, ուտեմ>ուտիմ, խարչեմ>խիչիմ, քարչեմ>քիչիմ, փոխեմ>փըխիմ, նետեմ>նիտիմ, սիրեմ>սիրիմ, ուզեմ>ուզիմ եւ այլն:

բ.- գրաբարի ի խոնարհումի պարզ բայերէն ոմանք՝ ծաղկիմ>ծաղկիմ, աճիմ>աճիմ, ծլիմ>ծըլիմ, ցամաքիմ>ցնմքիմ, քրտնիմ>քըրտընիմ, կաթիմ>կէթիմ, դեղնիմ>դանիմ, ծընիմ>ծըննիմ, կարմրիմ> կըրմըրիմ, սպիտակիմ>ըսպըտակիմ, փրփրիմ>փըրփըրիմ եւ այլն:

գ.- գրաբարի ե խոնարհումի սոսկածանցաւոր եւ ու խոնարհումի քանի մը բայեր՝ ելանեմ>ըննիմ, պագանեմ>պէգնիմ, առնում>առնիմ, զինում>զինիմ:

է (<ի> խոնարհումին կ'ենթարկուին.

ա.- գրաբարի ե եւ ի խոնարհումներուն ենթարկուող գրեթէ բոլոր սոսկածանցաւոր բառերը, ինչպէս՝ տեսանեմ>տըսնէմ, գտանեմ>ղըննէմ, մտանեմ>մըննէմ, թքանեմ>թըքնէմ, իջանեմ>իչնէմ, ագանեմ>էգնէմ, հեծանեմ>հիգնէմ, անկանիմ>իչնէմ, դնեմ>ղընէմ, բուսանիմ>բուսնէմ եւ այլն: Ե Հին խոնարհումը պահած են վերոյիշեալ քանի մը սոսկա-

ծանցաւոր բայերը:

բ.- գրաբարի ի խոնարհումի պարզ բառերուն մեծամասնութիւնը, ինչպէս՝ ապրիմ>էպրէմ, կանգնիմ>կէյնէմ, ցաւիմ>ցէվէմ, թօշնիմ>թուշնէմ, թառիմ>թառոէմ, թառամիմ>թուռոմէմ, թըջիմ>ղըրջէմ, թաւալիմ>թէպլէմ, ճապաղիմ>ճաղպէմ, մաշիմ>միշէմ, սովորիմ>սմըվէմ եւ այլն:

գ.- գրաբարի է եւ նչ սոսկածանցաւոր բայերը, որոնք կորսնցուցած են իրենց սոսկածանցները ու վերածուած պարզ բայերու, ինչպէս՝ թուչիմ>թըռուէմ, փախչիմ>փախէմ, փակչիմ>փէկէմ, դպչիմ>ղիպէմ եւ այլն:

դ.- գրաբարի ու խոնարհումի լնուլ>ըննէմ բայը:

ՈՒ//ա (<ա> խոնարհումին կ'ենթարկուին.

ա.- գրաբարի ա խոնարհումի գրեթէ բոլոր պարզ ու սոսկածանցաւոր բայերը, ինչպէս՝ խաղամ>խաղում, աղամ>աղում, կարդամ>կարդում, կչտանամ>կըչտենում, բարեկամանամ>բըրըմկընում, ծարաւանամ>ծէրվընում, մանրանամ>մանտըրնում, հեռանամ>հառվընում, գիտենամ>գմտենում եւ այլն:

բ.- գրաբարի ի խոնարհումի քանի մը պարզ բայեր, որոնք ստանալով ն (ըն) սոսկածանցը, փոխած են իրենց խոնարհումը, ինչպէս՝ դադարիմ>ղէղըրնում, կարօտիմ>կէրվընում, երեւիմ>ըրվընում եւ այլն: Նաեւ՝ լինիմ>ըննում բայը:

գ.- գրաբարի ու խոնարհումի կարգ մը բառեր, ինչպէս՝ երդնում>ուվըրննում, քաղցնում>քախցինում, յաւելում>ըվնում եւ այլն:

Օ (<ու> խոնարհումին կ'ենթարկուի միայն թողուլ բայը՝ թուղիլ>թուղօմ: Գրաբարէն աւանդուած ու խոնարհումի միւս բայերը ցրուած են բարբառի միւս խոնարհումներուն մէջ:

6.- Կատարեալի Հիմքերը

Բարբառի կատարեալի Հիմքը երկու տեսակ է՝ արմատական եւ ցոյական:

Արմատական Հիմք ունին.

ա.- առաջին խոնարհումի (ի) քանի մը բայեր, ինչպէս՝ առնիմ (<առնում) - առա, պէգնիմ (<պագանեմ) - պագն, ըննիմ (<ելանեմ) - իլա եւ այլն:

բ.- երկրորդ խոնարհումի (է) սոսկածանցաւոր բայերը, ինչպէս՝ իչնէմ (<իջանեմ) - իջա, մըննէմ (<մտանեմ) - մըտա, հիգնէմ (<հեծանեմ) - հիծա, իյնէմ (<անկանիմ) - ինկա եւ այլն:

գ.- երկրորդ խոնարհումին ենթարկուող գրաբարի ն եւ նչ սոսկածանցաւոր բայերը, ինչպէս՝ փախիմ (<փախչիմ) - փախա, թըռուէմ (<թուչիմ) - թըռու եւ այլն:

դ.- չորրորդ խոնարհումի միակ բայը՝ թուղօմ (<թողում) - թուղա: Յոյական Հիմք ունին.

ա.- առաջին (ի) եւ երկրորդ (է) խոնարհումներուն գրեթէ բոլոր պարզ բայերը, ինչպէս՝ ծնամիմ (<ծամեմ) - ծնամիցմ, վէզգիմ (<վազեմ) - վէզգիցմ, էպրէմ (<ապրիմ) - էպրիցմ, դըրջիմ (<թրջիմ) - դըրջիցմ եւ այլն:

բ.- երրորդ խոնարհումի (ու) բոլոր բայերը, ինչպէս՝ խաղում (<խաղամ) - խախցու, կարդում (<կարդամ) - կարդացա, մատիկնում (<մատիկանամ) - մատիկցմ, ծէրվինում (<ծարաւանամ) - ծէրվիցմ եւ այլն:

Կատարեալի ցոյական Հիմքը կը կազմուի ից եւ ուօց ածանցներով:

ից (<եց) ցոյական Հիմք ունին առաջին (ի) եւ երկրորդ (է) խոնարհումներու պարզ բայերը, ինչպէս՝ վէզգիմ (<վազեմ) - վէզգիցմ, քիլիմ (<քայլեմ) - քիլիցմ, սիրիմ (<սիրեմ) - սիրիցմ, ցնմքիմ (<ցամաքիմ) - ցնմքիցմ եւ այլն:

Ուօց (<աց) ցոյական Հիմք ունին երրորդ (ու) խոնարհումի բայերը: Կատարեալի վերջաւորութիւնները ստանալով՝ ցոյական Հիմքի ձայնաւորը կը շեշտագրուի ու կը վերածուի՝ ըց, ից, էց, աց եւ ց ձեւերու, ինչպէս՝ հառվընում (<հեռանամ) - հառվըցու, ծէրվընում (<ծարաւանամ) - ծէրվըցմ, մատկընում (<մատենամ) - մատկիցմ, կըշտընում (<կշտանամ) - կըշտեցմ, գմտընում (<գիտենամ) - գմտեցմ, կարդում (<կարդամ) - կարդացա, խաղում (<խաղամ) - խախցու, անում (<անամ) - անացմ եւ այլն:

7.- Ներկայ ժամանակներու վերջաւորութիւններ

Բարբառս պահած է գրաբարի ներկայ ժամանակի վերջաւորութիւնները՝ բարբառային համապատասխան հնչիւնափոխութեան ենթարկելով զանոնք: Այսպէս՝

Առաջին խոնարհումի (ի) բայերուն ներկայ ժամանակի վերջաւորութիւններն են.

եզակի	յոզնակի
իմ (<եմ)	ինք (<եմք)
իս (<ես)	իէք (<էք)
ի (<է)	ին (<ին)

Առաջին խոնարհումի բայերուն ներկայ ժամանակի վերջաւորութիւնները կը համապատասխանեն բարբառի օժանդակ բայի ներկայ ժամանակի ձեւերուն՝ իմ, իս, ի, ինք, էք, ին:

Երկրորդ խոնարհումի (է) բայերուն ներկայ ժամանակի վերջաւորութիւններն են.

եզակի	յոզնակի
էմ (<իմ)	էնք (<իմք)

էս (<իս)
 էք (<իք) |

ա//ան (<ի)
 էն (<ին) |

Երրորդ խոնարհումի (ու) բայերու ներկայ ժամանակի վերջաւորութիւններն են.

եզակի	յոզնակի
ում//ան (<ամ)	ունք//անք (<անք)
ուօս (<աս)	աք//անք (<այք)
ու//ան (<այ)	ուն//ան (<ան)

Չորրորդ խոնարհումի (օ) ենթարկուող միակ բայը թողում > թուղօմ բայն է.

եզակի	յոզնակի
թուղօմ (<ում)	թուղօնք (<ումք)
թուղօս (<ուս)	թուղօք (<ուք)
թուղա (<ու)	թուղօն (<ուն)

Եզակի Գ. եւ յոզնակի Բ. դէմքերու վերջաւորութիւնները բարբառային են:

8.- Անցեալ անկատարի վերջաւորութիւններ

Բարբառս չէ պահած գրաբար անցեալ անկատար ժամանակի վերջաւորութիւնները: Կազմած է նոր շարք, որ ընդհանուր է բարբառիս բոլոր խոնարհումներուն համար: Բարբառիս անցեալ անկատարի վերջաւորութիւնները բարբառի օժանդակ բայի անցեալ անկատար ժամանակի ձեւերն են, որոնք կը դրուին բայի ներկայի Հիմքին վրայ: Այսպէս՝

եզակի	յոզնակի
էրէմ (=էի)	էրէնք (=էինք)
էրէս//էրէ//է (=էիր)	էրէք (=էիք)
իէր (=էր)	էրեն (=էին)

Եզակի Բ. դէմքի ձեւերը իմաստային եւ կիրառական տարբերութիւններ չունին:

9.- Անցեալ կատարեալի վերջաւորութիւններ

Գրաբարի անցեալ կատարեալի ներգործածել եւ կրաւորածել վերջաւորութիւնները հնչիւնական կարգ մը օրինաչափական փոփոխութիւններով անցած են բարբառին: Անոնք կ'աւելնան կատարեալի Հիմքին վրայ: Այսպէս՝

Ներգործածել վերջաւորութիւններն են.

եզակի	յոզնակի
-------	---------

ա//ամ//մ//մմ (<ի)
ի (<եր)
- (<-)

ունք//մնք (<աք)
իէք (<էք, էք)
էն (<ին)

Ներգործաձև վերջաւորութիւնները կը ստանան.

ա.- առաջին (ի) խոնարհումի պարզ բայերը, ինչպէս՝ ուզիմ (<ուզեմ) - ուզիցմ, ուզիցի, ուզից, ուզիցմնք, ուզիցէք, ուզիցէն:

բ.- երրորդ խոնարհումի (ու) պարզ բայերը, ինչպէս՝ կարդում (<կարդամ) - կարդացա, կարդացի, կարդուց, կարդացունք, կարդացէք, կարդացէն:

գ.- չորրորդ խոնարհումի (օ) միակ բայը՝ թուղօմ (<թողում) - թուղա, թուղի, իթօղ, թուղունք, թուղէք, թուղէն:

Կրաւորաձև վերջաւորութիւններն են.

եզակի

յոգնակի

ու//ում//մ//մմ (<այ)

ունք//մնք (<աք)

ուօր (<ար)

աք//մք (<այք)

ուօվ (<աւ)

ուն//մն (<ան)

Կրաւորաձև վերջաւորութիւններ կը ստանան.

ա.- երկրորդ խոնարհումի (է) պարզ եւ ածանցաւոր բոլոր եւ առաջին խոնարհումի ածանցաւոր քանի մը բառերը, ինչպէս՝ սննդիմ (<սովորիմ) - սննդիցմ//սննդիցմմ, սննդիցուօր, սննդիցուօվ, սննդիցունք, սննդիցնք, սննդիցն. իչնէմ (<իջանեմ) - իջմ//իջմմ, իջուօր//իջուօվ, իջմնք, իջնք, իջն, ըննիմ (<ելանեմ) - իլմ// իլմմ, իլուօր, իլուօվ, իլմնք... եւ այլն:

բ.- գրաբարի ն եւ նչ սոսկածանցաւոր բայերը, որոնք բարբառիս մէջ կորսնցուցած են այդ ածանցները եւ կը գիտակցուին իբրեւ պարզ բայեր, ինչպէս՝ թրոռէմ (<թռչիմ) - թրոռու, թրուօր, թրուօվ, թրուօնք, թրուօք... եւ այլն:

գ.- երրորդ խոնարհումի (ու) սոսկածանցաւոր բայերը, ինչպէս՝ իմնում (<իմանամ) - իմցմ//իմցմմ, իմցուօր, իմցուօվ, իմցմնք, իմցնք, իմցն:

Գրաբարի երկրորդ խոնարհումի այն պարզ բայերը, որոնք բարբառիս մէջ ունին առաջին խոնարհում (ի), անցեալ կատարեալի եզակի Ա. եւ յոգնակի Գ. դէմքերուն մէջ կրնան ունենալ թէ՛ ներգործաձև եւ թէ՛ կրաւորաձև վերջաւորութիւններ, ինչպէս՝ քրտընիմ (<քրտնիմ) - քրտընիցա//քրտընիցու, քրտընիցն//քրտընիցուն:

Նշենք, որ անցեալ կատարեալի եզակի առաջին դէմքի վերջաւորութիւնը ունի երկու ձև՝ ա//ամ (ներգործաձև), ու//ում (կրաւորաձև): Ասոնց երկրորդ տարբերակները (ամ, ում) բարբառային կազմութիւններ են, ինչպէս չինիմ (<չինեմ) - չինիցա//չինիցամ, միզնմ (<մեծանամ) - մինցմ//մինցմմ: Իսկ յոգնակի առաջին դէմքի մէջ գրաբարի դիմաց կայ ն հնչիւնի յաւելում՝ մնք, ինչպէս՝ չինիցմնք, մինցմնք:

10.- Բաղադրեալ ժամանակներ

Քեսապի բարբառին պարզ բաղադրեալ ժամանակները կը կազմուին ապառնի, յարակատար եւ վաղակատար դերբայներով՝ էական բայի ներկայ եւ անցեալ անկատար ձեւերու օժանդակութեամբ: Օր.՝ գըրիւմ եիմ, գըրուօծիմ, գըրիւմ եիմ, գըրուօծէիմ: Անոնց մէջ էական բաղադրիչը բառային անկախ հնչերանգ չունի, այսինքն կ'արտասանուի իբրեւ դերբայի դիմաւոր վերջաւորութիւն, ճիշդ պարզ բայերու անցեալ անկատար եւ առաջին խոնարհումի ներկայ ժամանակներու ձեւերուն նման՝ գըրիմ, գըրէիմ: Սակայն բաղադրիչներու այս կցումով դերբայներու վերջավանկին մէջ ձայնաւորներու սպասելի հնչիւնափոխութիւնը չի կատարուիր:

Օժանդակ բայի ներկայ ժամանակի ձեւերը գրաբարի դիմաց հանդէս կու գան որոշ հնչիւնափոխութեամբ մը միայն:

եզակի

յոգնակի

իմ (<եմ)

ինք (<եմք)

իս (<ես)

իէք (<էք)

ի (<է)

ին (<են)

Ձայնաւորէ մը ետք օժանդակ բայի ձեւերը կ'արտասանուին կիսաձայնով մը, ինչպէս՝ գըրիւմ եիմ, գըրիւմ եիս, գըրիւմ եի...

Քեսապի բարբառը չէ պահած գրաբարի օժանդակ բայի անցեալ անկատար ժամանակի ձեւերը. կազմած է նորերը: Այդ ձեւերուն հիմք կը ծառայէ գրաբարի եւ բարբառի անցեալ անկատար ժամանակի եզակի երրորդ դէմքը՝ էր, որուն վրայ կ'աւելնան գրաբարի ներկայ ձեւերը. այսպէս՝

եզակի

յոգնակի

էրէմ (=էր+եմ՝ էի)

էրէնք (=էր+եմք՝ էինք)

էրէս//էրէ//է (=էր+ես՝ էիր)

էրէք (=էր+էք՝ էիք)

իէր (=էր)

էրէն (=էր+են՝ էին)

Եզակի Բ. դէմքը հանդէս կու գայ երեք ազատ ձեւերով. երրորդ տարբերակը քիչ կը հանդիպի:

11.- Եղանակներ

Քեսապի բարբառին մէջ բային խոնարհումը ունի վեց եղանակներ՝ սահմանական, ստորադասական, պայմանական, ըղձական, հարկադրական եւ հրամայական:

ա.- Սահմանական եղանակ

Սահմանական եղանակը ունի տասը ժամանակներ: Պարզ բայաձեւեր ունին ներկայ, անցեալ անկատար, բացարձակ ապառնի, անկատար ապառնի, անցեալ կատարեալ, պատմողական անցեալ

ժամանակները, իսկ բաղադրեալ բայաձևեր ունին երկրորդ ապառնի ներկայ, անցեալ անկատար, յարակատար ներկայ, յարակատար անկատար եւ վաղակատար ներկայ ժամանակները:

Ներկայ եւ անցեալ անկատար ժամանակները կը կազմուին Հա, Հա կամ Հայ (<Հա) ցուցիչով, որ կը դրուի բայերու ներկայ եւ անկատար ձեւերուն սկիզբը, ինչպէս Հա գրրիմ, Հա գրրիս, Հա գրրի. Հա գրրինք, Հա գրրիէք, Հա գրրին (ներկայ). Հա գրրէրէմ, Հա գրրէրէս, Հա գրրէրէս, Հա գրրէրէս, Հա գրրիէր, Հա գրրէրէք, Հա գրրէրէք, Հա գրրէրէն (անկատար): Հա ցուցիչը ազատորէն կրնայ փոխարինել Հայ տարբերակը:

Ձայնաւորով սկսող բայերը Հա//Հայ մասնիկը ստանալով կրնան փոփոխութեան ենթարկուիլ: Մասնիկի եւ բայասկիզբի ձայնաւորներու միացութեամբ առաջացած այս փոփոխութիւնը ընդհանրապէս կ'ունենայ Հետեւեալ պատկերը.

- ա+ա(ա)>ա(ա)՝ Հա անում>Հանում (կ'աղամ), Հա առնիմ>Հառնիմ (կ'առնեմ), Հա առուու>Հառուու (կ'ոռնայ) եւ այլն:

- ա+ու(ու)>ու(ու)՝ Հա ուրթում>Հորթում (կ'երթամ), Հա ուզիմ>Հօզիմ (կ'ուզեմ), Հա ուզու>Հօզու (կու գայ) եւ այլն:

- ա+ի>ի՝ Հա ինիմ>Հինիմ (<կ'ընեմ), Հա իշիմ>Հէշիմ (կը նայիմ), Հա իչնէմ>Հէչնէմ (<կ'իջնեմ) եւ այլն:

- ա+է>է՝ Հա էսիմ>Հէսիմ (<կ'ըսեմ), Հա էծիլիմ>Հէծիլիմ (<կ'ածիլեմ), Հա էկընծիմ>Հէկընծիմ (մտիկ կ'ընեմ՝ ականջել) եւ այլն:

- ա+ը>ը՝ Հա ընում>Հընում (<կ'ըլլամ), Հա ընծիմ>Հընծիմ (<կը հնձեմ), Հա ըրկննում>Հըրկննում (<կ'երկննամ) եւ այլն:

Այս Հնչիւնափոխութիւնը պարտադիր չէ. բայերը Հանդէս կրնան գալ նաեւ առանց Հնչիւնափոխութեան: ատիկա աւելի սովորական է: Հա//Հայ մասնիկով կազմուած ժամանակները կ'արտայայտեն շարունակական կամ ընթացիկ գործողութեան մը իմաստը ու կը Համապատասխանեն արեւելահայերէնի սահմանական եղանակի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներուն: Ասիկա այդ ժամանակներուն միակ նշանակութիւնն է:

Բացարձակ ապառնի եւ բացարձակ անկատար ապառնի ժամանակները կը կազմուին պըր կամ մըր (պիտի-որ>պըր//մըր) նախադաս մասնիկով, որ կը դրուի բային ներկայ եւ անցեալ անկատար ձեւերուն վրայ, ինչպէս՝ պըր գըրիմ, պըր գըրիս, պըր գըրի, պըր գըրինք, պըր գըրիէք, պըր գըրին (բացարձակ), պըր գըրէրէմ, պըր գըրէրէս, պըր գըրիէր (անց. անկատար): Մըր-ը ազատորէն կը փոխարինէ ցուցիչը:

Պըր մասնիկը միայն ու ձայնաւորով սկսող բայերու Հետ գործածուելու պարագային որոշ Հնչիւնափոխութեան մը կ'ենթարկուի. մասնիկի ը Հնչիւնը կը սղի եւ անոր տեղ կու գայ բային ու սկիզբը, ինչպէս՝ պըր անում>պանում (պիտի ուտեմ), պըր ուզիմ>պուրզիմ (պիտի ուզեմ), պըր ուզում>պուրզում (պիտի գամ), պըր ուլում>պուրլում (պիտի

լամ), պըր ուտում>պուրտում (պիտի տամ) եւ այլն: Այս Հնչիւնափոխութիւնը կը կատարուի միայն այն պարագային, երբ դիմաւոր բայի սկիզբի ու ձայնաւորին կը յաջորդէ միայն մէկ բաղաձայն. բացառութիւն է պըր ուրթում>պուրթում (պիտի երթամ) բայը, որուն այս ձեւը պայմանաւորուած է մասնիկի ըր մասի սղումով:

Երկրորդ ապառնի ներկայ եւ անկատար ժամանակները բաղադրեալ են. կը կազմուին ապառնի դերբայի եւ օժանդակ բայի ներկայ եւ անկատար ժամանակներու Համատեղ գործածութեամբ: Դերբայը միշտ նախադաս է: Օր.՝ գըրիւմ եիմ, գըրիւմ եիս, գըրիւմ եինք, գըրիւմ եէք, գըրիւմ եին (ներկայ), գըրիւմ էրէմ, գըրիւմ էրէս, գըրիւմ էրէս, գըրիւմ էրէք, գըրիւմ էրէք, գըրիւմ էրէն (անցեալ անկատար):

Բացարձակ եւ երկրորդ ապառնի ժամանակներու իմաստային տարբերութեան մասին տե՛ս «Դերբայներ» բաժինը:

Ցարակատար ներկայ եւ անցեալ անկատար ժամանակները նոյնպէս բաղադրեալ են. կը կազմուին յարակատար դերբայով եւ օժանդակ բայի ներկայ եւ անցեալ անկատար ձեւերով: Դերբայը միշտ նախադաս է: Օր.՝ գըրուծիմ, գըրուծիս, գըրուծի, գըրուծինք, գըրուծէք, գըրուծին (ներկայ), գըրուծէրէմ, գըրուծէրէս, գըրուծէրէս, գըրուծէրէք, գըրուծէրէք, գըրուծէրէն (անցեալ անկատար):

Վաղակատար ներկան բաղադրեալ ժամանակ է: Կազմուած է վաղակատար դերբայի եւ օժանդակ բայի ներկայ ձեւերով: Դերբայը միշտ նախադաս է: Օր.՝ գըրիւրիմ, գըրիւրիս, գըրիւրի, գըրիւրինք, գըրիւրէք, գըրիւրին: Անցեալ անկատար չունի:

Անցեալ կատարեալ ժամանակի կազմութիւնը տեսանք արդէն:

Պատմողական անցեալ կատարեալի ցուցիչն է էր// եէր. առաջինը կը դրուի անցեալ կատարեալ ժամանակի բաղաձայնայանգ, իսկ երկրորդը՝ ձայնաւորայանգ ձեւերէն վերջ՝ գըրիցն եէր, գըրիցի եէր, գըրից էր, գըրիցնք էր... եւ այլն:

բ.- Ստորադասական եղանակ

Ստորադասական եղանակը ունի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներ: Ասոնք բայի խոնարհումի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներու ընդհանուր ձեւերն են, առանց եղանակային որեւէ ցուցիչ մասնիկի. ուստի ձեւով ասոնք կը նմանին գրաբարի սահմանական եղանակի նոյն ժամանակներու ձեւերուն: Օր.՝ գըրիմ, գըրիս, գրի, գըրինք, գըրիէք, գըրին (ներկայ). գըրէրէմ, գըրէրէս, գըրիէր, գըրիէրէք, գըրիէրէք, գըրիէրէն (անցեալ անկատար):

գ.- Պայմանական եղանակ

Պայմանական եղանակի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակները կը կազմուին կա՛մ կը, կա՛մ կ մասնիկով, որ կ'աւելնայ բայերու ներկայ եւ անցեալ անկատար ձեւերուն վրայ: Երկրորդ տարբերակը կը ստանան ձայնաւորով սկսող բայերը: Օր.՝ կը գըրիմ, կը գըրիս, կը գըրի, կը գըրինք, կը գըրիք, կը գըրին (ներկայ). կը գըրէրէմ, կը գըրէրէ, կը գըրէրէք, կը գըրէրէնք (անցեալ անկատար): Կ-ով՝ կի՞գիմ, կի՞գիս, կի՞գի, կի՞գինք, կի՞գիք, կի՞գին (ներկայ), կի՞գէրէմ, կի՞գէրէ, կի՞գիէր, կի՞գէրէնք, կի՞գէրէք, կի՞գէրէն (անցեալ անկատար):

Պայմանական եղանակի ձեւերը մենիմաստ չեն: Գլխաւորը պայմանականի նշանակութիւնն է, որով ալ կը Համապատասխանեն արեւելաւայ գրական լեզուի պայմանական եղանակի նոյն ձեւերուն: Օր.՝ Թի կի՞գիս՝ կուգում (եթէ կ'ուգես՝ կու գամ): Երկրորդ նշանակութեամբ կը պատասխանեն արեւմտահայ գրական լեզուի սահմանական եղանակի նոյն ձեւերուն, իբրեւ բացարձակ ներկայ եւ անցեալ անկատար: Նոյն նշանակութիւնը ունին նաեւ արեւելահայ գրական լեզուի պայմանական եղանակի ձեւերը: Կրնան արտայայտել նաեւ ենթադրական նշանակութիւն (վերի նախադասութեան առաջին բայը): Կրնան գործածուիլ նաեւ Հրամայական եղանակի իմաստային երանգով, ինչպէս՝ Հէմմ-Հէմմ կուրթուս կը բիրիս (անմիջապէս կ'երթաս կը բերես):

դ.- Ըղձական եղանակ

Ըղձական եղանակի երկու ժամանակները կը կազմուին Թըղ//Թը//թ (<թող) մասնիկով, որ կը դրուի բայի ներկայ եւ անցեալ անկատար դիմաւոր ձեւերուն սկիզբը: Օր.՝ Թըղ գըրիմ, Թըղ գըրիս, Թըղ գըրի, Թըղ գըրինք, Թըղ գըրիք, Թըղ գըրին (ներկայ), Թըղ գըրէրէմ, Թըղ գըրէրէ, Թըղ գըրիէր, Թըղ գըրէրէնք, Թըղ գըրէրէք, Թըղ գըրէրէն (անցեալ անկատար):

Թը ձեւը կրնայ ազատօրէն գործածուիլ Թըղ-ի փոխարէն՝ Թը դուրկի, Թը սմըվա եւ այլն:

Իսկ Թ ձեւը կրնան առնել ձայնաւորով սկսող բայերը միայն. Թըղ իչի՛, Թըղ ի՞նչ, Թըղ իմնի՛, Թըղ իմնի՛, Թըղ իսի՛, Թըղ իսի՛, Թըղ իսի՛, Թըղ իսի՛, Թըղ իսի՛, Թըղ իսի՛ եւ այլն:

Թըղ//Թը//թ եղանակաւորիչը սովորաբար չի գործածուիր Ա. եւ Բ. դէմքերուն Հետ, այդպիսով այդ ձեւերը կը նոյնանան ստորադասական եղանակի նոյն ձեւերուն Հետ՝ առանց կորսնցնելու իրենց ըղձական եղանակի քերականական նշանակութիւնը: Օր.՝ ուրթում տըսնէմ զը անըզ մը (երթամ տեսնեմ զինք մէկ անգամ):

ե.- Հարկադրական եղանակ

Հարկադրական եղանակի եղանակաւորիչի դերով Հանդէս կու գայ պիտն (<պիտի) բառը, որ բարբառի պիտէմ (պիտի) բայի ստորադասական եղանակի եզակի Գ. դէմքն է, բայց եղանակաւորիչի իր դերին մէջ կը կորսնցնէ դիմաւոր բայի իր յատկանիչները ու կը գիտակցուի իբրեւ մասնիկ: Պիտն եղանակաւորիչը դրուելով բայի ներկայ եւ անցեալ անկատար ձեւերուն սկիզբը՝ կը կազմէ Հարկադրական եղանակի ժամանակային ձեւերը, որոնք ցոյց կու գան գործողութեան անհրաժեշտութիւնն ու Հարկադրանքը, արեւմտահայերէնի «պէտք է գրեմ, պէտք է երթամ» եւ նման նախադասութիւններու արտայայտած ընդհանուր իմաստով: Օր.՝ պիտն գըրիմ, պիտն գըրիս, պիտն գըրի, պիտն գըրինք, պիտն գըրիք, պիտն գըրին (ներկայ), պիտն գըրէրէմ, պիտն գըրէրէս, պիտն գըրիէր, պիտն գըրէրէնք, պիտն գըրէրէք, պիտն գըրէրէն (անցեալ անկատար): Բարբառիս Հարկադրական եղանակը ձեւով եւ իմաստով կը Համապատասխանէ արեւելահայ գրական լեզուի նոյն եղանակին:

զ.- Հրամայական եղանակ

Հրամայական եղանակի դրսեւորումները գրաբարի բուն Հրամայականի Հետ Համեմատած՝ ունին Հետաքրքրական նորութիւններ: Այստեղ եւս Հրամայականի ձեւերը կը կառուցուին անցեալ կատարեալի հիմքի վրայ: Քեսապի բարբառի եզակի Հրամայականի վերջաւորութիւններն են՝ ի, ի//է, է, ու (ի), էօ//օ եւ անվերջաւոր (արմատական հիմքը):

Ի.- կատարեալի բաղադրեալ-ցոյական հիմքից Հնչիւնի անկումով՝ ից>ի (եաց-եա): Այս վերջաւորութիւնը կը ստանան առաջին խոնարհումի պարզ բայերը, ինչպէս՝ քիլիմ - քիլի՛, զինիմ - զինի՛, վէզզիմ - վէզզի՛, ծէմմիմ - ծէմմի՛, սիրիմ - սիրի՛, շըտկիմ - շըտկի՛ եւ այլն:

Ի//է.- այս գուգաձեւ վերջաւորութիւնը ազատ կերպով կը ստանան.

- երկրորդ խոնարհումի գրեթէ բոլոր պարզ բայերը, ինչպէս՝ խուսէմ - խուսի՛//խուսէ՛, պառկէմ - պառկի՛//պառկէ՛, սուրվէմ - սուրվի՛//սուրվէ՛, էպրէմ - էպրի՛//էպրէ՛ եւ այլն:

- երկրորդ խոնարհումի գրեթէ բոլոր սոսկածանցաւոր բայերը՝ կատարեալ արմատական հիմքի վրայ, ինչպէս՝ իյնէմ - ինկի՛//ինկէ՛, Հէգնէմ - Հէգի՛//Հէգէ՛, իչնէմ - իչի՛//իչէ՛ եւ այլն: Այս շարքի բառերուն մէջ առաջին տարբերակը քիչ կը Հանդիպի:

- ն եւ նչ գրաբարի սոսկածանցաւոր բայերը, որոնք բարբառիս մէջ կորսնցուցած են զանոնք եւ կը գիտակցուին իբրեւ երկրորդ խոնարհումի պարզ բայեր, ինչպէս՝ Թըռուէմ - Թըռուի՛//Թըռուէ՛, դիպէմ - դիպի՛//դիպէ՛, փնիսէմ - փնիսի՛//փնիսէ՛ եւ այլն:

է.- բաղադրեալ ցոյական Հիմքի վրայ՝ երրորդ խոնարհումի սոսկածանցաւոր բայերը, ինչպէս՝ դիմենում - դիմեցէ', հառվընում - հառվըցէ', իմնամ - իմցէ', ծէրվընում - ծէրվըցէ', գառնամ - գառնեցէ', մատկընամ - մատկըցէ' եւ այլն:

ու (ն) - կազմուած է կատարեալի բաղադրեալ ցոյական Հիմքի ց Հնչիւնի անկումով եւ ձայնաւորի Հնչիւնափոխութեամբ՝ ուօց>ու (աց-ա), ինչպէս՝ անամ - անեմ', կարում - կարում', Հեզգամ - Հեզգեմ', խաղում - խաղում', խընտում - խընտում'. պէտք է նշել նաեւ, որ այս շարքի բառերը երբեմն կրնան ունենալ նոյն խոնարհումի սոսկածանցաւոր բայերու հրամայականի ձեւը, ինչպէս՝ անամ - անեցէ', խաղում - խախցէ', մընում - մընեցէ' եւ այլն:

էօ//օ.- պատճառականի եւ քանի մը այլ կարգի բայերու հրամայականի ազատ բաշխման վերջաւորութիւններ են, ինչպէս՝ խումցընիմ - խումցօ', իմցընիմ - իմցէօ', սիրցընիմ - սիրցէօ', կուրցընիմ - կուրցօ', մատկըցընիմ - մատկըցէօ' եւ այլն:

Անվերջաւոր եզակի հրամայական ունին խումբ մը բայեր, ընդհանրապէս սոսկածանցաւոր ու զարտուղի, որոնք գրաբարի հրամայականի ձեւը պահած են: Անոնց կատարեալի արմատական Հիմքը կը դառնայ եզակի հրամայականը: Անոնցմէ ոմանք զուգաձեւաբար կրնան գործածել նաեւ վերջաւոր հրամայականի ձեւ մը, հոս բաւականանանք քանի մը օրինակով, ինչպէս՝ իննիմ - ի՛ն, խեզնիմ - խուօ՛ծ//խեծօ՛ի', պեզնիմ - պեզնի՛//պուօ՛զ, կըննէմ - կօ՛ձ, մըննէմ - մէօ՛տ, հննիմ - հո՛ւն//հննի՛, թուղօմ - թօ՛ղ, տըսնէմ - տի՛ս, առնիմ - ուօ՛ո, բիրիմ - բի՛ր, դընէմ - դէ՛ եւ այլն:

Յոգնակի հրամայականը կը կազմուի իէք վերջաւորութեամբ, որ կը դրուի առաջին եւ երկրորդ խոնարհումներու պարզ եւ երրորդ խոնարհումի պարզ ու սոսկածանցաւոր բայերու ցոյական Հիմքի վրայ, ինչպէս՝ գրիմ - գըրիցիէ՛ք, քիլիմ - քիլիցիէ՛ք, վեզգիմ - վեզգիցիէ՛ք, պառկէմ - պառկիցիէ՛ք, էպրէմ - էպրիցիէ՛ք, խաղում - խախցիէ՛ք, կարում - կարդացիէ՛ք, խընտում - խընտեցիէ՛ք, մընամ - մընեցիէ՛ք, մատկընամ - մատկըցիէ՛ք, ծէրվընամ - ծէրվըցիէ՛ք եւ այլն: Իսկ կատարեալի արմատական Հիմքի վրայ կը դրուի երկրորդ խոնարհումի սոսկածանցաւոր, գրաբարի ն եւ նչ սոսկածանցաւոր բայերու եւ չորրորդ խոնարհումի միակ բայի (թուղօմ) պարագային, ինչպէս՝ իյնէմ - ինկիէ՛ք, իչնէմ - իչիէ՛ք, հեզնէմ - հեզիէ՛ք, թըռտէմ - թըռտիէ՛ք, փախէմ - փախիէ՛ք, թուղօմ - թուղիէ՛ք եւ այլն:

12.- Կանոնաւոր բայերու խոնարհումի պատկերը
Առաջին խոնարհում

անորոշ դերբայ	ծառիլ (խնամել)	իշիլ (աշել՝ նայիլ)
պարագայական դերբայ	ծառիլէօտը	իշիլէօտը

ապառնի դերբայ	ծառիլնիքան	իշիլնիքան ¹
յարակատար դերբայ	ծառիլն	իշիլն
վաղակատար դերբայ	ծառիլէք	իշիլէք
ենթակայական դերբայ	ծառուօծ	իշուօծ
	ծառիր	իշիր
	ծառուօղ	իշուօղ

Սահմանական եղանակ

ներկայ		անցեալ անկատար	
Հա ² ծառիմ	Հէշիմ ⁸	Հա ծառէրէմ	Հէշէրէմ
Հա ծառիս	Հէշիս	Հա ծառէրէս ⁴	Հէշէրէս
Հա ծառի	Հէշի	Հա ծառիէր	Հէշիէր
Հա ծառինք	Հէշինք	Հա ծառէրէնք	Հէշէրէնք
Հա ծառիէք	Հէշիէք	Հա ծառէրէք	Հէշէրէք
Հա ծառին	Հէշին	Հա ծառէրէն	Հէշէրէն

բացարձակ ապառնի		անկատար ապառնի	
պըր ⁶ ծառիմ	պըր իշիմ	պըր ծառէրէմ	պըր իշէրէմ
պըր ծառիս	պըր իշիս	պըր ծառէրէս	պըր իշէրէս
պըր ծառի	պըր իշի	պըր ծառէր	պըր իշիէր
պըր ծառինք	պըր իշինք	պըր ծառէրէնք	պըր իշէրէնք
պըր ծառիէք	պըր իշիէք	պըր ծառէրէք	պըր իշէրէք
պըր ծառին	պըր իշին	պըր ծառէրէն	պըր իշէրէն

երկրորդ ապառնի ներկայ երկրորդ ապառնի անկատար

- 1.- Բայական վերջաւորութիւններու մէջ Հանդէս եկող քմային եւ պարզ զուգաձեւ ձայնաւորներէն միայն մէկը կը նշենք:
- 2.- Սահմանական եղանակի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներու Հա ցուցիչի փոխարէն կարելի է ազատօրէն գործածել նաեւ Հայ տարբերակը, ինչպէս՝ Հայ ծառիմ, Հայ ծառիս, Հայ ծառի, Հայ ծառէրէմ, Հայ ծառէրէս, Հայ ծառիէր եւ այլն: Աղիւսակին մէջ՝ միայն Հա:
- 3.- Սահմանական եղանակի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակներու մէջ, ձայնաւորով սկսող բայերու պարագային, Հա կամ Հայ ցուցիչն ու դիմաւոր բայը կարելի է առանձին գործածել, այսինքն՝ առանց Հնչիւնափոխութեան. ինչպէս՝ Հա իշիմ, Հա իշիս, Հա իշի, Հա իշինք, Հա իշիէք, Հա իշի եւ այլն:
- 4.- Բայի խոնարհումի բոլոր եղանակներու անցեալ անկատար ժամանակներու եզակի երկրորդ դէմքը ազատօրէն կրնայ ունենալ երկու ձեւեր եւս՝ Հա ծառիէ, Հա ծառէ, Հէշէրէ, Հէշէ:
- 5.- Բացարձակ ապառնի եւ անկատար ապառնի ժամանակներու պըր ցուցիչի փոխարէն կարելի է ազատօրէն գործածել նաեւ մըր տարբերակը, ինչպէս՝ մըր ծառիմ, մըր ծառիս, մըր ծառի, մըր ծառինք, մըր ծառիէք, մըր ծառին եւ այլն: Յետ այսու կը գործածենք պըր ձեւը միայն:

ծառիւմ եիմ	իշիւմ եիմ	ծառիւմ եերէմ	իշիւմ եերէմ
ծառիւմ եիս	իշիւա եիս	ծառիւմ եերէս	իշիւմ եերէս
ծառիւմ եի	իշիւմ եի	ծառիւմ եեր	իշիւմ եեր
ծառիւմ եինք	իշիւմ եինք	ծառիւմ եերէնք	իշիւմ եերէնք
ծառիւմ եէք	իշիւմ եէք	ծառիւմ եերէք	իշիւմ եերէք
ծառիւմ եին	իշիւմ եին	ծառիւմ եերէն	իշիւմ եերէն

յարակատար ներկայ		յարակատար անցեալ անկատար	
ծառուօծիմ	իշուօծիմ	ծառուօծերէմ	իշուօծերէմ
ծառուօծիս	իշուօծիս	ծառուօծերէս	իշուօծերէս
ծառուօծի	իշուօծի	ծառուօծիեր	իշուօծիեր
ծառուօծինք	իշուօծինք	ծառուօծերէնք	իշուօծերէնք
ծառուօծիէր	իշուօծիէք	ծառուօծերէք	իշուօծերէք
ծառուօծին	իշուօծին	ծառուօծերէն	իշուօծերէն

վաղակատար ներկայ	
ծառիրիմ	իշիրիմ
ծառիրիս	իշիրիս
ծառիրի	իշիրի
ծառիրինք	իշիրինք
ծառիրիէք	իշիրիէք
ծառիրին	իշիրին

անցեալ կատարեալ		պատմողական անցեալ	
ծառիցա	իշիցա	ծառիցա եեր	իշիցա եեր
ծառիցի	իշիցի	ծառիցի եեր	իշիցի եեր
ծառից	իշից	ծառից ք	իշից ք
ծառիցունք	իշիցանք	ծառիցունք ք	իշիցանք ք
ծառիցէք	իշիցէք	ծառիցէք ք	իշիցէք ք
ծառիցէն	իշիցէն	ծառիցէն ք	իշիցէն ք

Ստորադասական եղանակ		անցեալ անկատար ժամանակ	
ներկայ ժամանակ		անցեալ անկատար ժամանակ	
ծառիմ	իշիմ	ծառէրէմ	իշէրէմ
ծառիս	իշիս	ծառէրէս	իշէրէս
ծառի	իշի	ծառիեր	իշիեր
ծառինք	իշինք	ծառէրէնք	իշէրէնք
ծառիէք	իշիէք	ծառէրէք	իշէրէք
ծառին	իշին	ծառէրէն	իշէրէն

Պայմանական եղանակ		անցեալ անկատար ժամանակ	
ներկայ ժամանակ		անցեալ անկատար ժամանակ	
կը ծառիմ	կիշիմ	կը ծառէրէմ	կիշէրէմ

կը ծառիս	կիշիս	կը ծառէրէս	կիշէրէս
կը ծառի	կիշի	կը ծառիեր	կիշիեր
կը ծառինք	կիշինք	կը ծառէրէնք	կիշէրէնք
կը ծառիէք	կիշիէք	կը ծառէրէք	կիշէրէք
կը ծառին	կիշին	կը ծառէրէն	կիշէրէն

Ըղձական եղանակ		անցեալ անկատար ժամանակ	
ներկայ ժամանակ		անցեալ անկատար ժամանակ	
թըղ ծառիմ ¹	թըղ իշիմ	թըղ ծառէրէմ	թըղ իշէրէմ
թըղ ծառիս	թըղ իշիս	թըղ ծառէրէս	թըղ իշէրէս
թըղ ծառի	թըղ իշի	թըղ ծառիեր	թըղ իշիեր
թըղ ծառինք	թըղ իշինք	թըղ ծառէրէնք	թըղ իշէրէնք
թըղ ծառիէք	թըղ իշիէք	թըղ ծառէրէք	թըղ իշէրէք
թըղ ծառին	թըղ իշին	թըղ ծառէրէն	թըղ իշէրէն

Հարկադրական եղանակ		անցեալ անկատար ժամանակ	
ներկայ ժամանակ		անցեալ անկատար ժամանակ	
պիտաւմ ծառիմ	պիտաւ իշիմ	պիտաւ ծառէրէմ	պիտաւ իշէրէմ
պիտաւ ծառիս	պիտաւ իշիս	պիտաւ ծառէրէս	պիտաւ իշէրէս
պիտաւ ծառի	պիտաւ իշի	պիտաւ ծառիեր	պիտաւ իշիեր
պիտաւ ծառինք	պիտաւ իշինք	պիտաւ ծառէրէնք	պիտաւ իշէրէնք
պիտաւ ծառիէք	պիտաւ իշիէք	պիտաւ ծառէրէք	պիտաւ իշէրէք
պիտաւ ծառին	պիտաւ իշին	պիտաւ ծառէրէն	պիտաւ իշէրէն

Հրամայական եղանակ	
ծառի՛	իշի՛
ծառիցիէ՛ք	իշիցիէ՛ք

Երկրորդ խոնարհում		
անորոշ դերբայ	սառվէմ (<սուվորիմ)	Հէանիլ (<Հասանեմ)
պարագայական դերբայ	սառվիլէօտը	Հէանիլէօտը
	սառվիլինիքան	Հէանիլինիքան
ապառնի դերբայ	սառվիլիւմ	Հէանիլիւմ
	սառվիլիէք	Հէանիլիէք
յարակատար դերբայ	սառվուօծ	Հէասուօծ

1.- Ըղձական եղանակի առաջին եւ երկրորդ դէմքերը Հանդէս կրնան գալ առանց թըղ եղանակաւորիչին, այդպիսով ձեւի նոյնութիւն մը առաջացնելով ստորադասական եղանակի Համապատասխան ձեւերուն հետ:

Թըղ եղանակաւորիչին փոխարէն կրնայ ազատօրէն գործածուիլ անոր թը տարբերակը, ինչպէս՝ թը ծառի, թը իշի, թը ծառիեր, թը իշիեր եւ այլն, իսկ ձայնաւորով սկսող բայերու պարագային նաեւ՝ թ, ինչպէս՝ թիշէրէմ, թիշէրէս:

վաղակատար դերբայ սփռվիր Հէստիր
 ենթակայական դերբայ սփռվուող Հէսուող

Սահմանական եղանակ

ներկայ ժամանակ		անցեալ անկատար ժամանակ	
Հա սփռվեմ	Հա Հէսնէմ	Հա սփռվերէմ	Հա Հէսնէրէմ
Հա սփռվես	Հա Հէսնէս	Հա սփռվերես	Հա Հէսնէրես
Հա սփռվիմ	Հա Հաննիմ	Հա սփռվիր	Հա Հէսնիր
Հա սփռվինք	Հա Հէսնէնք	Հա սփռվիրէնք	Հա Հէսնէրէնք
Հա սփռվիք	Հա Հէսնէք	Հա սփռվիրէք	Հա Հէսնէրէք
բ.- ըր, եէբըր, ընչըր (երբ որ, մինչ). ըր կուգիս՝ Հէտէր կըննա (երբ
որ կ'ուզես՝ պատրաստ կ'ըլլայ):

գ.- քնըր (քանի որ՝ այդ միջոցին). քնըր իկուօծ ի՝ կըլօխ Հա
ութի (գալէն ի վեր գլուխ կ'արդուկէ):

3.- Պայմանի շաղկապներ

Թի, ըր, անկար, իսա//սա (եթէ). Թի Հարցընիս՝ ճուպուօպ կառնիս
(եթէ Հարցնես՝ պատասխան կ'առնես), ըր Հարցընիս... անկար Հարցը-
նիս... Հարցընիս իսա...: Միայն վերջինը յետադաս գործածութիւն ունի:
Երբեմն երկուքը միատեղ կրնան գործածուիլ՝ անկար իսիլուօք կը
կինուօս իսա... (եթէ խելօք մնաս...):

4.- Պատճառի շաղկապներ

ա.- չունքի, չունքըր (որովհետեւ). աղուր իչիցիէ'ք, չանքի վըրբէօ
ի (լաւ խնամեցէ'ք, որովհետեւ որբ է):

բ.- եիէբըր, անքի (քանի որ). եիէբըր չուօտ Հա պընտի՝ մէման
կը թուղօնք զը (քանի որ շատ կ'ապսպրէ՝ գոհ կը ձգենք զինք):

Շաղկապներէն ոմանք փոխառութիւն են թրքերէնէ, պարսկերէնէ
եւ արաբերէնէ, ինչպէս՝ իլան, Հա'մ... Հա'մ, նա'... նա', Փակադ, ըմը,
եա'... եա', քի, թաքի (նըզը, դըզը...), անկար, իսա//սա, չունքի, անքի:
Փոխառեալ չեն՝ ու, ըվ, ան//իլի//լի (այլ), թի, ըր: Փոխառեալ եւ ոչ
փոխառեալ կարգ մը շաղկապներ Համարժէք են:

Կազմութեամբ՝ շաղկապները կ'ըլլան պարզ ու բաղադրեալ:
Բաղադրեալ են՝ Համիլի (Համ-իլի), թիչէնը (թի-չի-նը), հիչչինը (հիչ-
չի-նը) եւ այլն: Բաղադրութեան մէջ մեծապէս Հանդէս կու գայ ըր
(որ) շաղկապը, ինչպէս՝ քնըր (քանի որ), եիէբըր (երբ որ), ընչըր
(ինչ որ), նըզըր (նըզը-որ) եւ այլն:

Գործածութեան ոլորտի տեսակէտէն կարգ մը շաղկապներ ունին Համադրական բնոյթ, ինչպէս՝ ըր (մեկնական, ժամանակի, պայմանի), թի (տրոհական, պայմանի), չինը//չիմը (ներհակական, տրոհական), եիէբըր (ժամանակի, պատճառի):

Թ.- ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Զայնարկութիւնները կարելի է դնել երեք խումբերու մէջ՝ զգացական, կամային եւ բնաձայնական:

Զգացական ձայնարկութիւնները կ'արտայայտեն.

ա.- ցաւ, ինչպէս՝ ախ, ուխ, ուէյ, ուուէ, ույ, ումմէ, եամոն, եատէ, աման: Օրինակներ՝ ախ, վիտվէս (ախ, ոտքերս), ուէյ, վառիցա ըզձառըս (այրեցի ձեռքս), ուուէ, հիգգէս իլուով (հոգիս ելաւ), աման, կըլօխըս (գլուխս) եւ այլն:

բ.- ափսոսանք, ինչպէս՝ վախ, հէյվախ, էսփսա՛ս, հաճգէն, աման, ամման: Վերջին երկուքը ունին աղաչանքի եւ օգնութեան կանչի երանգներ: Օրինակներ՝ վախ, վախ, անլէս սէտկուով (ուրիկս սատկեցաւ), հէյվախ, ան ձառըս չասնէր (այլեւս ձեռքս չ'անցնիր), էսփսա՛ս, դառ շուտ կանն էր (տակաւին շատ երիտասարդ էր), հաճգէն, շուտ հա չարչարվա՛ (շատ կը շարժարուի), ամման, հէսսիէ՛ք, տէօնը հա վառա (հասէ՛ք, տունը կը վառի):

գ.- զարմանք, ինչպէս՝ ուֆ, օֆ, է: Օրինակներ՝ է, հիրէք ի ան (հերիք եղաւ այլեւս), ուֆ, լըղիցու (ձանձրացայ), օֆ պա, կըլօխ ութից (գլուխ արդուկեց):

դ.- զգուանք, ինչպէս՝ թո՛ւ, թո՛ււ, փի՛, փո՛ւ, ըխ, դա՛: Վերջին երկուքը՝ մանկական: Օրինակներ՝ փո՛ւ, կինն չըղուով (դարձեալ չեղաւ), թո՛ւ, չէ՞ հա քա՛ֆրիս (ի՞նչ կը հայհոյես) եւ այլն:

ե.- ուրախութիւն եւ հրճուանք, ինչպէս՝ օխ, օխսէկ, է, թա՛ւ, էվալլա՛, եա հալա՛, ամման, լուլուլու... եւ այլն: Ասոնցմէ առաջին երկուքը կ'ըստին, երբ մէկը արժանի պատիժի արժանանայ կամ փորձանքի հանդիպի, իբր՝ լաւ եղաւ, ինչպէս՝ օխ եա, էր ծուտն իլի չարցուով (իր ծառն ալ չորցաւ), օխսէկ ըղուով իքի (լաւ եղաւ քեզի): Թա՛ւ ձայնարկութիւնը կ'ըստի գեղեցկութեան մը ի տես, ինչպէս՝ թա՛ւ, չէ ըսլախից (ինչ վայելեց): էվալլա՛ կ'արտայայտէ հաւանութիւն, ինչպէս՝ էվալլա՛, աղուր իրի (լաւ ըրիր): Եա հալա՛ ուրախութիւն կ'արտայայտէ սիրելիի մը այցելութեան առթիւ, ինչպէս՝ հալա՛, եա հալա՛, բէրուով իկէք (բարով եկաք): Ամման կը գործածուի կոչականի հետ, իբրեւ սիրելի, ինչպէս՝ ամման իչգէն, ձիր վէքանը եէօ՞ կ'ըննու (աղջի՛կ, ձեր հայրենիքը ո՞ւր կ'ըլլայ), ամման, ամման, խընամա (խնամի՛): Լուլուլու ձայնարկութիւնը կը գործածուի հարսանիքի ժամանակ:

Կամային ձայնարկութիւնները սովորաբար հրամայական երանգ մը ունին եւ կոչականի իմաստ մը միաժամանակ: Կամային ձայնարկութիւններէն առաւել գործածականները կը բերենք ստորեւ:

Տու՛օ՛ տղամարդու, քալա՛՛ կնոջ ուշադրութիւնը գրաւելու: Ասոնց իմաստով կը գործածուին նաեւ՝ է, էյ, հէյ:

Ձո՛ււ-Ձո՛ււ, ջո՛ւ, ջո՛ւ՛ հաւը կանչելու, քը՛ւ, քը՛ւտ, քը՛ւա, քը՛ւա՛ հաւը վանելու, թուօ՛ն-թուօ՛ն՛ հաւը հաւնոց կանչելու:

Քը՛ս, քը՛ս-քը՛ս՛ շունը կանչելու, ու՛չդ, օ՛չդ՛ շունը վանելու, հու՛ս-սահա՛, ո՛ւսսահա՛՛ շունը կատղեցնելու:

Փը՛ս, փը՛ս-փը՛ս, փըսը՛-փըսը՛՛ կատուն կանչելու, փը՛ստ-փը՛չդ՛՛ կատուն վանելու:

Ճո՛ււ՛ էչը կանչելու, ճի՛, ճը՛՛ էչը քչելու, օօօ՛ էչը կեցնելու, սա՛նըն՛ բեռով էչը նեղ անցքէ մը անցնելու:

Հօ՛՛ նախիր քչելու, օհա՛՛ եզը կամ կովը կեցնելու, թէ՛սթ՛՛ եզը կամ կովը շիտակ ձամբայ ուղղելու, կը՛ծծ՛՛ եզը գրգռելու:

Կը՛րը՛ շո՛՛ եղջիւրաւոր կենդանիները եղջիւրով կուտի համար գրգռուելու, կը՛րը՛-ը՛րը՛՛ նախիրը ջուրի կանչելու:

Հուրրա՛, հուրրահաթ՛, ուրրա՛, ուրրահիթ՛, հայտա՛, հայտահա՛՛ ամբոխը կամ շատուոր մարդիկ արթնցնելու, բանի մը մղելու:

Բնաձայնութիւնները լայնօրէն կը գործածուին բարբառիս մէջ: Բարբառս կը զանազանէ տարբեր-տարբեր երեւոյթներու ու գործողութիւններու ձայներ. այսպէս՝ միայն կրակի հետ կապուած բնաձայնութիւններ են՝ ճը՛սս (մարմնի այրիլը), կը՛ծծ (չոր խոտի այրիլը), թը՛ււ (թաց բանի մը այրիլը), մըս-մըս (բանի մը կամաց այրիլը), կո՛ւրբ (բանի մը մէկէն բոցավառիլը), կուր-կուր (բոցարծարծ կրակը) եւ այլն: Բարբառին խորթ չեն ըր վերջաւորութեամբ ձայնարկութիւնները, ինչպէս՝ չըթըր-չըթըր, քըթըր-քըթըր (չոր բան մը կտրելը կամ ուտելը), քըփըր-քըփըր (բանի մը եռալը), փըթըր-փըթըր (բանի մը հատիկ-հատիկ թափիլը կամ տոտիկ-տոտիկ քալելը) եւ այլն:

Քեսապի բարբառին մէջ մեծ թիւ մը կը ներկայացնեն բնաձայնական հիմքերով կազմուած բարբառային բառերը, ինչպէս՝

Կը՛րը՛ կըրըիլ (մկրատով բան մը կտրել).

կո՛ւրբ՛ կաբբիլ (բոցավառիլ).

կուր-կուր՛ կուրկուրիլ (ճարճատիլ).

չը՛ր՛ չըրըիլ (ապակին տեղէ մը ճեղքուիլ). չըրըօկ (տեսակ մը կոճակ).

ձը՛մ՛ ձըմմէկ (ձըմ-ձըմ երգող սիրուն թռչուն մը).

մըս-մըս՛ մըսմըսօկ (կրակի համար գործածուող թուփ մը).

ճը՛րը՛ ճըրըիլ/ճըրընիլ (ծանրութեան տակ մնալով մէջի հեղուկը դուրս տալ). ճըրըուն (ջրորդան).

ճըլը՛մբ՛ ճըմբիլ (ճողբիլ).

չըր-չըր՛ չըրըր (հոսիլ, միգել), չըրըրօկ՛

(փոքրիկ ջրվեժ)։

Խըռը՝ Խըռըն (չոր տերեւներու կամ անձրեւի ձայն)։ Խըռըօ՞մ (տեղատարափ անձրեւ)։

Ժ.- ԵՂԱՆԱԿԱԻՈՐՈՂ ԲԱՌԵՐ

Քեսապի բարբառի եղանակաւորող բառերը իրենց արտայայտած ընդհանուր իմաստին համաձայն՝ կը մտնեն հետեւեալ խումբերուն մէջ (կու տանք առաւել գործածականները)։

Հաստատական եղանակաւորող բառեր.- Էրվէօ//Էրվէօց//Էրվմ-ցիէն (իրօք, իսկապէս), հը', հա//հօ//հօվը (այո), հէպու (հապա՝ հաստատական իմաստով)։ փոխառութիւններ են՝ հալպաթ, թապի (անշուշտ), իլլա, հէրհալ (անպատճառ, անպայման), վալլա, վալլա-պիլլա, վալլահի (անպայման, իրաւ որ, իսկապէս), թա, թապ (ճիշդ ու ճիշդ, իսկ եւ իսկ) եւ այլն։ Օրինակներ՝ Էրվէօ, ետօ՞ կուսնըվիցուօր (իրօք, ո՞ւր կորսուեցար), հը', ուօ՞ն տա՞մ գընա՞ (հը', ա՞ն ալ գնա՞), հա, գա՞տեցա՞ (այո, ճանչցայ), հէպու, թէրկիցա՞ զը (հապա, յաղթեցի իրեն), թապի դըրէցնիը ինք (անշուշտ դրացիներ ենք), իլլա՞ գա՞ն պըր առնիմ (անպայման գայն պիտի առնեմ), հէրհալ կուգուօս (անպայման կու գաս), վալլա իս չէրէմ (իսկապէս ես չէի)։

Ցուցական եղանակաւորող բառեր.- հը'//հը' (ահա), ըտտը'// ըտտու (ահաւաղիկ), ըսկը'// ըսկա (ահաւասիկ)։ փոխառեալ է՝ իչտա՞մ (ահա, քիչ կը գործածուի)։ Օրինակներ՝ ըհը', եիտնըրկէօ իկիք (ահա, նորէն եկաւ), ըտտը' աս ի տըղան (ահա այդ է տղան), ըսկը' աս ի ուզուօծըս (ահա այս է ուզածս)։

Երկբայական եղանակաւորող բառեր.- զանազան բայածեւերէ յառաջացած ունինք՝ թի գա՞տիս//չի գա՞տիս (կարծես), չըննա՞ (չըլլայ), հէրվինու (կ'երեւի)։ փոխառութիւններ են՝ պէլքի (թերեւս), մաք// մաք (միթէ), անապա՞ (արդեօք), սէօգտա՞ (իբր թէ), կալ (իբր թէ), ըլլամը (կարծես, կ'երեւի), կէօրունըը, զար (կ'երեւի)։ Օրինակներ՝ չի գա՞տիս խիլք չա՞նա (կարծես խելք չունի), չըննա՞ գընուօ (չըլլայ գնաց), հէրբուօ ի հէրվընու (հարբած է կ'երեւի), պէլքի ձուօյն կուգու (թերեւս ձիւն գայ), մաք գիէղը չըգէ՞ի (միթէ գիւղ չգացի՞ր), անապա՞ չէ՞ք ըղուօվ (արդեօք ի՞նչ եղաւ), կինէկ ըղիը ի սէօգտա՞ (կնիկ եղեր է իբր), չըտիսիըրի զը կալ (իբր թէ չէ տեսեր զինք), ըլլամը մուօրդ տիսուօծ չիս (կ'երեւի մարդ տեսած չես), կը ջուղնու զար (կ'առողջա-նայ կ'երեւի)։

Սաստկական եղանակաւորող բառեր.- ալ//իլի (այլ)։ փոխառու-թիւններ՝ պիլա՞ (նոյնիսկ), իլլաքի, պակուսը (ի մասնաւորի, մանա-ւանդ), նըգը... ալ//իլի (մինչեւ իսկ)։ Օրինակներ՝ դէօն իլի խուսէ՞ (դուն ալ խօսէ՞), քուօրը պիլա՞ կը լէցընի (նոյնիսկ քարը կը լացնէ), պակուսը սէօտը չուօտ ի (մանաւանդ սուտը չատ է), նըգը միը գիէղն իլի իկիք հէսուօվ (մինչեւ իսկ մեր գիւղը եկաւ հասաւ)։

Զիջական եղանակաւորող բառեր.- փոխառութիւններ են՝ մա՞ղէչ (ոչինչ, վնաս չունի), ալպիլի (հոգս չէ, փոյթ չէ), նէխա՞, հէրնէխա՞, չէիրա՞ (ինչեւէ)։ Օրինակներ՝ մա՞ղէչ, մառցէ՞ ըղուօծը (վնաս չունի, մոռցի՞ր եղածը), հօգիս՝ կուրթուօ, ալպիլի (կ'ուզես կ'երթամ, հոգս չէ), նէխա՞, հէմ միը բէնէն ասնէնք (ինչ որ է, հիմա մեր գործին անցնինք)։

Սահմանափակման եղանակաւորող բառեր.- մէն (միայն, քիչ կը գործածուի)։ փոխառութիւններ են՝ պա՞րի, հիչչէմը (գոնէ), պա՞ս, ֆա-կադ (միայն)։ Օրինակներ՝ տըղան մէն դարձուօվ հիտէօն (միայն տղան տուն դարձաւ), պա՞րի դէօն բա՞մ մը էսէօ՞ (գոնէ դուն բան մը ըսէ՞), պա՞ս գա՞տ տըսնիլ հօգիմ (միայն այդ տեսնել կ'ուզեմ)։

Ժխտական եղանակաւորող բառեր.- հը'ն, չի//չիը (ոչ), հիչ (ոչ մէկ բան, բնաւ), կաթիան, ապա՞տա՞ն (երբեք), լահ (ոչ)։ Օրինակներ՝ հը'ն, դառ չիկէն (չէ, դեռ չեկան), չիը, չըտիսա՞ (չէ, չտեսայ), լահ, չէ՞ հա չիսիս (չէ, ի՞նչ կ'ընես), հիչ ընձա՞տ բա՞ն կըննա՞ (երբեք այդպէս բան կ'ըլլա՞), ապա՞տա՞ն բազա չըմ ըննա՞ (երբեք համաձայն չեմ ըլլար)։

Կամային եղանակաւորող բառեր.- հէպը//հէպու (հապա), քէրի-վիս (քա արեւս), Աստուօծ հէվա՞նիս (Աստուօծ, հաւան ես, կամ՝ Աստ-ուօծ, օգնես կ'ըսուի սխալ արարքի մը կամ թշուառ վիճակի մը ի լուր)։ փոխառութիւններ են՝ հալա՞, հալա-հալա, տէ, հայտը, տի։ Օրինակներ՝ աս թի հուօտ ի, հէպը բէրուօ չուօց կըննա՞ (եթէ աս հաստ է, հապա բարակը ի՞նչպէս կ'ըլլայ), չըվա՞ չուգու քէրիվիս (ինչո՞ւ չի գար՝ (զարմանքի չեչտով մը)), Աստուօծ հէվա՞նիս, աս խի-վէօն իչի՞ (Աստուօծ, օգնես, այս խելին նայէ՞), հալա՞ էսէօ՞ իչինք (ըսէ՞ նայինք լանհամբերութեան չեչտով մը), տի՞, թուղգու (տէ՛հ, թող գայ)։

Բաղձանքի եղանակաւորող բառեր.- փոխառութիւններ են՝ քէչկի //քէչկիմ, իչալա (երանի), իլահիմ (Աստուօծ իմ)։ Օրինակներ՝ քէչկի ուրթէրէմ (երանի՛ երթայի), իչալա՞ Փըգգա, վէգը կուգու նըրքիվը (երանի՛ ծոխ, վիզը տակը գայ), իլահիմ, ծաղէկ բընիս՝ փէօչ դառնու (Աստուօծ իմ, ծաղիկ բռնես՝ փուչ դառնայ)։

Կոչական եղանակաւորող բառեր.- կոչական բառեր, որոնք տուեալ խօսքին մէջ իրենց բառային սովորական իմաստով չեն գործածուիր ու կ'արտայայտեն որոշ վերաբերմունք մը խօսակիցին նկատմամբ, ինչպէս՝ քուօյրըս, պաճըմ (քոյրս [ամէն չափ ու հասակի կանանց]), անգրգիւս, ետիս (եղբայրս), պապամ (հայրս), անամ (մայրս), չըպէն (կնքահայր) եւ այլն: Ասոնց հետ յաճախ կրնայ գործածուիլ պըրը (քրտերէն՝ եղբայր) բառը, ինչպէս՝ պըրը պաճըմ, պըրը անամ, պըրը չըպէն: Օրինակ՝ պըրը պապամ, քիլիցէ՛ք ուրթունք ասան՝ ձի (քալեցէ՛ք երթանք ըսի՝ ձեզի): Պըրը բառին այսպիսի գործածութիւնը խօսքին կու տայ կամային նշանակութիւն մը:

Առաւելութեան եղանակաւորող բառի իմաստ ունի նոյն պըրը բառը, երբ առանձին կը գործածուի, ինչպէս՝ պըրը զան իլի տէօ՝ (այդ ալ տո՛ւր), պըրը կինն չըհէսկընն (նորէն ալ չի հասկնար):

Պատճառի եղանակաւորող բառի իմաստ ունի տէի//տինը (թրք.՝ ըսելով) բառը, որ կը դրուի ստորադաս նախադասութեան աւարտին, ինչպէս՝ հօգի տինը պուրտուօ՞ս զը (կ'ուզէ ըսելով՝ պիտի տա՞ս):

Պատմողական եղանակաւորող բառ է՝ էմը, ինչպէս՝ հէսի էմը, ուրթուն զէնկէմ կատէն (կ'ըսէ՝ երթամ բողոքեմ դատաւորին): Նոյն երանգով կը գործածուին նաեւ հէսիս մը եւ հէսիմ (կ'ըսես, կ'ըսեմ) բայածեւերը, ինչպէս՝ մանն իլի առունց տըսնիլ հէսիս մը, մազիէ՛ք զըչկէնը (մայրն առանց տեսնելու՝ աղջիկը մի՛ ուզէք):

Բարբառին մէջ բաւական լայն կիրառութիւններ ունի տան բառը, որ շաղկապային դերէն բացի՝ ունի եղանակաւորիչ բառի տարբեր իմաստներ՝ կամային, սաստկական, ինչպէս՝ ուօ՛ն տան գընո՛ւ (ա՛ն ալ գնա՛), ժմէնկըվին քինթիրը հա բէղվէն տան պէրուտցան (այս ժամանակ-ուայ աղջիկները պէյրութցի կը փնտոեն), թանունց թուօղ տան իկուօծ ինք՝ չըվան՝ չէսիս բէրէյկի (թաղէ թաղ ալ եկած ենք՝ ինչո՞ւ բարի եկար չես ըսեր), ինծիկ կէսին տան Շուչան՝ մուգո՛ւ մըրվընո՛ւ քուչան (ինծի Շուչան կ'ըսես, մի՛ գար, մի՛ երեւիր անկիւնը):

Բարբառին մէջ բայական որոշ ձեւեր ու բառակապակցութիւններ կ'արտայայտեն եղանակաւորող բառերու իմաստներ, ինչպէս՝ թի գանտիմ//չի գանտիմ (կարծեմ), թի գանտիս//չի գանտիս (կարծես), հըր-վընու (կ'երեւի), չըննու (չըլլայ)՝ երկբայական. բան չիկէք (բան չկայ), զարուօր չանն (վնաս չունի), չըվէս (ինչիս, ինչիս է պէտք)՝ զիջական. քէրիվիս (քա արեւս), Աստուօծ հէվունիս (Աստուած, հաւան ես, կամ՝ Աստուած, օգնես)՝ կամային. հէսիս մը (կ'ըսես), հէսիմ (կ'ըսեմ)՝ պատմողական. եէօ կէր (ուր կար), եէօ եէր (ո՞ւր էր, երանի՞)՝ բաղձական եւ այլն:

Ե Ր Ր Ո Ր Դ Գ Լ Ո Ւ Ն

Բ Ա Ռ Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա.- ԲԱՌԱՊԱՇԱՐ

1.- Գրաբար-բարբառ բառեր

Քեսապի բարբառի բառապաշարին հիմնական մասը կը կազմուի գրաբարէն բարբառ փոխանցուած բառերով: Առաջնորդ ունենալով Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի բառարանը՝ մեր աշխատութեան գրաբար-բարբառ բառացանկին մէջ զետեղած ենք այդպիսի 1990 բառ: Գրաբար-բարբառ բառացանկէն դուրս մնացած են վարի պարագաներուն մէջ մտնող միաւորները.

ա.- գրաբար այն բառերը, որոնք Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի բառարանին մէջ չեն մտած, բայց փոխանցուած են բարբառին: Ասոնք զետեղած ենք բարբառային բառերու ցանկին մէջ, ինչպէս՝ աղտուտիմ (Հաղտոտեմ), էրուօս (Հարօս), աուկու (Հակոայ), բէզգէօնք (Հրազունք՝ Համաստեղութիւնը), բըրդուտ (Հրդոտ), բունկուօլ (Հունկալ), բըրընկիմ (Հըրնկիմ), գէլէք (Հալիք), գէլնց (Հալոց), թէցան (Հթացան), թէկիմ (Հթակեմ), թիթիէլս (Հթիթեղն՝ թիթեռնիկ), ժմկանչ (Հժամկոչ), լուօղ (Հլաղ), լուսուօղ (Հլուսաստղ), խիէվ (Հիսեւ), խէվ (Հիսի՝ թոչուն մը) եւ այլն:

բ.- գրաբարի այն պարզ բառերը, որոնք առանձին գործածութիւն չունին բարբառին մէջ, բայց պահուած են բարբառութիւններու մէջ: Բաւական երկար է շարքը այդպիսի բառերուն: Ստորեւ՝ անոնցմէ ամէնէն յատկանշականները.

այր - հաբըրար (հօրաբորջ այրը), մաբըրար (մօրաբորջ այրը).
աղիս (կղպանք) - անգրըլի (աղիս-կալել՝ բանտարկել, դուռը վրան գոցել, անասունները ախոռ կամ փարախ մտցնել).

անգղ - անգրըլթիվ (անգղ-թեւ՝ բոյս մը).

աստղ - լուսուօղ (լուսաստղ).

աղիճ - իչկէն (աղիճ-կին՝ աղջիկ).

աւեր - սըրտավիրք (սիրտ-աւեր-ք՝ յղի կնոջ սրտխառնուք).

եւ - վըրձըվիէն (որձեւէք).

ինչ - ըչ գանտիմ (ինչ գիտեմ).

դար - դձրվար (դարվար), դձրվիր (դարվեր).
 կին - կինէկ (կնիկ), իրեկինէկ (այրի-կնիկ), վերալուկէն (վարպետ-
 կին՝ մեծաւորի կինը, տիկին).
 տիկին - նարտրկէն (ներ-տիկին), տալտրկէն (տալ-տիկին), Սըվ-
 տրկէն (սուրբ-տիկին [սրբավայր մը]).
 ընդ - ըրկիէս (ընդ-կէս), դիրուօր (ընդ-իրեար) եւ այլն:
 կից - չփքէս (ափկից), բիժընկէն (բաժնեկից), առվընկէն (անուա-
 նակից).
 վայրի - արվըկէրուօս (վայրի-կարոս՝ բոյս մը).
 ծամ - զնմուօս (ծամ-տակ՝ ծոծրակ).
 ձար - ցըրմուօղ (ձար-մաղ).
 թերի - թըրըհնվուօս (թերահաւատ).
 ժամ - իժմմ (ի-ժամ՝ ժամերգութիւն, եկեղեցի), ժըմնիմ (ժամա-
 նեմ), ժնմկուչ (ժամկուչ).
 կոչ - ժնմկուչ (ժամկուչ).
 համբոյր - խաչանպուօր (խաչահամբոյր).
 կոխ - կըռնավիլ (կռուանել՝ հաւկիթը).
 կոր - կըրրաքա (կոր-ագի), կուրկուր ագա (կոր-կոր ագի). երկուքն
 ալ՝ «կարիճ» իմաստով.
 ճիւղ - ճըռնիէկ (ճիւղ-իկ).
 մոյթ - ճըռմըթիլ (ճիւղ-մոյթ-ել՝ երկճղել).
 վրէպ - վըրպէօկ.
 կեանք - կինուօք (կենօք՝ վիճակով).
 գող - ձձըգուղ (օձ-ա-գող [սողուն մը]).
 յոյլ - ձննթէն (յուլութիւն).
 տօն - Տննէն Ջնտէկ (Տօնին Ջատիկ՝ Սուրբ Մնունդ).
 գ.- այնպիսի բառեր, որոնք բարբառին մէջ ունին պարզ ձեւ, իսկ
 գրաբարի մէջ բարդութեան մէջ են՝ ածանցաւոր, կրկնաւոր եւ այլն:
 Ստորեւ քանի մը օրինակ.
 գանգ(ատ)իմ - գննկէմ. գննկուօսգ (գանգատ) առանց ատ սոսկա-
 ծանցի. կայ նաեւ գննկըտիլ (գանգատիլ) բազմապատկական ձեւը.
 ոլ(որ)եմ - իլլիմ//վիլլիմ. առանց որ սոսկածանցի.
 կող(կող)եմ - կըղղում. կայ նաեւ կրկնաւոր ձեւը՝ կըղկըղում.
 լոմ(լոմ)եմ - լըմմիմ. կայ նաեւ կրկնաւոր ձեւը՝ լըմլըմիմ.
 գայեմ - գիիմ (անասունները քչել). կայ գրական շրջագայել բառին
 մէջ.
 կղ(կղանք) - քըխ (մնկ).
 պս(պղ)ամ - պըսսում (փայլիլ).
 Ասոնց վրայ կարելի է աւելցնել նաեւ անկախ գործածուող բայա-
 կան այնպիսի հիմքեր, որոնք գործողութիւնները պատկերող մակբա-
 յական բառեր են կամ ձայնարկութիւններ ու բնաձայնութիւններ:
 Օրինակ՝
 հափըչ-հուփըչ՝ յափշտակել բայէն. այդ գործողութիւնը կը պատ-

կերէ.

քըչ//քըչ-քըչ - քչել բայէն. հաւերը վանելու արտայայտութիւն.
 քըս//քըս-քըս՝ հաւանաբար քսուիլ բայէն. չունը կանչելու
 արտայայտութիւն.
 զըռո՝ զոալ բայէն, բնաձայնութիւն. նոյնպէս՝ խըչչ (խչչալ), ճըզզ
 (ճչալ), վըզզ (վզզալ) եւ այլն:
 Այսպիսով, այս երեք շարքերուն մէջ մտնող բառերու ամբողջական
 քանակն ալ հաշուած՝ քանի մը հարիւրով կրնայ հարստանալ բարբառի
 գրաբարեան բառացանկը: Շուրջ 2400 գրաբար բառերու եւ բառա-
 հիմքերու թիւը փոքր ու արհամարհելի քանակ մը չէ՝ առաւելագոյնը
 5-6 հազար խօսող ունեցող եւ թրքախօս բնակավայրերով դարերով
 շրջապատուած Բեսապի բարբառին համար: Համեմատութեան համար
 նշենք, որ մեր տրամադրութեան տակ գտնուող բարբառագիտական
 աշխատութիւններ չունին այսքան հարուստ գրաբարեան բառացանկ:
 Այսպէս՝ Մեղրիի բարբառը (էդուարդ Աղայեան, Եր., 1954) առանց
 սահմանափակուելու որոշ բառարանի մը տուեալներով ու ներառելով
 գրաբարեան հիմքերով մեծ թիւով բարբառային բառեր, շուրջ 75 բառ,
 կը հաշուէ 2010 բառ, Կաքաւաբերդի բարբառը (Յովհաննէս Դ.
 Մուրատեան, Եր., 1967)՝ 1429 բառ, Շատախի բարբառը (Մարլենա
 Հ. Մուրատեան, Եր., 1962)՝ 1354 բառ, Ուոյի բարբառը (Մանուէլ Ե.
 Ասատրեան, Եր., 1962)՝ 1527 բառ, Տիգրանակերտի բարբառը
 (Անահիտ Հաննէեան, Եր., 1978)՝ ըստ Առձեռն Բառարանի, 1300 բառ:
 Վերջապէս նշենք, որ գրաբար-բարբառ բառացանկէն դուրս
 մնացած են Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուին մէջ տեղ գտած այն
 բոլոր օտար բառերը, որոնք թէեւ կան բարբառիս մէջ, բայց, մեր
 կարծիքով, ոչ թէ փոխանցումներ են հին լեզուէն, այլ զուտ
 բարբառային փոխառութիւններ են:

2.- Բարբառային բառեր

Բարբառային բառերու մեր ցանկը կ'ընդգրկէ հետեւեալ խումբերը.
 ա.- Հայերէն հիմքերով բարդ ու ածանցաւոր բարբառային կազ-
 մութիւններ, ինչպէս՝ ծառիմ (ծառ-ել՝ խնամել), քէրիմ (քար-ել՝
 նետել), բամկօկ (բամպակ-ուկ՝ մակաբոյծ մը), չըրդէ (չոր (ք)-դի՝
 շուրջը), առջիվիրի (առաջի-աւուրէ՝ սկիզբէն), եիտնըրկէօ (ետն-
 երկու՝ կրկին), կիսնվէօր (կէս-աւուր՝ ճաշ), ըրկըզգէք (երկու-հոգի-
 ք՝ յղի), բնրնտ լուսէկ (բորոտ լուսիկ՝ լուսատտիկ), առստաղէկ
 (առաստաղ-իկ՝ աստղ), առջընզուօրք (առաջին-զօրք՝ նորահարսին
 տունը առաջին այցելութիւնը), հնրքըրնր (հօրաքոյր-այր՝ հօրաքոյր
 ամուսինը), պչտտուօկ (պատ-տակ՝ ծմակ), պաղքնչ (պաղ-քաշ՝
 սառոյց) եւ այլն:
 բ.- գրաբարէն բարբառ փոխանցուած այնպիսի բառեր, որոնք

Հիմնական իմաստափոխութեան ենթարկուած են եւ որպէս այդպիսին՝ բարբառային բառեր նկատուած: Ասոնք գրաբար-բարբառ բառացանկին մէջ բերուած են աստղանիշով, ապա՝ իմաստափոխութեամբ Հանդերձ՝ կրկնուած բարբառային բառերու ցանկին մէջ:

գ.- բառեր, որոնց ծագումը առհասարակ անծանօթ կը մնայ մեզի. անոնց արաբերէնէ, թրքերէնէ, քրտերէնէ, պարսկերէնէ եւ այլ լեզուէ մը փոխառութիւն ըլլալը կարելի չէ եղած հաստատապէս ապացուցել: Անոնցմէ շատերը հաւանաբար գրաբարէն չաւանդուած Հին Հայերէնեան բառեր են, որոնց մէջ բաւական շատ են բուսական եւ կենդանական աշխարհին վերաբերող բառերը: Քանի մը հարիւրի հասնող այս բառերէն ստորեւ օրինակներ.

- աղբուրիլ - ընկոյզին միջուկը դուրս հանել
- աննիլ - արձագանգել. նոյն ձայնը անվերջ թրթռացնել
- առտիլ - ոռնալ
- ասսիլ - գիշերով որսը թաքուն հետապնդել (յածել^օ)
- աւրվանտ - վիշապ
- աւրոշ - երկար ու թարմ ուտ
- բալ - տհաս թուզ
- գըդըլիլ - որդնոտիլ՝ ցորենը
- գաթերկիլ - թեթեւ քուն քաշել
- գաթտիլ - վռնտել
- դաղչիլ - լիալուսին ըլլալ
- դաշմիլ - գլխապտոյտ ունենալ, ուշաթափիլ
- դասվըտիլ - 1) փսխիլ, դուրս գալ. 2) հասուն պտուղի հիւթը ծորիլ

- դըրնիլ - փոքրիկ կլոր հաց
- դուլագտիլ - առատ կղկղել
- դուղուօզ - փականքի տեսակ մը
- ըրկընուօկ - միջակ մեծութեամբ կուժ
- թակավուրիլ - հալածել
- թասլիլ - ետեւէն վազել, հալածել
- թուլթուլիլ - ընկոյզին կանաչ կեղեւը հանել
- թօպ - թզենիի ծաղիկ
- իշվաթ - լուսնոտ, ցաւագար
- խնմաց - շարոց
- խնբէօլ - առատ տերեւներով թարմ ուտ
- խնծուօր - մոծիք
- խըրանճ - գետնաոխիժ
- խալմըտիլ - խէթ-խէթ նայիլ
- խում - խիտ
- խումչուօսզ - լեցուն
- ծիէդպ - ցախով հիւսած ցանկապատ
- կանանկ - անձրեւային, ամպոտ

- կանրնկիլ - անձրեւել
- կավվըրիլ - խակ պտուղէն բերնի անհամանալը
- կարտիլ - որոտալ
- կըզպէթ - կուզկապ
- կէլիկ - սկիւռ (գայլիկ^օ)
- կըլաղիլ - կիսակլոր շրջանակի մէջ առնելով քշել
- կըլուօղ - 1) գունդ. 2) առատ՝ պտուղը ծառին վրայ
- կըրընդիլ - անյագօրէն խմել
- կըրըշտիլ - կոտորով հարուածել
- հանդօզ - կոն
- հուլմուտիլ - հոտոտալ
- հուլպուղիլ - շատ հասուննալ
- մանիէզ - պղտոր ջուր
- մանիզ - առնանդամ
- մընմընօկ - թեթեւ անձրեւ
- նավ - կլիմայ
- չախդիլ - քաշել
- չանդօրդ - երկու ափերուն մէջ գոյացած փոսը
- չարթիլ - կացինով շերտել
- չըմէթ - չթթուած խմորի հաց
- չիմաչիլիլ - հագուստը հակառակին դարձնել
- ուրրօմ-կուրրօմ - իրարանցում, հրմշտուք
- պըլիէզ - թոնրի յատակէն քիչ վեր բացուած օդանցք
- սէլիլ - սալարիլ, հանգստանալ՝ մանուկը
- սընտախբէկ - ծեղով աման
- տարակիլ - մագլցիլ, գառիթափը ելլել
- տըպպիլ - չորեքթաթ քալել՝ մանուկը
- տաճիլ - տոտիկ-տոտիկ քալել՝ կաքալը
- փառճիլ - փետտել
- փէլիլ - փաթթել
- քարթուօփ - թակարդ
- քընդիլ - 1) խել, յափշտակել. 2) բոնկիլ՝ կրակը
- քըլպիլ - յանդիմանել

դ.- բառային պարզ ձեւեր, որոնք գրաբարի մէջ բաղադրեալ տեսք ունին, ինչպէս՝ գէնկիլ (գանգ արմատէն՝, գր.՝ գանգատիլ), կըղղում (կող արմատէն, գր.՝ կողկողամ), լըմմիմ (լոմ արմատէն, գր.՝ լոմլոմմ), պըսսում (գր.՝ պըսպղամ) եւ այլն:

ե.- Հայկազեան բառարանէն դուրս մնացած գրաբար բառեր, ինչպէս՝ էրուօս (<արօս), թիթիէխ (<թիթեղն) եւ այլն:

զ.- մէկ-երկու տասնեակի չափ այնպիսի բարդութիւններ, որոնց բաղադրիչներէն մէկը փոխառեալ բառ է, ինչպէս՝ հիւրիսպէօր (հերիսա - ապուր), փարչա-պատուօր (պատառ-պատառ), չաթալօկ էգիք

(երկնի ազի՝ ծիծեռնակ), խուրուզը՝ վարտեք (աքլորի վարտիք՝ ծաղիկ մը), ծովը՝ քարքաղ (ճայ), Հերմէն ճանփուօը (գողի ճամբան՝ Յարդգողի ճանապարհ) եւ այլն:

Հասկնալի է, որ փոխառեալ բառերէն շատեր Հնչինական, ձեւաբանական եւ իմաստային փոփոխութիւններու ենթարկուելով՝ ստացած են բարբառային տեսք: Մենք այդ բառերը նկատած ենք փոխառութիւններ ու զետեղած փոխառեալ բառերու ցանկին մէջ:

Աւելցնենք, որ մեր պատրաստած բարբառային բառացանկը կը պարունակէ շուրջ 2800 բառ: Մենք կարելի խնամքով Հաւաքած ենք այդ բառերը ու նկատած, որ բառահաւաքման ամէն փորձի Համար անակնկալներ ունի Քեսապի բարբառը: Համեմատութեան Համար նշենք, որ Մեղրիի բարբառը (էղուարդ Աղայեան, Եր., 1954) ունի 1423, Ոոյի բարբառը (Մանուէլ Ե. Ասատրեան, Եր., 1962)՝ 1852, Շատախի բարբառը (Մարլենա Հ. Մուրատեան, Եր., 1962)՝ 631 բարբառային բառեր եւ այլն:

3.- Փոխառեալ բառեր

Մեր պատրաստած փոխառեալ բառերու ցանկը կ'ընդգրկէ շուրջ 2500 բառ: Այս թիւը կարելի է գէթ Հազարով մըն ալ աւելցնել: Սակայն մենք այստեղ փորձած ենք զետեղել միայն այն բառերը, որոնք բարբառի բառապաշարին Համար որոշ կարեւորութիւն կը ներկայացնեն ու Համեմատաբար Հին փոխառութիւններ են: Նորագոյն փոխառութիւնները գրեթէ չենք արձանագրած:

Քեսապի բարբառի փոխառութիւնները կատարուած են պարսկերէնէ, արաբերէնէ, թրքերէնէ եւ արեւմտաեւրոպական լեզուներէ:

ա.- Պարսկերէնէ փոխառութիւններ.- Առանց նկատի առնելու գրաբարէ փոխանցումները՝ մեծ թիւ կը կազմեն բարբառի պարսկական ծագում ունեցող փոխառութիւնները: Անոնցմէ շատերը Հասարակաց են նաեւ արաբերէնի եւ թրքերէնի Համար եւ գրեթէ անհնարին բան է ցոյց տալ, թէ պարսկական ծագումով այս կամ այն բառը անոնցմէ որո՞ւն միջոցով փոխանցուած է բարբառին:

Քեսապի աշխարհագրական դիրքը եւ տեղւոյն Հայոց՝ արաբ, բայց յատկապէս թուրք ազգաբնակչութեան մը օղակին մէջ կղզիացած ըլլալու Հանգամանքը կը թելադրէ այդ փոփոխութիւնները այս վերջին լեզուներէն ստացած ըլլալը: Ասիկա եթէ կարելի է ընդունիլ պարսկական ծագում ունեցող փոխառեալ բառերու մեծամասնութեան Համար, ապա կը բացառուի շարք մը բառերու պարագային: Արդարեւ, այդպիսի շարք մը բառերու առանձին քննութիւնը կատարելով՝ Տիգրան Անդրէասեան (Սուէտիայի բարբառը, Երեւան, 1967, էջ 187-195 եւ 332-337) կը փորձէ ցոյց տալ անոնց ուղղակի պարսկերէնէ եւ քրտերէնէ փոխառուած ըլլալը: Ասիկա զինք կ'առաջնորդէ ուրիշ վարկածի մը, թէ Անտիոքի Սուէտիա, Քեսապ, Արամօ-Ղնեմիէ շրջաններու

Հայութիւնը գաղթած պէտք է ըլլայ պատմական Հայաստանի Հարաւէն, Պարսկաստանի սահմանամերձ տեղէ մը. Տ. Անդրէասեան ցոյց կու տայ Ձանգեզուրն ու Ղարաբաղը՝ որոշ Հանգիտութիւններ գտնելով այդ եւ Սուէտիոյ բարբառներուն միջեւ (էջ 337):

Մէկզի ձգելով Քեսապ-Սուէտիա խումբի Հայոց ո՛րտեղէն եւ ե՛րբ գաղթած ըլլալու վարկածը՝ Համոզիչ կը գտնենք Անդրէասեանի ցուցումները ներկայացուած բառերուն գէթ ոմանց Համար, որոնք կան նաեւ Քեսապի բարբառին մէջ: Ինք ալ արդէն որոշ վերապահութեամբ մը կը ներկայացնէ զանոնք: Ստորեւ այդ շարքի բառերէն ամէնէն Հաւաստիները կը քննենք Հետեւեալ խումբերուն մէջ.

1.- Բառեր, որոնք Հասարակաց չեն արաբերէնի եւ թրքերէնի Համար, բայց տարածուած են բարբառին մէջ ու այնքան յատուկ են անոր. ինչպէս՝ չէ (ինչ) եւ չըվն (պրս.՝ չրա, քրտ.՝ չմա, «ինչու» իմաստով): Ասոնց Հայերէն Համարժէքները երբեք ծանօթ չեն բարբառին. կայ միայն քարացած արտայայտութիւն մը՝ ըչ գնտիմ (ինչ գիտնամ), ուր ըչ բառը Հեռաւոր յիշողութիւն մըն է կարծէք ինչ դերանունին, բայց նոյնքան մօտ է արաբերէն խօսակցական լեզուի շուկամ ըչ (ինչ) բառին: Կայ նաեւ թաթ բառը. քեսապցիք այսպէս կը կոչեն ալեւի կամ նուսէյրի կոչուող արաբները, որոնց Հայերէնը կը նկատուի Համայնէն ու Հոմսէն դէպի արեւմուտք՝ մինչեւ Լիբանան, եւ դէպի Հիւսիս՝ մինչեւ Կիլիկիա Հասնող ծովափնեայ ու լեռնային երկրամասը: Ձանոնք այդպէս կը կոչեն նաեւ Անտիոքի շրջանի Սուէտիոյ, Ղնեմիէի եւ Արամոյի Հայերը: Աղեքսանդրէթի ծոցի շրջանակի Հայոց, որոնք նոյնպէս ապրած են ալեւիներու դրացնութեամբ, ծանօթ չէ այս բառը, նոյնպէս թուրքերուն եւ իրենց՝ ալեւիներուն: Թաթ կը կոչուի նաեւ իրանեան խմբաւորում մը, որ կ'ապրի Հիւսիսային Պարսկաստանի մէջ, մասամբ նաեւ Ատրպէյճան: Ըստ Անդրէասեանի, Անտիոքի շրջանի Հայերը շատ Հաւանաբար իրենց գաղթէն առաջ ապրած են սա թաթբերու դրացնութեամբ, իսկ Միջերկրականի այս ափերը գաղթելէ ետք այդ անունով կոչած են ալեւի արաբները: Ասիկա սկզբնապէս եղած է իբրեւ ծածկախօսութիւն, ապա՝ վերածուած սովորական անուանումի: Սակայն բառը բարբառին մէջ ունի նաեւ «չարքաչ, անխնայ աշխատող» իմաստը եւ շատ Հաւանական է, որ իբրեւ վերադիր տրուած է ալեւիներուն, որովհետեւ անոնք Անտիոքի շրջանի Հայոց կողմէ կը ճանչցուէին թուրք, արաբ ու Հայ կալուածատէրերու քով իբրեւ մարապա, այսինքն՝ Հանդերձ ընտանեօք քառորդով աշխատողներ:

2.- Բառեր, որոնք թէեւ Հասարակաց են արաբերէնի, թրքերէնի եւ Հայերէնի Համար ալ, բայց իմաստային ու Հնչինական որոշ առանձնայատկութիւններով անոնցմէ կը տարբերին եւ ուղղակի փոխառութիւններ են: Օրինակ՝ թախթ բառը, որ ոչ միայն «գահ, գահոյք», այլեւ «մահճակալ, փայտակերտ կազմած՝ որի վրայ նստում, բազմում կամ պառկում են» (Արմատական Բառարան) իմաստը ունի, բարբառին մէջ կը ներկայանայ երկու ձեւով՝ թախդ եւ տուխտ: Առաջին ձեւը

ունի «գահ» իմաստը ու թրքերէնէ կատարուած յետին փոխառութիւն է, իսկ երկրորդը Հին փոխառութիւն է պարսկերէն բառին երկրորդ իմաստին յարող երանգներով՝ 1) երկրորդ յարկի տախտակամածը. 2) փայտով կամ տախտակով շինուած որեւէ Հարթութիւն. 3) փայտով կամ տախտակով շինուած կազմած, որուն վրայ որթատունկի ոստերը կը փոփոխուին կամ որեւէ այլ բան: Այս իմաստները թրքերէնին յատուկ չեն: Պարսկերէն մաքար բառը բարբառին մէջ կայ մար/մար գոյգ ձեւով, բայց նոյն իմաստով՝ «միթէ». թրքերէնի մէջ կայ նոյն ձեւով, բայց տարբեր իմաստով: Պարսկերէն թաքի բառը բարբառին մէջ կայ նրգը/րգը գոյգ ձեւով, բայց նոյն իմաստով՝ «մինչեւ». թրքերէնի թաքի բառը ունի «որպէս զի» նշանակութիւնը:

3.- Արաբերէն արմատով պարսկերէն բառաձեւերէն Տ. Անդրէասեան կը նշէ պազ (ետք, վերջ, յետոյ, Քեսապի բարբառին մէջ՝ պազը) բառը, որ նախադաս կապ է բարբառիս մէջ: Իբրեւ մակբայ բարբառս ունի նաեւ պազան նոյնանիչ ձեւը: Արաբերէն արմատով պարսկերէն սապահան բառաձեւը բարբառին մէջ պա խումբի ամփոփմամբ եւ Հ>խ Հնչիւնափոխութեամբ եղած է սախան (առաւօտ): Վերջինիս ան վերջամասը դուրս դրուած է բառի յոգնակի կազմութեան ատեն՝ սախան՝ սախի:

բ.- Արաբերէն փոխառութիւններ.- Բարբառի փոխառեալ բառերուն մեծամասնութիւնը ունի արաբերէնի ծագում: Անշուշտ, այս բառերէն ոմանք ուղղակի փոխառութիւններ են, իսկ ուրիշներ՝ թրքերէնի միջոցով փոխանցումներ: Դեռ քանի մը տասնամեակ առաջ Քեսապի Հայկական շրջանը շրջապատուած էր թրքական գիւղերու ցանցով մը: Արաբախօս բնակավայրերու Հետ Հայոց շփումը կը կատարուէր անոնց խողովակով: Հետեւաբար, յատկապէս օսմանեան իշխանութեան տարիներուն, արաբերէն բառերու մուտքը առհասարակ պիտի կատարուէր թրքերէնի միջոցով: Սակայն կարելի չէ բացառել ուղղակի փոխառութիւններու պարագան ալ, որովհետեւ կէս կամ մէկ օրուայ Հեռաւորութեամբ՝ քրիստոնեայ, ալեւի եւ սիւննի արաբներու գիւղերուն Հետ շփումը ամէնօրեայ եղած է, յատկապէս երբ նկատի ունենանք, որ Լաթաքիան, Ճըսըր Շուղուրը, Անտիոքը, Սուէտիոյ շրջանի Լէվչիան եւ Միատունը, բոլորն ալ արաբական դիմագիծով բնակավայրեր, Քեսապի Համար եղած են վարչական, տնտեսական եւ առեւտրական նշանակութիւն ունեցող կեդրոններ:

Արաբերէն ծագումով բարբառային բառերու քննութիւնը ցոյց կու տայ, որ քեսապիք դեռ աւելի վաղ ժամանակներուն, թուրք ազգաբնակչութեամբ մը օղակուելէ առաջ, շատ աւելի սերտ յարաբերութեան մէջ եղած են արաբախօս շրջաններու Հետ: Ծատ բառեր՝ իրենց Հնչիւնական եւ իմաստային իւրայատկութիւններով Հնագոյն փոխառութիւններ են: Անոնք առհասարակ Հնչիւնապէս եւ իմաստով որոշ փոփոխութիւններու ենթարկուած են, բան մը, որ չ'երեւիր թրքերէնէն անցած նոյն բառերուն մէջ: Տանք քանի մը օրինակներ.

Ուխտուով (կանուխ)՝ կազմուած է արաբերէն «ուազթ» (ժամանակ) բառով եւ Հայերէնի գործիականի ու մասնիկով: Կայ նաեւ վախրթ (ժամանակ) բառը, որ թրքերէնէ յետին փոխառութիւն է:

Շըլդիլ (բանով մը զբաղիլ, ուշանալ)՝ արաբ. «շըլլ» (զբաղում) բառէն. ունի զըլ>լղ դրափոխութիւն: Նոյնը իբրեւ յարադրութիւն կայ թրքերէնի ճամբով՝ մաշղուլ ըննիլ (զբաղիլ):

Թըմիլ (վերջացնել)՝ արաբ. «թամ» (լրում, աւարտ). նոյնը թրքերէնի ճամբով՝ թամամլամըշիլիլ (վերջացնել):

Ուսսիլ (խրսսէմ՝ մեռնիմ, խրսսիմ՝ փճացնել)՝ արաբ. «խայէս» (փճանալ, մեղք ըլլալ) բառէն. թրքերէնի ճամբով կայ խայիս ինիլ (փճացնել) յարադրութիւնը:

Այսպէս՝ ուղղակի փոփոխութիւններ պէտք է նկատել արաբերէն Հիմքերով կազմուած պարզ ու սոսկածանցաւոր բայերը, ինչպէս էվանիլ (օգնել), էպալիլ (լեցնել), շուրիլ (ապսպրել), քիֆրիլ (Հայհոյել), քըմնիլ (քմին գալ), Ֆըզգիլ (ծռել), Փարճիլ (դիտել), ճիպէլիլ (պատասխանել), անըլիլ (զգուիլ), անուլիլ (կեռով բռնել), զըլըղիլ (ճչալ), խըլտէնիլ (սխալիլ. արաբ. «ղալաղ» (սխալ) եւ Հայ. անալ բայական վերջատրութեամբ) եւ այլն: Ասոնց Հակառակ, արաբերէն Հիմքերով թրքերէն փոխառութիւնները ինիլ (ընել) եւ ըննիլ (ըլլալ) բայերով կազմուած յարադրութիւններն ու կցականներն են, ինչպէս՝ Հազմ ինիլ (մարսել, թրք.՝ Հազմ էթմաք), աթապ ինիլ (մեղադրել), այիպ ինիլ (ամօթ ընել), էմըր ինիլ (Հրամայել), ճէզալամըշիլիլ (պատժել), սապապ ըննիլ (պատճառ ըլլալ, թրք.՝ սապապ օլմաք) եւ այլն:

գ.- Թրքերէն փոխառութիւններ.- Բարբառին փոխառութիւններուն կարեւոր մէկ մասը կատարուած է թրքերէնէ եւ ասիկա Հասկնալի է՝ դարեր շարունակ օսմանեան իշխանութեան տակ գտնուող ու թրքական գիւղերու խիտ ցանցով մը օղակուած Քեսապի փոքրաթիւ Հայութեան Համար: Թրքերէն կատարուած փոխառութիւններուն մէջ մեծ տեղ կը զբաւեն պարսկերէն եւ արաբերէն Հիմքերն ու բառերը:

դ.- Արեւմտաեւրոպական լեզուներէ Հնագոյն փոխառութիւններ.- Տ. Անդրէասեան արեւմտաեւրոպական լեզուներէ կատարուած Հնագոյն փոխառութիւնները կը նկատէ խաչակրաց արշաւանքներուն եւ Անտիոքի Լատին դքսութեան լեզուական ուղղակի ազդեցութեան Հետեւանք: Այդպիսի բառերու իր ցանկը (Սուէտիայի բարբառը, Եր., 1967, էջ 159-200) մասամբ Հասարակաց է նաեւ Քեսապի բարբառին Համար: Ըստ մեզի՝ այդ բառերէն ոմանք փոխառութիւններ չեն, իսկ միւսերը, Հաստատապէս փոխառութիւններ, պէտք է նկատել պատմական այդ Հեռաւոր անցեալի յիշատակը Քեսապի եւ Սուէտիոյ բարբառներուն մէջ:

Տ. Անդրէասեան Սուէտիոյ բարբառին մէջ կը գտնէ Փրանսերէնէ կատարուած 10 Հնագոյն փոխառութիւններ (նոյն, էջ 195-198), որոնցմէ

վեցը կը տեսնենք Քեսապի բարբառին մէջ՝ կուօթ (սլ.՝ կուդ, ֆրս.՝ *goutte*), մանճը՝ էպօր (սլ.՝ մանջու, ֆրս.՝ *manger*), մէլըկի/մէլի (սլ.՝ մալի, ֆրս.՝ *mal*), պաթօս (սլ. բադաճու, ֆրս.՝ *batteuse*), պէրուն (սլ.՝ բարուն, ֆրս.՝ *baron*), փառճիլ (սլ. փուրճիլ, ֆրս. *purger*): Բայց ասոնցմէ երեքը, մեր կարծիքով, փոխառութիւններ չեն: Արդարեւ՝ կուօթ բառը Հին Հայերէնի կաթ բառն է, որ երկու պարագային ալ ունի «կաթիլ» իմաստը: Փառճիլ բառը (փետտել, ծաղիկի թերթերը կամ մազերը քաշել, փրցնել, բզքտել) աւելի մօտ է Հին Հայերէնի բեռեկտել կամ փեճոնել բայերուն: Վերջինը ունի «խտոր փրցնելով քաղել» իմաստը: Հին Հայերէնի փեճոնել բառը կը ծագի ճապուռ (ճանկ, ճիրան) արմատէն: Քեսապի եւ Սուէտիոյ բարբառներուն այս բառը կը գտնենք նաեւ Հայերէնի արեւելեան բարբառներուն մէջ՝ ճապուել, ճեպուել, ճապուել եւ այլ ձեւերով, բայց գրեթէ միշտ նոյն իմաստներով: Քեսապի մէլըկի/մէլի եւ Սուէտիոյ մալի նոյնիմաստ բառերուն Հիմքը, ըստ մեզի, մալ արմատն է, որ ունի Հնդեւրոպական ծագում ու կ'արտայայտէ «մանրել, փշրել, աղալ» իմաստները, իսկ ցեղակից լեզուներու մէջ՝ մինչեւ իսկ «ալիւր» իմաստը: Ելելով բարբառային բառին իմաստէն, կ'երեւի թէ այս Հիմքը Հին Հայերէնի մէջ արտայայտած է գոյականի իմաստ, ինչպէս ցեղակից լեզուներու մէջ: Ըստ այնմ ալ, ենթադրելի է, որ արտայայտած ըլլայ «փշրուած, աղցուած բան, փոշի, մղեղ», ապա «որեւէ կաշուն բան, խմոր, ցեխ» իմաստները, որովհետեւ Քեսապի բարբառին մէջ մէլի եւ մէլըկի (մալ-արկ-իլ) կը նշանակեն «փոշիի, ալիւրի, մուրի, ցեխի կամ նման բանի մը մէջ թաթխել, այդպիսի բանով մը աղտոտել»: Նոյնն է պարագան նաեւ Սուէտիոյ բարբառին մալի պարզ ձեւին: Վերի Հին Հայերէնեան բառերուն Համար տե՛ս Արմատական Բառարանը:

Միւս երեք բառերը վստահաբար ուղղակի փոխառութիւններ են: Այսպէս՝ պէրուն (կալուածատէր, գործատէր, աղա) կը պահէ օտար բառին սկզբնական նշանակութիւնը: Պաթօս՝ անիւաձեւ քարէ խոշոր գործիք, որ անասունի մը լծուելով կը պտտի Հարթակի մը վրայ. ասով կը ճմլեն ձիթապտուղը, ցորենին ու ձաւարին թեփը կը Հանեն: Մանճը էպօր, կերակուր մը. բառը բաղադրուած է ֆրս. *manger* (կերակուր ուտել) եւ Հայ. ապուր բառերէն: Առաջին բաղադրիչէն առաջացած է նաեւ Գարատուրան գիւղէն Մանճիկունք մականունը եւ նոյնէն՝ Մանճա կեղծանունը:

Տ. Անդրէասեան իտալերէնէ երեք փոխառութիւններ կը նշէ (նոյն, էջ 198-199): Ասոնցմէ երկուքը տեղանուններ են՝ Քեսապ (Քէսուօպ, սլ.՝ Քասուբ), իսկ միւր՝ Գարատուրան (Կէրէտըրուն, սլ.՝ Գարատուրըն [Երեւանեան Հրատարակութեան տառադարձութիւնը չենք փոխեր]): Ըստ Տ. Անդրէասեանի վկայակոչած Dr. A. Barleton-ի՝ առաջինը կը ծագի իտալերէն Քազա Պէլլա (գեղեցիկ տուն) կապակցութենէն, իսկ երկրորդը, որ ծովափէն դէպի արեւելք ութ քիլոմետր երկարող կիրճ մըն է Համանուն գիւղով, կը ծագի իտլ. քորիտոր (մի-

ջանցք) բառէն [աւելի Հաւանական պիտի ըլլար ցոյց տալ լատիններէն քորիտորում բառը]: Այս երկու տեղանուններու մասին այս եւ այլ բացատրութիւններ տե՛ս մեր «Քեսապ» Գ. Հատորին մէջ (Հալէպ, 2004), էջ 64ի թիւ 40 ծանօթագրութիւնը:

Տ. Անդրէասեան անգլերէնէ փոխառութիւններ կը նկատէ առօրի (սլ.՝ արրիլ, անգլ.՝ *roar*) բառը, որ բարբառիս մէջ ունի «բառաչել, բարձրաձայն լալ, գոռ ձայնով պոռալ, ոռնալ» իմաստները եւ՝ թօզ (սլ.՝ թուզ, անգլ.՝ *toss*) բառը (զնդակ): Մեր կարծիքով՝ առաջինին Համար աւելի ճիշդ պիտի ըլլար մատնանչել Հայ. ոռնալ բայը, իսկ երկրորդին Համար անգլ. *toss* (մէկէն ի մէկ ուժով վեր նետել) բառը կասկածելի աղբիւր մըն է:

Ասոնցմէ զատ, Քեսապի բարբառին մէջ կը գտնենք յունարէն երկու բառեր, որոնք թէեւ կը յիշուին Հայ Հին մատենագրութեան մէջ, բայց որոշապէս գրաբարէ փոխանցուածներ չեն: Այսպէս՝ կայ սըլէգէկ (իկ) էկ ածանցով) բառը (խմորեղէն մը), իսկ գրաբարի մէջ կայ սիդինգ (բարակ ալիւրով շինուած Հաց): Երկրորդը Կանիկ տեղանունն է՝ Քեսապի շրջանին մէջ լեռ մը, որ կաքաւի որսորդութեան Հոչակուած տեղ էր եւ արօտավայր: Գրաբարի մէջ կունիկ բառը ունի «կրկէսի հրապարակ» իմաստը, իսկ յունարէնի մէջ «որսատեղ» իմաստը:

Վերջին Հարիւրամեակին, յատկապէս անգլերէնէ եւ Ֆրանսերէնէ նորանոր բառեր մտած են բարբառին մէջ, իբրեւ Հետեւանք լատին եւ բողոքական միսիոնարութիւններու գործունէութեանց, Ֆրանսական գաղութատիրութեան, արեւմտեան ճարտարարուեստի եւ գիտութեանց շրջան ներթափանցումին: Այդ բառերէն յիշենք՝ կաթուլա (կաթոլիկ), փանթալօն (տաբատ), քըրավաթ (փողկապ), օթօմալի (ինքնաշարժ), ճանտարմա (ոստիկան), փապրան (նաւապետ), նըրս (Հիւանդապահուհի), սօգըրը (բժիշկ) եւ այլն:

Այսօր, Քեսապի բարբառը արաբերէնի ուղղակի ազդեցութեան ենթակայ է, ատիկա՝ ոչ միայն այն պատճառով, որ շրջանը կը մտնէ Սուրիական Արաբական Հանրապետութեան մէջ, այլեւ անոր Համար, որ օղափոխութեան ու գիւղատնտեսական շրջան մը ըլլալով՝ մեծ թիւով արաբախօս երկրացիներ կայք Հաստատած են Հոն:

Այսուհանդերձ, Քեսապի բարբառը, իբրեւ կենդանի բարբառ, կը շարունակէ իր բնօրրանին մէջ զարգանալ՝ ամէնէն աւելի ազդուելով գրական արեւմտահայերէնէն: Ներկայիս թէեւ բարբառը սկսած է տեղի տալ գրական լեզուին, թէեւ նոր սերունդը բարբառը կ'օգտագործէ որոշ տարիքէ մը ետք, բայց գրականին բաւարար ծանօթութիւնը կ'ըզննէ անոր՝ բարբառը գործածելու պարագային, չխճողել զայն աւելորդ ու անտեղի օտարաբանութիւններով:

Բ.- ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

1.- Պատմական բառակազմութիւն

Այս խումբին մէջ կ'ուզենք զետեղել բարբառի կազմաւորման սկիզբէն գործող ու մինչեւ հին հայերէնէն անոր վերջնական խզումը հասնող եւ հոն աւարտող բառակազմական երկու գործօններ.

ա.- գրաբարէն փոխանցուած բառի պատմական հնչունափոխութեան զուգաձեւութիւն եւ ձեւերէն իւրաքանչիւրին նոր իմաստի ձեռքբերում: Օր.՝ դադար>դադար//դէդուօր, առաջինը՝ «քիչ առաջ», երկրորդը՝ «հանգիստ, դադար».

անոյչ>ննչօչ//ննչօչ, առաջինը՝ «անոյչ, համով», երկրորդը՝ «իբր՝ անոյչ ըլլայ».

տակ>տուօկ//տուօք, առաջինը՝ «տակ», երկրորդը՝ «ծառի կոճղ», ինչպէս՝ բըվկը՝ տուօք՝ բեւեկնի կոճղ, ցողունին վարի մասը արմատով հանդերձ, նաեւ՝ «տունկ», ինչպէս՝ ըրկը՝ տուօք խընծըրինան երկու տունկ խնձորենի, նաեւ՝ «ծալք», ինչպէս՝ ըրկը տուօք ըղուօվ՝ երկու ծալք եղաւ, տուօքը տէքէն՝ ծալքը ծալքին. վերջին պարագային կրնայ նաեւ «ծայր» իմաստով գործածուիլ.

Թող>թօ՛ղ//թըղ//թը//թ, առաջինը՝ «ձգէ՛, թո՛ղ տուր», իսկ միւս ձեւերը ըղձական եղանակի եղանակաւորիչ են.

Փրփուր>փըրփէօր//փարփօր, առաջինը՝ «փրփուր, նորեփ ուռպի փրփուրը», երկրորդը՝ «խաղողի տեսակ, որմէ ընտիր ուռպ կը պատրաստուի».

ամէն>նմըն//ըմըն, առաջինը՝ «ամէն, իբր եզակի գոյականի վերադիր», երկրորդը՝ «բոլոր, իբր յոգնակի գոյականի վերադիր».

համարեմ>հնմէրիմ//հննպըրիմ, առաջինը՝ «հնազանդիլ, նկատի առնել», երկրորդը՝ «հաշուել».

համար>հնմօրը//հննպուօրը, առաջինը՝ «դաս», երկրորդը՝ «հաշիւ, թիւ»:

բ.- գրաբարեան բառաձեւերու քարացումներ. հոս նկատի ունինք հոլովման ու խոնարհման յարացոյցերու մէջ երեւցող պարագաները, ինչպէս՝

- կինուօք (կեան-աւ-ք) վիճակով
- իզգիբք (եզր-եզերք)
- առջիվիրի (առաջի-աւուրէ) սկիզբէն
- կիսնվէօր (կէս-աւուր) ճաշ
- իրիվկան (իրիկուան՝ կու-կվ>վկ դրափոխութեամբ) ընթրիք
- վաղվին (վաղ-ուան) նախաճաշ

Վերի երկու խումբերուն տակ դրուած օրինակները կարելի է բազմապատկել:

2.- Անիսկական բարդութիւններ

ա.- Յարադրութիւններ

Յարադրութեամբ կը կազմուին մեծ թիւով բայեր եւ գոյականներ: Յարադրաւոր բայերը կը կազմուին.

- Որեւէ գոյականով, բայց յատկապէս մարմնի մաս ցոյց տուող գոյականով մը եւ որեւէ բայով. առաջին բաղադրիչը ուղիղ ձեւով գործածուած պարագային յօղ չ'առնել: Օր.՝ իրիս առնիլ (երես առնել՝ չփանալ), գըլօխ ութիլ (գլուխ արդուկել՝ խօսքով ձանձրացնել), անանձ կանիլ (ականջ կախել՝ ուշադիր մտիկ ընել), լիզգէօ իյնիլ (լեզու իյնալ՝ չարախօսութեան ենթակայ ըլլալ), կըռնուօկ ըննիլ (կոնակ ըլլալ՝ պաշտպանել), ձառ մընկիլ (ձեռք մեկնել՝ օգնել), վիտ իղէձ (ոտք դրաւ՝ արգելք եղաւ. նաեւ՝ տեղաւորուեցաւ), լիզգէօ ֆիթիլ (լեզու վայթել՝ հաճոյախօսել), աչգ դընիլ (աչք դնել՝ հաւնիլ), փաւր կէպիլ (փոր կապել՝ գիրնալ), բան ինիլ (բան ընել՝ աշխատիլ), մուօրդ ըննիլ (մարդ ըլլալ) եւ այլն: Կրնայ առաջին բաղադրիչը հոլովաձեւով մը գործածուիլ, ինչպէս՝ եաչգը մըննիլ (աչքը մտնել՝ ներգոյականով, հաւնուիլ), ձառուօց ըննիլ (ձեռքէ ելլել) եւ այլն:

- Որեւէ ածականով կամ մակբայով եւ որեւէ բայով. այս պարագային յատկապէս ինիլ (ընել) եւ ըննիլ (ըլլալ) բայերով, ինչպէս՝ չուօտ ինիլ (չատ ընել՝ չափագանցել), քէչ ըննիլ (քիչ ըլլալ), աղուր ինիլ (լաւ ընել), չաղուր ըննիլ (գէշ ըլլալ) եւ այլն: Նաեւ՝ չուօր ուզիլ (չարաբաստիկ ըլլալ), բարն ուզիլ (բարեբաստիկ ըլլալ) եւ այլն:

Երկրորդ բաղադրիչի թարգմանութեամբ լայնօրէն կը գործածուին էթմաք (ընել) եւ օլմաք (ըլլալ) բայերով կազմուած թրքերէն յարադրութիւնները, ինչպէս՝ դայրաթ էթմաք՝ դայրաթ ինիլ (ջանք ընել), հազմ էթմաք՝ հազմ ինիլ (մարսել), քէֆ էթմաք՝ քէֆ ինիլ (քէֆ ընել), հակ էթմաք՝ հուօխ ինիլ (իրաւունք ձեռք բերել), մէմնուն օլմաք՝ մէմնուն ըննիլ (չնորհակալ ըլլալ), ըազա օլմաք՝ ըազա ըննիլ (ընդունիլ) եւ այլն:

- Բարբառին մէջ լայն տարածում ունին տեղի մակբայով մը ու բայով մը կազմուած յարադրութիւնները, ինչպէս՝ նըքսի բիրիլ (ներս բերել), իվիր ըննիլ (վեր ելլել), իվար իչնիլ (վար իջնել), մաւտկէկ ուզիլ (մօտիկ գալ, մօտենալ) եւ այլն:

Յարադրաւոր գոյականները ընդհանրապէս կենդանիներու, բոյսերու, աստղերու եւ բնութեան այլ երեւոյթներու անուններ են: Գոյական յարադրութիւնները կը կազմուին հետեւեալ ձեւերով.

- Ածականով մը եւ գոյականով մը, ինչպէս՝ չաթալօկ էգիկ (երկճղի ագի՝ ծիծեռնակ), կուրկուր անգան (կոր կոր ագի՝ կարիճ), բարնալ լուսէկ (բորոտ լուսիկ՝ լուսատուիկ), կուօյր ուօձ (կոյր օձ՝ թունաւոր օձ մը), չափար ուօձ (գորչ օձ՝ թունաւոր օձ մը), ծիրանն անգան (ծիրանի գօտի), քառուօն վիտնիլ (քառասունտոնի), եուօթթը աղբըրտաք (եօթը

եղբայրներ՝ աստղերու հոյլ մը), կէնկէօն կըչիէօք (կանգուն կչիօք՝ աստղերու խումբ մը), էգըվաթր առըստաղէկ (ագելոր աստղիկ՝ գիսաստղ), արվը կէրուօս (վայրի կարոս), կէրմէր գըլօխ (կարմիր գլուխ՝ թռչուն մը), սիվ գըլօխ (սեւ գլուխ՝ թռչուն մը), կէրմըրէկ թիվէկ (կարմրուկ թեւիկ՝ թռչուն մը) եւ այլն:

- Երկու գոյականով, առաջինը՝ սեռական հոլովածեւով, ինչպէս՝ Հէրմէն ճանփուօը (գողի ճամբան՝ Յարդգողի ճանապարհ), թիպիկը՝ խաղուղ (չնագայլի խաղող՝ ողկուզածեւ վայրի պտուղ մը), խուրուզը՝ վարտէք (աքլորի վարտիք՝ կարմիր ծաղիկ մը), ըղտը՝ չըտտէկ (ուղտի ծիտիկ՝ թռչուն մը), կէքվը՝ ճըռնիէկ (կաքաւի ճիռ՝ ուտելի խոտ մը), իծծը՝ մուրօք (այծի մորուք՝ ուտելի խոտ մը), իրըսկընը՝ պուրտ (երէց-կնոջ պորտ՝ ուտելի խոտ մը), ձէգը՝ բարձէկ (ձագի բարձիկ՝ խոտ մը), քէքը՝ պըզիէզ (քաքի բզէզ՝ միջատ մը), մէքը՝ դըմմուօկ (մաքիի դմակ՝ ծաղիկ մը) եւ այլն:

Այս շարքի բառերը, յատկապէս արագ արտասանութեան պարագային, կը գիտակցուին իբրեւ իսկական բարդութիւններ ը յօդակապով (տե՛ս նաեւ այս գլուխի «Իսկական բարդութիւններ» բաժինը):

Բարբառին մէջ լայնօրէն կը գործածուին նաեւ երկու համաձեւ գոյականներով կազմուած անշաղկապ յարադրութիւնները, ինչպէս՝ պառչէն-տավվէն (պոռչտուք-վէճ), տէօն-տիէղ (տուն-տեղ), քիչիը-ցիլիկ (գիչեր-ցերեկ), ձուօյն-ձըմիէն (ձին-ձմեռ) եւ այլն:

- Գոյականով եւ ներկայ դերբայով մը, ինչպէս՝ արը խուսցընուօը (մողէզ մը), քուօք արուօը (աղբիւսներու մէջ քըլը ընող թռչուն մը) եւ այլն:

- Դերբայով եւ գոյականաբար գործածուած ածականով մը. կայ միայն՝ իշուօժ բէրէն (յիշած բարին՝ բարեյիշատակ), որ ունի ածականական եւ գոյականական կիրարկութիւններ:

- Շատ կը հանդիպին երկու բայերով կազմուած անշաղկապ յարադրութիւնները, ինչպէս՝ Հէգուօժ-կէպուօժ (հագած-կապած), իրիլ-վիոկիլ (այրել-վառել), իփիլ-թէփիլ (եփել-թափել՝ կերակուրը պատրաստել եւ սպասարկել), ուտիլ-խուսիլ (ուտել-խմել), ուրթիլ-ուգիլ (երթալ-գալ) եւ այլն:

բ.- Կրկնաւորներ

- Կը կրկնուի գոյականը՝ արտայայտելով ածականի եւ մակբայի իմաստ, ինչպէս՝ տիէղ-տիէղ (տեղ-տեղ), թիլ-թիլ (թել-թել), էտին-էտին (ատեն-ատեն, երբեմն), հուօտ-հուօտ (հատ-հատ), պատուօտ-պատուօտ (պատառ-պատառ), փարթի-փարթի (խումբ-խումբ), կաթ-կաթ (կարգ-կարգ, նաեւ՝ քանիցս) եւ այլն:

- Կը կրկնուի եզակի դերանունը՝ արտայայտելով յոգնակիի նշանակութիւն, ինչպէս՝ արը-արը (ով-ով՝ որոնք), չէ-չէ (ինչ-ինչ՝ ինչեր), քան-քան (քանի-քանի): Երբեմն կը կրկնուին շաղկապով՝ արը-արը արը (ով եւ ով):

- Կը կրկնուին ածականն ու մակբայը, ինչպէս՝ մունտըր-մունտըր (մանր-մանր), քուօխցըր-քուօխցըր (քաղցր-քաղցր), աղուր-աղուր (լալ-լալ), եիտ-եիտ (ետ-ետ), քէչ-քէչ (քիչ-քիչ), ուչէտ-ուչէտ (չուտ-չուտ), շուօտ-շուօտ (շատ-շատ՝ առաւելագոյնը), կէմուօց-կէմուօց (կամաց-կամաց) եւ այլն:

- Կը կրկնուի թուականը՝ արտայայտելով բաշխական նշանակութիւն, ինչպէս՝ միէգ-միէգ (մէկ-մէկ՝ մէկական), ըրկը-ըրկը (երկու-երկու՝ երկուքական), տուօսը-տուօսը (տասը-տասը՝ տասական) եւ այլն:

Կրկնաւորներ՝ Հնչիւնափոխութեամբ.

- Կը փոխուի երկրորդ միաւորին ձայնաւորը, ինչպէս՝ ձան-ձուն, վափից-վիփից, հափըչ-հուփըչ (յափշտակել բայի հիմքէն) եւ այլն:

- Առաջին Հնչիւնը կը դառնայ մ, ինչպէս՝ հուօց-մուօց, դըգուօլ-մըգուօլ, ճանն-մանն, գըրիլ-մըրիլ, բալթը-մալթը եւ այլն:

- Բաղաձայնի անկում առաջին միաւորին սկիզբը, ինչպէս՝ ափալ-թափալ, ալան-թալան, ուրրօմ-կուրրօմ (գոռում), այրամ-մայրամ փուխարու (Մարիամ խոտը) եւ այլն:

- Բաղաձայնի յաւելում երկրորդ բաղադրիչի սկիզբը, ինչպէս՝ անկ-մանկ (անկ՝ ապուշ), ունիլ-փունիլ (անիլ, մեծնալ), ապըր-ճըպըր (ապուր՝ այլանդակ). վերջինին մէջ կայ նաեւ ձայնաւորի փոփոխութիւն:

- Այնպիսի կրկնաւորներ, ուր առաջին բաղադրիչը երկրորդին առաջին վանկն է, այն ալ որոշ Հնչիւնափոխութեամբ մը, ինչպէս՝ կէն-կէրմէր (կարմիր), կանփ-կաննաչ (կանաչ), ըբ-ըսպիտուօկ (սպիտակ), սըբ-սիվ (սեւ), ըբ-ըլլէք (լեցուն), չըփ-չալ կամ չըբըս-չալ (չոր), մըս-մալկէկ (մերկ), բըս-բալկէկ (բոպիկ) եւ այլն: Կրկնաւորին առաջին բաղադրիչը կը սաստկացնէ իմաստը:

գ.- Կցականներ

Բարբառին մէջ աչքի կը զարնեն կցական բարդութեան հետեւեալ պարագաները.

- Բաղահիւսական միացութիւններէ առաջացած կցականներ. ասոնք մեծ մասով դիմաւոր բայերու միացութիւններ են, ինչպէս՝ գընտէօ (գընու-տէօ՝ գնա՝ տո՛ւր), բիվէրի (բի-վ-էրի՝ բե՛ր եւ եկո՛ւր), գանթի (գընու-բի՝ գնա՛ բե՛ր), էրկուօն (էրի-կ-ուօն՝ եկո՛ւր ա՛ն), վըրձըվիէկ (որձ-եւ-էգ) եւ այլն:

- Անձնական դերանուններու երկու տարբեր հոլովածեւերու կցումով առաջացած կցականներ. այսպէս կը կազմուին անդրադարձ դերանունները, ինչպէս իսիղէս (ես-(ըն)դ-յիս), դէօնըգի (դուն-(ըն)դ-քեզ), մինքըմի (մենք-(ըն)դ-մեզ) եւ այլն:

- Թրքերէն անցեալ դերբայի եւ ինիլ (ընել) եւ ըննիլ (ըլլալ) բայերու կցումով, վերջին բաղադրիչները թրքերէնէ թարգմանութիւններ

են: Առաջինով կը կազմուին պատճառական եւ ներգործական բայեր, իսկ երկրորդով՝ չէզոք ու կրաւորական: Օր.՝ տարմըչինիլ (նեղացնել), աղմըչինիլ (յիշել), սուկմըչինիլ (նեղել), աղմըչըննիլ (յիշուիլ), սուկմըչըննիլ (նեղի գալ) եւ այլն:

- Նախադրութեամբ մը եւ ցուցական, անորոշ, փոխադարձ կամ յարաբերական դերանունով մը կազմուած կցականներ: Օր.՝ դըսու, դինն (լըն)դ-այսու, այնու), դա՛ր (լըն)դ-ուր), դիրուօր (լըն)դ-իրեար), ընծըր (ընդ-գոր՝ պէս), ընծաս, ընծատ, ընծան (ընդ-գ-այս, այդ, այն՝ այսպէս, այդպէս, այնպէս), ընծըստ, ընծիտ, ընծինտ (ընդ-գ-այսու, այդու, այնու՝ այսպէս, այդպէս, այնպէս), ընծըրաս, ընծըրաստ, ընծըրան (ընդ-գ-այս, այդ, այն՝ այսպէս, այդպէս, այնպէս), դիրաս, դիրան (դէպ-այս, դէպ-այն), Հիտիրուօր (Հետ-իրեար), քանզաս, քանզատ, քանզան (քան-գ-այս, այդ, այն՝ այսքան, այդքան, այնքան) եւ այլն:

Նախդիրի մը եւ այլ խօսքի մասի պատկանող բառի մը կցումով առաջացած ուրիշ կցականներ ալ կան բարբառին մէջ: Սակայն ասոնք աւելի Հին կազմութիւններ են, Հնչիւնափոխութեամբ ու իմաստափոխութեամբ գրեթէ անճանաչելի կը թուին, ինչպէս՝ ըղկիէս (ընդ-կէս՝ կէս առ կէս), թէրվիլ (ընդ-հարուիլ՝ ըմբշամարտիլ), թէրկիլ (ընդ-հարկ-անել՝ յաղթել), Հանդուզտիլ (ընդ-ոստ-ել՝ ցատկուտել) եւ այլն:

- Երկու տարբեր դերանուններու կցումով, ինչպէս՝ չէր (չէ՛ ինչ-որ), անըր (այն-որ՝ այն որ, որքան), ասլըր (ով-որ), միան (մի-այլ) եւ այլն:

- Ցուցական դերանունի մը եւ տեղ ցոյց տուող գոյականի մը կցումով, ինչպէս՝ աստիէղ (այստեղ), անտիէղ (այնտեղ), ասդէ (այս-դի), անդէ (այդ-դի) եւ այլն:

- Երկու նախդիրներու կցումով. ունինք՝ տըզ//ձըզ//ծըս (լըն)դ-զ՝ պէս):

- Դիմաւոր բայի մը եւ նախադրութեան մը կցումով. ունինք՝ թօղըզ (թող-զ՝ բացի):

- Կրկնաւորներէ առաջացած կցականներ. ասոնց մէջ սովորաբար առկայ է շողկապ մը կամ նախդիր մը, ինչպէս՝ դիէմուդիէմ, միէկը-միէկ, տիէղնուտիէղը, միէղմիէղ եւ այլն:

- Յարադրաւոր բայերէ առաջացած կցականներ, ինչպէս՝ էյմըտիլ (ակն-մտ(ան)ել՝ աչք դպցնել), բէրմընիլ (բարի մնալ՝ մնաք բարով ըսել), չազվընտիլ (չորք-ոտն-ել՝ քառասմբակ վազել) եւ այլն:

- Յարադրաւոր գոյականներէ առաջացած կցականներ. ինչպէս՝ չազվիտնիլ (չորք-ոտնի), չազվընկիլ (քառանկիւն), չըրդէ (չորք-դի), կիսուօր (կէս-օր) եւ այլն:

Պէտք է աւելցնել, որ Հին լեզուէն բարբառին անցած շարք մը յօդակապով կցականներ Հանդէս կու գան անյօդակապ, ինչպէս՝ Հօրա-քոյր>Հմրքուօյր, մօրաքոյր>մմրքուօյր, քեռակիլ>քանկէն, քեռամայր>քանմար եւ այլն:

3.- Իսկական բարդութիւններ

ա.- Յօդակապով բարդութիւններ

Բարբառին մէջ Հայերէնի ա յօդակապը Հանդէս կու գայ ը ձեւով, ինչպէս՝ Ջըրըկուտէմ (Ջրակոտեմ), Էնծըրվըջէօր (անձրեւաջուր), Էրըվըծաղէկ (արեւածաղիկ), ըղտըչըտտէկ (ուղտ-ա-ծիտիկ), տնտը-մար (տատ-ա-մայր՝ մեծ մայր) եւ այլն: Յօդակապով բարդութիւններու մէջ առաջին բաղադրիչը կ'արտայայտէ սեռական Հոլովի իմաստ: Բարբառի սեռականի Հոլովամասնիկը ը ձայնաւորն է. Հետեւաբար՝ ը յօդակապով բարդութիւններու առաջին բաղադրիչը, յատկապէս դանդաղ արտասանութեան պարագային, կը գիտակցուի իբրեւ սեռականով վերադիր: Արդէն մեր յարադրաւոր գոյականներու շարքին մէջ տեղ գտած բառերէն ոմանք կարելի է ընդունիլ որպէս յօդակապով իսկական բարդութիւններ:

Պէտք է աւելցնել, որ Քեսապի բարբառին մէջ նկատելի է անյօդակապ բարդութիւններու յաճախականութեան առաւելութիւնը ի դիմաց յօդակապով բարդութիւններու: Արդէն Հին լեզուի յօդակապով շատ բարդութիւններ բարբառին մէջ կը գիտակցուին անյօդակապ, ինչպէս՝ մոխրաջուր>մախխէրջէօր, մեղուահաւ>մաղվըկհուօվ, եղբայրաբաժին>աղբարբիժէն, եղբայրակիւն>աղբըրկէն (Հօրեղբօր կինը) եւ այլն:

բ.- Անյօդակապ բարդութիւններ

Անյօդակապ բարդութիւններու մէջ առաջին բաղադրիչը կրնայ Հանդէս գալ անփոփոխ եւ Հնչիւնափոխուած:

Առաջին բաղադրիչին անփոփոխ կամ Հնչիւնափոխուած պարագաներ են՝ սիվսէրտ (սեւ-սիրտ՝ չար), կէօչտփուր (կուշտ-փոր՝ գոհ), պուօլփուր (լայն-փոր՝ Համբերող), պէնտգըլօխ (պինդ-գլուխ՝ անհասկցող), պուօղվիլէն (պաղ-արիւն), սուօլքուօր (սալ-քար), մախխէրջէօր (մոխիր-ջուր), շուօտգըրէց (շատ-գրոյց՝ շատախօս), եիտնըրկէօ (ետն-երկու՝ կրկին), ըրկըզգէք (երկու-հոգի-ք՝ յղի) եւ այլն:

Առաջին բաղադրիչին Հնչիւնափոխուած պարագաներ՝ չարաչգ (չուօր՝ չար-աչք), պաղքաչ (պուօղ՝ պաղ-քաչ՝ սառոյց), բունկուօլ (բուօյն՝ բոյն-կալ), պէտտուօլ (պուօտ՝ պատ-տակ՝ ծամակ), տէյմուօլ (տուօկ՝ տակ-մազ՝ արմատ), ըլկէման (էլէկ՝ ալիկ-աման) եւ այլն:

Անյօդակապ իսկական բարդութիւններուն մէջ բաղադրիչները իրարու նկատմամբ կ'ունենան իմաստային տարբեր յարաբերութիւններ. այս տեսակէտէն կարելի է առանձնացնել Հետեւեալ խումբերը.

- Առաջին բաղադրիչը կ'արտայայտէ սեռական Հոլովաձեւի նշանակութիւն երկրորդի նկատմամբ, ինչպէս՝ զէմուօլ (ծամ-տակ՝ ծոծրակ), անգըղթիվ (անգղ-թեւ՝ բոյս մը), իլըրմուօլ (ալիւր-մաղ),

սանդղնդուս (սեղան-թաս), ընդուզտուօք (ընկոյզ-տակ՝ ընկուզենի), վէրպըտկին (վարպետ-կին) եւ այլն: Բարդութեան մէջ երկրորդ բաղադրիչը ունի գլխաւոր իմաստ:

- Բարդութիւններ, որոնց բաղադրիչներէն ո՛չ առաջինը եւ ո՛չ երկրորդը միւսին նկատմամբ իմաստային առաւելութիւն մը ունի, այլ երկուքը միասին մէջտեղ կը բերեն բոլորովին նոր իմաստ մը, յաճախ բարդութեան փոխաբերական իմաստ մը տալով, ինչպէս՝ կէօչտփաթ (կուչտ-փոր՝ գոհացող), պաղքաճ (պաղ-քաճ՝ սառոյց), ըրկըգգէք (երկու-հոգի-ք՝ յղի), ճիճիմաթ (ճիճի-մորի՝ սարդ) եւ այլն:

- Բարդութիւններ, որոնց բուն իմաստը կ'արտայայտէ առաջին բաղադրիչը, իսկ երկրորդը միայն երանգ մը կու տայ բառին, ինչպէս՝ տալտըկէն (տալ-տիկին), նարտըկէն (ներ-տիկին), տէգրէրիվ (տայգր-արեւ), Հիբիսէպօր (Հեբիսա-ապուր), կաթկաթէպօր (կորկոտ-ապուր) եւ այլն: Այս բառերը կրնան գործածուիլ նաեւ առանց երկրորդ բաղադրիչին:

4.- Ածանցում

ա.- Նախածանցներ

ան//ան.- Հայերէնի ան ժխտական նախածանցն է: Պահած է նոյն նշանակութիւնը: Գործուն է: Ժխտական իմաստով ածականներ կը կազմէ գոյականներէ, ածականներէ, բայահիմքերէ, ինչպէս՝ անխիտ (աներես), անխելք (անխելք), անաստուօծ (անաստուած), անհէվուօտ (անհաւատ), անպիտ (անպէտք), անբան (անբան) եւ այլն:

Հին Հայերէնէ փոխանցուած քանի մը ածանցումներու մէջ նախածանցը անճանաչելի դարձած է, ինչպէս՝ էսսէօն (անասուն), անալի (անալի), աոխուօ (անխօս):

չ//չը.- Բացի ժխտական խոնարհման մէջ իր ձեւաբանական արժէքէն՝ ունի բառակազմական արժէք. կարգ մը ածականներէ եւ բայահիմքերէ ածականներ կը կազմէ, ինչպէս՝ չէնէօչ (չ-անուշ), չաղուր (չ-աղուոր), չըտիս (չ-տես), չըբիր (չ-բեր) եւ այլն:

բ.- Վերջածանցներ

ան (ի).- Կայ Հին լեզուէն բարբառին անցած կարգ մը ածականներու մէջ, ինչպէս՝ աղի>անղան, անալի>անլան, ջրի>ջրան եւ այլն:

Բարբառին մէջ գործուն է իբրեւ ծառանուններ կազմող վերջածանց, ինչպէս՝ խընծիրան, մըլմըլան, ծիրանան, կանղան եւ այլն:

անան (անի).- ունինք քանի մը բառի մէջ՝ պիտանան (պիտանի), լիզվանան (լեզուանի):

ըվուր, էվուր, վուր (աւոր).- կը կազմէ ածականներ, որոնք ազատօրէն կրնան գործածուիլ գոյականաբար, ինչպէս՝ ձիւրվուր//ձիւրվուր

(ձի-աւոր), մըղնվան (մեղ-աւոր), աղջըրվան (եղջիւր-աւոր), մաթըրվան (մօրուք-աւոր), մըրզընքվան (մըզանք-աւոր) եւ այլն:

ըցան, անցան, ցան (եցի, ացի, ցի).- տեղ ցոյց տուող գոյականներէն կը կազմէ անձի անուններ տեղի բնակիչի նշանակութեամբ, ինչպէս՝ հէլպըցան (հալէպցի), շէնպըցան (Շունպ = Դամասկոս-ցի), լէտկըցան (Լէտէկ = Լաթաքիա-ցի), գըղանցան (գիւղացի), ծափանցան (ծովացի), քաթըրցան (քաղաքացի), թանխցան (թաղեցի) եւ այլն:

կէկ (կեկ, կիկ).- ունի երկու կիրարկութիւն.

- աւելնալով ածականներու, մակբայներու եւ գոյականներու վրայ՝ անոնց կու տայ փաղաքշական-փոքրացուցիչ նշանակութիւն, ինչպէս՝ մաթկէկ (մօտ-կիկ), աղուրկէկ (աղուոր-կեկ), բանձըրկէկ (բարձր-կեկ), շէտկէկ (չատ-կեկ), աղվընկէկ (աղաւնի-կեկ) եւ այլն: Բէրկաթկէկ (բարակ-ու-կեկ) բառին մէջ ածանցը ունի ձկէկ ձեւը:

- աւելնալով կարգ մը գոյականներու վրայ՝ կը կազմէ նոր բառեր, սովորաբար՝ ծառ ցոյց տուող գոյականներէն կը կազմէ թռչունի անուններ, ինչպէս՝ թըրզըրկէկ, կանղըրկէկ, բըվըրկէկ եւ այլն:

- Սմբուկ - սընպըլ//սընպօլ
- Մնդուկ - սընտօկ
- Մնձնի - սընծինի
- Մոթտել - սաթթիմ
- Մոխ - սուխ
- Մողամ - ձուղում
- Մողուն - ձուղուն
- Մովորեցուցանեմ - սաթվըսնիմ
- Մովորիմ - սաթվէմ
- Մովորոյթ(ք) - սաթվէթք
- Մուզ - սէօզ
- Մուղ - սօղ
- Մունաթեմ - սուննանիմ
- Մունկն - սէօնկ
- Մուտ - սէօտ
- Մուր (հատու) - սէօր
- Մուրք - սուրք (զր.)
- Սպանախ - ըսպանուօկ
- Սպանանեմ - ըսպէննիմ
- Սպանութիւն - ըսպէննութէն

- Սպիտակ - ըսպիտուօկ
- Սպիտակիլ - ըսպըտկիլ
- Սպիտակացուցանեմ - ըսպըտ-կըսնիմ
- Սպիտակութիւն - ըսպըտկութէն
- Սպիտակուց - ըսպըտկաց
- Ստեղծած - ըստըղծուօծ
- Ստեղծուկ - ըստըղծիմ
- Ստեմ - սըտիմ
- Սրահակ - սըրհուօկ
- Սրբեմ - սըրբիմ
- Սօթ - սօթ
- Սօսի - սաւսի

Վ

- Վազ - վուօզ
- Վազեմ - վէզգիմ
- Վաթսուն - վէձձէօն
- Վախ - վուօխ
- Վախեմ - վախիմ
- Վախեցուցանեմ - վախցընիմ
- Վախկոտ - վախկաւտ
- Վախճանիմ - վախճանէմ
- Վաղ (էգուց) - վուօղ
- Վայ - վայ
- Վայելեմ - վիլլիմ
- Վայելեցուցանեմ - վիլլըսնիմ
- Վայթեմ - ֆիթիմ
- (Ի) Վայր (վար, դէպի վար) - իվար
- Վանգել - վընկում
- Վանգիւն - վընկէն
- Վանք - վանք
- Վառած - վառուօծ
- Վառեմ - վառիմ
- Վառեցուցանեմ - վառըսնիմ
- Վառիլ - վառէմ
- Վաստակ - վէստուօկ
- Վաստակիմ - վէսկէմ
- Վատութիւն - վէտութէն
- Վարագոյր - վարագուօյր

Վարագ - վիրուզ (արու խոզ)
 Վարդ - վուրդ
 - Վարդապետ - վարդապետ//
 վիրպետ
 Վարդավառ - վարդիվուռ
 Վարդենի - վարդինն//վարդի-
 ըինն
 Վարժապետ - վարժապետ
 - Վարճող (վարճոխ) - վարճոհ
 Վարոց - վիրաց
 Վարտիք - վարտեք
 (Ի) Վեր (վեր, դէպի վեր) - իվիր
 Վերայ - ըրվա//ըրվան
 Վերանամ - վարնում
 Վերացուցանեմ - վարցընիմ
 (Ի) Վերեւ - վիրիվ
 Վերին - վիրէն
 Վեց - վիճ
 Վեց Հազար - վիճՀազար//
 վիճազար
 Վեց Հազարեան - վիճՀազարին
 Վեց Հարիւր - վիճՀերէր//վիճձէ-
 ըրէր
 Վեցմատեան - վիճմտին
 Վզանոց - վըզանց
 Վիզ - վէզ
 Վիթ - վէտ
 Վիճակ - վիճուակ (բախտ)
 Վիճիմ - վիճէմ
 Վճարեմ (Հատուցել) - վըճիրիմ
 Վտարեմ - վըրէտիմ
 Վտարեցուցանեմ - վըրէտըսնիմ

S

Տագր - տնգր//տնգրէրիվ
 Տալ - տուլ//տալտըկէն
 - Տախտ - տուխտ
 Տախտակ - տախտուակ
 - Տակ - տուակ//տուաք
 Տաղտուկ - տնղտուկ
 Տաճար - տնճար

- Տաճիկ - տիճէկ
 Տաճկացուցանեմ - տըճկըսնիմ
 Տամ - ուտում
 Տանիմ - տնէմ
 - Տանիք - տընիէր//տընիէսգ
 Տանձ - տնձ
 Տանձի - տանձա//տնձինն
 Տանձիկ - տնձէկ
 Տանջեմ - տնջիմ
 Տապալ (Թաւալ) - թէպուլ
 Տապալած - թէպուծ
 Տապալեմ - թէպիմ
 Տապալեցուցանեմ - թէպըսնիմ
 - Տապակ - տէպուխ//թա-
 պուկ
 Տապակեմ - տէպիմ
 - Տապան - տապան
 Տապասկ/տապաստ - տապաս
 Տասն - տուսսը
 Տասնեան - տասընին//տասսին
 Տասն Հազար - տուսսը Հազար
 - Տատա - տնտէ
 Տարի - տնրն
 Տեառնընդառաջ - ՏՆընտնն
 Տեղ (վայր) - տիէղ
 Տեղանք - տըղէտնք
 Տես(ք) (կերպարանք) - տիսք
 Տեսանեմ - տըսնուլ
 - Տերեւ - տիրիֆ
 Տեւեմ - տիվիմ
 Տզզամ - տըզզում
 Տէր - տիէր
 Տիկ - տէկ
 Տիրանամ - տիրնում
 Տիրեմ - տիրիմ
 Տիրութիւն - տիրութէն
 Տիմար - տըլամուր
 - Տղայ - տըղու
 Տնակ - տըննուակ
 Տնկեմ - տընկիմ
 Տնկուած - տընկըվուծ
 Տոմար - տումուր
 Տոյլի - տնլի

Տորոն - տուրոն
 Տուար - տավար
 Տուն - տնոն
 Տուրք (չնորհք) - տուրք
 Տրգալ (դգալ) - դըգուլ

Յ

Յախ - ցուխ
 Յախսարեկ - ճըխսէրէկ
 Յած - ցուծ
 Յածանամ - ցնզում
 Յածութիւն - ցնձութէն
 Յածուցանեմ - ցնզըսնիմ
 Յամաք - ցնմուք
 Յամաքացուցանեմ - ցնմըսնիմ
 Յամաքիմ - ցնմքէմ
 Յամաքութիւն - ցնմքութէն
 - Յայթեմ - ծիթիմ
 - Յան(ք) - ցննք//ցննք
 Յանեմ - ցննիմ
 - Յանկ - չէտնկ
 Յանցառ - ցանցուռ
 - Յաւ - ցուվ
 Յաւեցուցանեմ - ցնվըսնիմ
 Յաւիմ - ցնվէմ
 - Յաւուտ - ցնվտ
 Յեխ - ցիէխ
 Յերեակ (ցերեկ) - ցիրիկ
 Յեց - ցից
 Յնկնիմ - ձիյնէմ
 Յնցուղ - ցընցուղ
 Յորեան - ցիրին
 Յորեանահատ - ցիրինըՀուտ
 Յու - ցըվէք
 Յուրտ - ցորտ
 Յուցանեմ - ցըցըսնիմ
 Յրդենի/ցրդի - ծըրդինն//ծըր-
 դն
 - Յրեմ - ցըրիմ
 Յրտանամ - ցըրտանում
 Յրտացուցանեմ - ցըրտանիմ

Յցեմ - ցըցիմ
 Յցուիմ - ցըցվէմ
 Յօղ - ցուղ
 - Յօղեմ - ցուղիմ

Փ

Փաթաթեմ - փէթիմ//փէթ-
 թըվէմ
 Փախուցանեմ - փնխցընիմ
 Փախչիմ - փնխէմ
 Փակ (գոց) - փուակ
 - Փակած - փէկուծ
 Փականք - փնկանք
 Փակեմ - փէկիմ
 Փակուցանեմ - փէկըսնիմ
 Փայծաղն - փիծուլուխ
 Փայտ - փտտ
 Փայտատ (բրիչ) - փուտուտ
 Փայտիկ - փիտէկ
 Փառք - փառք//փուռք
 Փարչ - փարչ
 Փարտ - փուրտ
 Փարտայ - փէրտու
 - Փափաքիմ - փափաքէմ
 Փեթակ - փնթնկ
 Փեսայ - փիսու
 Փեսեղբայր - փիսնղբար
 - Փետեմ - փիտտիմ//փնտիմ
 Փետուր - փիտէօր
 Փերեզիկ - փիրիզէկ
 Փիլոն - փիլոն (եկղց.)
 Փիծ - փիս
 Փիճի - փիճն
 Փլած - փըլուծ
 Փուցանեմ - փըլըսնիմ
 Փնթի - փինթն
 Փշիկ - փնչէկ
 Փշուտ - փըշտտ
 Փշրանք - փըշրանք
 Փշրեմ - փըշրիմ
 Փոթ - փօթ

Փոխ - փուխ
 Փոխանորդ (փոխնորդ) - փըխ-
 նա՛րդ
 Փոխեմ - փըխիմ
 Փոչի - փա՛շա՛
 Փոս - փա՛ս
 Փոր - փա՛ր
 Փորացաւ - փա՛րըցուով
 Փորեմ - փա՛րիմ
 - Փորիչ - փա՛րէչ
 Փորոտի - փա՛րա՛տա՛
 - Փորոք - փա՛րըգ
 Փու - փո՛ւ // փո՛ւ
 Փուլ (լուսնի) - փա՛լ
 Փուխտ(ր) - փոխ
 Փուշ - փէօշ
 - Փուք - փէօք
 Փշեմ - փըշիմ
 - Փռել - փըռուիմ
 Փոնգամ - փըռընգում
 - Փսխեմ - փըսխեմ
 Փտիմ - փըդդէմ // փըդդէնում
 Փրթ(ան)իմ - փըրթեմ
 Փրթուցանիմ - փըրցընիմ
 Փրկեմ - փըրկիմ
 Փրփուր - փըրփէօր // փարփօր
 Փրփրեմ - փըրփըրիմ
 Փրփրեցուցանեմ - փըրփըրըսնիմ

Ք

- Քալա - քա՛լա
 Քակեմ - քէկիմ
 Քակտեմ - քէկտիմ
 Քաղ - քուօղ
 Քաղաք - քա՛ղուօք
 Քաղաքացի - քա՛ղաքըցա՛
 - Քաղեմ - քա՛ղիմ
 Քաղճանել - քա՛ղնիմ
 Քաղց - քուօխց
 Քաղցենամ - քա՛ղցինում
 Քաղցուցանեմ - քա՛ղցըսնիմ

Քաղցր - քուօխցըր
 Քաղցրանամ - քա՛ղցըրնում
 Քաղցրացուցանեմ - քա՛ղցըրըց-
 նիմ
 Քամահրեմ - քա՛մարիմ
 Քամեմ - քէմիմ
 Քամուք - քէմօկ
 - Քայլ(ք) - քիլք // քա՛լք
 Քայլեմ - քիլիմ
 Քան - քա՛ն
 Քանի - քա՛նա՛ // քա՛նը // քա՛ն
 Քառասուն - քա՛ռասօն
 Քար - քուօր
 Քարաթոշ - քարթօշ
 Քարաման - քէրմա՛ն
 Քարաննուխ - քէրընուօղ
 Քարճիկ - քարճիկ // քըրճիկ
 - Քարչեմ - քիչիմ
 Քարոգ - քէրուօղ
 Քարոգեմ - քէրա՛ղիմ
 Քարուկ - քէրօկ
 Քարուպայ - քարուպու
 Քարուտ - քէրէօտ
 Քացախ - քէցուօխ
 - Քացախեմ - քէսխիմ
 Քացախեցուցանեմ - քէսխըսնիմ
 Քեռի - քա՛նա՛
 Քերեմ (քորեմ) - քա՛րիմ
 Քերթեմ - քարթիմ
 Քէն - քիէն // քի՛ն
 - Քէնթ - քինթ
 - Քթեթ - քըթիթ
 Քթոց (կթոց) - քըթա՛ց
 Քթուեմ - քըթվիմ
 Քիթ - քէնթ
 Քիլ (չափ) - քէլ
 Քիմք - քէմք
 Քիչ - քէչ
 Քիստ - քէս
 Քիրտն (քրտինք) - քըրտէնք
 - Քչեմ - քըչիմ
 - Քչտեմ - քիչտիմ
 Քո - քու // քուօյն

Օ

Քող(ք) - քուխք
 Քոյին - քուօյն
 Քոյր - քուօյր
 Քուն - քէօն
 Քունայ - քա՛նա՛
 Քուռաթ - քուռուօթ
 Քուռակ - քուռուօկ
 Քուրճ (քուրց) - քօրց
 Քսակ - քա՛սա՛
 Քսան - քըսսուն
 - Քրիստոնեայ - քրիստինա՛
 Քրիստոս - Քրըստա՛
 Քրտնացուցանեմ - քըրտընցընիմ
 Քրտեմ - քըրտընիմ
 Քրքրեմ - քըրքըրիմ

Օժիտ - ա՛ժէտ // ա՛ժէտք
 Օճեմ - ա՛ժիմ
 Օճ - ուօճ
 Օր - ուօր
 Օրան - ա՛րա՛ն
 Օրէնք - ուրէնք
 Օրինակ - ա՛րինուօկ
 Օրհնեմ - ա՛ղնիմ
 Օրհնութիւն - ուրթնութէն
 Օրոց - ա՛րա՛սգ

բ) ԱՆՁԻ ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ

Հոս կը բերենք միայն այն անունները, որոնք Քեսապի բարբառին մէջ ունին բարբառային երկրորդական յատուկ ձևեր եւս: Անոնց կողքին նշած ենք անուններէ առաջացած ու լրիւ բարբառային տեսք ստացած մականուններ եւս:

- Աբրահամ - Աբրամ, Աբօ, Աբբուշ, Աբի, Աբիկ. մականուն՝ Աբիկունք
- Ադդէ - Ադէ, Աթիկ, մականուն՝ Աթիկունք
- Աղբիր - Քեսապի մէջ արական այս անունը շատ տարածուած է, թէեւ ատիկա որպէս անուն չէ տրուած եւ ոչ մէկուն: Անձը կոչուած է իր մեռած եղբոր անունով, բայց տնեցիք եւ հարազատներ չեն կրցած այդ անունով կոչել զինք, այլ կոչած են՝ Աղբիր, իբր՝ եղբայր, թէեւ բարբառին մէջ եղբայր բառը կու տայ անբար. ասիկա անբարութեան փաղաքշական ձևին ընդունուած կրճատումը կարելի է համարել: Ամենայնդէպս, վերոնշեալ պարագայէն դուրս՝ բառը երբեք գործածութիւն չունի:
- Անդրանիկ - Անդրանի, Անդրան, Անտուն, Անթուն
- Անդրէաս - Անտրրավուգ, Անտրր, Անտրրէ. մականուն՝ Անտրրինք
- Աննա - Էննի, Հաննա, Հաննի, Աննիկ, Հաննիկ
- Անոյշ - Էնէօշ
- Ասատուր - Էստաթ
- Աստղիկ - Ասղի
- Արամ - Արամօ, Արամիկ
- Արմենակ - Արմինակ, Արմին, արման. մականուն՝ արմանինք
- Արշալոյս - Արշըլ, Արշօ
- Աւետիս - Ավիտից, Ավտից, Ավտա, Ավտօ, Ավօ, Ավի, Ավիկ, Ավուկ
- Գաբրիէլ - Գաբի
- Գարուն - Գէրէօն
- Գէորգ - Գիվուրգ, Գիվէօ, ձըրճի, ձըրճուն, ձըրճօս. մականուն՝ ձըրճուսինք, Գիվըրգինք
- Գոհարիկ - Գուհար
- Գրիգոր - Գըրգուր, Գօգօ
- Դչխոյ - Դանչի, Դանչի, Դըչխան
- Եգեկիէլ - Էգէկէլ, Եգէնիկ
- Եղիսաբէթ - Ըղսաբիթ, Ըղիս, Սաբիթ, Էլիգ
- Եսայի - Իսայուն, Այսա, Եսաիլ. մականուն՝ Այսինք
- Զարուհի - Զարուֆ, Զարուկ
- Զաքարիա - Զաքար, Զէքուր
- Զաքէոս - Զէքի
- Զենոբ - Զինօբ
- Զօհրապ - Զօրապ, Զուրապ, Զօրի, Զօրիկ
- Թովմաս - Թումմաս, Թօմ
- Թորոս - Թաթրաս
- Իսահակ - Սահակ, Սակն, Սակնն, Սէկնն. մականուն՝ Սէկինք, Տիէր-

- Սէկինք
- Խաթուն - Խաթըն, Խէթօն
- Խաչատուր - Խիչա, Խաչօ, Խաչիկ, Խիչիր. մականուն՝ Խըչկունք, Խիչինք
- Մաղկանոյշ - Մաղկան, Մաղի
- Մերուն - Միրօն
- Կարապետ - Կէրէպիտ, Կէրպէօ, Կէրպան, Կարօ, Կարպուշ. մականուն՝ Տիէր-Կէպտինք
- Կիրակոս - Կէկաս, Կէկի, Կէկուսուօկ
- Կիւլէնիա - Կուլէն, Կուլի
- Հայկանոյշ, Հայկուհի - Հայկան, Հայկուլ, Հայկըլ, Հայկուշ, Հայկօ
- Հայրապետ - Հայրապիտ
- Հելէն - Հէլին
- Հովսէփ - Հրովսիմ, Հրովի, Հուրէն, Հուրի, Սիմա
- Ղազարոս - Ղանգար, Ղէգուր, Ղէգէրէ. մականուն՝ Ղէգէրինք
- Ղուկաս - Ղուկաս, Ղուկուս
- Մաթիլտ - Մաթիլ
- Մանասէ - Մանաս, Մինաս. մականուն՝ Մինասկունք
- Մանուչակ - Մէնըշ, Մէնըշ
- Մատթիա - Մատթ, Մաթաթ
- Մատթէոս - Մէթուս, Մէթուս, Մաթիկ
- Մարթա - Մարթի, Մարթըլ, Մաթիլ
- Մարի - Մարա, Մէրի, Մարօ
- Մարիամ - Մայրում
- Մարկոս - Մէրկուս
- Մարտիրոս - Մարտիրուս, Մարտիր, Մարտա, Մարտօ, Մարտիկ
- Միսաք - Միսագօ
- Մովսէս - Մուսէս, Մուսա. մականուն՝ Մուսինք
- Յակոբ - Էկուր, Էկըր, Էկըրէօ, Եղըր՝պ, Եղպաղա (Եղուպ աղա). մականուն՝ Քէլ Եղուպինք>Քիլաղպինք, Հանի Եղուպինք> Հանաղպինք
- Յարութիւն - Յարութ, Էրթին. մականուն՝ Տիէր-Արթինլէք
- Յովհաննէս - Հաննիէս, Հաննա, Հաննօ, Վէնիէս, Ճան, Ճանի, Ճանօ, մականուն՝ Տիէր-Վէնիսինք, Հաննինք, Հանիէսքէրինք
- Յովսէփ - Ուսիէփ, Ուսը՝բ, Սիփա, Սիփէօ. մականուն՝ Սըբկանք, Ուսըբաղա (Յովսէփ աղա [տեղանուն])
- Նաթանայէլ - Նաթան
- Ներսէս - Նիէրսիսէօ, Նէրսօ. մականուն՝ Նիէրսիսինք
- Նշան - Նիշան, Նիշուն, Նըշիկ
- Ովսաննա - Ուսաննի, Սօնա, Սօնի, Սօնիկ, Սունա
- Պետրոս - Պըտրուս, Պէտըր՝բ, Պէտօ
- Պօղոս - Պուղուս, Պիղիս
- Ռահել - Ռահիլ

Սաթենիկ - Սաթէնի, Սաթօ, Սաթէն
 Սամուէլ - Սամ, Ծամօ, Ծամբօ, Ծամիլ
 Սառա - Սառի, Սառուն
 Սարգիս - Սէրգիս, Սէրգէօ, Սէրգուն
 Սերովբէ - Սիրօթ, Սիրը՛բ
 Սիանոս - Սիան
 Սողոմոն - Սուղոմուն, Սէլլամ, մականուն՝ Սէլլամինք
 Սրբուհի - Սարբի, Սըրբուն, Սըրբուկ
 Ստեփանոս - Ըստիփան, Փէնուս, Փէնը՛ս, Փէնօ, Ըսթիփ
 Վարդուհի - Վարդիր, Վարդէ, Վարդուշ, Վարդուկ
 Վարսենիկ - Վարսօ
 Տիգրան - Տիքէօ
 Քերովբէ - Քիրօթ, Քիրը՛բ
 Ֆրիտա//Ֆերիտէ - Ֆէրտա, Ֆէրտուշ

զ) ԲԱՐԲԱՌԱՅՆԱՅԱԾ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ
 Բեսապի շրջանէն դուրս

Այնթապ - անթուպ
 Այնճար - Անճուր
 Անտիոք - Բանդուք (քաղաք)
 Ասի գետ (Որոնդէս) - ասսա (գետ՝ Հասարակ իմաստով)
 Ատանա - Էտէնու
 Արամօ գիւղ - Էրէմու
 Դամասկոս - Ծունպ
 Եագուպէի եւ Գնիէ գիւղերը - Բալլար Դըրէն (կլոր բլուրը)
 Եգիպտոս - Մըսըր
 Իսկէնտէրուն - Ըսկէնտէրէօն
 Լաթաքիա - Լէտէկ
 Լէվշիա - Լէվշէք
 Կիպրոս - Կիպրուս
 Հալէպ - Հալուսպ
 Ճէպէլ Ագրա (Կասիոս լեռ) - Ճըպլանկլա// Ճըպրանկրա
 Ճըսըր Ծուղուր - Պագուօր (պազար, շուկայ)
 Միատուն - Միէտէօն
 Պաղտատ - Պաղտուտ
 Պետրուսիէ - Պուտրուսէ(ն)
 Պէյրութ - Պէրուտ
 Պըտտամա - Պըտտէմու
 Սուէտիա - Սիվիտէ(ն)
 Քասաթէլ - Նըրքը կասդուօլ
 Քասթալ Մաաֆ - Վըրը կասդուօլ
 Օրտու - Եուրտէն
 Փազը Հասան - Փանասուն

դ) ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐՈՒ ԲԱՌԱՐԱՆ՝

Ա ան

աթաշ - քարով նշանադրած խաղ մը՝
 ան (այլ) - 1) այլեւս, յետ այսու. 2) նաեւ
 անլէօկ - ջուրի մէջ ապրող մանր միջատներու անուն
 ալու - որսորդներու կողմէ գործածուող գոյնզգոյն ներկուած քուրց
 մը, զոր բացուած վիճակով երբ կաքաւները տեսնեն՝ վախէն իրար
 քով կուչ կու գան. անոր վրայ բացուած անցքէն որսորդը կը կրակէ
 ալուօր - ջաղացքի ջուրի ճամբան
 անքէտէօկ (աղքատ-ուկ) - խեղճ, անկար
 ածխըրիլ, ի - ածխանալ
 անանճ - 1) ականջ. 2) կաթնայի ունկերը. 3) խոփին կողմնակի ցցունք-
 ները
 անանճ դընիլ, է - ականջ դնել, մտիկ ընել
 անանճ կանիլ, ի - ականջ կախել, մէկու մը թելադրանքին Հետեւիլ
 ալու//աուկու - ալուայ
 անլէման - աղաման
 անըրըկէն (եղբայրկին) - 1) Հօրեղբօր կինը. 2) տիկնոջ մայրը՝ իբրեւ
 կոչական. 3) որեւէ տարեց կին՝ դարձեալ իբրեւ կոչական

1.- Բայը բերուած է անորոշ դերբայի ձեւով. ճիշդ մօտը դրուած է
 խոնարհումը՝ ի, է, ու, օ:

Բառին կազմութիւնը բացատրուած է փակագծի մէջ:
 Բառարանին մէջ գործածուած են Հետեւեալ յապաւումները.

- ա.- արաբերէն
- թ.- թրքերէն
- պ.- պարսկերէն
- բրբռ.- բարբառ
- գր.- գրաբար
- նւզ.- նուազական
- փղք.- փաղաքական
- մնկ.- մանկական
- բ-մ.- բարեմաղթութիւն, բարեւ
- բզմ.- բազմապատկական
- փխդրճ.- փոխադարձ
- կրկ.- կրկնաւոր

2.- Խաղեր, կերակրատեսակներ, տարազ, ծէս եւ ազգագրական
 այլ երեսոյթներ նշող բառերու սպառիչ նկարագրութիւնները տե՛ս
 մեր «Բեսապ» Բ. Հատորի Ա. մասի Համապատասխան բաժինները:

անդրադարձ - փեսեղբայր
 աղբուրիլ, ի - ընկոյզի միջուկը դուրս հանել
 անդէկ - աղէկ
 անդէր//աղէրը - աղէկ որ
 անդնուրա - տղաբերքի ատեն նորածինի ընկերքը
 անդրնիլ, ի - բամպակը գզել
 անդրնուօկ - փոքր աղեղ
 անդնրկա (աղջկայ) - խաղող մը
 անդուտէք - աղտոտութիւն
 աղուրթէն (աղուոր-ութիւն) - լաւութիւն, աղէկութիւն
 աղուրթնուօք (աղուորութիւն-օք) - լաւութեամբ, աղէկութեամբ
 աղուրնիլ, ու - աղուորնալ, լաւանալ
 աղուրծկ (աղուոր-ուկ) - աղուոր, լաւ (փղքշ.)
 անդէր - 1) եղջիւր. 2) եղջերենի ծառին պտուղը
 անվընկէկ (աղանի-կեկ) - աղանեակ
 անվընուց - աղանոց, աղանետուն
 անտիրինն - աղտորենի
 անտուտ - աղտոտ
 անտուտիլ, ի - աղտոտել
 աճընա (աջ-ենի) - աջ
 անմ//անմիկ - ուտելիք (մակ.)
 անմ//անմի' - կե'ր (մակ.)
 աման//աման - օգնութեան եւ դժգոհանքի արտայայտութիւն
 ամընից - ամառ եղաւ
 անմը իչգէն - Հօրեղբոր աղջիկ (անմա ա.՝ Հօրեղբայր)
 անմը տըղու - Հօրեղբոր տղայ
 ամմըրկէկ (ամուր-կեկ) - 1) Հաստատուն. 2) կարծր. 3) ուժգին. երեքն
 ալ նուազական առումով
 ամմըրճիկ (ամուր-չի-կ) - տե'ս վերի բառը
 ամմըրնիլ, ու (ամրանամ) - 1) Հաստատուն դառնալ. 2) կարծրանալ
 ամմըրուսգ (ամուր-ոցք) - 1) կարծրութիւն. 2) տոկունութիւն
 ամմըրցընիլ, ի (ամրացուցանեմ) - 1) Հաստատուն դարձնել. 2) կարծ-
 րացնել
 ամմօր (ամուր) - 1) Հաստատուն. 2) կարծր. 3) ուժգին
 անյիլ, ի (ականել) - թիրախին նշան բռնել
 անյուօղ (ականող) - նշանառու
 այրամ մայրամ փուխարա - մարիամ խոտ կամ խնկածաղիկ
 անբուն (անբան) - անգործ
 անգըղթիվ (անգղ թեւ) - բոյս մը
 անդէր (այն-դեհ) - այն կողմը, հոն
 անդըդէր (անդի-դեհ) - այն (միւս) կողմը
 անթը - այն կողմի
 անժմէնուօկ - անժամանակ

անիւրիս - աներես, փխ.՝ անամօթ
 անխիլիլ, ի - մարիլ, ուչքը կորսնցնել
 անխիլք - անխելք
 անկ-մանկ (անկ) - ուշաթափ, ապուշ
 անկուօր - անկար, անկարող
 անկօշտ - անկուշտ
 անձան - անձայն
 անճօր - առանց իւղի կերակուր
 անմըղօկ (անմեղ-ուկ) - խեղճ, անճար
 աննիլ, ու - 1) լացի պէս ձայն հանել. 2) արձագանգել
 անչուօքը - այն ատեն (չաք պ.՝ ժամանակ)
 անտիէր-անտէօն - անտէր-անտուն
 անցընիլ, ի (անցանեմ) - 1) անցընել. 2) լոյսը մարել. 3) դարմանել
 անցօկ-մառցօկ - անցուկ-մոռցուկ
 աչգ - 1) աչք. 2) բողբոջ. 3) մեղուի փեթակ. 4) յաղաչանք, չար աչք
 աչգ դիպիլ, է - աչք դպնալ, ձախողանքի ենթարկուիլ
 աչգ ինիլ, ի - աչք ընել, աչքով նշան տալ
 աչգ խումցընիլէօտ (աչք խփուցանել-ուտ) - աչքխփուկ խաղը
 աչգ քէրիլ, ի (աչք նետել) - 1) նայիլ. 2) ծիլ կամ բողբոջ արձակել
 անչպէօնք (աչպ-ոնք) - 1) անպէտք կահ-կարասի. 2) թափթփուք
 անպըտվիլ, է - մուրով երեսը սեցնել՝ խաղ մը (ապըտ ա.՝ ստրուկ)
 անպըր-ճըպըր - այլանդակ (խօսքը)
 անպրիլ - աչքը յոգնեցնել
 ապճ//ապճուիղ - վախի ու զարմանքի արտայայտութիւն
 առաջկընճէթ//առաջընճէթ (առաջ-կնճիթ) - խիզախ, համարձակ
 առաջկընճութէն - համարձակութիւն
 առըստըղէկ (առաստաղ-իկ) - աստղ
 առկու//ակու - ակոյա
 առնըվիլ, է (առնուիլ) - խօսքէ մը կամ վարմունքէ մը վիրաւորուիլ
 առջինուօկ - առջինեկ
 առջիվիլ, ի - առջեւել, անցնիլ
 առջիվիլի (առաջի-աւուր-է) - սկիզբէն
 առջիվնուց - առջեւանոց, գոգնոց
 առտէն - որոնց
 անդէր (այս-դեհ) - այս կողմը
 անդըդէր (աստի-դեհ) - այս (միւս) կողմը
 անըր - այս որ
 անթը - այս կողմի
 ասնիլ, է (անցանեմ) - 1) անցնիլ. 2) լոյսը մարել. 3) անհետիլ՝ վէրքը,
 հոգը եւ այլն
 ասսա - գետ. բառը կը ծագի Ասի յատուկ անունէն. Ասի կամ Որոնդէս՝
 Անտիոքի չըջանի Հայոց ճանչցած միակ մեծ գետն է
 ասսիլ, ի (յածել) - որսը թաքուն հետապնդել

աստառցո - աստառցու
 Աստուծու բէրէն - Աստուծոյ բարին (բ-մ.)
 ասողէլ (այդ-դեհ) - այդ կողմը
 ասրը - այդ որ
 աստուն - 24 ժամի չափ ատեն մը
 արդընուց - յարդանոց
 արծիլ, ի - 1) արածիլ. 2) Հետամտել. 3) վէրքը բորբոքիլ ու տարածուիլ
 արվանտ - վիշապ
 արվը կէրուս - առուի կարոս, ուտելի բոյս մը
 արվըրկիլ//առվիրիլ, ի (աւեր[ակ]-ել) - խակ պտուղէն բերանը ան-
 Համանալ
 արտունցը - արտի՝ Հունձքի ատեն
 արր//արրիդ - զարմանք կամ իբր զարմանք արտայայտող բառ
 արրօշ (արիշ) - երկար ու թարմ ոստ
 արցընքիլ, ի - արցունքոտիլ
 ասֆսէօն - որսորդի թաքստոց

Ճ

Ճբըլդտիլ, ի (ափ արմատէն) - ափով շօշափել (բզմ.)
 ճբըլդիլ, ի - ափով շօշափել
 ճգէք (ագի-ք) - կանացի Հագուստի վարի մասը
 ճգրվար առըստըղէկ - ագեւոր աստղ, գիսաւոր աստղ
 ճղդուօր - զգեստ
 ճլըբաղարջ - Ս. Սարգիսի բաղարջ Հացը
 ճլըճիկ (անալի-չի-կ) - քիչ մը անալի
 ճծիլանք - առաջին ածիլումի ծէսը
 ճկան - մեծ, նշանաւոր
 ճկան ուօր - տօնական օր, ոչ աշխատանքային օր
 ճկաստիլ, ի - ակօսներ շինել՝ արօրով
 ճկտիլ//էյտիլ, ի (յատակել) - 1) ընկղմիլ ջուրի մէջ. 2) թեքիլ, ծով՝
 բեռը
 ճմը՛ն - ամէն
 ճմիէկ//ճմը՛ն միէկ - ամէն մէկ, իւրաքանչիւր
 ճմնըտիլ, ի (ամանեմ) - տան առարկաները տեղաւորել (բզմ.)
 ճմնիլ - տեղաւորել՝ ամանի մէջ
 ճյմըտիլ, ի (ակն մտանել) - աչք դպցնել, յաչաղել
 ճնգանճիկ (անագան-չի-կ) - կանուխկեկ
 ճնկիէ/ճնկիէ - անկէ
 ճնկիէց/ճնկիէց - անկէց
 ճնտինը - այն ատեն
 ճնէօնիկ - չնչին, չափազանց քիչ

ճնթէն նըրքիվը - անութին տակ
 ճնիծաւ - անիծոտ, ոջլոտ
 ճնիծուօծ - չարուկ, փոքրիկ սատանայ (փղքչ.)
 ճնծըրվէկ - թեթեւ անձրեւ
 ճնծըրվընա (անձրեւ-ենի) - անձրեւային
 ճնծըրվըտիլ, ի - անձրեւել (բզմ.)
 ճնծըրվիլ, ի - անձրեւել
 ճնծըրվուտ - անձրեւոտ
 ճննէօշ - իբր՝ անոյշ ըլլայ (բ-մ.)
 ճնթթաց - անօթի փորով
 ճնպըտիլ, ի - ամպոտիլ
 ճնտէթք (անդանումն) - ստամոքսի ծանրութիւն, անհանգստութիւն
 ճնտէճ (անդանել բայէն) - անհանգիստ՝ անմարսողութենէ
 ճնտէօնքը - տակը, Գիտնէն ճնտէօնքը ասնէս՝ գետնին տակը անցնիս
 ճնտիճիլ, ի (անդանել) - շատ ուտելէն անհանգիստ ըլլալ
 ճպըրին - ապուրցու
 ճպըրցօ - ապուրցու
 ճպրէմ-մառնէմ - ապրիմ-մեռնիմ՝ ծաղիկը
 ճսկիէ/ճսկիէ - ասկէ
 ճսկիէց/ճսկիէց - ասկէց
 ճսըղիլ, ի (ասեղել) - մարմնի վրայ ասեղով Հարուածներ տալ
 ճսըղնըտիլ, ի (ասեղն-ոտ-ել) - փշաքաղիլ
 ճսըղտիլ, ի - ասեղով քանի մը խոթ կարել
 ճվըցէօք//լըֆցէօք - աւելցուք
 ճվընկէճ/ճուվընկէճ - անուանակից
 ճվըրկիլ, է (աւերակ-ել) - փճանալ, քանդուիլ
 ճվըրկիլ, ի - աւերել, քանդել
 ճվտեկան - դիրահաւան
 ճտեկիէ/ճտեկիէ - ատկէ
 ճտեկիէց/ճտեկիէց - ատկէց
 ճտին (ատեան) - ատեն, ժամանակ
 ճտին-ճտին - ատեն-ատեն, երբեմն
 ճտինը - ժամանակին
 ճրնուօտ (անարատ) - լման
 ճրեպէկ - արաբ. յգն.՝ ճրեպկիր
 ճրէք - առիք, արօրի մաս
 ճրըվը ծանդէկ - արեւածաղիկ
 ճրիվդիէմ - արեւդէմ
 ճրիվէկ - արեւիկ, արեւոտ
 ճրիվէկ-ճնծըրվէկ - արեւիկ-անձրեւիկ, կ'ըսուի գարնանային եղա-
 նակին
 ճրիվիլ, ի - արեւել, արեւոտ ըլլալ
 ճրիվիլուօղիէն - արեւելք

ՆրիվՋըրիւ, ի - արեւջրեւ
Նրկուօռ (արի-եկ-առ) - եկո՛ւր ա՛ռ
Նրուօ ցնիւ, ի - արօսով ցանել, առանց հերկի ցանել
Նրուօ - արօս
Նփըւփիւ - ափսփել, շօշափել
Նփքըսիւ (ափկից-ել) - ափով առնել

Բ

բաղարջ - իբրեւ վերադիր սովորական հաց բառին՝ բաղարջ մը հուօց, ըրկը՝ բաղարջ հուօց (բաղարջ մը հաց, երկու բաղարջ հաց). կ՛ըսուի նաեւ՝ խնչնր բաղարջ բնիւ (խոչոր բաղարջ բանալ). նկանակ:
բանէք (բաղանիք) - լոգանք
բամկըրիւ, ի (բամպակ բառէն) - 1) բորբոսիւ, մզլուտիւ. 2) վախէն ճերմկնալ. 3) կակուղնալ
բամկօկ (բամպակ-ուկ) - ծառի ցողունին վրայ աճող բամպակի նմանող մակաբոյծ մը
բանձըրկէկ (բարձր-կեկ) - բարձրիկ
բանձըրճիկ (բարձր-չի-կ) - բարձրիկ
բանձըրուօգ (բարձր-ոյց-ք) - բարձրութիւն
բարլուօյս - բարի լոյս (բ-մ.)
բարձէկ - 1) բարձիկ. 2) խոյակ
բարձընուց - բարձերու տեղ, անկողնոց
բըդդիւ, ի - նետել
բըդվիւ, է - փնտոել
բըզգէօնք - բազումք համաստեղութիւնը
բնիւ, է (բանիւ) - հիւսել, ասեղնագործել. նաեւ՝ աշխատիւ (գործիքը)
բննիչէք - աշխատավարձ
բըրէյկի - բարի եկար (բ-մ.)
բըրը զէտէկ - բարի զատիկ, բարի տօն (բ-մ.)
բըրը խընտօմ - բարի խնդում, բարի ուրախութիւն (բ-մ.)
բըրը ճանփուօգ - բարի ճամբայ (բ-մ.)
բըրը մըննք - մնաք բարի (բ-մ.)
բըրըմըննք - հրաժեշտ
բըրըմընիւ - հրաժեշտ տալ, մնաք բարի ըսել (բ-մ.)
բըրը տանն - բարի (նոր) տարի (բ-մ.)
բըրը տիսնք//բըրուօ տիսնք - բարի տեսանք//բարով տեսանք (բ-մ.)
բըրըրկէօն - բարի իրիկուն (բ-մ.)
բըրը քիչիւ - բարի գիչեր (բ-մ.)
բըրիվ//բըրուօ - բարեւ//բարով (բ-մ.)

բըրիվիւ, ի - բարեւել
բըրիվն Նրիվիդ - բարեւն արեւիդ, իբր պատասխան մէկու մը բարեւին
բըրկընիւ, ու - բարակնալ
բըրկիսսուօր - բարի կէսօր (բ-մ.)
բըրկնկէկ (բարակ-կեկ) - բարակ (փղքչ.)
բըրկնճիկ (բարակ-չի-կ) - բարակ (փղքչ.)
բըրուօկ միէչգ - բարակ մէջք, փխ.՝ նազելի
բըրուօկ շուօն (բարով շահով) - բարի գալուստի արտայայտութիւն կամ իբր պատասխան մէկու մը բարեւին
բըցվըրտիւ, է - բացուիլ (բզմ.)
բըցվիւ, է - բացուիլ
բըդդնիւ, ու - փտիլ
բըդդէօկ - փտուկ
բըդդիւ, է - փտիլ
բըլէտ - բլիթ, անուշեղէն մը
բընդըլնիէկ - ոստով շինուած նետ ու աղեղ՝ իբր տղոց խաղալիք
բըլխէտ - խեչերանք
բըրընկիւ, ի - բռնկիլ, բոցավառիլ
բըրընցընիւէք - դիւրավառ իր, որով կրակ կու տան թոնիրին
բըրնատիւ, ի - բռնատիւ, ափն ու մատները աշխատանքէ ընդարմանալ
բըրնուօտ (բուռն-ատ) - մէկ անգամէն բուռի մէջ առնուած խոտ կամ ցախ
բըրկընտուօք - բեւեկնիի տակ, այդ ծառին շուքը. նաեւ՝ տունկը
բըրդըտիւ, ի - բըդել (բզմ.)
բըրդուօ - բըրդտ
բըրդօճ - բըրդօշ
բիբ - աչքիսփուկ խաղին մէկ տեսակը
բիէրդ - բերդ
բիժկն - հաղորդութեան գինի
բիժնըտիւ, ի - բաժնել (բզմ.)
բիվըրի (բեր եւ արի) - բե՛ր եկո՛ւր
բիւք - բերք, ծննդաբերութիւն
բնլ - բուլ, տհաս թուզ
բնլնրկէկ - կլոր (նւզ.)
բնլնրկընիւ, ու (բուրակ-անալ) - կլորնալ
բնլնրճիկ - բուրրչի
բնն (բան) - 1) գործ. 2) անորոշ գոյական
բունկուօլ - բունկալ
բունձըրքէնթ - բարձր քիթ, փխ.՝ գոռոզ
բնվիկէկ (բեւեկն-իկ) - փոքրիկ թռչուն մը, որ կ'երեւի բեւեկի ատեն
բուվուօկ - բու
բնրնտ լուէկ - բուրտ լուսիկ՝ լուսածճի
բուօյր - անուշ հոտ, բոյր

բուօրկ (բարկ) - բորբ, բոցավառ
բուօրձ - 1) բարձ. 2) խոյակ
բօյնթ - բթամատ

Գ

գարձիկ (գէր-չի-կ) - գիրուկ
գէլէք (գալիք) - փորձանք
գէլնց (գալ-ոց) - իբրեւ պարէն՝ կոթուններով հիւսք կազմած սոխի
կամ սխտորի շարոց
գէնիլ, է - գանիլ, պժգալ
գէնկըտվիլ, է - բողոքել (փխդրձ.)
գէնկըտվին (գանգ-ոտ-ու-ին) - իրար դէմ կատարուած բողոք
գէնկիլ, է (գանգ-ել) - գանգատիլ, բողոքել
գէնկուօսգ (գանգ-ացք) - գանգատ
գէվէգան - գաւազան
գէրըհուօտ - գարեհատ
գէրընքվից - գարուն եղաւ
գէրիկ - գարիկ
գէօղձ - գուղձ, հողի ամրացած կտոր
գըդդըլիս - ամբարուած ցորենի մէջ ինկող որդ
գըդդըլիսիլ, ի - ցորենը որդնոտել
գըզգիլ - գզել, բզքտել
գըզվէն - գզուըրտուք, կռիւ
գըզվիլ, է - գզուիլ, կռուիլ
գըժտիլ, է - գժտուիլ
գըլը ծանդէկ (գայլի ծաղիկ) - ծաղիկ մը
գըլիլ, ի - պառկեցնելով ձգել
գըլիսուօկ/կըլիսուօկ - գլուխ (փղքչ.)
գըլուօր (գիլ-ար) - կոլուակ, թ.՝ քիւֆթէ
գըլվիլ, է - գլուիլ, մէկ կողմի վրայ ընկողմանալ
գըլտուրիլ, ի - գլորել
գըլտուրտիլ, ի - գլորել (բզմ.)
գըլօխ/կըլօխ - 1) գլուխ. 2) սոխի, սխտորի իւրաքանչիւր հատը. 3)
հասկ
գըլօխ կէպիլ (գլուխը կապել) - հասկ ունենալ
գըլօխ տէնիլ, է - գլուխ տանիլ, իբր՝ ձանձրացնել
գըլօխը կինիլ, ու - գլուխը կենալ, իբր հսկել՝ ճաշին, հիւանդին եւ.
գըլօխը ուտիլ - գլուխը ուտել, իբր ուրիշի դժբախտութիւն պատճառել
գընծէօ - գնածոյ
գընտէկ - 1) փոքր գունտ. 2) գունտ ու կլոր մարդ
գընտէօ - գնա՛ տո՛ւր

գընտըլգուօլ - սիւնին վրայ դրուած, հեծած
գընտիլ, ի - հաց բանալու համար խմորը գունտ-գունտ շինել
գըրվըրիլ, ու - շան սպառնալից ձայնը
գըրըզմընուց - գերեզմանոց
գըրըսնիլ, ի (գըրեցնել) - կախարդական գիրով մէկը իր կամքին կապել
գըրկիլ, ի - գրկել
գիիմ, ի (գայեմ) - անասունները քշել
գիսիվար (գիսաւո՞ր) - միջակ մեծութեամբ գունազեղ թռչուն մը
գանգնց - գոգնոց
գուգուլա - խաղ մը, տե՛ս մէնտէքը
գանգվուօկ - բու
գանգիլիլ, ի (գուօարկու՞ել) - թեթեւ քուն քաշել
գանքի - գնա բեր
գանտէսկան (գիտացական) - ճանչուոր, ծանօթ
գանտէսկանութէն - ծանօթութիւն անձի հետ
գանտըլտիէդ - գօտկատեղ, մէջք
գանտըլտիլ, ի (գիտանալ) - ստերջ տաւարը զուգաւորել
գանտըլտիլ - ստերջ անասունի զուգաւորում
գանտըլտիլ, է - զուգաւորիլ (ստերջ կովը, այծը եւլն.)
գանտիլ, ի - վռնտել

Դ

դադար - քիչ առաջ
դանընծըրիլ, ի - գունաթափիլ
դանընտիլ, է - դեղնոտիլ
դանդիլ, ի - լիալուսին ըլլալ
դանբօզ - տմբուզ
դաշմէն (դա՞շմ-ին) - գլխապտոյտ
դաշմիլ, է - գլխապտոյտ ունենալ, ուշաթափիլ
դասվէտք (դարձ-ու-ոյթք) - դուրս տալը, փսխուք
դասվիտիլ, է - 1) փսխիլ, դուրս տալ. 2) հասուն թուզի մեղրահամ
հիւթը ծորիլ
դանն - բլուր
դանթօկ - բլրակ
դարկըսնիլ, ի (դատարկեցուցանեմ) - պարպել տալ
դարկիլ, է - դատարկիլ, պարպուիլ
դարկիլ, ի - դատարկել, պարպել
դարկութէն - դատարկութիւն, պարապութիւն
դարտուօկ - դատարկ, պարապ
դէդըրնիլ, ու (դադար-անալ) - յոգնիլ
դէդըրցընիլ, ի (դադարեցուցանեմ) - յոգնեցնել

դէդուօր (դադար) - գործէ արձակուիլը, հանգիստ
 դէդուութէն - յոգնութիւն
 դէկէօն - պզտիկ կացին
 դէհնիկ (դահ-չի-կ) - քիչ մը դահ
 դէն - դէպի հոն
 դէնկէկ - փոքր դանակ
 դէսսէկ - փոքր թաս
 դէրուօկ - դարակ
 դէս - դէպի հոս
 դըբ-դարտուօկ // դըբըս-դարտուօկ - դատարկ (կրկ.)
 դըբ-դըղէն // դըբըս-դըղէն - դեղին (կրկ.)
 դըգէլէկ - դգալիկ
 դըգէլնման - դգալաման, որ եղէգէ կամ ուռերէ հիւսուած փոքրիկ կողով
 մըն է
 դըգէլի, ի - դգալել, դգալով ուտել
 դըգէլտիլ, ի - դգալել (բզմ.)
 դըդման էպէօր - կերակուրի տեսակ
 դըդմըրիլ, ի - դդումի համ ունենալ՝ վարունգը
 դը՛գ - իբր՝ փչոց, պարապ խօսք
 դըզգատան - յաճախ փուք արձակող
 դըզգէն - փուքի ձայն
 դըզզըտիլ, ի - փուք արձակել (բզմ.)
 դըզզիլ, ի - փուք արձակել
 դըղէն պըլպէօլ - դեղին սոխակ. տատրակէն քիչ փոքր սիրուն թռչուն
 մը (պըլպէօլ ա.՝ սոխակ)
 դընդըրբիլ, ի - շատ ծերանալ
 դըռան - դրան ծխնին
 դըռնուօկ - դռնակ
 դըսսու (դ [ընդ]-այսու) - այս կողմէն, այս կողմով
 դըստէկիլ, ի - խուրձ կապել
 դըստուօկ (դաստակ) - փոքր խուրձ՝ դաստակի վրայ հաւաքուած
 դըրան - փոքրիկ կլոր հաց, որ կը պատրաստեն խմորի վերջին գունտով
 իբր տան կրտսեր մանկան բաժինը
 դըրդը՛ր - տարիքոտ ու գառամած
 դըրէկիկ - փոքրիկ կլոր հաց. տե՛ս դըրան
 դըրէցնը մուօրդ - դրացիի մարդ. կ՛ըսուի դրացիներու փոխադարձ
 օգնութեան ձեռք երկարող մարդու համար
 դըրըզկուօսգ // դըրկուօսգ (դ [ընդ]-իրիկ-այցք) - իրիկնամուտ
 դըրըսկիլ, ի - իրիկնանալ. տե՛ս վերի բառը
 դըրկուօսգչուօք - իրիկնադէմին (չաք պ.՝ ժամանակ)
 դըրջօկ - թրջուկ, թրջուած
 դըրսանց (դուրս-անց) - դուրսէն
 դըրօկ - պզտիկ բլուր

դիրան // դիրան (դէպի-այն) - դէպի այն կողմը
 դիրանս // դիրանս (դէպի-այս) - դէպի այս կողմը
 դիրատ // դիրատ (դէպի-այդ) - դէպի այդ կողմը
 դիէզ - որովայնէ արձակուած փուք
 դիժարկէկ (դժուար-կեկ) - դժուար (նւզ.)
 դիժարճիկ (դժուար-չի-կ) - դժուար (նւզ.)
 դիմէսկան - դիմացկուն
 դիմէսկունութէն - դիմացկունութիւն
 դինա (դ [ընդ]-այնու) - այն կողմը, այն կողմէն
 դիտա (դ [ընդ]-այդու) - այդ կողմը, այդ կողմէն
 դիրուօր (դ [ընդ]-իւրար) - իրար, իրարու հետ
 դուդուօզ - պոչատ
 դուլագու - հաստ աղիքին դուրսի մասը
 դուլագտիլ, ի - առատ կղկղել (բզմ.)
 դուլուօզ - կղկղանքի կտոր
 դուդուդիլ, ու - դողդողալ
 դուղէզիլ, ի - սողնակը դրան դնել
 դուդուօզ - փականքի տեսակ մը, որ բաղկացած է պատի մէջ բացուած
 անցքէ մը եւ առանձին փայտէ մը, որ կը մտցնեն անցքին մէջ
 դրան ետեւէն: Մօտ է գր. դոխ // դոխն եւ բրբռ. դոխագ բառերուն
 դմա - մայրի ծառին կեղեւը
 դմը (դ [ընդ]-ուր) - դէպի ուր, ուր
 դուրըսնիլ, ի (դիւրեցուցանեմ) - գիրցնել
 դուրիլ, է - լաւանալ, գիրնալ
 դմրիցի - դուրս
 դմրիցանց - դուրսէն
 դմրաչուօկ - տե՛ս իտար՝ դուրուչուօկ
 դմրվար - դարվար
 դմրվիր - դարվեր
 դուրօկ (դուր-ուկ) - փոքր հարթավայր
 դուօյր - հարթ գետին, դաշտ
 դուօր - բլուր

Ե

եալան - առանձին բուսնող լեռնային խոշոր կակաչ մը, լեռակ
 եախնիկ էպէօր (թ.՝ եախնի) - լուրիկ ջուրով, գետնախնձորով, սոխով
 եւ այլն ջրալի ու տաք կերակուրներու ընդհանուր անուն
 եանըր (ի-այն-որ) - անոր համար, այդ պատճառով
 եաս - լծկան եզները ուղիղ գիծին բերող արտայայտութիւն մը
 եանտէ - ով հայր (եա ա.՝ ո՛վ)
 եանտէս - յիշողութեան գրաւը չահողը կկըսէ, իբր՝ «մխաքս է»

եփօրը (յո-որ) - ուր որ
 եփօրսան - ուր որ ալ ըլլայ (իսա՝ թ. վերջածանց)
 եիէբըր - երբ որ
 եիէբըրսան - երբ որ ալ ըլլայ
 եիէնչ - ինչու
 եիտ-եառանճ - ետ-առաջ՝ ի նախդիրով
 եիտնըրկէօ (ետ-ն-երկու) - կրկին, վերստին
 եիրուօր իյնիլ - իրար իյնալ, վիճիլ, կռուիլ
 եուօթթը աղբըրտաք - եօթը եղբայրներ՝ աստղահոյ մը
 եուօն - հոն
 եուօնդան - հոն
 եուօս - հոս
 եուօսդան - հոս
 եուօտ - հող
 եուօտդան - հող

Ձ

զաղուօլ - որսի բարակ շուն
 զանկ - թարմ ոստերը ժանգի պէս ծածկող շատ մանր միջատ մը
 զարբ - հարուածի սաստկութիւնը բնորոշող բառ
 զէմտուօկ (ծամ-տակ) - ծոծրակ
 զէվկըտէօն - զաւակի տուն՝ արգանդ
 զէվուօլ (ծաւալ) - ծանծաղ
 զէտէկ (զատիկ) - տօն
 զէտկիլ, ի (զատիկ-ել) - տօնել, տօնակատարութեան մասնակցիլ
 զէտկանց-զէտէկ - տօնէ տօն
 զէտուօկ - զատ, ընտիր
 զըլդէդ - 1) ծղրիթ. 2) կանանց պողչտուք. 3) Հարսանեկան «լուլու» կանչ
 զըլդըդիլ, ի (ծղրիթ-ել) - 1) ճչալ. 2) «լուլու» կանչել
 զըմզըմօկ - առաջին անձրեւէն ետք բուսնող պզտիկ, կապոյտ ծաղիկ
 զըմըր-սիվ//զըմըր-սիվ - սել՝ սաստկական նախածանցով
 զըմմիէլ (ծիմել) - դեղին ծաղիկով վնասակար բոյս մը
 զընկ-զընկ - ոսկորի սուր ցաւ արտայայտող կրկնաւոր
 զընկէն (զնգիւն) - ոսկորի ցաւ
 զընկըվիլ//ծընկըվիլ, է (ծունկ արմատէն) - ծունկի գալ
 զընկըտվէօկ - ծնկաչոք
 զընկըտվիլ, է (ծունկ-ատ-ու-իլ) - ծունկի գալ
 զընկըր-զընկըր - դողէրոցք արտայայտող բառ
 զընկըրտէն - դողէրոցք
 զընկըրտիլ, ու - ցուրտէ դողալ

զընկիլ, ու (զնգալ) - ոսկորը ցաւիլ, կոտտալ
 զըրթ - 1) իշու արձակած փուքը. 2) արհամարհական արտայայտու-
 թիւն
 զըրու - իշու զոոցը
 զըրուէն - զոոց
 զըրուիլ, ու - զուալ
 զըր - սաստկական նախածանց. կը գործածուի շարք մը ածականներու
 հետ՝ զըր կէրմէր, զըր խիէվ, զըր շարխօշ
 զըրիէզ - կանեփէ հիսուած պարան, զրիզ
 զիլըրթա (զիլ-ար-ոտ) - կռուազան կին
 զիտուօկ - ճանճին ձգած որդը՝ ճաշին մէջ
 զուգիլ, ի - զոյգ մը շինել
 զուգվիլ, է - զոյգ ըլլալ, կենակցիլ
 զուլուօլ - զուլալ
 զուղուօր - կատուի մեծութեամբ զազանիկ մը
 զուրուօն (զօր-աւ-ն) - ամբողջ ուժերը հաւաքելով
 զուօր ինիլ, ի - զօր ընել, ուժ բանեցնել
 զուօրք - 1) միասին. 2) անգամ (զարկ)՝
 զուրցըտիլ, ի - զրուցել
 զօրթ - 1) միասին. 2) անգամ

Է

էնէյմըր//քէնէյմըր - 1) քանի որ. 2) փոխանակ
 էնքըրէնուօտ (ինք անարատ) - ամբողջութեամբ, լման
 էնքըդէնկ (ինք-ընդ-ինք) - ինքնիրեն
 էք (իրք) - անորոշ գոյական
 էք չինէր - բան չ'ըներ, իբր՝ վնաս չունի
 էքնիլ, ի (իրք-ան-ել) - անորոշ բան մը ընել

Ը

ըբ-ըսպիտուօկ - սպիտակ (կրկ.)
 ըբ-ուղուրդ//ըբըսբ-ուղուրդ - ուղղորդ, ճիշդ (կրկ.)
 ըդկիէս (ընդ կէս) - աշխատանքի տեսակ՝ կէս շահաբաժինով
 ըժկըտիլ, ի - (չարժ-կտել)- շարժկտել
 ըլկէման - ալկաման (ալիկ ա.՝ անասուններու կեր)
 ըլվէսվիլ, է - լուացուիլ, լոգնալ
 ըլըզնանց - եղէզնուտ
 ըլըտիլ, ի - իւղոտել
 ըղիէդ (աղեղն) - մանածի գործիք

ըղիւ, ի - իւղ քսել, իւղոտել
ըղտը չըտտէկ - ուղտի ծտիկ՝ երկարավիզ փոքրիկ թռչուն մը
ըղտը պունճօկ - ուղտի բոժոժ, բոյս մը (պունճուկ թ.՝ բոժոժ, Հլունա-
չար)

ըմմը՛ն - ամէնքը, բոլորը
ըմմո՞ւ - ո՞վ, ո՞ր մէկը
ըմմնք - որո՞նք
ընծան (ընդ-զ-այն) - այնպէս
ընծաս (ընդ-զ-այս) - այսպէս
ընծատ (ընդ-զ-այդ) - այդպէս
ընծըս (ընդ-զ) - պէս, նման
ընծըսսու (ընդ-զ-այսու) - այսպէս
ընծըր (ընդ-զ-որ) - պէս, նման
ընծըրան (ընդ-զ-որ-այն) - այնպէս
ընծըրաս (ընդ-զ-որ-այս) - այսպէս
ընծըրատ (ընդ-զ-որ-այդ) - այդպէս
ընծըրըսսու (ընդ-զ-որ-այսու) - այսպէս
ընծըրինու (ընդ-զ-որ-այնու) - այնպէս
ընծըրիտու (ընդ-զ-որ-այդու) - այդպէս
ընծինու (ընդ-զ-այնու) - այնպէս
ընծիտու (ընդ-զ-այդու) - այդպէս
ընկըրթնուօք (ընկերութիւն-օք) - ընկերովի
ընկուղ - կարասի բռնիչ՝ ականջ
ընճօղ - արու հորթ
ընտըրօկ - ընտիր, ընտրուած
ըչ գնտիմ - իբր՝ ինչ գիտեմ, ինչ գիտնամ
ըպըչնիլ, ու - ապուշնալ
ըպըչնուօք - ապուշի պէս
ըբըղիլ, ի - առոգել
ըռպըտիլ, ի - ռուպի պէս մածուկ ըլլալ
ըռպուտ - ռուպոտ՝ աման, ձեռք
ըռռատնիլ, ու (առատանամ) - աժաննալ
ըռռատութէն (առատութիւն) - աժանութիւն
ըռռատցընիլ, ի (առատացուցանել) - աժանցնել
ըռռուօտ (առատ) - աժան
ըսկը՛ - ճիշդ այդպէս, ահա այդպէս
ըսկըսընք - կեսրայր
ըսկու - ահաւասիկ, ահա
ըսպըտկիլ, ի - սպիտակիլ
ըսպըտկիր (սպիտակ-եր) - ճերմակեղէն, ճերմակ լաթեր
ըսպիտուօկ - 1) սպիտակ. 2) ցորեն մը
ըսպիտուօր - նապաստակի աղբ
ըսսու (այսու) - այս, սա

ըտըրան (այդր-այն) - այն մէկը, այն
ըտըրաս (այդր-այս) - այս մէկը, այս
ըտըրատ (այդր-այդ) - այդ մէկը, այդ
ըտտը (այդու) - ճիշդ այդպէս, ահա այդպէս
ըտտը՛//ըտտու (այդու) - ահա, ահաւաղիկ
ըրգչթթընուօրը//ըրգչթթն - երեքչաթթի
ըրըժկիտիլ, ու (յօրանջ-կոտ-ել) - յօրանջել
ըրընիլ, ի (յարագեմ) - դիգել, կուտակել
ըրըմիմ, ի - ակօսին առջեւի ծառը շրջանցել
ըրընիլ, ի - երանի տալ, ըրնիմ ըզքի՝ երանի քեզ
ըրըսփըխան (երէցփոխան) - քահանային սպասաւորը
ըրկանանկանճ - երկայն ականջ ունեցող, փխ.՝ տխմար
ըրկան-բէրուօկ - երկայն-բարակ, փխ.՝ մանրամասն
ըրկան չգէն - արտայայտութիւն մը, զոր կ'ըսեն Բարեկենդանի վերջին՝

անպըտվելու խաղին. ըրկան չգէն մըննա՞ ի քի (երկար ագին մտնէ
քեզի). հաւանաբար նկատի ունին յառաջիկայ Մեծ Պահլը:

ըրկըգգէք (երկու-հոգի-ք) - յղի
ըրկընուօկ - միջակ մեծութեամբ կուժ
ըրկըչթթընուօրը//ըրկըչթթն - երկուչաթթի
ըրկըտկիլ, ի - երկտակ ըլլալ
ըրկըտուօք - երկտակ, մէջքը ծռած
ըրրօզնպէօր - բրինձի փիլաներու ընդհանուր անունը

թ

թազգիլ, ի - գնդակ նետել
թաթ - 1) չարքաչ, անխնայ աշխատող. 2) Բառը դարձած է նաեւ
ազգանուն ալեւիներուն, որովհետեւ ալեւիները (թաթ) եղած են
թուրք եւ արաբ կալուածատէրերու քով քառորդով աշխատող
չարքաչ ժողովուրդ մը. չչփոթել կովկասեան թաթերուն հետ
թնթան - աղուոր (մնկ.)
թնթըլիվիլ, է (թաթախուիլ) - 1) մէկու մը հետ վէճի բռնուիլ. 2)
գործի մը ձեռնարկել
թնթանկ-մնթանկ - թալիկ-մալիկ
թնթըրրիլ, ի - թարախոտիլ
թնթթըլիլ, է - սայթաքելով բերանքս ի վար իյնալ
թնթցն - թաղեցի
թակավուրիլ, ի (թագաւորել) - հալածել մինչեւ որոշ սահման մը
թան - աղուոր, լաւ (մնկ.)
թանըլիլ, ի (թաղել) - տնկիներուն տակը հող հաւաքել (բզմ.)
թանճըրկէկ - թանճրկեկ
թանճըրճիկ (թանճր-չի-կ) - թանճրկեկ

Թանժրուսգ (Թանժր-ոյցք) - Թանժրութիւն
 Թասլի, Ի - Հալածել, ետեւէն վազել
 Թարթէկ - եղջիւրանման պտուղներու ողկոյզ. բառը կազմուած է
 Թերեւս Թարթիչ բառի նմանութեամբ
 Թարխուն - ուտելի խոտ մը
 Թէկըտէն (Թալկ-տ-իւն) - սաստիկ ծիծաղ
 Թէկըտի, Է - Թալկալ (բզմ.)
 Թէկի, Է - մարի
 Թէկէլ - կար
 Թէկի, Ի - Թակել
 Թէնթուօխ - առանց ոսկորի միս
 Թէնի, Ի - Թրջել
 Թէպըտի, Է - տապալակի
 Թէրկի, Ի (ընդ-Հարկանել) - 1) խաղի մէջ յաղթել. 2) մոլութիւն մը
 յաղթահարել, ձգել. 3) ամուսնալուծել
 Թէրմաղի, Ի - Հացը պէտք եղածէն աւելի եփել
 Թէրմուօղ - կէս այրած Հաց
 Թէրվէն - կոխ, գօտեմարտ
 Թէրվի, Է (ընդ-Հարուի) - կոխի բռնուի, գօտեմարտի
 Թէցան - Թացան
 Թէփի, Ի (Թափեմ) - 1) կերակուրը պնակին մէջ պարպել. 2) գոյնը
 տալ
 Թէս - որովայնէ արձակուած Հոտ
 Թէսթ - լծկան եզները ուղիղ գիծը բերող արտայայտութիւն
 Թէօնտ (Թունդ) - բարկ՝ գինի, օղի
 Թէօշ - 1) Թուշ, այտ. 2) ուտելիքի պատառ
 Թրբբըշի, Ի (Թրբել) - 1) կոնակին կամ ուսին Թեթել Հարուածել. 2)
 խմորի գունտը բանալ
 Թրբբի (Թրբել) - 1) Թրբ ձայնը Հանելով վար իյնալ. 2) խմորի գունտը
 բանալ
 Թրգգիկէկ//Թրգկէկ (Թուգ-կեկ) - փոքրիկ Թռչուն մը, որ կ'երեւի
 Թուգի եղանակին
 Թրթթելի, Ի (Թիթեղն՝ Թիթեռ արմատէն) - ճանճոտի, որդնոտի՝
 Հացահատիկները
 Թրթիւրրի, Ի - որդնոտի՝ Հացահատիկը
 Թրթվընիկ - Թթու
 Թրը'նկ - բան մը չպրտելը
 Թրընկի, Ի - չպրտել
 Թրընկվի, Է - բարձր տեղէ մը վար իյնալ
 Թրպըրտի, ու - ազատուելու շարժումներ ընել
 Թրթթի, Ի - Թրբ-Թրբ ձայն Հանել
 Թրննէն - Թրբ ձայնը
 Թրնի, Ի - 1) Թրբ ձայնը Հանել. 2) դուռը զարնել

Թրդ//Թը//Թ (Թող) - ըղձական եղանակի կազմիչը՝ Թող
 Թրմթրուի, Ի - Թոմթուկի, Թոմի
 Թրմթրուօկ - Թոմթուկած, Թոմած
 Թրմկի, Ի (Թմբուկ-ել) - Թմբկահարել
 Թրմպըրի, Ի - Թմբի, անուշ Հոտով արբենալ
 Թրնբէն - իյնալու ձայն
 Թրնբի, Ի - վերէն վար իյնալ Թր'մբ ձայն Հանելով
 Թրնթըն - դժգոհ՝ մանուկը
 Թրնթընի, ու - լալու պէս ձայներ Հանել, դժգոհի
 Թրնթկըրի, Ի - Թնջկոտի
 Թրնդըրտէն - մետաղի Հանած ձայնը
 Թրնդըրտի, Ի - մետաղի ձայն Հանել
 Թրննէօկ - Թնջուկ, մազի կծիկ
 Թրշմըտի, Ի - Թորշոմի
 Թրշմի, Է - Թոմի
 Թրշշ - կրակի վրայ Թափուող ջուրի ձայն
 Թրշշէն - կրակի վրայ Թափուող ջուրի ձայնը
 Թրշշի, ու - Թշշալ, Թրշշ ձայն Հանել
 Թրումի, Է - Թոմի
 Թրուրտի, Է - Թուրուտալ
 Թրուուն - Թոան, Թռչող
 Թրուուն ձուօգ (Թոան ձագ) - Թռչուն
 Թրուուն մէքիք - Թոան մաքի՝ զատիկի ճնի ըսուած բզէզը
 Թրուվըրի, ու - Թուրուալ
 Թրուվըրտի, Ի - նորածինի շարժումները
 Թրս - ծաղրանքի արտայայտութիւն մէկու մը անյաջողութեան Համար
 Թրսթրս - դանդաղաչարժ, յոյլ
 Թրսսատան - յաճախ փուք արձակող
 Թրսսըտի, Ի - յաճախ որովայնի փուք արձակել
 Թրսսըցնի, Ի - 1) զուգաւորել՝ Հաւազգիները. 2) պարտել
 Թրսսի, Ի - որովայնի Հոտ արձակել
 ԹրըրՀէվուօտ - Թերահաւատ
 Թրթթըննօկ - ուտելի բոյս մը, Թրթնջուկ
 Թրրի, Ի - վիժել (անասունները)
 Թրմըս - վայրի բակլայի տեսակ մը, որ կ'ըլլայ ծովահայեաց տեղեր,
 Թունաւոր է
 Թր'փ - Հարուածի կամ անկումի մեղմ ձայն
 Թրփ-Թուօգ//Թրփըս-Թուօգ - Թաց (կրկ.)
 Թրփըր-Թրփըր - պտղաթափ կամ քայլուածք նկարագրող բառ
 Թրփըրտէն - Թփրտիւն
 Թրփըրտի, ու - Թփրտալ, Թեւերը Թափահարել
 Թրփիկ կէթնէօկ - Թուփի կաթնուկ՝ խոտ մը, որ քաղելու ատեն կաթի
 նման Հեղուկ մը դուրս կու տայ

Թրփիլըրրի, Ի - ցորենը շատ ծեծելէն թեփը հանել, թեփոտել
 Թրքբլտի, Ի - թքոտել, թուքով թրջել
 Թրքբլտ - թքոտ
 Թի չէ մը - այլապէս
 Թիզընտուօք - թզենիի տակ, այդ ծառին շուքը, նաեւ՝ տունկը
 Թիէն - թեռ, ճախարակի չուան
 Թիթ - նիհար, խոշոր ու առանձին պտտող թռչուն մը, որ ձմեռը կ'երեւի
 Թիթընտուօք - թթենիի տակ, այդ ծառին շուքը, նաեւ՝ տունկը
 Թիթիէղ (թիթեղն) - թիթեռ
 Թիթիվկէկ - թեթեւ (նւզ.)
 Թիիլ, Ի - 1) թիավարել. 2) թիով բան մը դէն տանիլ
 Թիլ-դարձուն - թել-դերձան, փխ.՝ նիհար
 Թիլ-թիլ - թել-թել
 Թիլէկ - թելիկ
 Թիլիլ, Ի - 1) թել-թել անձրեւել, թեթեւ անձրեւել. 2) թելակարել
 Թիպիկը բէկու - թրքեկի՝ շնագայլի բակլայ՝ վայրի բակլայ մը, լեռները
 կ'ըլլայ, թարմին հունտը կ'ուտուի
 Թիպիկը խաղուղ - շնագայլի խաղող՝ վայրի ու թունաւոր խաղող մը
 Թիպիկը ուօղ - շնագայլի աղ՝ ձիւնաթոյր քարի տեսակ մը, որ կը
 թուի իրարու փակած աղի կտորներու կոյտ է
 Թիպիկը տալլա - շնագայլի որթատունկ՝ տե՛ս նաեւ վերի բառերը
 (տալլա ա.՝ որթատունկ)
 Թութըրտիլ, Ի - թոթուել (բզմ.)
 Թաթթիլ, Ի - 1) թոթուել. 2) ծառին ծաղիկը պտուղ բռնել
 Թուլթուպիմ - ընկոյզին կանաչ կեղեւը հանել
 Թուկկան - ծեծ՝ Բարեկենդանի խաղերէն մէկը
 Թուրան - Բարեկենդանի խաղ մը՝ բերդախաղի տեսակ մը
 Թուօղ - գնդակ
 Թուօլլ բիրան - թոյլ բերան, փխ.՝ անգաղտնապահ
 Թուօլլ լգէք (թոյլ ազի՝ փէշ) - ծոյլ, դանդաղաչարժ
 Թուօր - անվարժ
 Թօխը - 1) թուղթ. 2) գիրք. 3) թղթախաղ
 Թօխը խաղիլ, ու - թղթախաղ ընել
 Թօրթ - դիրտ

ժ

Ժմժ (չարժ) - երկրաչարժ
 Ժանկըրրի/ժանղըրրի, Ի - ժանգոտիլ
 Ժանկըրրօկ - ժանգոտած
 Ժճնկաչ - ժամկոչ
 Ժճնիլըրի, Ի - կոչնակը հարել

Ժճնիւօր - ժամհար, կոչնակը զարնողը
 Ժճնէք//ժճնէրք (ժանիք) - ծնօտի կողմերուն մեծ ակուաները
 Ժճնկիլ, Ի (ճանկել^ո) - ափով օղէն անցնող բան մը բռնել
 Ժիժիլ, Ի (չարժել) - ծառը շարժել պտուղը թափելու համար
 Ժիժկէն (ժաժ՝ շարժ-կ-իւն) - ստամոքսի ցնցում, դուրս տալը
 Ժիժկիլ, ու (ժաժ-կ-ալ) - ստամոքսը ցնցուիլ, դուրս տալ
 Ժուղուվք - նպաստ (ժողովել բայէն)
 Ժամ - անգամ

Ի

Իղանդ (ի-ղ [ընդ]-այդ) - այդ կողմ
 Իղան (ի-ղ [ընդ]-այն) - այն կողմ
 Իղանս (ի-ղ [ընդ]-այս) - այս կողմ
 Իղիղէր (ի-ղ [ընդ]-ղեհ) - ետեւը
 Իղիղէք (ի-ղ [ընդ]-ղեհ-ք) - հագուստի ետեւի մասը
 Իղիղանց (ի-ղ [ընդ]-ղեհ-անց) - ետեւէն
 Իղղիղանց (եղեր-անց) - եղերքէն
 Իղղուօտ - զատ, բաժնուած
 Իէշ - 1) էշ. 2) ընդարձակ մէկ սենեակնոց տան կեդրոնի խոշոր գերանը
 Իժամ (ի ժամ) - ժամերգութիւն, պատարագ
 Իլան (այլ-այն) - եւ
 Իլէկ - իլիկ
 Իլէկէկ - բաճկոնակ
 Իլըրտիլ, Ի - ալիւրոտիլ
 Իլըրմուօղ - ալիւրմաղ
 Իլըրան - ալիւրոտ
 Իլի//լի (այլ) - ալ, նաեւ
 Իլիլ, Ի (ոլ-ել) - փաթթել, դարձնել
 Իլվիլ, է - ոլորուիլ, ինքն իր շուրջը դառնալ
 Իլվուօժ (ոլ-ու-աժ) - յաջորդ. Իլվուօժ ուօրը, Իլվուօժ տէրէն՝ յաջորդ
 օրը, յաջորդ տարին
 Իծժը մալթօք - այժի մօրուք՝ ծոպածեւ տերեւներով ուտելի խոտ մը
 Իճիլ//ուճիլ - ուճիս-փուճիս՝ մեծնաս (բ-մ.)
 Իմնիլ, ու (իմանամ) - 1) սթափիլ, ուշքի գալ. 2) քունէ արթննալ
 Իմցընիլ, Ի (իմացուցանեմ) - 1) ուշքի բերել. 2) քունէ արթնցնել
 Իննէօնք - յիսնակ, յիսնօրեայ պահք
 Ինու (այնու) - այն
 Ինանցը - յիսնակին
 Իչբէօկ - քսուկ
 Իչբլտիլ, Ի - չփել (բզմ)
 Իչբիլ, Ի - չփել, սրբել, քսել

Իշգէն (աղիջ-կին>աղջկին>աջկին>իշկէն) - աղջիկ
 Իշգինուօկ (աղիջ-կին-ակ) - աղջնակ
 Իշիւ, Ի - նայիլ, աշել
 Իշիւք - բախտ նայելու վարձ
 Իշլէկէկ - ասեղնագործութեամբ զարդարուն բաճկոնակ
 Իշխիլ, Ի (իշխեմ) - համարձակիլ
 Իշնունիլ - աշուն գալ
 Իշշօկ - իշուկ
 Իշշը ճանճ - իշամեղու
 Իշշը քուռուօկ - իշու քուռակ՝ անարգական արտայայտութիւն մը
 Իշշընքվից - աշուն եղաւ
 Իշշութէն - իշութիւն՝ անմտութիւն
 Իշուօծ բէրէն (յիշած բարին) - բարեյիշատակ. կ'ըսուի մեռած մարդու համար
 Իշվաթ (վիշապոտ) - 1) լուսնոտ, ցաւազար. 2) ճիւղ, հրէշ, գազանակերպ էակ
 Իջիւլտիլ, Ի - ոջլոտիլ
 Իջիւթտ - ոջլոտ
 Իսգիլ, Ի (ձգել) - 1) վար ձգել. 2) վիժիլ (կինը)
 Իսիդէս - ես ինձի, ես ինձի հետ
 Իսնուօկ - յիսնակ
 Իսուօր գուօր - այս ամբողջ օրը
 Իստէկիլ/իսկիլ, է (յստակիլ) - ջուրը պարզիլ, մաքրուիլ
 Իստիէց - ուրկէ
 Իստուօկ ջէօր - մաքուր ջուր
 Իստուօկջըրիլ, Ի (յստակ ջըրել) - լուացուած պնակը կամ լաթը պարզ ջուրով ցօղել, մաքրել
 Իվ (յաւ՝ վերջ, ծայր արմատէն) - հեռուէն դիտուող լեռներուն կամ որեւէ իրի գազաթնային գիծերը
 Իվա՛ր - վարը
 Իվի՛ր - վերը
 Իտիշգը (ետ-եցք) - վերջը, յետոյ՝ ժամանակի համար
 Իտիվ - ետեւ
 Իտիվանց (ետեւ-անց) - ետեւէն, ետեւի կողմէն
 Իտու (այդու) - այդ, այդ մէկը
 Իտանք/էտանք - անոնք
 Իտտէն (ետին) - յետին, վերջին
 Իտտը՛ (ետի) - վերջին
 Իտտը դուրուչուօկ - վերջի դրօշակ՝ վերջին ծայր, վերջ. սովորաբար կ'ըսեն խոր ծերութեան հասած մարդոց համար
 Իրեկընէկ - այրի կին
 Իրիէկ - երէկ
 Իրիէց - երէց, քահանայ

Իրիկնէվէօր - երէկուան
 Իրիսէպէօր - հերիսա
 Իրիսկընը պուրտ - երէցկինի պորտ՝ երկար տերեւներով խոտ մը, հիւթը՝ ճերմակ. ճաշ կը պատրաստեն. դեղին ծաղիկ մը կ'ունենայ
 Իրիսանց (երես-սանց) - 1) իրի մը երեսէն, մակերեսէն. 2) պատճառով
 Իրիսք - երես, արտաքին կողմը
 Իրիվկընիլ, Ի (Իրիկուան-ել՝ դրափոխուած) - ընթրել
 Իրիվկան (Իրիկուան) - ընթրիք
 Իրիցէօնկ - երիցուկ՝ բոյս մը
 Իրիցկէն - երէցկին
 Իրիքէօնկ - բակլայի մը փոքր ու վայրի տեսակը, թուփը փոռուած կ'ըլլայ. պտուղին թարմը կ'ուտեն
 Իրուօր Իսգիլ, Ի - իրար ձգել, վէճ ստեղծել
 Իսիէօկ - եփուկ, եփուող
 Իսիուն - եփան, եփուող

Լ

Լաթթիսուօղ - լայն տերեւներով երկար խոտ մը, արմատը ճակնդեղի նման է, ճերմակ եւ քաղցրահամ, հում կ'ուտուի. տերեւներէն կերակուր կը շինեն
 Լախլօխ - ծանրաչարժ, ծոյլ
 Լաղլաղիլ, Ի - չարչարել
 Լամ (պ.՝ նամ) - խոնաւ, թաց
 Լանկ - ընդարմացած, փխ.՝ ապուշ
 Լանկըրիլ, Ի - ընդարմանալ
 Լանկա՛ղ (լայն կող) - դանդաղ
 Լէկէք - լալիք
 Լէկէօ - 1) քոյր. 2) հօրաքոյր
 Լէկէօկ - քոյրիկ
 Լենթը դէնուօկ/դէնկը դէնուօկ - խոհանոցի լայն շեղքով դանակ մը
 Լենթկըրիլ, Ի - կակուղնալ
 Լենթուօկ - լանդակ, ալիւրով ու իւղով պատրաստուած ուտելիք
 Լենկէկ - լայնկեկ
 Լենճի - լայնկեկ
 Լէպէօտ - բարակ երկար գաւազան
 Լէպօտ - արօրավարի մահակին ետնակողմը անցուած ափաչափ թիակը, որով արօրը կը մաքրեն
 Լըիլ, Ի (լարեմ) - 1) գէնքը կամ թակարդը լարել. 2) տիէխպ կոչուող մածուցիկին ուռերը ծառին վրայ փոռել թռչնորսի համար
 Լըմընիլ, Ի (լարման-ել) - ոտքի եւ ձեռքի մկանները պրկուիլ, փայ-

տանալ
 ԼՅՐՄՆՆՄԻՆ, Ի - մկանները պրկուիլ (բզմ.)
 ԼՅՐՄՅՆ - ընդարմացած
 ԼՅՐՈՒՍԿ - լար, թել
 ԼԲ-ԼՈՒՍՅԱ//ԼԲԲԸ-ԼՈՒՍՅԱ - լոյս (կրկ.)
 ԼԲԲԻՆ, Ի - արագ ուտել, լափել
 ԼԲԲԸՂ - դանդաղաշարժ ու քիչ գործ տեսնող (կին)
 ԼԲԳԼԳՎԻՆ, Է - տան մէջ մանր գործերով զբաղուիլ
 ԼԲԳԳԸՄԻՆ, Ի - լիզոտել
 ԼԲԳԳԸՄՎՈՆ - ինքզինքը լիզող՝ կատուն
 ԼԲԳԼԳՄԻՆ, Ի - լիզել (բզմ.)
 ԼԲԳՄԸԳԻՆ, Ի - լիզել (կրկ.)
 ԼԵԽԿԸՐՄԱՍՆԻՆ, Ի - շարժել՝ ջրիկ իրի ձայն հանելով
 ԼԵԽԿԸՐՄԵՆ - թոյլ ու ջրալի իրի մը շարժումէն առաջացած ձայն
 ԼԵԽԿԸՐԻՆ, Ի - 1) լիսիլ, յոգնութենէ փլիլ. 2) պտուղը շատ հասունանալէն հիւթը դուրս տալ
 ԼԵՂՅՆ (ԼԵՂԻ) - 1) լեղուցք. 2) լեղի, դառն. 3) համբերութիւն
 ԼԵՂՅՆ ԴԱՌՆԻՆ, ՈՒ - լեղի դառնալ, դառնանալ
 ԼԵՂԸՃԻԿ (ԼԵՂԻ-ՂԻ-Կ) - լեղի (նւզ.)
 ԼԵՂԸՆԻՆ, ՈՒ - ձանձրանալ
 ԼԵՂՈՒԹԷՆ - 1) դառնութիւն. 2) ձանձրոյթ
 ԼԵՂՄՃԻՆ, Ի - լողել
 ԼԵՂՄՃԻՐ - լողքար
 ԼԸՃԻՆ, Ի - եռացող կերակուրին հանդարտիլը
 ԼԸՄՄԻՆ, Ի - լոմլոմել
 ԼԸՆՂԸ ԽԱՂՈՒՂ - մանր դեղին հատիկներով խաղողի տեսակ
 ԼԸՆՂԸՐՄԵՆ - պոռչտուք, բողոքի աղմուկ
 ԼԸՆՂԸՐՄԻՆ, ՈՒ - բարձրաձայն վիճիլ, աղմկել
 ԼԸՆՂԸՐՄՈՔ - պոռչտուք
 ԼԸՎԱԼՆԻՆ, Ի - թաղիքի պէս կոշտանալ
 ԼԸՎԱԿՈՒՈՂ - 1) թաղիք. 2) այծի մազէ հիւսուած փսիաթ
 ԼԸՎԷԿ - լայն ու փայլուն տերեւներով խոտ մը, պտուղը՝ եգիպտացորենի պէս, արմատը՝ գետնախնձորի. թունաւոր է. արմատը կարիճի, սարդի, քառսունոտնիի խայթուածքին համար սպեղանի է, կը ծեծեն՝ վրան կը դնեն: Տերեւներուն թոյնը կը չէզոքացնեն հուրկուծէլի (վայրի սալոր) չիրով, որուն հետ կը խաչեն, ապա ոսպով կամ սիսեռով կերակուր կը պատրաստեն:
 ԼԸՎԻՆ, Է - լեցուիլ
 ԼԸՂՅԱՆԻՆ, ՈՒ (ԼԸՂՅԱՆԱՄ) - 1) կանաչիլ՝ ծառը. 2) կապտիլ՝ մարմինը
 ԼԸՂՅԱՆԻՆ, Ի (ԼԸՂՅԱԳՈՒՍԳԱՆԵՄ) - հարուածին տեղը կաս-կապոյտ ընել
 ԼԸՂՅՆՄԸՂԱ (ԼՈՒՐՅԻ ՄՈՂԱՅ) - խաղող մը
 ԼԸՂՅՈՎ (ԼՈՒՐՅ-ՈՒՎ) - 1) կապուտակ. 2) թարմ՝ նոր քաղուած տերեւը
 ԼԸՂՅՈՎ ՔՈՒՐ (ԼԸՂՈՎ ՔԱՐ) - կապոյտ հլուն

ԼՓԼՓԻՆ, Ի - 1) գաղտնորէն ուտել. 2) հարց մը չըջանցել
 ԼՓՖԵՕՔ - աւելցուք
 ԼԻՎԸՐՄԸՐՄԻՆ//ԼԻՎԸՐՄԻՆ, Ի - լեզուըրտել
 ԼԻԷՍԱԿ - ձմերուկի կամ սեխի շերտ
 ԼԻՍԱԸՆՄԻՆ, Ի - շերտ-շերտ ընել
 ԼՈՒՂՆԻՆ, Ի - թոթովել
 ԼՃՈՒՈՂ (ԹՂՈՒԱՄ) - թոթով
 ԼՃԼՅՆ - 1) սառցամատ. 2) խողովակ
 ԼՈՒՈՒ - 1) հարս (մնկ.) 2) կանանց հարսանեկան կանչը
 ԼՈՒԾԻՆ, Ի - հալեցնել
 ԼՈՒՂ//ԼՈՒՂՈՒՂ (ԼՈՂ) - լոգնալ (մնկ.)
 ԼՈՒՂՈՒՂԻՆ, Ի - հեղուկի մէջ թաթխել
 ԼՈՒՏԷՆՔ (ԼՈՒՏԻՆ) - պայտ
 ԼՈՒՍԸՆԼՈՒՍՅԱ - լուսնի լոյս, լուսնկայ
 ԼՈՒՍԸՆԿԱՆ (ԼՈՒՍՆԱԿԱՅ) - լուսին
 ԼՈՒՍԻՆ, Ի - փշրել, տրորել
 ԼՈՒՍՆԻՆ, Ի - պայտել
 ԼՈՒՍՆԻՆ, ՈՒ - լուսնալ
 ԼՈՒՍՂ - լաղ
 ԼՈՍՅԱ ՈՒՍՈՒՂ//ԼՈՒՍՈՒՍՈՒՂ - լուսաստղ
 ԼՐՂ (ԼՈՒՐՂ) - 1) բաց կապոյտ, 2) թարմ՝ բոյսը
 ԼՐՂ ՔՈՒՐ - կապտաւուն քար, որ կ'օգտագործուի շինութեան համար

Ն

Խախղըտվէն (խեղդ-ոտ-ու-ին) - գզուըրտուք, կռիւ
 Խախղըտվիլ, Է - կոկորդ կոկորդի իյնալ, կռուիլ
 Խախղուն - խեղդող, հովուական գամփո
 Խախղօկ - խեղդուկ՝ օղը
 Խախղընիլ, Ի - 1) խաղցնել. 2) պարեցնել. 3) վրան խնդալ. 4) շարժել
 Խախղուօծ (խաղցած) - գետնասահքի ենթարկուած գետին
 Խաղիլ, ՈՒ - 1) խաղալ. 2) կատակել. 3) պարել. 4) շարժիլ
 Խաղմըտիլ, ՈՒ - 1) խաղալ՝ մանուկը. 2) մէկը ձեռք առնել, վրան խնդալ
 Խաղմըտիլէք - 1) խաղալիք. 2) ուրիշի ծաղրին առարկայ
 Խճճ - խակ ընկոյզի կեղեւը
 Խճճ - քով, մօտ
 Խաչանպուր - խաչահամբոյր, եկեղեցւոյ պնակին դրուած նուէր
 Խարազան - ջրաղացին ջուր տանող քարէ խողովակը
 Խարան - թակարդի տեսակ
 Խարզան - արօրավարի մահակին ծայրը անցուած փոքրիկ գամը, որով կը մխթեն եզները

Խարխափ - յանկարծակի
 Խարտէշ - կարմիր խաղող մը
 Խէբըդէօ - խաբող
 Խէբըդի, Ի - խաբել
 Խէբըզվէն - խաբուիլը
 Խէբուսէկ - խաբուսիկ, թեթեւսովիկ
 Խէթէօն - գոյնզգոյն
 Խէթէօն թէօթ - թութի տեսակ
 Խէլըչկի, Ի - իրարու փաթթել
 Խէլըչմըտի, Ի - ասեղնագործել
 Խէծծըտի, Ի - խածոտել
 Խէծծան - խածան
 Խէմաց - շարոց
 Խէնբէօլ - առատ տերեւներով թարմ ոստ
 Խէնծըտի, Ի - խանձել (բզմ.)
 Խէնծըրբի, Ի - խանձուիլ, այրիլ
 Խէնծըրօշ - խանդրօշ
 Խէնծուօր - մոծիր
 Խէչնի, Ի - 1) խաչ Հանել. 2) խաչաձեւել
 Խէրնկըտօշ - կրակը խառնող փայտ
 Խէրնկի, Ի - խառնակել, խառնել
 Խէրնծէօ (խառն-ածոյ) - խառն
 Խէվէրնաց - խաւարանոց, մութ տեղ
 Խէվէժ - խաւիժ
 Խէրառ - մորթի քերծուածք, խարուած
 Խէրտըվի, Է - մորթը քերծուիլ
 Խէֆէր - մրտենիի ուռերով շինուած լայնաբերան քիոց
 Խէլ - շատ փոքր շիւղ
 Խէճ - խիճ
 Խէճը - Հինգ խիճերով մատներու խաղ մը
 Խէվ - խիւ. կաքաւի մեծութեամբ գոյնզգոյն ու անհանդարտ թռչուն
 մը, անախորժ կանչով
 Խէօփ - փակ, խուփ. Խէօփ աչգ՝ փակ աչք
 Խըզըրան - անտառային ծառ մը (Հազորենի)
 Խըզըրը կանգնտ - խզերի (տե՛ս վերի բառը) ծառին կաղինը
 Խըլընքառ - խլինքոտ
 Խըլըրտէն - խլրտում
 Խըլիէգ - խլէգ
 Խըլը Խըլտէկ - փոքրիկ միջատ մը, որ ինքն իր վրայ պտտուելով
 Հոյաձեւ փոքրիկ փոս մը կը շինէ Հողին մէջ ու Հոն կ'ապրի
 Խըլուօթ - ուտելի վայրի բանջար մը
 Խըլտնուօսգ - վրիպում
 Խըլտնի, ու (ա.՝ դալադ՞-ան-ալ) - սխալիլ

Խըլտնուօք - սխալմամբ
 Խըլտըրտի, Ի - խլրտիլ
 Խըլօք - բամպակի աղտոտ մասը
 Խըծէպ - քովնտի կար, թելակար
 Խըծպի, Ի - քովնտի կարել
 Խըդննի, ու - խեղճանալ
 Խըդնէօկ - խեղճուկ
 Խըճուտ - խիճերով առատ վայր
 Խըճալըրբի, Ի (խեճեպ բառէն) - վէրքը չորնալու կեղեւ կապել
 Խըմըրբի, Ի - խմորել
 Խըմխըլը՛չ - խխում եղած, ամբողջովին թրջուած
 Խըմխը՛մ - քիթէն խօսող, վախկոտ խօսող
 Խըմխըրբի, Ի - խոխոմիլ, լաւ մը թրջուիլ
 Խըման - կերուխում, խնճոյք
 Խընճանք - խնամիենք
 Խընըցի, Ի - խնոցել
 Խընիէսգ - խնոցք
 Խընաց - խնոցի
 Խընկնան - խնկաման
 Խընկինան - խնկենի՝ անուշահոտ ծաղիկով վայրի ծառ մը
 Խընսօ - քիչ խօսող, խորամանկ
 Խընչի, Ի - խնչել, քիթը մաքրել
 Խընտնուօսգ (խնդում-ացք) - ուրախութիւն
 Խընտըրբի, Ի - մաղթել, Աստուծանէ խնդրել
 Խընտըրուօսգ - խնդրուածք
 Խըլըր - խեչերանք
 Խըլը - խոշոր տերեւներու կամ տարափի ձայն
 Խըլըն - չոր տերեւներու կամ տարափի ձայն, խըլին
 Խըլըի, ու - խըլալ, տեղատարափ անձրեւ իջնել
 Խըլըօմ (խըլ-ումն) - տեղատարափ անձրեւ
 Խըլպըրտի, Ի (խարչ՝ խաչ արմատէն) - տաք ջուրէն կամ արեւէն
 այրիլ
 Խըլպըրտօք - 1) սաստիկ տաք՝ ջուրը. 2) այրուցք պատճառող խոտ
 մը
 Խը՛չտ - նիզակ, տէգ
 Խըչտ մը - ակնթարթ մը
 Խըպնի, Է - ամչնալ
 Խըռխը՛ռ - գէր ու անախորժ մարդ
 Խըռչուօկ - կոկորդ
 Խըռռէն - խռկոց
 Խըռռի, ու - խռկալ
 Խըրանճ - գետնառիւծ
 Խըրզան - 1) կատղած՝ շունը. 2) խոպոտ

խըրզընիլ, ի - 1) կատղիլ՝ շունը. 2) ձայնը խոպոտիլ
խըրզգիկ - խխունջի պատեան
խրամտէն - պարտէզի մուտք. «խրամ» բառի յոգնակի որոշեալ ձեւն
է

խըրձմ - խրամ, անցք
խըրտաբօ - կանչ մը, որ կը տրուի բարեկենդանի խամաճիկին
խըրտուն - խրտչող, վախկոտ
խըրըտիլ, ի - գետնին կպած բան մը քաշել, քաշքշել
խըրըտվէն - քաշքշուք
խըրըտվիլ, է - 1) քաշքշուիլ. 2) ձեւով մը գործը առաջ տանիլ
խըրիլ, ի - քաշել՝ գետնէն
խըրֆիլ, ի - խրֆիլ
խիէվ - 1) խեւ. 2) մոլի
խիժէօնք (խէժ-անք) - տականք
խիլաքնիլ, ու - խելօքնալ
խիլնուօկ - կէս խենթ
խիչէլ - ոստերու կեղեւ, որ կը գործածուի իբրեւ կապ
խիչէօկ (խարչ՝ խաչ-ուկ) - արագ խաչող ընդեղէն
խիչկիլ, ի - հայհոյել
խիչկիլ, ի - խաչաձեւ ընել
խիվէօկ - 1) խեւուկ, խենթուկ. 2) անձրեւային եղանակի բխող ակ
խիվընուօկ - խեւի պէս, անմտօրէն
խիվնիլ, ու - խեւնալ
խիվութէն - խեւութիւն
խիտէվ (խայտիւ) - փայտի կամ լաթի վրայ բանուած զարդ, նախշ
խիտվէօկ - բանուած, հիւտուած
խիտվիլ, ի (խայտիւ-ել) - քանդակել, ասեղնագործել
խիզնըփէօշտ - խոզանի վէրք
խիթ (խայթ, խոթ) - ասեղի մէկ հարուածի կար
խիթիլ, ի - 1) խայթել. 2) մտցնել
խուլըխուշտը՝ - ձեռագործ ընող, ասեղնագործող, կարկտող
խիլիլ, ի - խօլ-խօլ նայիլ
խիլմէտգ - ծուռ նայուածք
խիլմըտիլ, ի - խէթ-խէթ նայիլ
խուղըտիլ, ի - հողոտել, հողով խառնել
խուղըրիլ, ի - հող դառնալ
խուղիլ, ի - հողով ծածկել, հողել
խում - խիտ. կ'ըսուի ծառի տերեւներուն համար
խումբապիտ - խմբապետ
խումչուօսգ - խիտ, լեցուն
խումպապիկ քուօր - մանր գնդաձեւ քար, որ ընդհանրապէս կ'ըլլայ
գետափին կամ ծովափին
խումցընիլ (խիուցանել) - գոցել՝ աչքերը

խաչարկէկ - խոչորկեկ
խաչարճիկ - խոչորկեկ
խաչարութէն - խոչորութիւն, մեծութիւն
խաչարօք - 1) երնելու ընթացքին հաւաքուած չփչրուած հասկերը. 2)
խոտ մը, որով կերակուր կը շինեն
խուովընիլ, ու - թշնամանալ, խոովիլ
խիստեմանք - խոստում, ուխտ
խուստեմուօսգ - խոստում, ուխտ
խիստիլ, է (խոցոտիլ) - փորը ցաւիլ
խիստուօք - փորի ցաւ, տե'ս նաեւ՝ հուսկուտիլ
խիտ - 1) խոտ. 2) վառօդ
խիտտէկ էպէօր - խոտիկ ապուր՝ ուտելի խոտերով պատրաստուած
կերակուրներու ընդհանուր անուն
խիտտըրիլ, ի - խոտով ծածկուիլ
խիտտալ - խոտոտ
խիտքուօր - աւազաքար՝ յեսանելիք
խուրա - արօտի համար ազատ ձգուած արտ
խուրա տընկիլ - խուրայի իբրեւ նշան մի քանի քար վրայ-վրայի դիզել
խուրազան - ջրաղացի ծածկուած առուին բերանը
խուրըզկըննիլ - խուրուզուօկ բառի յոգնակի ձեւն է. երկու փայտեայ
գամեր, որոնք կը դրուին արօրի ձողը մաճին ամրացնելու համար
խուրխուրու - խորխորատ
խուրուզը վարտէք - աքլորի վարտիք՝ թաւային կարմիր ու սիրուն
ծաղիկ ունեցող խոտ մը (խորոզ թ.՝ աքլոր)
խուրվընիլ, ու - խորանալ
խուրվութէն - խորութիւն
խուրօ - խորունկ
խուրօնկ - խորունկ
խիւի - խոփ՝ արօրի
խուփըզկըննիլ - լեռնալանջերուն բացուած մշակելի նեղ հողամա-
սերու ամբողջութիւնը
խիւիուօ - 1) արօրի այն մասը, ուր խոփը կ'անցնի. 2) լեռնալանջերուն
բացուած մշակելի նեղ հողամաս
խուօզ - խազ
խուօզ - 1) խաղ. 2) մենապար. 3) դաւ, սաղրանք. 4) կատակ
խուօր - տաղուածք
խօլնիլ - խուլ ականջ, փխ.՝ անտարբեր
խօխ - հիւղակ

ծախարակ, ի - ծախել (բզմ.)
 ծախիլ, ի - 1) ծախել. 2) աղջիկը հարս ընել
 ծախսո//ծախսօկ - ծախսու
 ծաղէկ - 1) ծաղիկ. 2) մորթային հիւանդութիւն մը
 ծաղէկ ֆիթիլ, ի - ծաղիկ վայթել՝ ծաղկիլ
 ծաղկըվաճար - ծաղկաւոր՝ կերպաս
 ծաղրէնաց - ծիծաղելի
 ծաղրիմ, ի - ծաղրել
 ծանտըրկէկ - ծանրկեկ
 ծանտըրմիկ (ծանր-չի-իկ) - ծանրկեկ
 ծանտըրուսգ (ծանր-ացք) - ծանրութիւն
 ծառիլ, ի - խնամել, մեծցնել
 ծէզկըրտիլ, ի - ծածկել (բզմ.)
 ծէլլըտիլ, ի - ծալել (բզմ.)
 ծէլլըտվիլ, է - ձեռքերն ու ոտքերը ծալել նստիլ
 ծէծէօկ - գաղտնի
 ծէծէօք - ծածկոց
 ծէմէօկ (ծամուկ) - հաւաքուած ու զնդացած պալար, որ կը գոյանայ մորթին վրայ պատահող վէրքի մը բուժման շրջանին
 ծէմիլ//ծէմիլք - ծամեր՝ հիւսուած մագ
 ծէմծըմիլ, ի - ծամծմել
 ծէմաց - 1) ծամօն. 2) բամբասանքի նիւթ
 ծէնծուօղ - ծանծաղ
 ծէփէկ (ծափիկ) - 1) փոքրիկ տապակ. 2) հինգ աստղերու խումբ մը
 ծէփէկէն (ծափ-կ-իւն) - ծափահարութիւն
 ծէփկիլ, ի (ծափ-կ-ել) - ծափահարել
 ծէլ//զէլ - ծիլ
 ծըղըրընուօն հուօց - ձէթով եւ ծոթրինով եփած հաց
 ծըծծուն - ծծկան
 ծըղպիլ, ի - ցախով ցանկապատ շինել
 ծըմէթ (ծմոյթ) - կսմիթ
 ծըմըթիլ, ի - կսմըթել
- Սպասէ՛, թագաւոր, սպասէ՛,- կ'ըսէ տղեկը ու վազելով տուն կ'երթայ: Իրենց տունը մօտ եղեր է. վազելէ վազելէ ետ կը դառնայ՝ հետը երկու գլուխ տխ: Այդ սուրին բռնատեղը այսպէս երկճղի կ'ըլլայ. տղեկը կը բերէ սոխիկները, կոթուններէն կը կապէ ու կը հեծօցնէ սուրին կոթին վրայ:

Թագաւորն ու վէպիրը կը պարմանան, բան չեն հասկնար:

- Ըսէ՛ հապա, տղա՛ս,- կ'ըսէ թագաւորը,- ի՞նչ է ասիկա...
- Ինչպէ՛ս թէ ի՞նչ է,- կ'ըսէ,- չգիտցա՞ր ինչ է. այս բուրակը

աշխարհն է, դուն կ'ըսես՝ ես թագաւոր եմ, աշխարհին կը տիրեմ. ես ալ կ'ըսեմ՝ եղբայր, ես ալ երկինքի ներքեւ կ'ապրիմ, ես ալ Աստուծոյ ծառան եմ, կէսը ինծի թող ըլլայ. կիսեցի զինք մէջտեղէն. դուն ըսիր՝ ես թագաւոր եմ, ես սուրով կ'առնեմ վայն. վարկիր սուրդ շրջանակին մէջտեղը:

- Աստնք ի՞նչ են հապա,- կը հարցնէ թագաւորը,- սոխիկները...

- Աստնք իմ ունեցածներս են, հասկցա՞ր, թագաւորս,- կ'ըսէ տղեկը,- սուրով դուն ասո՛նք կ'առնես միայն:

- Զալէ՛, վէպիրս,- կ'ըսէ թագաւորը,- մենք աստնց հետ գլուխ չկրցանք ելլել, քալէ՛:

11. Աստուած միեկ տըվաճղէն հէրեր կուտու

Մարդօն միեղ Պաղիէն հա եուրթու կըրէտըրան կիղիցէն: Պատվիլէն հա քերապի «Աստուած միեկ տըվաճղէն հէրեր կուտու»: Մարդօյը հա ե՛վտու, չէըր կունա ճիւպը՝ հա հէնի, հօտու:

Էմըն Կիրէկի աճնը բունը հայ պատահա: ախքատիկուն ճիւպը հայ դարկի: կաթ միլի հա ե՛սի թա պատվիլէն:

- Պատվիլա, դէօն հայ քերապիս՝ քի Աստուած միեկ տըվաճղէն հէրեր կուտու, իս չէըր կունէրէմ տըվա, ըմմը Աստուած չիտուօց: Պատվիլէն հա ե՛սի:

- Սապըր իրէօ, օղլըմ, ուօր միլի կուտու:

Հանսնա՛ շէբուօթ մը, ըրկէօթ, ա՛տ Աստուած գա՛տի, Կիրէկի մը կիղիցիէն իննիլիէն սօնրա հիտէօն հայ դառնու: Չալմու հա հանսնա, հա բըռնի չնծըրիվ մը: ախքուօտը հա մըննա սուէն փաճըզը (ա՛տ միմծ սուէն ինկուօվ, նա՛ր մը տընկիցէն տիէղը): չնծըրիվը հա տա՛մի, խըշըմ ի: Հա իշի աղբուրէն տընիէսզը խայալ մը կու, ընծըս արձան միէմը նըստուօծ ի աղբուրէն տընիէսզը, վիտվէն ի գօըր: Հա իշի ա՛նթը դիէն սուարի ձիւվաճը մը հա մա՛տկիմա, հօգա՛ հա հանսնա աղբուրէն եառջիվը, հա ե՛սի:

- Հա՛, Աստուած էսմծնէն դէօ՛ն իս, կուճը պա՛լան բէճվիլի բէճվիլի կըտու վըսքի: Դէօն չուօց Աստուած կըննուօս, եք կիշիս՝ կու մուօրդ չիժիր վը ֆալլա՛ ֆալլա կուտուօս էր, կու մուօրդ՝ քիշիր-ցիրիկ երկըրպագութէն կիմի քի՛ էնաթա՛ կը թուղուօս վը: Զու իրուօծ հախսըվընը հիրէք ըղուօվ կալան, եա՛ կուտուօս ալըննէն հավասար, եա՛ նա՛ միկէն մուտուօր, չըպիտա՛:

Հա ե՛սի, հա քիշի պթօրը, հա ուղուրդա թապ եան:

Սուէն փաճըզը նըստուօղ ախքուօտը, եք հա տըսնա՛ ձիւվաճըրը վԱստուած պըր քիշտի, հայ կիմչի:

- Կիցէ, մը՛ քիշտի, շըպէն, ա՛տ մուօրդը ինծի պարկուն ի: Աղըվ միլի աշգը հայ բէ՛նու՛ նա՛՛ արձան կու, նա՛՛ ձիւվաճը, հա իշի առջիվը խուրճ մը իսկա՛ կու: Հառնի հօրթու հիտէօն: Վիլվուօծ Կիրէկէն հօրթու կիղիցէն: Իրիսը պիժծուօն ի: Պատվիլէն հա հարցընի:

- Չէ՛ք կու, ա՛ս Կիրէկի պիժծուօն-պիժծուօն հա տըսնէմ ըվքի:

- Դէօն էսի Աստուած միկէն տիէղ հէրեր կուտու, հա ե՛սի ախքուօտը, եանըլըլը էսիրիս, Աստուած միկէն տիէղ հապուօր կուտու, իտուօց ալ, ֆալադ քէշ մը էնգա՛ն իտուօց:

11. Աստուած մէկ տուողին հարիւր կու տայ

Մարդուն մէկը Պաղճաղապէն Գարատուրան եկեղեցի կ'երթայ: Պատուելին կը քարոպէ, թէ Աստուած մէկ տուողին հարիւր կու տայ: Մարդուկը կը հաւատայ, գրպանը ի՛նչ որ կայ՝ կը հանէ կու տայ:

Ամէն Կիրակի նոյն բանը կը պատահի: Աղքատ մարդուկին գրպանը կը պարպուի: Անգամ մըն ալ պատուելիին կ'ըսէ:

- Պատուելի՛, կը քարոպէս, թէ Աստուած մէկ տուողին հարիւր կու տայ, ես բոլոր ունեցածս տուի, բայց Աստուած բան չտուաւ: Պատուելին կ'ըսէ:

- Համբերէ՛, վաւա՛կս, օր մը պիտի տայ:

Կ'անցնի շաբաթ մը, երկուք, ա՛լ Աստուած գիտէ, Կիրակի մը եկեղեցիէն ելլելէ ետք տուն կը վերադառնայ: Կը հասնի Չալմա: Կը սկսի տեղատարափ անձրեւ տեղալ: Աղքատը կը մտնէ մեծ սօսիին փորոքին մէջ (այդ մեծ սօսին ինկաւ, նոյն տեղը նոր մը տնկեցին): Անձրեւը կ'երկարի: տեղատարափ է: Մարդը աղբիւրին տանիքին վրայ ուրուական մը կը նկատէ: մէկը արձանի պէս նստած է աղբիւրին տանիքը, անձրեւին տակ, ոտքերն ալ դրած է գուռին մէջ: Անդի կողմէն պիմեալ ձիաւոր մը կը մօտենայ, կու գայ, կը հասնի աղբիւրին առջեւ եւ կ'ըսէ հոն կեցող մարդուն:

- Հա՛, Աստուած ըսածնին դո՛ւն ես, վերջապէս գտայ քեզ: Դուն ինչպէ՛ս Աստուած կ'ըլլաս, որ չարժողին առատ կու տաս, արժողին՝ ո՛չ մէկ բան: Կայ մարդ, որ գիշեր ու ցերեկ երկրպագութիւն կ'ընէ քեզի, իսկ դուն պիմք անօթի կը ձգես: Ըրած անարդարութիւնդ հերիք եղաւ այլեւս, կա՛մ բոլորին հաւասար տո՛ւր, կամ ո՛չ մէկուն ո՛չ մէկ բան, պէտք չէ...:

Ձիաւորը այսպէս կը խօսի, թուրը կը քաշէ ու կը յարձակի մարդուն վրայ: Սօսիին փորոքին մէջ պատսպարուող մարդը երբ կը տեսնէ, որ ձիաւորը պիտի սպաննէ վԱստուած, կը կանչէ:

- Սպասէ՛, մի՛ սպաններ, բարեկա՛մ, այդ մարդը ինծի ալ պարտական է:

Անգամ մըն ալ աչքը կը բանայ, կը նայի՝ ո՛չ արձան կայ, ո՛չ ձիաւոր: Առջեւը տուրակ մը կը տեսնէ, կը բանայ՝ լեցուն սկի է: Աղքատը կ'առնէ պարկը ու տուն կը դառնայ:

Յաջորդ Կիրակի նորէն եկեղեցի կ'երթայ: Շատ ուրախ է: Պատուելին կը հարցնէ:

- Ի՞նչ կայ, այս Կիրակի քեզ շէն ու պայծառ կը տեսնեմ:

- Դուն ըսիր, թէ Աստուած մէկին տեղ հարիւր կու տայ, կը պատասխանէ մարդը: Սխալ ըսեր ես, Աստուած մէկին տեղ հապար կու տայ: Եւ տուաւ, թէեւ քիչ մը ուշ տուաւ:

12. Չուճուկնէն մախգաման

Կիցիրի պապերկան մը, քերական ունցիրի: Ուօր մը, քիշիրուօն, չատըր հա քիշտի ի գիղէօ մը, մըսաֆըր հա երննու իրը պառ-վիկու մը քուօվ: Պառվօյը իրիվկանը հայ դըննա ըրկը հավկուօյթ, հայ կարցընի էր: Պապերկանը մէննուօրը հայ թուղա ուրթու:

Ըրկը-ըրգ տէրի սօնրա՝ անը պապերկանը կինն անտ գիղէօյըդ հա եուգու: Պառվօյը չուճըր հայ տըսնա վը՝ հայ բիրի շինի գէր մը, քի իս՝ ան մուօրդըս ֆուլուն տէրէն ֆուլուն ուօրը ըրկը հավկուօյթ կարցուցա, կաւտարը չիտէօ: Հավկուօյթըս անկար ձազ-մար թի կը դընէրէմ՝ քէսու ձուօգ կը հէնէր, անտ ձէգիրը հուօվ կըննէրէն, քէնծըսու հավկուօյթ կէծօէրէն...: Հայ շէրի հիսապ մը քի...

Հայ կինչին ըվմուօրդը մախգաման: Գէրը հայ կարդուն էր: Հայ հէնին հիսապ մը քի... Միլիօն հայ կըտրի եահօ...:

- Վուօղը էրի ձուպուօպ տէօ,- հա եէսի կատէն:

Մուօրդը կիրուօծ ի վը, չընքըրվէր: Սէրտը նիէղ ի: Ձալէք ունցուօծը թի ուտու՝ կինն պարկուն կիյննա: Հա երննի դաւրիցի: Հա իշի կաֆլիմը չուճուկնա հայ խաղուն ի մայտունը: Հա եէսին:

- Էրկէք ինինք պառվօն իլան պապերկանէն մախգաման:

- Ինինք,- հա եէսի միէը:

Հա նըստէն: Միէը հա երննու կատէն, միէը հա երննու ապու-կար, միէը հա երննու պառուօվ, միէը հա երննու պապերկան:

- Է,- հա ճըվպու կատա ըղուօղ չուճօկը,- չուօ՞ց կըննու դէօն ան պառվիկուն հավկուօյթը կիրուօր՝ կաւտարը չըտըվի: ան պառվօյըս ան ըրկը հավկուօյթըդ ձազմար թի կը դընէր՝ ըրկը ձուօգ կըննիէր, ըրկը ձուօգը կըննիէր ըրկը հուօվ: Հուօվ մը հիրէր հիստէօն հավկուօյթ կը հէծօի տէրէն, ըրկը միէը՝ ըրգէրէր: Ըրգէրէր հավկուօյթըդ թի դընէր ձազմար՝ կըննէր քէսու հուօվ...

- Է,- հա եէսի անձա ապուկար ըննուօղ չուճօկը,- կապըլ, քան կըննիէր, ըմմը, հարցօ պառվօն, հէօ՞մ կարցօց վը թի խի-շուօծ...

- Իփուօծ էր,- հա եէսի պառուօվ ըղուօղ չուճօկը:

- Է,- հա եէսի ապուկարը,- իփուօծ հավկուօթի ձուօգ չըննիր, չուօ՞ց, չուօ՞ց ձազմարը պըր դընէր վը:

Պապերկանը՝ մէննուօրը հա եուրթու ուղուրդ ի մախգաման:

- Կէրիս հարցընիլ պառվօն,- հա եէսի թա կատէն,- վանտ հավկուօյթըդ ըր կարցօց՝ հէօ՞մ էր թի...

- Խիշուօծ էր, խիշուօծ,- հա վըլըղդի պառուօվը:

- Է՛, էֆէնտիմ, իփուօծ հավկուօթի ձուօգ չըննիէր: Իփուօծ հավկուօթէն գէնը ըսկու,- հա եէսի, հա մընկի վկաւտարը, հա խէլիսն:

12. Մանուկներուն դատարանը

Կեցեր է վաճառական մը, կարաւան ունեցեր է: Օր մը, գիշե-րով, վրան կը վարնէ գիւղակի մը մէջ, այրի պառաւի մը հիւր կ'ըլլայ: Պառաւը ընթրիքին կը դնէ երկու հակիթ, կը կերցնէ իրեն: Վաճառականը միւս օր կը ձգէ կ'երթայ:

Երկու-երեք տարի ետք նոյն վաճառականը նորէն այդ գիւղակը կու գայ: Երբ պառաւը կը տեսնէ վինք՝ կը բերէ կը շինէ գիր մը, թէ ես այս մարդուն այսինչ տարին, այսինչ օրը երկու հակիթ կերցուցի, դրամը չտուաւ: Եթէ հակիթս թուխսի դնէի՝ այսքան ձուտ կը հանէր, այդ ձուտերը հաւ կ'ըլլային, այսքան հակիթ կ'ածէին...: Կը շինէ հաշիւ մը որ...

Մարդը կը կանչեն դատարան, գիրը կը կարդան, հաշիւ մը կը հանեն որ... Միլիոն կը հասնի, եղբայր:

- Վաղը եկո՛ւր՝ պատասխան տո՛ւր,- կ'ըսէ դատաւորը:

Մարդը կերած է, ինչպէ՞ս հերքէ: Սիրտը նեղ է: Բոլոր ունե-ցածը տալու ըլլայ՝ նորէն պարտական կ'իյնայ: Դուրս կ'ելլէ: Կը նայի խումբ մը մանուկներ կը խաղան հրապարակին մէջ, Կ'ըսեն.

- Եկէ՛ք խաղանք պառաւին ու վաճառականին դատը:

- Խաղա՛նք,- կ'ըսէ մէկը:

Կը նստին: Մէկը կ'ըլլայ դատաւոր, մէկը կ'ըլլայ փաստաբան, մէկը կ'ըլլայ պառաւ, մէկը կ'ըլլայ վաճառական:

- Է՛,- կը ճչայ դատաւոր եղող մանուկը,- ինչպէ՞ս կ'ըլլայ, դուն այս պառաւին հակիթը կերար՝ դրամը չտուիր: Այս պա-ռաւը եթէ այդ երկու հակիթները թուխսի դնէր՝ երկու ձուտ կ'ել-լէր: Երկու ձուտը կ'ըլլար երկու հաւ: հաւ մը հարիւր յիսուն հա-կիթ կ'ածէ տարին, երկու հատը՝ երեք հարիւր: Երեք հարիւր հակիթը եթէ թուխսի դնէր՝ կ'ըլլար այսքան հաւ...

- Է՛,- կ'ըսէ փաստաբան եղող մանուկը,- ճիշդ է, այդքան կ'ըլլար, բայց հարցո՛ւր պառաւին՝ հո՞ւմ կերցուց, թէ՞ խաշած...

- Եփած էր,- կ'ըսէ:

- Է՛, եփած հակիթէ ձուտ չ'ելլեր, ինչպէ՞ս, ինչպէ՞ս թուխսի պիտի դնէր վինք,- կ'ըսէ:

Վաճառականը միւս օր ուղիղ կ'երթայ դատարան:

- Կրնա՞ս հարցնել պառաւին,- կ'ըսէ դատաւորին,- այդ հակիթը, որ կերցուց, հո՞ւմ էր, թէ՞...

- Խաշած էր, խաշա՛ծ,- կը ճչայ պառաւը:

- Է՛, էֆէնտի՛, եփած հակիթէ ձուտ չ'ելլեր: Եփած հակիթին գինը ահաւասիկ,- կ'ըսէ, կը մեկնէ դրամը, կ'ապատի:

Կիցիր ի չարփըճէ մը, դձր կուրթու կը չարփմըջընի ըղիրի: Աղըզ մը, ըրկտօք, ըրգ, չձագ, հէնկ, ուօր միլի չուօփը հա լիվա... Լա եուրթուն գէնկէն պէնք, հայ կինչին վը մախգաման:

- Դէօն չաղուր էնէօն ունէս,- հա եէսի կատէն,- ընծըսու, ընծըսու բէնիր իրուօծ իս, խէքըդուօղ իս, չարփըճա իս: Պըր հէսկընում՝ դէօն չուօ՞ց հա ինիս տա քաա մուօրդ հայ խէքըդիս:

- Աման, պա՞տ հօպիս հէսկընուօս,- հա եէսի,- իս ալուօղ մը ունէմ, էտէվէօնկ կը խէքըդիմ ըզժողովուրդը...

- Չուօ՞ց ալուօղ ըղիրի,- հա եէսի կատէն:

- Վալլահի, հէմու չըմ կէրի բիրի վը քի,- հա եէսի:

- Չըվա՞...

- Վալլահի պիեղ դըրուօծ իմ վը,- հա եէսի,- հօպի՞ս բիրիմ վը քի՞ կուտուօս ըրգ դըղէն, ըրգ դըղէն լիրա պիեղ դըրուօծ իմ վը,- հա եէսի:

- Գձնքի վը,- հա եէսի կատէն, հօտու էր ըրգ դըղէն լիրա...

Լանսնա ուօր մը, ըրկը ուօր, շէքուօթ մը, տըսնըհէնկ ուօր, էմէս մը՝ չուգու մուօրդը: Լա եըննի կատէն խէպուօր հայ դուրկի էր: Լա թուղա հօգու:

- Եէօ՞ կու, ալուօղ պըր բիրէրէս,- հա եէսի,- իմ ըրգ դըղէն իլի գուղձուօր գէձի...

- Աման էֆէնտըմ, իս հաքամա չիմ, իս քու մինի իսկա չըգուղ-ձու, հայտը, քու հիտը ըննում,- հա եէսի,- չէ՞ շինիցա քի՞ տա տըվի ինծի ըրգ լիրա... Ծիփիցա՞ քի, քիշտիցա՞ քի...: Բուն մը չիրա...: Դէօն քու կույնուօն տըվի ինծի ըրգ լիրա...:

- Դէօն պէս խէքըդիձի:

- Չըխէքըվէրէ, էֆէնտիմ, չէվտէրէ, իմ միէխգը չէ՞ ի վարսա էտձր մէջ:

- Էսիլի դէօն ալուօղ չունէ՞ս հէմու:

- Չուօց տա, ունէմ, բիրուօծ իմ:

- Եէօ՞ կու հէպու:

- Իմ ալուօղը իմ լիպպետօն ի, էֆէնտիմ, իմ լիպպետօն... Լիպպետօն ըսկաք չունա, չուօրը կուպիմ՝ ընծաա կը դարձընիմ,- հա եէսի,- իմ լիպպետօն ի իմ ալուօղը:

14. ան ճամբուօյը

ան միէը սէկկիլիէն շուօտ կը վախի ըղիրի: Լա եէսի էմը՝ կուրթում կը վիլվէմ, եուօըր գըրըզմուն չիկու՝ իս ան գիէղը կէպրէմ:

Լա եուրթու, եէօըր լի հա վիլվա՞՝ հա իշի եա՛ տըժը, եա՛ քիստընը գըրըզմուն կու: Վիլվիլի վիլվիլի հա ժըմնի գիղէօ մը: հա վիլվա չըրթուօլը, հա իշի նա գըրըզմուն կու, նա կապըր... Չիկէք:

Խաբեբայ մարդ մը կ'ապրէր, ուր կ'երթայ՝ կը կողոպտէ եղեր: Անգամ մը, երկու, երեք, չորս, հինգ՝ օր մըն ալ չափը կը լեցուի: Կ'երթան կը բողոքեն: Մարդը դատարան կը կանչեն:

- Դուն գէշ անուն ունիս,- կ'ըսէ դատաւորը,- այսպէս այսպէս բաներ ըրած ես, խաբեբայ ես, աւազակ ես: Պիտի հասկնամ, դուն ինչպէ՞ս կ'ընես, որ այսքան մարդ կը խաբես...

- Ամա՛ն, ա՞յդ կ'ուպես հասկնալ: Ես գործիք մը ունիմ, անով կը խաբեմ ժողովուրդը,- կ'ըսէ:

- Ինչպէ՞ս գործիք է եղեր ատիկա,- կը հարցնէ դատաւորը:

- Աստուած վկայ, որ հիմա չեմ կրնար բերել,- կ'ըսէ մարդը:

- Ինչո՞ւ:

- Աստուած վկայ, որ գրաւի դրած եմ գործիքս: Երեք դեղին ոսկիի գրաւի դրած եմ վայն: Եթէ կ'ուպես՝ տո՛ւր երեք դեղին, տամ պարտատիրոջ, որ գործիքս բերեմ դատարան:

- Բե՛ր,- կ'ըսէ դատաւորը ու մարդուն երեք ոսկին կու տայ: Կ'անցնի օր մը, երկու օր, շաբաթ մը, տասնհինգ օր, ամիս մը՝ մարդը չի գար, գործիքը չի բերեր: Դատաւորը լուր կը դըրկէ ետեւէն: Կ'ելլէ դատարան կու գայ:

- Ո՛ւր է, գործիք պիտի բերէիր,- կը հարցնէ դատաւորը,- երեք ոսկիս ալ գողցար գացիր:

- Զաւ լիցի, տէ՛ր իմ, ես աւազակ չեմ, ես քեզմէ դրամ չգողցայ: Լա՛ւ, քու հետդ ըլլամ,- կ'ըսէ,- ես ի՞նչ ըրի քեզի, որ երեք ոսկի տուիր ինծի: Հարուածեցի՞, վարկի՞ քեզի, սպառնացի՞ կեանքիդ: Բան չըրի: Դուն քու կամքովդ տուիր ինծի երեք ոսկի:

- Դուն պիս խաբեցիր:

- Չխաբուէիր, տէ՛ր իմ, չհաւատայիր, իմ մեղքս ի՞նչ է, որ դուն հաւատացիր:

- Ուրեմն հիմա գործիք չունի՞ս դուն:

- Ինչպէ՞ս թէ, ունի՛մ, բերեր եմ:

- Ո՛ւր է հապա:

- Իմ գործիքս լեզուս է, տէ՛ր իմ, լեզուս: Լեպուն ոսկոր չունի, ինչպէս կ'ուպեմ՝ այդպէս կը դարձնեմ: Իմ լեզուն է իմ գործիքը:

14. Այդ ճամբան

Այդ մէկը մահէն շատ կը վախնայ եղեր: Կ'ըսէ՝ կ'երթամ կը պտտիմ, ուր որ գերեզման չկայ՝ ես այն գիւղը կ'ապրիմ:

Կ'երթայ, ուր որ ալ կ'երթայ, կը նայի կա՛մ տաճիկի, կա՛մ քրիստոնեայի գերեզման կայ: Պտտելէն կը հասնի գիւղակ մը: կը դառնայ շուրջը, կը նայի, ո՛չ գերեզման կայ, ո՛չ կուր... Չկա՛յ:

Հա եւորթու պարպարէն խաչ:
 - Դէօք,- հա եհի,- ձիր խիսաձնէն եէօ՞ կը թաղիէք:
 - Մինք չընք խըսսէ,- հա եհի,- իտա՞ ճանբուօյը հա տըսնէ՞ս...
 - Հօ:
 - ան ճանբիէն ուրթուօյը եիտ չուգուօր,- հա եհի,- եէօ՞ հօրթու, եէօ՞ չուրթու՞ մինք չընք գաւտի... Մինք քաւտ գաւտինք...
 - Հա,- հա եհի,- մաւտամ աշխուօր կու՞ իս ան ճանբիէն չըմ ուրթու, չըմ խըսսէ...
 Հա էծիլի վը պարպարը, հա եւորթու:
 Ուօր մը, ըրկը ուօր, տէրէ մը, ըրկէօք, կալան քուօյնը... Ուօր միլի նըստուօծ ի պարպարէն խաչը հա էծիլվա՞ ըղիր ի...
 - Սիպի,- հա եհի թա պարպարը:
 - Ճանըմ, իրիսըդ պէկուօս...
 - Սիպի,- հա եհի:
 - Չըվա՞...
 - Չուօ՞ց չըվա,- հա եհի,- չըտըսնէ՞ս, չըրքաւիէս հա հէրին, հա շաղդին, սիպի,- հա եհի:
 Եաուանջըր իրիսը քամըլա՞ հաուանին հա տէնէնվը ան ճանբէն...

15. Ըրգ աղբըրտաքը

Մինք ըրգ աղբար էրէնք,
 Կըտըրիլուօն-կըտըրիլուօն
 մընէցանք հէնկ,
 Միէը կուօյր էր, միէը թուփալ,
 Միէը դէնուօկ չուսիէր,
 Միէկ մարկէ եէր,
 Մին իլի չուլուօկ:

Մէտգ իրանք, իրանք,
 Էսանք ուրթունք եավը:
 Գէձանք չարշէն,
 Առունք թըվանկ մը,
 կունտախը կըտըրուօծ էր,
 Չախմուօխ հիչ չուսիէր:

Գէձանք ալը:
 Մուօրը մինիէն չըծըննուօծ,
 Թըփիէն տուօքը,
 Տաշվուն մը իկանք ի ուստ:
 Կուօյրը առուօվ նիշան,

16. Երեք եղբայրները

Մենք երեք եղբայրներ էինք,
 Կոտորուելէն-կոտորուելէն
 մնացինք հինգ:
 Մէկը կոյր էր, մէկը՝ կաղ,
 Մէկը դանակ չունէր,
 Մէկը մերկ էր,
 Մէկն ալ ձեռք չունէր:

Միտք ըրինք, ըրինք,
 Ըսինք երթանք որսի,
 Գացինք շուկայ,
 Առինք թվանկ մը,
 Կոթը կոտորած էր,
 Հրահան չունէր:

Գացինք որսի:
 Մօրմէն չծնած,
 Թուփին տակը,
 Ճագարի մը հանդիպեցանք:
 Կոյրը նշան առաւ,

Կ'երթայ սափրիչին մօտ:
 - Դուք,- կ'ըսէ,- ձեր մեռելները ո՞ւր կը թաղէք...
 - Մենք չենք մեռնիր,- կ'ըսէ,- այդ ճամբան կը տեսնե՞ս...
 - Այո՞:
 - Այն ճամբայէն գացողը ետ չի գար, ո՞ւր կ'երթայ՝ ո՞ւր չ'երթար՝ մենք չենք գիտեր: մենք այդքան գիտենք,- կ'ըսէ:
 - Հա՞,- կ'ըսէ,- քանի աշխարհ կայ՝ ես այդ ճամբայէն չեմ երթար, չեմ մեռնիր:
 Սափրիչը կ'ածիլէ վինք, կ'երթայ:
 Օր մը, երկու օր, տարի մը, երկու, որքան որ կ'ուզես... Օր մըն ալ սափրիչին քով նստած կ'ածիլուի եղեր...
 - Չգէ՞,- կ'ըսէ սափրիչին:
 - Եղբա՛յր, երեսդ...
 - Չգէ՞,- կ'ըսէ:
 - Ինչո՞ւ...
 - Ինչպէ՞ս թէ ինչո՞ւ,- կ'ըսէ,- չե՞ս տեսներ, չորս կողմէն կը հրեն, կը քաշեն, ձգէ՞,- կ'ըսէ:
 Երեսը չածիլած՝ կ'առնեն կը տանին վինք այդ ճամբայէն...

Չուլուօկը քիշից թէլթըք, Ձեռք չունեցողը բլթակը քաշեց,
 Թուփալը շատտից բըռնից վը, Կաղը վապեց բոնելու,
 Դէնուօկ չունցուօղը վինից, Դանակ չունեցողը մորթեց,
 Մարկէը շէկից վը: Մերկը շալկեց:

Էսանք «եէօ՞ պըր իփինք վը»: Ըսինք՝ ո՞ւր եփենք որսը:
 Գէձանք պապուօր,
 Առունք պուղէնծ մը,
 կալուօղը կըտըրուօծ էր,
 Վըռք հիչ չունիէր:
 Դըրանք իվը խիշիլը:
 Նըրքիվիէն իլուօվ փախուօվ:
 Թուփալը շատտից իղիղէը,
 Գընուօց, գընուօց,
 Հէսուօվ աղբուօյր մը,
 Ըրկը ուօկ ուսիէր,
 Միէը չար էր,
 Մէյնիլի հիչ ջէօր չունիէր:
 Չար ակէն իղէց բիրանը,
 Խումից, խումից,
 Իղիղիէն ջաղուօգ դարձօձ,
 Բիրանը չըթէցվիցուօվ:

Ըսինք՝ ո՞ւր եփենք որսը:
 Գացինք պապար,
 Առինք պղինձ մը,
 Ականջը կոտորած էր,
 Յատակ չունէր:
 Ճագարը դրինք խաշելու:
 Տակէն ելաւ փախաւ:
 Կաղը վապեց ետեւէն,
 Գնաց, գնաց,
 Հասաւ աղբիւր մը,
 Երկու ակ ունէր,
 Մէկը չոր էր,
 Մէկն ալ ջուր չունէր:
 Բերանը չոր ակին դրաւ,
 Խմեց, խմեց,
 Ետեւէն ջաղացք դարձուց,
 Բերանը չթացուեցաւ:

Սիրոյ եւ հարսանեկան խաղիկներ

Ծիրիւրի լուսուն լուօյսը,
Թէպտու ի արտէս բուօյսը,
Ըտըրան աղուր իշգիւնկան
Սիրիմ վիշուօցը լուօյսը:

Հիտէօն վառուօծ էր կըրուօք,
Պօյն ըրկան, միէշգը բէրուօկ,
Նըստուօծ էր հա սէնտըրէր
Ջըլըֆնէն պուլուօկ-պուլուօկ:

Կաննիէն շինին ըզհիծօանը,
Տարօսը ալըննէդ խըմուներ,
Ըտըրան էնէօշ իշգիւնկան
Պէգնիմ ըզպըզտէկ բիրանը:

Հինիրի վվիվընբիրը,
Դըրիրի վուղկըննիրը,
Ծնմիրքը իտիվ-առջիվ,
Սիրիրիմ ըզպըզուղըննիրը:

Ձան մը իլուօվ, շուօտ մուօտ ի,
Ինճիմնիէն կիէսը սէօտ ի,
Թըրցօց ըզխիւքըս գըլխիէս,
Թի գանիս նըրուն հուօտ ի:

Փանը դընէն կըրէքանը,
Չըգանտէնու վէփսանը,
Միր դըրէցնէն հարսնօյը
Շուօտ հա սիրի ըզսանը:

Թանճարան խիշին ըզհէտէը,
Վուօղը պուրթում Լէտէը,
Ջէսպու քինթիրէն մօտան
Պալլա կըննու Ջէտէը:

Ջանջուօցը բիրին վիւերը,
Հուօցը իփին ի թիները,
Տիսու գանտէցու վը,
Թանճըր իշբուօծ էր ըզծըրէրը:

Ծաթեր է լուսնի լոյսը,
Ինչ թարմ է արտիս բոյսը,
Ես այդ աղուր աղջկնակին
Սիրեմ աչքերուն լոյսը:

Տան մէջ վառած էր կրակ,
Հասակն երկար, մէջքը բարակ,
Նստած էր կը սանտրէր
Խոպոպները ոլորակ:

Կաղնիէն կը շինեն հեծանը,
Տարօսը բուրիդ խմանը,
Այդ անուշիկ աղջնակին
Պագնեմ պատիկ բերանը:

Հինայեր է թարթիչները,
Դրեր է օղիկները,
Ծամերը ետեւ-առջեւ,
Սիրեր եմ պուռնկները:

Ձայն մը ելաւ՝ շատ մօտ է,
Խօսքերուն կէսը սուտ է,
Խելքս գլուխէս թոցուց,
Կարծես թէ նուան հատ է:

Փայտը կը դնեն կրականոցը,
Չի գիտեր՝ ինչ է ափսոսը,
Մեր դրացիին հարսնուկը
Շատ կը սիրէ արդուկարդը:

Կաթսան կը խաշեն հատիկը,
Լաթաքիա պիտի երթամ վաղը,
Ջեսապի աղջիկներուն նորոյթը,
Ջատիկին յայտնի կ'ըլլայ:

Ջողացքէն կը բերեն ալիւրը,
Հացը կ'եփեն թոնիրը,
Տեսայ ու ճանչցայ վինք՝
Թանճը քսած էր ծարիրը:

Էլլըքուօն հա քաղին թէօլը,
Դէնկուօն հա կանգին մօլը,
Տըսնըհէնկ տէրու չըղուօծ
Ըրգ րանկ հա պույին մուօլը:

Ծավիէն բիրին վուօղը,
Պալլա պըր ըննու վուօղը,
Հէսիմ փուշման պըր ըննու
Եապանճը հիտ կէրգըվուօղը:

Վըրը պախչան նէօշ կըննու,
Վարդէն ըրվան փէօշ կըննու,
Կուրպուն ըննում քի Աստուօծ,
Իլը քինթն էնէօշ կըննու:

Արակ կը խումիմ շիշ մը,
Հուօրս մը առնինք թի իէշ մը:

Գօղը դընէն եաղբուօյրը,
Հառօ կուրթու ծանկէն բուօյրը,
Միր դըրէցնէն քինթիրէն
Սիրիցա վալըզտէկ բուօյրը:

Տէմըրջէն ծիծի վուրուօգը,
Բէդդիցէք վես ի կըրուօքը,
անթը թուօղ կու ըրկը իշգէն,
Տըվէք ինծի վիխիւօքը:

Ծուօվ կըտրից վըրը ուօրտը,
Ըղուօծ իմ Ջէսպու լօրտը,
Հա եաղչին դըրէցնիրը
Քի առնիմ վուգիրէն փուօրտը:

Հէլպու բիրին ըզճուօյթը,
Թիթիսիէն քաղին ըզթէօթը.
Միր խընմունց իշգիւնկան,
Քիշիցա ըզհասրուօթը:

Ծուօվը ըրվան մըթըցէօց,
Մուկուօն կուօվը կըթըցէօց,
էր մուօր գուվուօծ իշգէնը
Թինէրը ծըմըթըցէօց:

Թուօլը ձեռնոցով կը քաղեն,
Պանանը դանակով կը կեղուեն,
Տասնհինգ տարեկան չեղած
Մապերը երեք գոյն կը ներկեն:

Ծովէն կը բերեն աղը,
Յայտնի պիտի ըլլայ վաղը,
Կ'ըսեմ թէ պիտի վղջայ
Օտարին հետ կարգուողը:

Վերի այգին նուշ կ'ըլլայ,
Վարդին վրայ փուշ կ'ըլլայ,
Մատաղ ըլլամ քեզի Աստուօծ,
Ուրիշի աղջիկն անուշ կ'ըլլայ:

Օղի կը խմեմ շիշ մը,
Հա՞րս մը առնենք, թէ՞ էշ մը:

Գուրը կը դնեն աղբիւրը,
Հեռու կ'երթայ ծաղկին բոյրը,
Մեր դրացիին աղջիկներէն
Սիրեցի պատիկ բոյրը:

Դարբինը կը կուռ ուրագը,
Նետեցէ՛ք վիս կրակը,
Անդի թաղ երկու աղջիկ կան՝
Տուէ՛ք ինծի խելօքը:

Ծով դարձաւ վերի արտը,
Եղած եմ Ջեսապի լորտը,
Դրացիներ կ'աղաչեն,
Որ առնեմ վոյգին մէկը:

Հալէպէն կը բերեն ձիւթը,
Թթենիէն կը քաղեն թուօթը,
Մեր խնամիենց աղջնակին
Ես կը քաշեմ կարօտը:

Ծովը վրան մթնցուց,
Մուկով կովը կթեցուց,
Իր մօր գոված աղջիկը
Թոնիրը կսմթեցուց:

Ըստձր անցուով, դձր գընուօց,
Աշգըս իդիդիէն մընուօց,
Դըրէցնէն գուվուօծ իշգէնը
Ձուկանկնէն ծըմըթըցէօց:

Պաղչան իլուօծ ի կուօվը,
Վուօղը պըր ուրթում Ծուօվը,
Քինթը խէպուօր դուրկիրի,
Վուօղը պըր ուրթում բուօվը:

Տօկաղաճ կըննու ձիմիրէօկ,
Քինթէօն իրիսը կըմըրէօկ,
Փրցուցամ էրմինիէն պուօգ մը,
էր տուօտը սիպից սիվ մձրօք:

Տընիէր վէպիին կը թընտու,
Մէքթուպ կուգու թա Հընտու,
Իշգէնն ուկուղէն տըվէք,
Խիսսա կուրթու կը խընտու:

Պաղչինէն անակ կուպին,
Ծառիրը տիրակ կուպին,
Մուօրմիէն վէպուօղ քինթիրը
Տըսնըվըրկը նասեուօք կուպին:

Իրիսիդ իսուօր հա պըսու,
Պըր ունունուօս նձր փիսու:

Էպէօր իփիցանք իէղ չիկէք,
Խընէմէքն իկէն տիէղ չիկէք:

Սըրու-սըրու մէննէքը,
Հա պըլըղդին կէննէքը:

Սըրու-սըրու սէկըննիր,
Էրկէք վէպիինք լէկըննիր:

Սընտուօյը դընէն խարձիրը,
Իլան թանղէք ֆարձիլը:

Ձէօրը վիլիին եաուվընէն,
Չուօրը ինկուօվ պաուվընէն:

Սուօյնը իդան հէրրիցէք,
Սընտուօյը կըտըրտիցէք,
Կըտրէճ տըղան հա խաղու,
Ըրվան չարակ քէրիցէք:

Ասկէ անցաւ, ո՞ր գնաց,
Աչքս ետելը մնաց,
Դրացիին գոված աղջիկը
Փողոցներուն մէջ կամթեցուց:

Պարտէպ մտած է կովը,
Վաղը պիտի երթամ Ծովը,
Աղջիկը լուր դրկեր է,
Վաղը պիտի երթամ բովը:

Տուկաղաճ կ'ըլլայ ձմերուկ,
Աղջկան երեսը կարմրուկ,
Փրցուցի իրմէ պագ մը,
Իր հայրը ձգեց սեւ մօրուք:

Տանիք կը վապեն՝ կը թնդայ,
Տէ՛ Հինտէ նամակ կու գայ,
Աղջիկն ուկողին տուէք,
Մեռնի կ'երթայ կը խնդայ:

Պարտէպները գործ կ'ուպեն,
Ծառերը յենակ կ'ուպեն,
Մօրմէն պատուող աղջիկները
Տասներկու խրատ կ'ուպեն:

Երեսդ այսօր կը շողայ,
Պիտի ունենաս նոր փեսայ:

Ապուր եփեցինք՝ եղ չկայ,
Խնամիներն եկան տեղ չկայ:

Շարուէ շարան մատնիքը,
«Լու-լու» կը կանչեն կնանիքը:

Շարուէ շարան սալուկներ,
Եկէ՛ք պարենք, բոյրիկներ՝:

Մնտուկին մէջ կը դնեն օժիտը,
Դիտելու ելան թաղեցիները:

Ձուրը կը դարձնեն առուները,
Չարը մտաւ պառաւները:

Սիւնը մէկ կողմ հրեցէ՛ք,
Մնտուկը կոտրտեցէ՛ք,
Կտրիճ տղան կը պարէ,
Վրան չիր նետեցէ՛ք:

Բանակրուային շարեր

Պաղցի Թուփալ Մինաս Սարմապեանի շարը

Բունձըր լառօնք իլուօծ իմ, Բարձր լեռներ ելած եմ,
Իս աշխուօրքը վիվուօծ իմ, Ես աշխարհը պտտած եմ,
Ինծի կէսին Պաղէն Թուփալ, Ինծի կ'ըսեն Պաղի Թուփալ,
Սատանէն եառանձ ծննուօծ իմ: Սատանայէն առաջ ծնած եմ:

Վըրը պաղչէն պուօտն իմ,
Իս Աստուծու մուօտն իմ,
անամ ըրվաս հա ծիծանի,
Ըրկը պատվիլի տուօտ իմ:

Վերի պարտէպի պատն եմ,
Ես Աստուծոյ մատն եմ,
Մարդիկ վրաս կը ծիծաղին,
Երկու պատուելիի հայր եմ:

Չարշիէն առա սըղուցը,
Կուճուօկ շինիցան մըղուցը,
Իս չէ՞ միէխգ ունէմ վարսա,
Իմ միէխգը իմ տըղուցը:

Շուկայէն սղոց գնեցի,
Մեղուներուն կոճակ շինեցի,
Ես ի՞նչ մեղք ունիմ միթէ,
Իմ մեղքը իմ տղոցը:

Ջուօրը ինկուօվ ցըվիցը,
Տանըմըս կիրուօվ ցիցը,
Շուօտ բէնիր կը շէրէրէմ,
Հա քիշվէմ պատվիլիցը:

Ջարը ինկաւ ցուիքէն,
Ձգեստս մաշեցաւ ցեցէն,
Ես շատ բաներ կը շարէի՝
Կը քաշուիմ պատուելիներէն:

Մէքթուպ իսգիցան փօստան,
Գըրուօծ էրէմ տան տէստան,
Իս շուօտ չըրան ունէրէմ,
Ալէյ գէճէն Հայաստան:

Նամակը ուղարկեցի,
Ոտանաւոր գրած էի,
Ունէի աշկերտներ այնքան՝
Բոլորը գացին Հայաստան:

Թուփալ Մինաս եւ Կեկիւս (Կիրակոս Սաղտըճեան)

— Կէրէտուրուն տան պուղուօկ,
Կիշնէս ծուօվը կը լուղուօս,
Թուփալէն ձանը հա ըննի,
Կէկիւս, չըվա՞ հա դուղուօս:

— Գարատուրան ձորն է այս,
Կ'իշնէս ծուօվը կը լողաս,
Թուփալին ձայնը կ'ելլէ,
Կեկիւս, ինչո՞ւ կը դողաս:

= Ծուօվը կիշնէն լուղիլը,
Կըննին կը պիշլին դուղիլը,
Իս իրկէօնը պըր լուսիմ
Աս մարդիկօն կուղիլը:

= Լողալու կ'իշնեն ծուօվը,
Կ'ելլեն, կը սկսի դողը,
Այս իրիկուն պիտի լուսեմ
Այս մարդուկին կողերը:

— Դարվիր ի Չալմու եական,
Կէկիւս կուսնիր ի շաքկան,
Իբուօց գըլիօկ հա վիվան,
Բաց գլուխով կու գայ ման,

— Դարվեր է Չալմայի լանջը,
Ո՞ր է Կեկիւսին գլխարկը,
Բաց գլուխով կու գայ ման,

Խիլք հա բանդված տան հերհալ:

= Տընիեր կըննին կը վիլվեն,
Կենճիրը անքար կը գըրվեն,
Ընծըսքի շուօր շէրաղնէն
Ճիւղըս կը դընէմ կը վիլվեն:

- Աղբուօյրը կը դընէն ուլօն,
Իլուօվ գընուօց Ջուկուլօն,
Թանճարան կունունու քարօկ,
Նա մըրպօսք ունա, նա մարօք:

= Կըշըռքուօն կը կըշըռիմ,
Ջունտըր-վունտըր կը ծախիմ,
Խիլուօք կիցէ դէօն շըպէն,
Ջուօյն բիրանը կը չըպկիմ:

- Ջաղուօք կը շինին արապա,
Տընվէն խարապա,
Եէօ մընուօց Ամմը Կէկմսը,
Թուղգու ինինք մարհապա:

Խելք կը փնտոէ անպայման:

= Տանիք կ'ելլեն կը ճեմին,
Տղաքը պինուոր կը գրուին,
Ջեպի պէս շար հիւսողները
Գրպանս կը դնեն, կը պտտիմ:

- Աղբիւրին կը դնեն ջրդոն,
Ելաւ գնաց էքիպօլուք,
Կաթսան կ'ունենայ քերուկ,
Ո՛չ մրպանք ունի, ո՛չ մօրուք:

= Կշիռքով կը կշռեն,
Ծանր-ծանր կը ծախեն,
Խելօք կեցի՛ր, բարեկա՛մ,
Ջու բերանդ կը պատտեն:

- Ջաղաքը կը շինեն կառք,
Տուները աւերակ,
Ո՛ւր մնաց Ամմի Կեկիւսը,
Թող գայ բարեւ մը տանք:

Բանակուի մը

- Թիպիը իլուօվ ի թըփփիէն,
Պըր պըլըշիմ ի քի այբիէն:
= Խընիցիէն կը հէնին պիեղը,
Ջունտըր նէստ ի քուօյն տիեղը:

- Իս կը խումիմ պուօղ թան մը,
Չէ՛ կէսին ընծըսքի շուն մը:
= Ցէվէն կը կէպին ըպկուօպը,
Իս կուտում բառնէդ չուօփը:

- Լըսսի, հա կարդում հէմուօր,
Կըննուօս ալըննէն կէշմուօր:
= Կտրուօծ ընկուօյպիդ փէօտ ի,
Ալէք էսծնէդ սէօտ ի:

- Հիրէք ի ըննիս եէրուօը,
Կը դընէմ վըսքի կէրուօը:
= Միէկ, ըրկէօք, սօնրա ըրգ,
Չիր կէրուօը չունա վըռք:

- Շնագայլը ելաւ թուփէն,
Պիտի սկսիմ քեպի այբէն:
= Խնոցիէն կը հանեն եղը,
Ծանր նստէ՛ քու տեղը:

- Ես կը խմեմ պաղ թան մը,
Ի՞նչ ըսեմ քեպի պէս շան մը:
= Վէրքին կը կապեն կապը,
Ես կու տամ բերնիդ չափը:

- Լսէ՛, կը կարդամ համար,
Կ'ըլլաս բոլորին «գաշմար»:
= Կտրած ընկոյզդ փուտ է,
Բոլոր ըսածներդ սուտ է:

- Հերիք է ելլես արօսը,
Կը դնեմ քեպ կարասը:
= Մէկ, երկու, յետոյ երեք,
Չեր կարասը չունի ոռք:

Մանկական խաղերգներ

1

Իլ իշիմիս թի դէօն իս,
Ըմմո՛ւ ծառէն հաղէօնն իս,
Ջու տէտէն կըմաթլէն իս,
Տունը տուլուօղը դէօն իս,
Տունը տուլուօղը դէօն իս:

Ել նայիմ թէ դուն ո՛վ ես,
Ո՞ր մէկ ծառին պտուղն ես,
Հօրդ թանկագինը դուն ես,
Մեր տան մեծ բախտը դուն ես,
Մեր տան մեծ բախտը դուն ես:

2

Չալխըտը, չալխըտը,
Չալխըտը մէծօնն իեղ ըննու,
Օղլըմ Գըրգաթը սաղ մընու,
Ուտի ըղէկ,
Խումի թէնէկ,
Ուճի-փուճի,
Հայրիկուն խընտէօմ բիրի:

Հարէ՛, հարէ՛ (խնոցի),
Հարէ՛ որ մածունը եղ ըլլայ,
Որդիս Գրիգորը ողջ մնայ,
Ուտէ եղիկ,
Խմէ թանիկ,
Աճի, մեծնայ,
Հայրիկին խնդում ըլլայ:

3

Օղլըմ Գըրգուրը սաղ մընու,
Ուտի էպրէկ,
Խումի թէնէկ,
Կէպի մըսսէկ,
Ճուղվի մէծնէկ,
Ճուղվի թէնէկ,
Ճուղվի ըղէկ:

Որդիս Գրիգորը ողջ մնայ,
Ուտէ ապրիկ,
Խմէ թանիկ,
Կապէ մսիկ,
Ժողվէ մածնիկ,
Ժողվէ թանիկ,
Ժողվէ եղիկ:

4

Ականճ, ականճ,
Ըրկան ականճ,
Մէօտ քառունց եիգգէն,
Կի թէօպ, խաղող,
Ցըրրի խըրումը, փախի՛:

Ականճ, ականճ,
Երկայն ականճ,
Մտի՛ր քեռիենց այգին,
Կե՛ր թուկ, խաղող,
Ցրէ՛ խրամը, փախի՛ր:

5

Ջախցիցու հուօց կուկիմ,
Ջըննէցու բուօրձ կուկիմ,
Կէրմէր իրիսուօն հուօրս կուկիմ:

Անօթեցայ՝ հաց կ'ուկեմ,
Ջնոտեցայ՝ բարձ կ'ուկեմ,
Կարմիր երեսով հարս կ'ուկեմ:

6

Շօ՛ն, շօ՛ն, տարղըն շօն,
Չէ՞ բաղցուօծ իս բարձս

Շո՛ւն, շո՛ւն, նեղուած շուն,
Ի՞նչ ես բեռցած բորոտ

իշտօն:

- Բորդ իլան բանպուօկ:

7
Չիտօկ, ձիտօկ, թըոցօ պէս,
Հէլպու դըոնիէն անցօ պէս,
Արծաթը դըգէլուօն կարցօ պէս,
Իսկը դէսուօն խումցօ պէս:

Չիտօկ, ձիտօկ, թըոցօ պէս,
Շէնպու դըոնիէն անցօ պէս,
Պըըսմուօն գաւտա հէգցէօ պէս,
Թօրը ձառըս անցօ պէս:

Չիտօկ, ձիտօկ, թըոցօ պէս,
Մըսրու դըոնիէն անցօ պէս,
Հէսնէմ դըգը Հընտ ու Հապաշ,
Նալար բէնիր ունցօ պէս:

Չիտօկ, ձիտօկ, թըոցօ պէս,
Եիտ իմ գիէղը դարձօ պէս,
Իմարը էսի նէնի,
Փիտը բարձէն պառկըցօ պէս:

8
Հէյ լայլագ,
Հաճի լայլագ,
Գընու Լէտէկ, քի Ջէտէկ,
Ուտում քի բօռ մը հէտէկ:

9
Նրիվէկ, Ննծըրիվէկ,
Թիպըննիրը հարսնէք:

10
Սէկանա, չէ՞ կունա,
Կըոնիէպ կունա, կաթ չունա:

11
Համբարձում,
Իէշը բարձում,
Ջուռուօյը մառցում,
Եիտ դարձում:

իշուն:

- Բուրդ ու բամպակ:

Չիո՛ւկ, ձիո՛ւկ, թոցո՛ւր պիս,
Հալէպի դոնէն անցո՛ւր պիս,
Արծաթէ դգալով կերակրէ՛ պիս,
Ոսկէ թասով խմեցո՛ւր պիս:

Չիո՛ւկ, ձիո՛ւկ, թոցո՛ւր պիս,
Շամի դոնէն անցո՛ւր պիս,
Ապրշումէ գօտին մէջքիս՝
Թուրը ձեռքիս՝ անցո՛ւր պիս:

Չիո՛ւկ, ձիո՛ւկ, թոցո՛ւր պիս,
Մսրայ դոնէն անցո՛ւր պիս,
Հասնիմ մինչ Հինտ ու Հապաշ՝
Ի՛նչ բաներով օժտէ՛ պիս:

Չիո՛ւկ, ձիո՛ւկ, թոցո՛ւր պիս,
Ետ իմ գիւղը դարձո՛ւր պիս,
Իմ մայրն «օրօր» երգէ,
Փետուրէ բարձին քնացո՛ւր պիս:

Հէյ արագիլ,
Ուխտաւոր արագիլ,
Գնա՛ Լաթաթիա, բե՛ր Ջատիկ,
Տամ քեզի բուռ մը հատիկ:

Արեւիկ, անձրեւիկ,
Թոպեկներու հարսանիք:

Սէկունա, ի՞նչ ունի,
Շերեփ ունի, կոթ չունի:
կըտիէպ = իբր շերեփ գործածուող շրագում

Համբարձում,
Էշը բեռցայ,
Ջուռակը մոռցայ,
Ետ դարձայ:

Հանելուկներ

Սաղիէն սէկուօծ կըննի,
Սէկաձիէն սաղ կըննի,
Ատ չէ՞ ի:

- Հաւկիթ

Նըրքիվը տախտուօկ,
Շրվան տախտուօկ,
Միէշը ձատընարտ մը կու:

- Կրիայ

Ծարքը ծաղէկ,
Միէշը աղէք:

- Վառող պատրոյգ

Չափ վիտտը խուղէն,
Շրկը վիտտը կուղէն:

- Չի եւ ձիւոր

Լառնէն բէդիցա՝ դիմէ ցուօկ,
Ջէրէն ծիփիցա՝ դարձուօկ,
Միէկ բիրան չըդիմէցուօկ:

- Ամպ

Բալար աղըլ,
Եարսօն ըրկը կէպուօծ շօն:

- Բերան եւ ակուաներ

- Ախ գըլօթիս: - Տան մեծ սիւնը
- Ախ միէշգիս - Մեծ գերանը
- Դիմէցիէք, աղբըրտա՛ք, դիմէ-
ցիէք:
- Միւս գերանները

Ողջէն սատկած կ'ելլէ,
Սատկածէն ողջ կ'ելլէ:
Այդ ի՞նչ է:

Ներքելը տախտակ,
Վրան տախտակ,
Մէշը վհուկ մը:

Ծայրը ծաղիկ,
Մէշը աղիք:

Չորս ոտքը հողին,
Երկու ոտքը կողին:

Լեռնէն նետեցի՝ դիմացաւ,
Ջարին պարկի՝ դարձաւ,
Մէկ բերան չդիմացաւ:

Բուրդ փարախ,
Երեսուն երկու կապած շուն:

- Ախ գլուխս:
- Ախ մէջքս:
- Դիմացէ՛ք, եղբայրնե՛ր, դիմա-
ցէ՛ք:

Ունէնք չունէնք կըբուօմը,
Մէշը կու ուձէ մը
Խէծուօծ ի նուօն հէտէ մը:
- Ճրագ ու պատրոյգ

Ունինք չունինք լճակ մը,
Մէշը կայ օձիկ մը,
Խածած է նուան հատիկ մը:

էշը ո՞ր գիտէ նուշը,
Կ'երթայ կ'ուտէ փուշը:
Իէշը չըվա՞ հարսնէքը կը կինչին.
- Ես՛ ջէօրը պէկուօս ի, ես՛ փստը:
էշը ինչո՞ւ հարսնիքի կը հրակիրեն.
- Կա՛մ ջուրն է պակաս, կա՛մ ալ փայտը:
Իլէն պարնուօն ջըրուր չիշնըվէր:
Ուրիշի պարանով ջրհոր չ'իշնուիր:
Իլիրէն պէրկածէն նաղատուօր ծիփիս՝ փսշա՞ կըննի:
Ալիւրի պարկէն, որքան ալ հարուածես, փոշի կ'ելլէ

Իծծէօն կընուօյը կը կառու՛
Կուրթու հուվուվէն վէրածը կը խըրըվա:
Այծին կոնակը կը քերուի,
Կ'երթայ հովիւին գաւազանին կը քաշքշուի:
Ինսանէն ըմմու տիէղը կը ցնվա՞ հիգգէն եուօն կու:
Մարդուն ո՞ր տեղն ալ ցաւի՛ հոգին այնտեղ է:
Իշգէնը իր տէտէն տանը սանն ի,
էր մարդօն տանը խըվմաթթարը:
Աղջիկը իր հօր տան վարդն է,
Ամուսինին տան՝ ծառան:

Իշգէնն ուզուղէն տըվէք՝
Խիսսա՞ կուրթու կը խընտու:
Աղջիկն ուզողին տուէք՝
Կը մեռնի կ'երթայ կ'ուրախանայ:
Իշգինէն նասիպը թըրուուն ձէն ի,
Առուօվ գընտուօց ալ ո՞ւվ գմտի եէօ:
Աղջկայ բախտը թեւաւոր ձի է,
Առաւ տարաւ՝ ալ ո՞վ գիտէ ուր:

Իչուօց հառուօ, սըրտի հառուօ:
Աչքէ հեռու, սրտէ հեռու:
Իփէօկ էպրէն ջէօր չըն քէրի:
Եփած ապուրին մէջ ջուր չեն լեցներ:
Լուօցը իլան ծուօղըրը աղբըրտաթ ին:
Լացն ու ծիծաղը եղբայրներ են:
Խաղուղը կմտին, հիգգէն չըն հարցընի:
Խաղողը կ'ուտեն, այգին չեն հարցներ:
Խաղուղը միէկըմիէկ իշիլուօն կը կէրմըրի:
Խաղողը իրարու նայելով կը կարմրի:
Խիէվը էտուօց,
Խիլուօքը էվտուօց:
Խելը ըսաւ,
Խելօքը հաւատաց:

Խիտվուօծ՝ վէրածը իէշ չըգիյիր:
Նախշուն գաւազանը էշ չի քշեր:
Խածըր խըրուամը ըր կուգու՝ կը քիշտին վը:
Խուզը երբ խրամը գայ՝ կը վարնեն կինք:
Խուօսգը սէօտ չըննուօր՝ ծօտ կըննու:
Խօսքը սուտ չըլլար՝ ծուռ կ'ըլլայ:
Ծունտըր քուօրը էր տիէղը կը մընու:
Ծանր քարը իր տեղը կը մնայ:
Ծօռ հիծծանը կիփիլուօն չուղուրդէր:
Ծուռ գերանը տաշելէն չի շտկուիր:
Կէթէկ-կէթէկ ծուօվ կըննու,
Կուղա կուրթու սիէլ կըննու:
Կաթիլ-կաթիլ ծով կ'ըլլայ,
Կը հոսի կ'երթայ հեղեղ կ'ըլլայ:
Կէթէկ-կէթէկ՝ քուօր կը ծէկի:
Կաթիլ-կաթիլ՝ քարը կը ծակէ:
Կէթնիէն վառուօծ բիրանը մէծէօնը վըչչիլուօն կու խումի:
Կաթէ վառած բերանը՝ մածունը փչելով կը խմէ:
Կէտէօն չըկիցուօծ տիէղը միյնիրը հարսնէք կը բըռնին:
Կատուն չեղած տեղը մուկերը հարսանիք կը բռնեն:
Կէօժը շինուօղը ընկուղն իլի կը շինի:
Կուժը շինողը ականջն ալ կը շինէ:
Կըրուօյը ինկուօծ տիէղը կը վառի:
Կրակը ինկած տեղը կը վառէ:
Կինէկ կու՝ տէօն կը շինի,
Կինէկ կու՝ տէօն կ'էվըրկի:
Կնիկ կայ՝ տուն կը շինէ,
Կնիկ կայ՝ տուն կ'աւերէ:
Կիրուօվ միր հէցցիէն,
Ըղուօվ միր հէվէտիէն:
Կերաւ մեր հացէն,
Եղաւ մեր հաւատէն:
Կուգու տէրէն,
Կուրթու բէրէն:
Կու գայ տարին,
Կ'երթայ բարին:
Կարիկ ցէնուօղը չըտտիրիէն չըվախիէր:
Կորեկ ցանողը թոչուններէն չի վախնար:
Հավկուօյթ գուղձուօղը ձէն իլի կը գուղնու:
Հաւկիթ գողցողը ձին ալ կը գողնայ:
Հէն եառվիէն իլա՞ ջէօր կը փսխա՞:

Հին առուէն անպայման ջուր կը փախչի:
Հէրըստէն կուօվը կը ծընաննա, անբանտէն՝ կինէը:
Հարուստին կովը կը ծնանի, աղքատին՝ կինը:
Հուօսը ձիտօն,
Նըսմադը օ՛մ:
Հարսը ձիուն,
Բախտը որո՞ւն:
Չառը ձառ կըլվէնու, ըրկէօքը իրիս:
Չեոքը ձեոք կը լուայ, երկուքը՝ երես:
Չէօյը ի ծուօվը, ծէփէը ի կըրուօքը:
Չուկը ծովուն մէջ, տապակը կրակին վրայ:
Ղէօնկ կանէս՝ գըլօխիդ քարի:
Եղունգ ունիս՝ գլուխդ քերէ՛:
Ճուղի վէգէդ, նէստ քէքէդ:
Հաւաքէ՛ փէշդ, նստի՛ր կղկղանքիդ վրայ:
Միէղըր կըտրուօղը ըզմուտը կը լըզվի:
Մեղր կտրողը մատը կը լզէ:
Մինծ իշշէօն մինծ բիէո:
Մեծ էշուն՝ մեծ բեո:
Մուօտ դըրէցէն քան ըզհառոօ հընտնէն աղուր ի:
Մօտ դրացին հեռու ազգականէն աղէկ է:
Նա՛ մէօտ ի ջէօրը լուղու,
Նա՛ իլ դարիցի՛ դուղու:
Ո՛չ մտիր ջուրը՝ լողա,
Ո՛չ ելիր դուրս՝ դողա:
Նար քէքէն շուօտ ճանճ կը նըստնա:
Նոր կղկղանքին շատ ճանճ կը նստի:
Շունը բարնիէն ըսկար չառնըվէր:
Շան բերանէն ոսկոր չ՛առնուիր:
Շունը վէնէօնը տէօ՛ ըզվէրձցը հէնի:
Շան անունը տուր՝ գաւազանը հանէ՛:
Ուղօկ ջէօրը ուօղտ չըբըռնիէր:
Հոսուն ջուրը աղտ չի պահեր:
Ունծէօն մանգարան իլլա ըսկար կընըտըվա:
Ինձին քարայրին մէջ անպայման ոսկոր կը գտնուի:
Ունք շինիմ տէի վաշգը հէնից:
Յօնք շինեմ ըսելով աչքը հանեց:
ձրվին մը բուն,
Տէրվին մը համ:
Օրուան մը բան,
Տարուան մը համ:
Գանխէն պազը իյնա ալէը դէնուօկ կը քիշին:
Եզը իյնալէն ետք բոլորը դանակ կը քաշեն:

Դէրունը բէրուօկ տըղիէն կը կըտըրնա:
Դարանը բարակ տեղէն կը կտրուի:
Ջէօրը չըտիսուօծ պիմէնէդ մը հէնի:
Ջուրը չտեսած՝ կօշիկդ մի՛ հաներ:
Ջէօրը չինկուօղը լուղիլ չըսարվիէր:
Ջուրը չինկողը լողալ չի սորվիր:
Ջէօրը պըզտիկան,
Խուօսգը մինծէն:
Ջուրը՝ պզտիկին,
Խօսքը՝ մեծին:
Ջըրէն բիրուօծը ֆըրթանան կը տաննա:
Ջուրին բերածը փոթորիկը կը տանի:
Սապըր ինուօղը սալամաթ կըննի:
Համբերողը յաջողութեան կը հասնի:
Սատանէն անանճը խէօլ:
Սատանային ականջը խուլ:
Սատանէն գանէցուօծը գանի:
Սատանային գիտցածը գիտէ:
Սարփիէն գըլարվա՛ փանչէն ըրվան կը կայնա:
Ժայռէն կը գլորի՛ ճանկին վրայ կը կանգնի:
Մէկկիլէն ուօրը չըգանիէր պան:
Մահուան օրը միայն չի գիտեր:
Սախ իլան հուօց, սէրտիդ իբուօց:
Սոխ ու հաց, սիրտդ բաց:
Սախ ուտուօղը կը կըծվինու:
Սոխ ուտողը կը կծուի:
Սախէն քուօխցը չըննուօր:
Սոխին քաղցը չ՛ըլլար:
Սախը նաղտուօր կանգվիս՝ կը կանգըվա:
Սոխը որքան կեղուես՝ կը կեղուըուի:
Սարիէն հաւվըցուօղ անձը գիլլիբէն բիժէն կըննու:
Հօտէն հեռացող այժը գայլերուն բաժին կ՛ըլլայ:
Սօնկը փուշմանճըլըղը ֆայտա չունա:
Ուշացած վղջումը օգուտ չունի:
Վախտէն ցէնուօղը վախտէն կընծի:
Ատենին ցանողը ատենին կը հնձէ:
Վիրէնը ջէօր չըդառնուօր:
Արիւնը ջուր չի դառնար:
Տամմահէն ունցուօծը անամը կանի:
Ագահին ունեցածը ուրիշը կ՛ուտէ:
Տամմուօրը իսգէն քամէն դէ՛ «չունէմ» կէսի:

Բարեւներ եւ մաղթանքներ

Ագահը ոսկիի դէպին նստեցուր՝ «չունիմ» կ'ըսէ:

Տօբոս կու՛ կուգու կանանա,
Տօբոս կու՛ կը վառի կանանա:

Հոգ կայ՛ կու գայ կանցնի,
Հոգ կայ՛ կը վառէ կ'անցնի:

Տէօնը ըր մինծ չըկինուոր՝ քնշան քնթուօզ կը դընէն:
Երբ տան մէջ մեծ չկայ՛ անկինը կոճղ մը կը դնեն:

Տիէր չունցուօղ մէքէն գալը կաւտի:
Տէր չունեցող ոչխարը գայլը կ'ուտէ:

Տիւքէն խաղուղը չըհէսուօղ՝ էսուօց «թըթէօ ի»:
Աղուէը խաղողին չհասաւ, ըսաւ «թթու է»:

Տիւքէն շահատը էր էգէն ի:
Աղուէսին վկան իր պոչն է:

Տանէն Ջէտը քան Մինծ Ջէտը ետանձ կուգու:
Պպտիկ Ջատիկը Մեծ Ջատիկէն առաջ կու գայ:

Տանը հիսապը չարշէն չըթիլիէր:
Տան հաշիւը շուկան չի յարմարիր:

Տէկէօկ իշշէօյը ալէը կը հիպնէն:
Տաճկուկ իշուկը բողորը կը հեծնեն:

Տուօղ չունցուօղ գըլօխը էվէտէրունէն նըրթիվը չըն դընէ:
Տաւ չունեցող գլուխը Աւետարանին տակ չեն դներ:

Փիրիվէը պէրկէօճը ունցուօճը կը կինչի:
Փերեպակը տոպրակին մէջ ունեցածը կը կանչէ:

Քէշ բարձէ,
Ուշէտ դարձէ:

Քի՛չ բեռցիր,
Շո՛ւտ դարձիր:

Քէչը իկօձ, շուօտը հօպի:
Քիչը գտաւ, շատը կ'ուպէ:

Քէսկըն քէցուօխը էր էմնէն վարուօր կուտու:
Բարկ քացախը իր ամանին վնաս կու տայ:

Քէրէն պըպտէը չըմիպնուօր:
Քարին պպտիկը չի մեծնար:

Քիլուօղ իշշէօն գըլխէն չըն քիշտի:
Քալող իշուն գլխուն չեն պարներ:

Քուօր ըղէ՛ գըլօխ պատուի:
Քար եղի՛ր՝ գլուխ պատուէ՛:

- Բէրիվ. բէրուօղ. «բարեւ. բարով»:
- Բարուօյս. «բարի լոյս»:
- Բէրըրկէօն. «բարի իրիկուն»:
- Բէրըկիսուօր. «բարի կէսօր»:
- Բէրիվն էրիվըղ. «բարեւն արեւը»:
- Բէրուօղ շուօն. «բարով շահով»:
- Բէրուօղ տիսանք. «բարով տեսանք»:
- Աստուծու բէրէն. «Աստուծոյ բարին»:
- Քիշիր բարն. «գիշեր բարի»:
- Լուօյս բարն. «լոյս բարի»:
- Բէրը մընանք, շէն մընանք. «բարի մնաք, շէն մնաք»:
- Բէրը ճանքուօզ. «բարի ճամբայ»:
- Ուրթուօս բէրուօղ. «երթաս բարով»:
- Աստուօծ հիտըղ ըննու. «Աստուած հետդ ըլլայ»:
- Աստուծու աշգը երըվաղ. «Աստուծոյ աշքը վրադ»:
- Աստուօծ չուօր ուրի, չուօր ճանքքի, չուօր մարդի հառու պիհի. «Աստուած չար օրէ, չար ճամբայէ, չար մարդէ հեռու պահէ»:
- Աստուօծ չուօր իշի, չուօր սըղաղի, չուօր լիվվի հառու պիհի. «Աստուած չար աչքէ, չար ժամէ, չար լեզուէ հեռու պահէ»:
- Շընըֆուր վէտէկ. «շնորհաւոր Ջատիկ»:
- Բէրը վէտէկ. «բարի Ջատիկ»:
- Էմըն տարն ենս ուօրըս. «ամէն տարի այս օրը»:
- Շընըֆուր ըննու ձիւ խընտէօմը. «շնորհաւոր ըլլայ ձեր ուրախութիւնը»:
- Աստուօծ շընըֆըրի, Աստուօծ շընըֆըրի, Աստուօծ շընըֆըրի. «Աստուած շնորհաւորէ» (խմբային մաղթանք, որ երեք անգամ կը կրկնուի հարսին կամ փեսային զգեստը հագցնելու ատեն):
- Շընըֆուր. ըննու, միէկ բարձա հէլէվըրէք. «շնորհաւոր ըլլայ, մէկ բարձի ծերանաք»:
- Տարուօսը բուօյն խըմունը. «տարուսը քու խմանը»:
- Տարուօսը բուօյն եավրիցը. «տարուսը պաւակներուդ»:
- Տարուօսը ալէք մահրումնէն. «տարուսը բոլոր վրկուածներուն»:
- Շընըֆուր ըննու, հէգնէս, պատըուտիս, բէրուօն միշիս. «շնորհաւոր ըլլայ, հագուիս, պատուես, բարով մաշես»:
- Շընըֆուր ըննու, խէյըրլա ըննու, տահա վաղուրը

ունուներու. «շնորհաւոր ըլլայ, բարի ըլլայ, աւելի լաւը ունենաս»:

- Սաղլըն ըննու, սանամաթ ըննու, տահա վաղուրը հէգնէս. «ողջութիւն ըլլայ, խաղաղութիւն ըլլայ, աւելի աղուորը հագնիս»:

- Շընըֆուր ըննու, տամըվա ըննու. «շնորհաւոր ըլլայ, կաթնառատ ըլլայ» (կաթնտու անասունի մը ծննդաբերութիւնը շնորհաւորելու ատեն):

- Տամիս, Աստուծո՞ննա միէը մահրում թըղ չըթուղա. «ապրի՛ս, Աստուած ո՛չ մէկը զրկէ»:

- Շընըֆուր ըննու, խէյըրլա ըննու, խէրը տըսնէս. «շնորհաւոր ըլլայ, բարի ըլլայ, բարիքը տեսնես» (բան մը ծախելու ատեն):

- Բէրուով խարճիս, խարճիս, խարճիս՝ չըքամըլա. «բարով ծախսես. ծախսես, ծախսես՝ չվերջանայ» (գիւղացիէն անասուն, բերք կամ կալուած մը գնելու ատեն, դրամը վճարած ժամանակ):

- Լուօյս եազըղ. «աչքդ լոյս»:

- Ազըղդ լուսուօն, Աստուծո՞ննա ձիկ իլի խընտնէնի. «աչքդ լոյսով, Աստուած ձեզ ալ ուրախացնէ»:

- Դէօն սանը մընուօ. «դուն ողջ մնաս»:

- Ուղուրմա հիգգէն, խուղը թիթիվ ուգու. «ողորմի հոգւոյն, հողը թեթեւ գայ» (Ջեսապցիք վախճանեալը կ'անուանեն «իշուօ թէրէն» արտայայտութեամբ, այսինքն՝ յիշուած բարին, բարեյիշատակը):

- Դէօք սանը մընաթ, Աստուծո՞ննա միկա դօռ չըփէկի. «դուք ողջ մնաք, Աստուած ո՛չ մէկու դուռը փակէ»:

- Աստուծո՞ննա պիհի զեալրէքըղ, տէտուօն, միրուօն մինցընի. «Աստուած զաւակներդ պահէ, հայրով, մայրով մեծցնէ»:

- Անցուօ ըննու. «անցած ըլլայ»:

- Աստուծո՞ննա շէօքըղ պէկուօ չինի. «Աստուած շուքդ պակաս չընէ» (ընտանիքի աւագ անդամներուն):

- Աստուծո՞ննա ջուղուօն ուտու. «Աստուած առողջութիւն տայ»:

- Աստուծո՞ննա ձառուօց-վիտուօց չիսգի. «Աստուած ձեռքէ ոտքէ չձգէ»:

- Ըտըղ ուօրըղ բաննա ըննու. «վերջին օրդ բարի ըլլայ»:

- Աստուծո՞ննա խէըրըլը խէլուօն ուտու. «Աստուած բարի փրկութիւն տայ» (յղի կնոջ, բանտարկեալի, զինապարտի):

- Ամի՛ն, Աստուծո՞ննա բարնիէդ լըսսի. «ամէ՛ն, Աստուած բերնէդ լսէ»:

- Տայմա ըննու, տամիսն ձառվէդ. «միշտ ըլլայ, ապրին ձեռքերդ»:

- Ըննէօշ, Ըննէօշ ըննու. «անո՛ւշ. անուշ ըլլայ»:

- Ըննէօշ բաննէթ. «անուշ բաղնիք»:

- Ըննէօշ սըրտուօն մընուօ, ըրկը իրիսըղ պէգիրիմ. «անուշ սրտով մնաս, երկու երեսներդ պագեր եմ»:

- Տամիս. «ապրիս» (որեւէ ծառայութեան համար):

- Տամիս դէօն ու եալրէքըղ, Աստուծո՞ննա սըրտէդ կէօրա թուղտու քի. «ապրիք դուն ու զաւակներդ, Աստուած սրտիդ համեմատ թող տայ քեզի»:

- Տամիսն ձառվէդ, նա միկա մաթաճ չըննուօ, չուօր ուօր չըտըսնէս. «ապրին ձեռքերդ, ոչ ոքի կարիքն ունենաս, չար օր չտեսնես»:

- Տամիս, եալրիցըղ ուօրը տըսնէս. «ապրիս, զաւակներուդ օրը տեսնես»:

- Զիկ էօժ. «քեզի ոյժ» (աշխատող մարդուն):

- Աստուծո՞ննա կուվուօ ուտու. «Աստուած ոյժ տայ»:

- Աստուծո՞ննա պէրէթէն իշնա. «Աստուծոյ օրհնութիւնը իշնէ»:

- Սանը ըննուօ. «ողջ ըլլաս»:

- Տամիս քուօյն բէրուօ լիկվէօն. «ապրի քու բարակ լեզուն»:

- Խուղ բըռնիս՝ իսկա դառնու. «հող բռնես՝ ոսկի դառնայ»:

- Չաթ բըռնիս՝ կաննաչ դառնու. «չոր բռնես՝ կանաչ դառնայ»:

- Փէօշ բըռնիս՝ ծանկէ դառնու. «փուշ բռնես՝ ծաղիկ դառնայ»:

- Մըլլիս, ծանկիս. «ծիս, ծաղկիս»:

- Թաթիս փուճիս. «աճիս, բազմանաս»:

- Աստուծո՞ննա պիհի. «Աստուած պահէ»:

Անէծքներ

- Ալէրդ միէկ փաա թըղ դըրվէք, Միր հէգուօ շէպէը թըղ հէգնէթ, Լապպըրէն միէ մը թըղ ըննաթ, Ան իլի շէմփաթէն ծաթը թըղ ըննաթ:

«Բոլորդ մէկ փոսի մէջ դրուիք,
«Մեր հագած շապիկը հագուիք,
«Լապարէն մէկը միայն մնաք,
«Ան ալ շամփուրին ծայրը թող ըլլաք»:

- Եուօթը գըղէն շընվէն թըղ թակավուրին զքի՛ վէրաթ մը թըղ չընըտըվա ի ձառըղ. «եթօը գիւղի շուները թող հալածեն քեզ ու գաւազան մը չգտնուի ձեռքիդ մէջ»:

- Զըկըմմէս. «թոյն ուտես»:

- Իլահըմ ըսպիտուօկ վարտըքըվուր չըտըսնէս. «սպիտակ վարտիքաւոր չտեսնես» (ամուսին չտեսնես. կանայք «ալաճա» կտորէն գունաւոր երկար վարտիք կը հագուէին, իսկ մարդիկ՝ սպիտակ):

- Իլահիմ հէգուօծ շէպէըս հէգնէս. «հագած շապիկս հագուիս»:

- Խոււմուօծ կէթըդ հէրձամ ըննու. «կերած կաթդ հարամ ըլլայ»:

- Կաննչ բըռնիս՝ չձր դառնու. «կաննչ բռնես՝ չոր դառնայ»:

- Կըտըրըլը կըծծէք. «կտրելիք մազ»:

- Կըտըրըլը հէօնտ. «կտրելիք հունտ»:

- Կըտըրըլը ձառ. «կտրելիք ձեռք»:

- Կըտըրըլը մէտօնք. «կտրելիք մատներ»:

- Կըտըրիլը վիտ. «կտրելիք ոտք»:

- Կըտըրըլը չիւրու. «կտրելիք չքուելիք երես»:

- Կըրուընը մըննա՝ իքի. «չարը մտնէ մէջդ»:

- Կըրուօլը ուրթուօս. «կրակը երթաս» (դժոխքի արժանանաս):

- Կուրնըլը աշգ. «կուրնալիք աչք»:

- Լուսկըտէս. «խոցկոտիս»:

- Զըմըթիլէօ. «երկճղելիք»:

- Միր հէգուօծ շէպէը թըղ հէգնէք,

Միր քիրը թըղ տըսնէք,

Մինք չուօձըր հայ քիշինք,

Դէօք իլի թըղ քիշէք ընտըլ մի:

«Մեր հագած շապիկը հագնիք,

«Մեր օրերը թող տեսնէք:

«Ինչպէս որ մենք կը քաշենք՝

«Դուք ալ քաշէք մեզի պէս»:

- Եալլայ ֆըգգա՞ վէլը կուգու նըրքիվը. «երանի ծոփ ու ներքեւ գայ վիվը»:

- Ուրթիլըդ ըննու, ուգիլըդ չըննու. «երթալդ ըլլայ, գալդ

չըլլայ»:

- Զըկըշտէնուօս. «չկշտանաս»:

- Զըրկէննիլը չէօնկ. «չերկննալիք ծայր»:

- Զուօրը տաննա՞ վքի. «չարը տանի քեզ»:

- Պուղապէդ չիշնա՞. «կոկորդէդ չիջնէ»:

- Սաղլըղուօն չըհէսնէս. «ողջութեամբ չհասնիս»:

- Վիրէն դասվիտէս. «արիւն դարձնես»:

- Տարտը բըռնի վքի. «ցաւը բռնէ քեզ»:

- Տարտը մըննա՞ իքի. «ցաւը մտնէ մէջդ»:

- Փըրթէս. «փրթիս»:

- Զինթուօցըդ փինջուօցըդ ըննի. «քիթդ փնջէդ ելլէ»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1.- Անտիոքի չըջանի Հայ գաղթականութեան արմատները եւ մնացորդացը	3
2.- Ուրուագիծ Քեսապի Հայութեան պատմութեան	6
3.- Քեսապի բարբառը եւ անոր տարածման սահմանները	9
4.- Քեսապի բարբառին ուսումնասիրութիւնը	10
5.- Քեսապի բարբառին ընդհանուր նկարագիրը	12

ՔԱՐՏԷԶ՝ Անտիոքի կամ ծայր Հարաւ արեւմտեան Հայաքնակ վայրերու	14
--	----

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒՆ

ՀՆՁԻՒՆ ԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա.- Հնչիւնախօսութիւն	15
Բ.- Հնչոյթներու Համակարգը	16
1.- Զայնաւորներ	16
2.- Երկբարբառներ	20
3.- Զայնորդներ	21
4.- Շփականներ	22
5.- Պայթականներ եւ կիսաշփականներ	23
6.- Եզրակացութիւն	24
Գ.- Շեշտ եւ շեշտափոխական Հնչիւնափոխութիւն	25
Դ.- Թեքման Հետեւանքով ձայնաւորներու փոխազդեցական եւ դիրքային Հնչիւնափոխութիւն	28
Ե.- Պատմական Հնչիւնափոխութիւն	30
1.- Զայնաւորներ	30
2.- Երկբարբառներ	39
3.- Զայնորդներ	42
4.- Շփականներ	44
5.- Պայթականներ եւ կիսաշփականներ	45
Զ.- Դիրքային եւ փոխազդեցական Հնչիւնափոխութիւն	50
1.- Առնմանութիւն	50
2.- Տարնմանութիւն	50
3.- Հնչիւններու բարդացում	51
4.- Հնչիւններու պարզացում	51
5.- Բաղաձայններու յաւելում	52
6.- Զայնաւորներու յաւելում	53
7.- Բաղաձայններու անկում	53
8.- Դրափոխութիւն	55
9.- Ամփոփում	56
10.- Բաղաձայններու կրկնութիւն	57

**ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ՋԵՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ**

Ա.- Գոյական	59
1.- Յոգնակի թիւին կազմութիւնը	59
2.- Հոլովումներ եւ Հոլովիչներ	66
3.- Հոլովներն ու անոնց կազմութիւնը	71
4.- Յօդառութիւն	76
5.- Հոլովման աղիւսակ	78
Բ.- Ածական	84
Գ.- Թուական	85
Դ.- Դերանուն	88
1.- Անձնական դերանուններ	88
2.- Անդրադարձ դերանուններ	91
3.- Փոխադարձ դերանուն	92
4.- Ցուցական դերանուններ	93
5.- Հարցական դերանուններ	102
6.- Ցարաբերական դերանուններ	107
7.- Որոշեալ դերանուններ	108
8.- Ժխտական դերանուններ	108
9.- Անորոշ դերանուններ	109
10.- Ստացական դերանուններ	109
Ե.- Կապ	110
Զ.- Բայ	117
1.- Բայանուն	117
2.- Սոսկածանցաւոր բայեր	118
3.- Խոնարհումի հիմքերը	119
4.- Դերբայներ	119
5.- Խոնարհումներ	124
6.- Կատարեալի հիմքերը	125
7.- Ներկայ ժամանակներու վերջաւորութիւններ	126
8.- Անցեալ անկատարի վերջաւորութիւններ	127
9.- Անցեալ կատարեալի վերջաւորութիւններ	127
10.- Բաղադրեալ ժամանակներ	128
11.- Եղանակներ	128
12.- Կանոնաւոր բայերու խոնարհումի պատկերը	134
13.- Պատճառակերպ բայեր	144
14.- Պատճառակերպ բայերու խոնարհումի պատկերը	145
15.- Կրաւորական բայեր	149
16.- Էական պակասաւոր բային ժխտական խոնարհումը	150
17.- Ժխտական դերբայ	151
18.- Չ մասնիկով արտայայտուած ժխտական բայաձեւեր	152
19.- Արգելականի կազմութիւնը	152
20.- Ժխտական խոնարհումի պատկերը	153

21.- Երկրորդական բաղադրեալ ժամանակներ	157
22.- Բայական անկանոնութիւններ	159
Է.- Մակբայ	166
1.- Տեսակները	166
2.- Մակբայակերտ ածանցներ	167
Ը.- Շաղկապ	164
Թ.- Ձայնարկութիւններ	170
Ժ.- Եղանակաւորող բառեր	172

**ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ**

Ա.- Բառապաշար	175
1.- Գրաբար-բարբառ բառեր	175
2.- Բարբառային բառեր	177
3.- Փոխառեալ բառեր	180
Բ.- Բառակազմութիւն	
1.- Պատմական բառակազմութիւն	186
2.- Անխակական բարդութիւններ	187
3.- Իսկական բարդութիւններ	191
4.- Ածանցում	192

ԲԱՌԱՑԱՆԿԵՐ

ա.- Գրաբար-բարբառ բառացանկ	200
բ.- Անձի յատուկ անուններու ցանկ	228
գ.- Բարբառայնացած տեղանուններ	230
դ.- Բարբառային բառերու բառարան	231
ե.- Փոխառեալ բառերու բառարան	310

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Առակներ եւ Հեքիաթներ	342
Սիրոյ եւ Հարսանեկան խաղիկներ	358
Բանակոտային շարեր	361
Մանկական խաղերգներ	362
Հանելուկներ	365
Առածներ եւ ասացուածքներ	366
Բարեւներ եւ մաղթանքներ	373
Անէծքներ	375

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	377
--	-----

ՉՈՒԱՔԵԱՆ ՅԱԿՈՔ ԱՔՐԱՀԱՄԻ

ՔԵՍԱՊԻ ԲԱՐՔԱՌԸ

HAGOP TCHOLAKIAN

DIALECT OF KESSAB

(in Armenian)

Yerevan "Hayastan" 2009

Մուտքագրող՝

Սեւան Շահպազեան

Համակարգչային մակետ՝

Տաթևիկ Գրիգորեանի

Վերստուգող սրբագրիչ՝

Գեորգ Եազրճեան

Տպագրութիւնը «Եգետ» հրատարակչարան



Ստորագրուած է տպագրութեան՝ 29.05.2009թ.:

Ծաւալը՝ 24.0 տպ.մամուլ:

Չափսը՝ 70x100 1/16:

Տպաքանակ՝ 300:

Գինը՝ պայմանագրային:

«Հայաստան» հրատարակչութիւն. Երեւան, Իսահակեան 28:
ԵՊՀ հրատարակչութիւն, Երեւան, Ալեք Մանուկեան 5: